

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օպտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

406

Օ Լ Տ Ա Ր Վ Ա

Հ Ա Յ Ա Խ Ի Ւ

Ե Ր Ե Ց Ց Ց



Հ Ա Յ Ա Խ Ի Ւ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՌՈՒՄՆ ԼՐՈՎՐԱՅ

865

82

9 - 75

82

P-75

ԿՈԼՏԱՄԱԿԹ

ԿՎ

ՎԵՐՖԻԼՏԻ

Ե Ր Ե Ց Ը

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԿԱՐՄԱՐԵՍ Ս. ԻՒԹԻՒԺԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ ԼՐԱԳՐՈՅ

= 1 8 6 3 =

15003

141 500

માનુષીય

૭ ૮ ૫ ૧ ૬

કાળિયાણ

સાંદ્રાંગાંધી - કાળિયાણ

2704

39

અલોમાણ
બાળાણ

- ૩૦૧ -

ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԹԱՐԴՄԱՆՉԻՆ

Կօլտսմիթ անգղիացւոյն այս գործը , անցեալ դարէն՝ ի վեր Եւրոպիոյ մէջ տեսնուած վիպական անթիւ հեղինակութեանց ընտրելագոյններէն մէկը , եւ կրնանք ըսել թէ նոյն իսկ կօլտսմիթի զանազան հեղինակութեանց մէջ իր անունն անմահացընողն է :

Կօլտսմիթ 1760* թուականին միջոցներըն . ի լոյս ընծայած է այս վէպը , եւ սակայն դար մ'անցնելէ ետեւ ալ՝ ամեն Եւրոպական ազգաց՝ մանաւանդ Անգղիոյ մէջ մեծ յարգունի , ուր չկայ ընտանիք մը որ այս գրքէն օրինակ մը չունենայ :

Տնական տնտեսութեան եւ միանգամայն բարւոք դաստիարակութեան հրահանգներով լեցուն , բաւականասիրութեան օգուտներն ու պերճասիրութեան վնասակար եւ շատ անգամ աղիտաբեր հետեւանքներն՝ առանց վիպատնական սեթեւեթներու՝ ընական համեղ պարզութեամբ եւ ողջամիտ բարոյականով նկա-

* Օլիվը կօլտսմիթ 1728ին ծնաւ եւ 1774 նն մեռաւ :

բագրող, ամեն ազդի, ամեն երկրի եւ ամեն
ժամանակի յարմար գիրք մ'է :

Այս ընտիր վէսլն արդէն կալկաթայի մէջ
հայերէնի թարգմանուած ու տպուած է արդոյ
Պ. Թաղէոս Խ. Ավետումի աշխատասիրու-
թեամբ. բայց լեզուն գրաբառ, մանաւանդ
Հնդկաստանի մեր ազգայնոց ընտել ոճովն ըլ-
լալուն, ազգիս մեծագոյն մասն այսպիսի հրա-
հանգիչ վէպի մը ընթերցումէն անմասն չի
թողոյ համար՝ արժան համարեցաք բնագրէն
մեր արդի աշխարհիկ լեզուին վերածել :

Կը յուսանք որ մեր այս աշխատութիւնն
ալ Սիլվի Բէլլիքօի Բանտերուն թարգմա-
նութեանը պէս հաճոյական ընդունելութիւն
մը կը գտնէ ազգիս ընթերցասէրներէն. մա-
նաւանդ որ այս ալ շռայլութեան զոհ եղողի
մը բանտարկութեան ժամերուն մէջ շարագ-
րուած ըլլալով, անշուշտ ենք թէ խնայողու-
թեան ու բաւականասիրութեան շահաւէտ
խրատներ կրնայ ընծայել մեր ազգայնոց շա-
տերուն . . . եւ այս իսկ եղած է ձեռնար-
կութեանս շարժառիթն ու նպատակը :

Ե. Օ. Դ.

Այս գործիս մէջ հարիւրաւոր թերութիւնն
ներ կան , եւ հարիւրաւոր բան կրնայ ըստով
հաստատելու համար թէ անոնք դեղեցկու-
թիւնեն . բայց աւելորդ է : Գիրք մը կրնայ
զուարձալի ըլլալ՝ թէ եւ շատ սխաներ ունե-
նայ . կամ խիստ ձանձրալի ըլլալ՝ առանց մէկ
անտեղութիւն մը ունենալու : Այս վէպին գիւ-
ցաղնը իր վրայ կը մի սցընէ աշխարհի մէջ ե-
ղած երեք ամենամնջ հանդամանքներ . քա-
հանայ , երկրագործ եւ ընտանեաց հայր մ'է :
Ուսուցանելու պատրաստ , հնագանդելու ալ
պատրաստ , լիութեան մէջ պարզ , ձախորդու-
թեան մէջ վեճ . այսպէս նկարագրուած է :
Զեմ գիտեր թէ այսպիսի նկարագիր մը որու-
կրնայ հաճելի ըլլալ այս զեղխութեան ու ար-
ուեստակութեան դարուս մէջ : Անոնք որ
չքեղ կեանք վարելու խենթ են , սլիտի ար-

համարհեն ասոր տնական գեղջուկ պարզութիւնը . անոնք որ անպատկառ լրբութիւնը զուարթութեան տեղ դրած են , ասոր անմեղ խօսակցութեանը մէջ հանճար չպիտի դտնեն . եւ անոնք որ կրօնքը հեղնելու վարժուած են , պիտի ծիծազին այսպիսի անձի մը վրայ՝ որ իր մշխիթարութեան գլխաւոր մժերքը յաւիտենական կենաց յոյսէն կը քաղէ :

ՕԼԻՎԵՐ ԿՈԼՍԱՄԻԹ

ՎԵՐՅԻԼՏԻ

b c h g l

ԳԼՈՒԽ • Ա

U.

ԻՄ կարծիքս միշտ սա եղած է թէ ա-
մուսնացեալ եւ բազմաթիւ ընտանիք մը պա-
հող համեստ մարդն աւելի օգտակար է մարդ-
կութեան քան այն անձը՝ որ ամուրի ապրելով
բազմամարդութեան վրայ կը ճառէ։ Այս պատ-
ճառաւ, ձեռնադրութեանս վրայ հաղիւ տարի
մը անցեր էր՝ սկսայ սրտի մտօք մտածել որ
կին մը առնում : Ընտրեցի ամուսինս, ինչպէս
որ ան ալ իր հարսանեաց շրջազգեստն ընտրեց՝
չէ թէ արտաքին գեղեցկութեանն ու շքեղու-
թեանը նայելով, այլ դիմացկութեանը : Ար-

դար խօսելով, խիստ բարեբարոյ կին մ'էր . իսկ
կրթութեանը մասին, շինական տիկնանց մէջ
քիչ կը գտնուէր անոր չափ բարեկիրթ . Որ եւ
իցէ գիրք մը կրնար կարդալ առանց շատ կըմ-
կըմալու . Իակ կերակուր եփելու, քայրաւե-
նիներ ու թթուուաներ շինելու մասին՝ ոտքը
եկող չկար : Տնտեսութեան մէջ ունեցած ճար-
տարութեանը վրայ ալ կը պարծէր, թէպէտ եւ
իր բոլոր ճարտարութեամբը չկրցանք աւելի
հարուստ ըլլալ :

Խնչ եւ իցէ իրար գորովագին կը սիրէինք, եւ
տարուէ տարի մեր փոխադարձ սէրը կաճէր .
Եւ արդարեւ բան մը չկար որ մեզ աշխարհէս
կամ իրարմէ գժղոն ընէր : Գեղեցիկ տուն մը
մը ունէինք զուարճալի դաշտի մը մէջ եւ բա-
րի դրացիներ : Տարին կանցունէինք բարոյա-
կան կամ գիւղական զուարճութիւններով,
հարուստ դրացիներնուս հետ տեսնուելով, եւ
չքաւորներուն ալ օգնութիւն ընելով : Ոչ քա-
ղաքական խռովութենէ երկիւղ ունէինք եւ
ոչ տաժանաւոր տշխատութիւններ ունէինք
կրելիք : Մեր ամեն արկածներն առտնին էին,
եւ բոլոր ճանապարհորդութիւննիս՝ կապոյտ
սենեակէն թուլս սենեալը անցնիլ էր :

Տուներնիս ճանրուն վրայ ըլլալով, շատ
անդամ անցորդներ կամ օտարականներ կուղա-

յին մեր հաղարջի դիմին^{*} ձաշակելու, որուն
համար մեծ համբաւ ունեինք . եւ պատմազրի
թը վայրած անկեղծութեամբ կը խռառովանիմ
թէ ով խմէր նէ կը հաւնէր . Աղջականներ ալ
ունեինք մինչեւ քառսուն պորտէ , որ յաճախ
այցելութեան կուգային մեզ , եւ ամենն ալ աւ-
սանց աղջահամարի օդնութեան կը լիշէին
մեզի հետ ունեցած աղջականութիւննին . Ա-
սոնցմէ ոմանք մեծ սպասիւ մը չէին ըներ
աղջական ենք ըսելով . վասն զի բոլոր կոյ-
րերը , կաղերը , խեղերը ինքինքնին այս կար-
ուը կը դասէին : Սակայն կինս միշտ կըսէր թէ
անոնք ալ մի եւ նոյն բարենք ու ուժութեան ըլլալով ,
պէտք եր որ մեզի սեղանակից ըլլային , ասան-
կով մեր բոլորտիքը՝ եթէ ոչ հարուստ՝ գոնէ
դոհ եւ ուրախ բարեկամներ ունէինք : Վասն
զի ամեն ժամանակ ճիշդ է սա գիտողութիւնը
թէ հիւր մը ուշափ աղջատ ըլլայ , այնչափ աւ-
սելի հաճութիւն կ'զգայ մեծաբուելէ , եւ իմ
ալ բնութիւնս է որ դոհ գէմքերէ կ'զմացլիմ ,
ինչպէս որ ուրիշները կակաչին դեղեցկու-
թեանը կտմ թիթեռնիկին երփներանգ թեւե-
րուն կ'զմացլին : Սակայն մեր սկս աղջականնե-

* Անգղիոյ մէջ , մանաւանդ գեղերը , ա-
մեն տեսակ պառողներէ զինի կը Շինեն , հաղար-
ջէ , եղակէ , բալէ , սալորէ , եւ այլն :

րուն մէջ երբեմն զէշ բնաւորութեան տէր
կամ ձանձրալի մարդիկ ալ կը գտնուէին : Ա-
սանիներէն ազատ ըլլալու համար , առաջին
անգամ մեզի այցելութեան եկած ժամանակ-
նին՝ կամվերարկու մը , կամ զոյգ մը կոչիկ ,
եւ կամ անպիտան ձի մը փոխ կուտայի , եւ
միշտ դոհ եղած եմ տեսնելով որ մէկ մ'ալ ե-
րեւան չէին ելներ : Այս հնարքով տունս կա-
զատէր անհամոյ հիւրերէ . բայց երբէք տես-
նուած ու լսուած չէ որ Վէքֆիտի ընտանիքն
իր դուռը ճանապարհորդներու կամ աղքատ
այցելուներու դոցած ըլլայ :

Այսպէս քանի մը տարի երջանկութեամբ
ապրեցանք . թէպէտ բոլորովին ազատ չէինք
մանր մունր արկածներէ զորոնք Նախախնա-
մութիւնը վրանիս կը զրկէր՝ իր շնորհացյարդը
բարձրացընելու համար : Շատ անգամ դպրա-
տան տղայքը պարտէզս կը մտնէին ու պտուղ-
ները կը կողոպտէին . երբեմնալ կատունե-
րը կամ տղայքը կնոջս շինած կարկանդակները
կը գովնային : Երբեմն ալ կը պատահէր որ գե-
ղին իշխանը քարոզիս պինտ սրտաշարժ կէտե-
րուն կը քնանար , կամ իր կինը եկեղեցւոյն մէջ
իմ կնոջս յարդանքները չափազանց կոտըրու-
ուելով կընդունէր : Աակայն այս մանր դիպ-
ուածներէն պատճառեալ սրտի կոտըրումնե-

բուն շուտով կը յաղթէինք . եւ գրեթէ միշտ
երեք չորս օր անցնելէն ետքը կը զարմանաւ
յինք այնպիսի ոչինչ պատճառներով վշտա-
ցած ըլլալնուս վրայ :

Զաւկներս՝ որ ժուժկալութեան պտուղ է-
լն՝ առանց փափկութեան մեծ ցընելուս համար
բարեձեւ ու քաջառողջ էին : Մանչերս ուժեղ
եւ ժիր , աղջիկներս ալ գեղեցիկ ու առոյգ էին :
Երբոր այս փոքրիկ ակումբին մէջ կը նստէի ,
որն որ կը յուսայի թէ ծերութեանս նեցուկ
պիտի ըլլար , Ապէնսպէրկի կոմախն հոչակաւոր
պատմութիւնը կը յիշէի , որ Հենրիկոս թին
Գերմանիա արշաւած ժամանակը , երբոր ու-
րիշ աւագանիները գանձերով դանի կը զիմա-
ւորէին , ինքը իր երառնուերկու որդիքը տա-
րաւ ներկայացուց թագաւորին իբրեւ իր ունե-
ցած ամենէն մեծ եւ ծանրագին նուէրը : Նմա-
նապէս ես ալթէպէտ վեց զաւակ միայն ունէի ,
բայց զանոնք հայրեննեացս ընծայած ամենէն
մեծնուէրս կը համարէի , եւ այս պատճառաւ
հայրենիքս ինձի պարտաւոր կը սեպէի : Անդ-
րանիկ որդւոյս անունը Դէորդ էր՝ ի յիշատակ
իւր հօրեղբօրը՝ որ մեզի տասն հազար լիրա
սթէրլին թողուցեր էր : Երկրորդ զաւակնիս
աղջիկ էր , եւ ես կուզէի հօրաքրոջը Կրիստէլ
անունը դնել անոր , ըստց կինս՝ որ յղութեան

ժամանակելը վիստասանութիւններ կարդացեր էր՝
պնդեց որ Օլիվիա գնենք : Տարի մը չանցած՝
երկրորդ դուստր մը ունեցանք : Այս անգամ
հաստատ դրեր էի միտքս որ անունը Կրիստէլ
գնեմ . բայց հարուստ աղջական մը՝ կնքա-
մայր ըլլալով՝ անունը Սօփիա դրաւ : Ասան-
կով երկու վիստասանական անուն ունեցայ-
ընտանեացս մէջ , բայց գիտէ Աստուած որ իմ
կամօքս չէր : Ասկէ ետքը Մոլիսէսս ծնաւ . եւ
տասն երկու տարի ետքն ալ երկու ուրիշ մանչ
զաւակ ունեցանք :

Անօգուած է ուրանալ զգացած ուրախու-
թիւնս երբոր մանկունքս բոլորտիքս կը տես-
նէի . բայց կնոջս պարծանքնեւ ուրախութիւ-
նը իմինէս մեծ էր : Երբոր մեզի ոցցելու-
թեան եկողներն ըսէին իրեն . «Յիրաւի , Բրիմ-
րո՛ղ տիկին , ձեր զաւակները երկրիս մէջ ա-
մենէն գեղեցիկներն են » . — «Ա՞հ , դրացի .
կըսէր , Աստուած ասանկ ըրեր է . բաւական
գեղեցիկ են՝ թէ որ բաւական բարի ալ ըլլան .
վասն զի գեղեցիկն անէ որ գեղեցիկ ալ վարք
ունի : » Միանգամայն կը պատուիրէր աղջիկ-
ներուն որ գլուխնին շիտակ բռնեն , եւ ճշմա-
րիտը խօսելով խիստ գեղանի էին : Արտաքին
գեղեցիկութիւնն ըստ իս մյնչտի ոչինչ հան-
գամանք մ'է որ բնաւ խօսքն ընել մտքէս

չեթանցուներ՝ եթէ երկրին մէջ ամենուն խօսակցութեանը նիւթ չըլլարու Օլիվիաս՝ որ տամն եւ ութ տարու եղած էր՝ գեղեցկութեան այն յատկութիւններն ունէր՝ որով հասարակորդէն սկատկերհանները Երէն^{*} կը նկարեն, աշխոյժ, վառվառն եւ խրոխտ։ Սովիային դէմքը առաջին նայուածքով այնչափ աչքի չեր զարներ, բայց ազդեցութիւնը շատ անզամ աւելի անվրէպէ էր. վասն զի քաղցր, համեստ եւ հրապուրիչ էր։ Առաջինը մէկ հարուածով կը յաղթահարէր. երկրորդը հետզհետէ ճիղը կրկնելով, բայց միշտ յաշողութեամբ։

Կանանց բնաւորութիւնն ընդհանրապէս իրենց դէմքին գծագրութեանը հետ յարմարութիւնունի. գոնէ իմադջիկներունս այնպէս էր։ Օլիվիա շատ տարիաւորներ ունենալու կը բազձար. Սովիա մէկ հատ մը կուզէր ունենալ, բայց անկասկած կերպով. Օլիվիա շատ անզամ չափազանց փոյթ կը ցուցընէր ինքովն ք հաւնեցընելու. Սովիա՝ զանի չվիրաւորելու համար իր գերազանցութիւնը ծածկել կը ջանար. Մէկը իր աշխուժութեաթբը զիս կը զուարճացընէր զուարթ եղած ժամանակս. միւսն իր խո-

* Առամազդքայ եւ Հերայի աղջիկը, որ մանկանց խնամակալ եւ Արամազդքայ մատքուակն էր ըստ դիցապաշտից։ (Ծառ. Բուհ.)

հականութեամբը , երբոր լուրջ ըլլայի : Բայց
այս յատկութիւնները չափազանց չէին եր-
կուքին վրայ ալ , եւ շատ անգամ տեսած եմ
որ երկուքը մէկէն իրենց բնաւորութիւնը օր-
մի բուն փոխած են : Պէտքանէր Օլիվիաս՝ սպոյ
հանդերձ մը հագած ատեն լուրջ մարապետ
մը կը դաւնար . Սովիաս ալ նոր ժապաւէն մը
վրան առած ժամանակը՝ զարմանալի աշխու-
ժութիւն մը կ'ստանար : Անգրանիկ որդիս Գէ-
որդը՝ Օքսֆըրտի համալսարանը գրեր էի գիտ-
նական արհեստներ՝ սովորելու : Երկրորդս՝ Մով-
սէս՝ որ գործի մարդ ընելու միտք ունէի ,
տանս մէջ խառն կրթութիւն մը կառնուր : Առ-
կայն աւելորդ է երկար բարակ նկարագրել ա-
մեն մէկ որդոցս յատուկ բնաւորութիւնը , ո-
րոնք դեռ խիստ քիչ տեսեր էին զաշխարհ :
Բաւական կըլլայ ըսել թէ ամենուն վրայ տոհ-
մային նմանութիւն մը կար . եւ յատկապէս
խօսելով , ամենն ալ մէկ բնաւորութիւն մը ու-
նէին . այսինքն միապէս առատասիրու , դիւ-
րահաւան , միամիտ եւ բարերարոյ էին :

* Անգլիոյ մէջ այսպէս կը կոչեն աստուա-
ծաբանութիւնը , իրաւագիտութիւնը , բժըշ-
կութիւնն ու երաժշտութիւնը : (Ծա . Բուժ .)

ԳԼՈՒԽ . Բ .

Ընտանիւն յարութեաններ : Հորդուննեան իրարշը^{ու}
ու բարձր բարձր վեհանուննեան առեւ ցնելը
և յարութեան :

Ընտանեացս աշխարհային գործերը մեծ
մասամբ կնոջս կառավարութեան ներքեւ
էին . իսկ հոգեւորականը բոլորովին ինչ կա-
խում ունէր : Քահանայական պաշտօնէս չա-
հածս՝ որ տարին երսուն եւ հինգ լիրայի կը
համանէր՝ մեր թեմի աղքատ եկեղեցականաց
որբերուն ու այրիներուն կուտայի . վասն զի ,
եսինձի համար բաւական ապրուստ ունենա-
լով , ժամանակաւոր եկամուտներու փոյթ չու-
նէի . եւ ներքին գուարծութիւն մը կ'զգայի
պարտականութիւնս ձրի կատարելով : Միտքս
դրեր էինաեւ որ տեղս փոխանորդ չդնեմ , եւ
թեմիս բոլոր մարդիկը ճանչեմ : Ամուսնաց-
եալները կը յորդորէի բարեխառն եւ ժուժ-
կաւ ըլլալու , ամուրի երիտասարդներն ալ կը
յորդորէի որ ամուսնան . այնպէս որ՝ քանի
մը տարի ետքը առակ եղած էր ամենուն բե-

բանը թէ Վէքֆիլտի մէջ երեք տարօրինակ
բան կայ . երէց մը որ ամբարտաւան չէ , երի-
տասարդներ որ ամուսնանալ կուզեն , եւ . գի-
նետուն մը՝ որ յաճախորդ չունի :

Ամուսնութիւնն իմսիրելինիւթերէս մէկն
էր միշտ , եւ բազմաթիւ քարողներ դրած եմ
անոր օգտակարութիւնն ու եռջանկութիւնը
ապացուցանելու համար . բայց այս նիւթիս
մէջ մամնաւոր կէտ մը կար որ ամենայն զօրու-
թեամբ կը պաշտպանէի : Կը պնդէի Ախոթոնի
հետ թէ անգղիական եկեղեցւոյ քահանայի մը
օրէնք չէր իր առաջին կինը մեռնելէն ետեւ
երկրորդ անգամ ամուսնանալ : Մէկ խօսքով ,
միակնութեան ջերմ պաշտպանէի :

Կանխաւ վարժուեցայ այս կարեւոր վիճա-
րանութեան մէջ , որուն վրայ այնչափ յտնա-
վաստակ գերքեր գրուած են : Ես ալ քանիւմը
ճառեր հրատարակեցի այս նիւթիս վրայ , որմնք
բնաւ առնող չըլլալուն համար՝ ես ինձի սա մը-
խիթարութիւնը կուտամ թէ սակաւաթիւ ընտ-
րեալները միայն կը կարդան զանոնք : Բարե-
կամներէս ոմանք այս բանը իմ տկար կողմս
կը համարէին : Բայց ախան որ ինձի պէս երկար
խորհրդածութեան նիւթ ըրած չէին զայն : Որ-
շափ աւելի կըխորհէի վրան , այնչափ աւելի
կարեւոր կերեւէր ինձի : Մինչեւ անդամ Վիս-

թոնէն ալ քայլ մը անդին կանցնէի սկզբանցօ
բացատրութեանը մասին։ Որովհետեւ Վիա-
թոն իր կնոջը գերեզմանին վրայ քանդակել
տուեր էր թէ «Ուխլիըմ Վիաթոնի միակ կինն
էր», եսալ ասոր նման տապանագիր մը գրեցի
կնոջս վրայ, թէ եւ գեռ ողջ էր, եւ մէջը կը
գովէի անոր խոհեմութիւնը, անտեսութիւնը
եւ մինչեւ ցմահ հնազանդութիւնը։ Օրինակել
տուի զայն գեղեցկագրի մը, զայելուչ շրջա-
նակի մը մէջ առի եւ վառարանին վրայ կախե-
ցի, ուր զանազան օգտաւէտ նպատակներու
կը ծառայէր։ Կնոջս պարտականութիւնները
եւ իմ հաւատարմութիւնս կը յիշեցընէր։ Իր
առաքինութեանցը վրայ ըրած գովեստներուս
արժանանալու բաղձանք մը կազդէր անոր։ Եւ
իր վախճանը միտքը կը ձգէր միշտ։

Ամուսնութեան վրայ ըրած գովեստներս
լսելով էր թերեւս որ անդրանիկ որդիս՝ հա-
մալսարանէն ելնելուն պէս սէր ձգեց մեր մօ-
տերը գտնուող հարուստ եկեղեցականի մը
աղջկանը վրայ, որ կրնար ծանր օմիտ մը բերել
իրեն։ Բայց օրիորդին ուրիշ կատարելութեան-
ցը քով հարստութիւնը փոքր բան մ'էր։ Իմ
երկու աղջիկներէս զատ՝ ամեն մարդ կը խոս-
տովանէր թէ Արապէլլա Վիլմօթ օրիորդը կա-
տարեալ գեղեցիկ մ'էր։ Առուգութեան քա-

ջառողջութեան եւ անմեղութեան հետ կը լը-
ծորդէր այնպիսի փափկագեղ դէմք մ' եւ հրա-
պուրիչ նայուածք մը, որ ծերերն անդամ չէին
կրնար անտարբեր աչօք նայիլ անոր: Օրիոր-
դին հայրը գիտնալով որ կրնայի վայելուչ ապ-
րուստ մը տալ որդւոյս, չէր գմկամակեր այս
առուտուրին: այս պատճառաւ երկու ընտանեաց
մէջ բարեկամական յարաբերութիւն մը հաս-
տատուած էր, որ սովորաբար ակնկալեալ ազ-
գականութիւններէ առաջ կը տեսնուի: Իմ
փորձովս համոզուած ըլլալով որ երկու նշա-
նածներու ամուսնութենէն առաջ իրարու մօտ
անցուցած օրերը կենաց ամենէն երջանիկ օ-
րերնեն, բերկրութեամբ կերկնցունէի այն օ-
րերը, եւ կը թուէր որ երկու դեռահասակ ա-
մոլներուն ամեն օր իրարու հետ տեսակցելով
վայելած զանազան զուարճութիւններն օրքան
զօր անոնց սէրը կաճեցընէին: Շատ անդամ ա-
ռաւօտները նուագարաններու ձայնով կար-
թըննայինք, եւ օդն աղէկ եղած օրերն ալ ձիե-
րով որսի կենէինք: Նախաճաշինու ընթրիքին
միջոցի ժամերը տիկնայք հադուելու կասլուե-
լու եւ կարդալու կը նուրիէին: Սովորաբար ե-
րես մը բան կարդալէ ետեւ հայելին կը նայէին,
որ (փլիխոփայններն անդամ կը հարկադրին խոս-
տովանելու) շատ անդամ դրքի մը երեսներէն

աւելի դեղեցիկ երեսներ կը ցուցընէր . Ընթ-
րիքին կինն կը նախագահէր , եւ կուղէր միշտ
իւր մօքը պէս ինքը բաշխել կերակուրները ,
եւ այս առթիւ ամեն մէկ կերակուրին պատ-
մութիւնը կընէր մեզ : Ճաշին վերջը՝ տիկին-
ները քովերնէս չմեկնելու համար՝ սեղանը
վերցընել կուտայի , եւ շատ անգամ աղջիկնե-
րը՝ իրենց երաժշտութեան դասասուին օդ-
նութեամբը՝ դուարձալինուադերգութիւն մը
կընէին : Ճուռ գալը , թէյ խմելը , պարը եւ
մանր մունք խաղերն օրուան մնացորդը կը
կարծեցընէին՝ առանց թղթախաղերու օգնու-
թեան . վասն զի ես ամեն տեսակ խաղերը կա-
տէի բաց ՚ի Պաքկամօնէն** , որուն համար իմ
հին բարեկամս Պ . Վլիմօթ եւ ես քսան վա-
րանոց մը երբեմն կը զոհէինք : Զեմկընար չյի-
շել հոս այս առթիւ չարագուշակ դէպիք մը՝ որ
վերջին անգամ խաղած ժամանակիս պատա-

* Անգղիոյ մէջ սովորութիւն է , որ ճաշէն
ետեւ սեղանին ծածկոցը կը վերցընեն , եւ սե-
ղանին վրայ չիշով դինի կամգարեջուրկը գը-
նեն . այն ժամանակը կանայք կը մեկնին եւ ի-
րենց սենեկակը կերթան . իսկ էրիկ մարդիկ կը
մնան եւ խօսակցութիւն կընեն : (Ծան . Բորբ .)

** Տեօակ մը նարատ՝ որ Անգղիացիք շատ կը
խաղան :

հեցաւ : Աս առ մը նետելու պէտք ունէի եւ
հինգ անգամ իրարու վրայ եւնո՞ւ : Հէ նետեցի :

Այս կերպով քանի մը ամիս անցան եւ
վերջապէս մեր գեռահասակ խօսեցեալներուն
հարսանեաց օրը որոշուեցաւ , որուն կերեւէր
թէ երկուքն ալ մեծ անհամբերութեամբ կը
տենչային : Հարսանեաց պատրաստութիւննե-
րուն ժամանակ կնոջս ցուցըցած լուրջ եւ բազ-
մազմադ դէմքն եւ աղջկանցս խորամանկնայ-
ուած քները պէտք չունիմնկարագրելու . իմ
ուշադրութիւնս ուրիշ բանի վրայ հաստատ-
ուած էր . միակընութեան վրայ ջատագովու-
թեան գիրք մը աւարտելու վրայ էի եւ չուտով
հրատարակել կուղէի : Այն գրուածս մեծա-
հանճար գործ մը թուելով աչքիս , չկրցայ ինք-
զինքս բռնել . եւ պարծանօք իմ հինաւուրց
բարեկամիս Պ . Վիլմօթին ցուցըցի , աներկ-
միտ ըլլալով որ պիտի հաւնէր : Բայց ետքը
հասկըցայ որ բարեկամս հակառակ կարծեաց
ջերմ կողմնակից էր , եւ այս ալ իրաւացի
պատճառաւ մը : Քանզի խմացայ որ նոյն օրերը
կին մը առնելու ետեւէ էր չորրորդ ամուսնու-
թեամբ : Այս պարագան , ինչպէս որ կրնար
սպասուիլ , բաւական կծու վիճարւանութեան
մը առիթ եղաւ , եւ մազմնաց որ մեր պատ-
րաստեալ խնամութեանը արգելք պիտի ըլ-

լար . սակայն հարսնիքէն օր մը առաջ որոշեցինք ընդարձակօրէն վիճաբանել այս խնդրոյս վրայ .

Երկուքս ալ հաւասար տաքութեամբ վիճեցինք . Պ. Վ. իմօթ զիսիրրեւ չարափառ ամբաստանեց , եւ ալ այս ամբաստանութիւնն իր վրայ դարձուցի . Ան պատասխանեց , ես պատասխանեցի : “Նոյն միջոցին բարեկամներէս մէկը զիս դուրս կանչեց , եւ վշտագինդէմքով մը զիս յորդորեց որ վէճէն հրաժարիմ եւ թող տամ ծերունի պարոնին նոր կին մ’ալ առնուլ՝ եթէ կուզէր , գոնէ մինչեւ որ տղուս հարսնիքը կատարուէր : » Ի՞նչ , գոչեցի . ճըշմարտութեան դատը մէկ զի ձգեմ , եւ թողում որ նորէն կարգուի , երբոր արդէն իր փաստերը ջրելով պատասխան չգտնելու կէաըն հասուցած եմ զինքը : Կրնաք զիս համոզել մանաւանդ բոլոր հարստութենէս հրաժարելու , բայց վիճաբանութենէս ամենեւին ոչ : — Հարստութիւնդ , ըսաւ . այն ժամանակ բարեկամս , ցաւօք սրտի կիմացունեմ քեզ , գրեթէ բոլորովին ոչնչացած է : Քաղաքացի վաճառականդ՝ որուն քովշահու դրեր էիր ըստակներդ , մնանկացեր է , եւ մնանկութեան օրէնքին տակ չիյնալու համար՝ ձկեր փախեր է , եւ կը կարծուի որ հարիւրին հինգ անդամ



թողոցած չէ : Ես չէի ուղեր այս դժբաղդ
լուրը տալով քեզ եւ ընտանիքով վշտացընել
մինչեւ հարսանեաց վերջը , բայց հիմա պարտք
համարեցայ իմացընել , որպէս զի վիճաբանու-
թիւնդ մեղմացընես . վասն զի կը կարծեմ որ
խոհեմութիւնդ կը ճանչցունէ քեզ թէ այս մի-
ջոցիւ քիչ մը կեղծաւորիլ հարկ է , մինչեւ որ
խօսեցեալ օրիորդին հարստութիւնը որդւոյդ
ձեռքը անցնի : — Կեղծաւորիլ մի , պատաս-
խանեցի , եթէ տուած լուրդ ճշմարիտէ , եթէ
մուրալու վիճակին մէջ ալ ինկած ըլլամ , վա-
տութիւն յանձն չեմ առնուր , սկզբունքնե-
րըս չեմ ուրանար : Ես հիմա ներս կերթամ այդ
փորձութիւնը կը յայսմնեմ : Իսկ վիճաբա-
նութեանս դալով , հիմակուց ես կաւճում ծե-
րունի հակառակորդիս ըրած մէկ քանի զի-
ջումներս , եւ չեմ ներեր նորէն կարգուիլ ոչ
իրաւամբ , ոչ իրօք եւ ոչ ուրիշ որ եւէ մը-
տօք :

Խիստ երկար կըլլայ նկարագրել երկու
ընտանեաց դդացած այլ եւ այլ տպաւորու-
թիւնները երբոր զիսուս եկած փորձանքն
յայսմեցի , բայց դեռևսհասակ խօսեցեալներուն
դդացած տրամութիւնն ամենին աւելի էր : Պ-
Վ-Լ-Մ-Ծ- որ արդէն քիչ մը հակամէտ էր մեր
առուածութն աւրելու , այս լուրն առնելուն պէս

հաստատուեցաւ իր տրամադրութեանը կրայ :
Առաքինութիւն մը ունէր անթերի , ոյն էր
խօհեմութիւնը , որ շատ անգամ միակ առա-
քինութիւնն է որ անվթար կերպով մեզի կը
մնայ եօթանասուներկու տարեկան հասակի
մէջ :

ԳԼՈՒԽ . Գ .

ՏԵՂԻՆ-ՀԻՆ-ԴԻ- : ՄԵՐ ԷՒՆ-ԵՐ ՀԱ-
ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-

ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-ՀԱ-

Մեր գերդաստանին սա միակ յոյսը մնա-
ցեր էր որ մեր դժբաղդութեան լուրը սուտ կամ
սիսալ եղած ըլլար . բայց շատ չանցաւ քաղա-
քին մէջ ունեցած գործակատարէոնամակ մը
եկաւ ու զայն իր ամեն պարագաներով հաս-
տատեց . Հարստութեանս կորուստը ինձի հա-
մար բան մը ըսել չէր . իմբոլոր հոգո ընտան-
եացս համար էր , որ ստորին վիճակի մը մէջ
պիտի իյնար , առանց այնպիսի կրթութիւն մը
առած ըլլալու , որով անարդութիւնը բանի
տեղ չդնէր .

Տասն եւ հինգ օրի չափ անցաւ , ընտանի-
նացա տրտմութիւնն սիովիելու ձեռք չզարկի .
վասն զի տարաժամ մարդարութիւնը՝ կուկիծը
նորոգելէ զատ ուրիշ բան չըներ : Այն միջոցին
իմ բոլոր մտածմունքս եղաւ ընտանիքս ապ-
րեցընելու միջոց մը գտնել : Աերջապէս տարին
տասն եւ հինգ լիրանոց փոքրիկ ժողովրդագե-
տութիւն մը ինձի առաջարկուեցաւ հեռաւոր
գեղի մը մէջ , ուր կրնայի սկզբունքներս ա-
ռանց արգելքի վայելել : Ուրախութեամբ ըն-
դունեցի այս առաջարկութիւնը , եւ միտքս
Դրի որ փոքրիկ ադարակ մը մշակելով եկամու-
տըս աւելցընեմ :

Այս որոշումն ընելէս ետեւ , առաջին
գործս եղաւ կործանեալ հարստութեանս մնա-
սորդներն հաւաքել : Ամեն պարտքերը վճարե-
ցի , եւ տասն եւ չորս հազար լիրայէն չորս
հարիւր լիրա միայն ձեռքս մնաց : Այն ժամա-
նակ , դիմաւոր փոյթս եղաւ ընտանեացս մնա-
փառութիւնը մեր կարողութեան աստիճանն
իջեցընել . վասն զի գիտէի որ մեծամիտ աղ-
քատութիւնը թշուառութեան լրումն է :
«Դիտէք , որդեակներս , ըսի , որ մեր ամեն
խոհեմութիւնը չէր կրնար այս փորձութեան
առաջքն առնուլ . բայց խոհեմութիւնը կրնայ
ուրիշ աւելի մոծ բան մը ընել , այն է՝ եկած

վորձութեան հետեւանքը ոչնչացընել : Ահա
սնանկացանք , սիրելի որդեակներս . խոհա-
կանութիւնը կը պահանջէ որ ինքզինքնիս մեր
խոնարհ վիճակին յարմարցընենք : Ուրեմն ա-
ռանց տրանջելու մէկ դի թողունք այս պեր-
ճասիրութիւնը որով շատ մարդիկ թշուառ ե-
ղերեն , եւ անշուք վիճակի մը մէջ վնառենք
այն սրտի անդորրութիւնը՝ որով ամեն մարդ
կրնայ երջանիկ ըլլալ : Աղքատներն առանց
մեր օգնութեանը զուարթ ուրախ կապրին .
մենք ինչու չպիտի կրնանք ապրիլ առանց ա-
նոնց օգնութեանը : Այս , որդեակներս , այս
վայրկենէս 'ի բաց թոթափենք շքասիրու-
թեան դաղափարները : Մեղի բաւական բան
մնացած է երջանիկ ըլլալու համար՝ թէ որ
խոհականութիւնունինք , եւ հարատութեան
պակասը թող բաւականասիրութիւնը լեցը-
նէ : »

Եւ որովհետեւ անդրանիկ որդիս ուսում
սովորած էր , ուղեցի Նոստրա զրկել որպէս զի
ստացած հմտութիւններովը կարենար ինք-
զինք ապրեցընել եւ մեզ ալ ձեռնոտու ըլլալ :
Քարեկամներու եւ մորձաւորներու բաժանու-
մը թերեւս աղքատութեան ամենէն աղետալի
հետեւանքներէն մէկն է : Հաստ այն օրը՝ ուր
առաջին անգամ ցիր ու ցան պիտի ըլլացինք :

Որդիս՝ իր հրաժարական ողջոյնը մատուցանելէ ետեւ իր մօրն ու մնացեալներուն՝ որոնք արտառուքնին համբոյըներնուն հետ կը խառնէին, եկաւ իմ օրհնութիւնս խնդրեց : Բոլորով սրտիւ օրհնեցի զինքը եւ հինգ ալ ոսկի վրան աւելցուցի, որ իրեն տալիք բալոր ժառանգութիւնո էր այն ժամանակը : « Զաւակս, ըսի, ահա լոնտրա կերթաս քալելով, ինչպէս որ քու Հուքէր պապդ ալ քենէ առաջ դացեր էր : Առ ուրեմն սա ձին՝ որ Ճիվէլի բարեսիրտ եպիսկոպոսը տուեր էր անոր, սա ցուպը. մոնակեւ սա գիրքը որ ճամբան քեզ միսիթարէ : մէջի սա երկու առղը միլիոններ կարժէ : Մասսէ էն ենթացոյ, և ու դեռ վարդան ուհամբանը, և ու զնուան : Այս թռղ ըլլայ միսիթարութիւնդ ճանրուդ մէջ : Գնա, զաւակս . ինչ որ ալ ըլլայ վիճակդ, տարին անգամ մը եկո զիս տես : Բարի սիրտ ունեցիր միշտ, եւ երթաս բարով : » Որդիս այսպէս աշխարհիթատրոնին մէջ մերկ ձգելու չվախցայ, վասն զի ուղղութիւն եւ պատիւ ունէր . դիտէի որ թէ բարձրանար, թէ իրնար, միշտ լաւ դեր մը սիտի խաղար :

Որդւոյս երթալէն քանի մը օր ետքը կարդը մեզի եկաւ : Զգել երթալ այնպիսի տեղէ մը ուր այնչափ երջանիկ օրեր անցուցեր էինք, ա-

ուանց արտասուաց չեղաւ, որուն ամենէն արի
սիրտն ալ չէր կրնար դիմանալ : Ասկէց զատ,
եօթանասուն մղոն ճանապարհորդութիւն մը
այնպիսի ընտանիքի՝ մը համար որ մինչեւ այն
ժամանակը տասն մղոն հեռացած չէր տունէն՝
մեզ շատ կը վախցընէր . եւ աղքատներն այ՝ որ
քանի մը մղոն տեղ ետևւնուս եկան՝ իրենց ա-
զաղակնեցուն աւելի կաճեցընէին մեր երկիւ-
որ : Առաջին օրը առանց արկածի ճանապար-
հորդելով երսուն մղոն մօտեցանք մեր ապա-
դայ բնակարանին, եւ իրիկունը ճանքուն վրայ
խեղճուկ պանդոկ մը իջանք : Երբոր մեր սեն-
եակը ցոյց տուին մեզ, սովորութեանս համե-
մատ աղաչեցի պանդոկապետին որ հետերնիս
նստի, եւ գոհութեամբ հաճեցաւ, վասն զի իր
խմելիքնալ մեր ծախուց հաշուին վրայ պի-
տի աւելինար հետեւեալ առտուն : Ինչ եւ ի-
ցէ, մարդը քաջ ծանօթութիւն ունէր մեր նոր
բնակելիք երկրին, եւ մասնաւորապէս կը
ճանչէր Թօրնհիլ ասպետը՝ որ նոր բոնած ա-
զարակիս տեղն էր, եւ գտնուած զեղէս քանի
մը մղոն հեռուն կը բնակէր : Զանինկարագրեց
իրեւ մարդ մը որ աշխարհիս հեշտութիւննե-
րէն զատ ուրիշ բան ճանչելու փոյթ չունէր, եւ
մասնաւորապէս նշանաւոր էր գեղեցիկ սեռին
վրայ ունեցած սիրովը : Աւելցուց թէ չկար ա-

ուաքինութիւնմը որ կարող ըլլար անոր վար-
պետ հնարքներուն եւ անդուլ հետամտութեա-
նը դիմանալ , եւ շրջակայ տասն մղոն երկրին
մէջ հազիւկը գտնուէր երկրագործի աղջիկ մը
որ անկէ յաղթուած եւ եւքն ալ անհաւատար-
մութիւն տեսած չըլլար : Այս լուրը զիս վշտա-
ցուց , բայց աղջիկներուս վրայ ուրիշ աղջե-
ցութիւն ըրաւ , որոց դէմքին վրայ գիտես թէ
մօտալուտ յաղթութեան մըյոյսը փայլիլ սկը-
սաւ : Կինս ալ վստահ ըլլալով անոնց հրապու-
րիչ գեղեցկութեանն ու առաքինութեանը
վրայ , նոյնչափ բերկրիլ սկսաւ : Երբոր մենք
այս մտածութիւններով զբաղած էինք , պան-
դոկապետին կինը ներս մտաւ եւ էրկանը ի-
մացուց թէ երկու օրէ 'ի վեր սլանդոկը բնա-
կող զարմանալի պարոնը ստակ չունէր , եւ
չէր կրնար ծախքին հաշիւը վճարել : « Ստակ
չունի՞ մի , ըսաւ պանդոկապետը . ատ ան-
հնարին բանէ . վասն զի դեռ երէկ էր որ տեղ-
ւոյս պահակապետին երեք ոսկի տալով ազա-
տեց խեղճ հին զօրական մը՝ որ չուն մը գողցած
ըլլալուն համար քաղաքին փողոցներուն մէջ
դանակոծ պիտի ըլլար : » Բայց կինն իր տուած
լուրը հաւաստելով , պանդոկապետը սենեա-
կէն դուրս ելնելու պատրաստուեցաւ երդում
ընելով որ անպատճառ պիտի ստանար իր առ-

նելլիքը : Այն ժամանակ աղաչեցի իրեն որ զիս
այն առատասիրտ օտարականին քովը տանի
որուն մարդասիրութիւնը նկարագրեր էր : Հա-
ճեցաւ եւ ինձի պարոն մը ներկայացուց որ իր-
սուն տարեկան կար, եւ վերարկու մը հաղած
էր որ երբեմն ոսկեթել ժապաւէններով զար-
դարուած կերեւէր : Բարեձեւ էր մարմնով,
թէպէտ դէմքին վրայ մտածողութեան խոր-
շոմներ ունէր : Խօսուածքը հակիրճ եւ ցա-
մաք էր, եւ կը թուէր թէ քաղաքավարական
արարողութիւններէ չէր հասկընար կամ բանի
տեղ չէր դներ : Նըրբոր պանդոկապետը դուրս
ելաւ, չկրցայ կարեկցութիւնս չյայտնել օ-
տարական պարոնին, աեսնելով զինքը այն-
պիսի կացութեան մէջ, եւ քսակս մատու-
ցի իրեն որպէս զի պանդոկապետին ստակն
հատուցանէ : «Դոհութեամբ կընդունիմ, ը-
սաւ, եւ ուրսի եմ որ վրաս եղած բոլոր ստա-
կըն ուրիշի պարդեւելու օխալմունքս առիթ
տուաւ ինձի տեսնելու որ մեր մէջ առաջ-
քարեսիրտ մարդիկ կը գտնուին : Սակայն կու-
զեմ նախ բարերարիս անունն ու բնակութիւ-
նը իմանալ, որպէս զի տուած ստակը հնար
եղածին չափ չուտով հատուցանիմ : » Զինքը
լիովին դոհ ըրի այս մասին, ոչ միայն անունա-
ըսելով, այլ եւ դլխուս եկած վերջին ձախոր-

Դռւթիւնն ու բնակելու գացած տեղս և Ռւրեմն այս հանդիպումը յուսացածէս աւելի բարեբաղդութիւն մ'է . ըստ ։ վասն զի ես աշայն կողմը պիտի երթամ , եւ հեղեղներուն պատճառաւ երկու օրէ 'ի վեր հոս մնալու հարկադրուած եմ . կը յուսամ որ վաղը ճանքայն երն անցանելի կրնան ըլլալ : Պատասխան տուի թէ իր ընկերութիւնը բերկրառիթ պիտի ըլլար մեզ . եւ կնոջս ու աղջկանցու հետ միաբան աղաչեցինք որ իրիկուան ճաշը հետերնիս ընէ : Յտաբականին խօսակցութիւնը միանգամայն հմաալից եւ զուարճալի ըլլալով կը փափաքէի որ երկար շարունակէր . բայց ննջելու ժամանակն եկած էր , եւ հետեւեալ աւուրճանապարհորդութեան յոդնութեանը պատրաստուելու համար հանգստանալ հարկ էր :

Հետեւեալ առաւօտուն ամենքսալ'ի միասին ճանքայ ելանք Ընտանիքս ձիով էին . իսկ Պ . Պրչէլ՝ մեր նոր ընկերակիցը՝ քալելով կերթար մեծ ճամբուն քովի շաւիդներէն , եւ ժպտելով կիմացընէր որ լաւ հեծած չըլլալնուս համար չէր ուղեր մեզ ետ ձգել : Եւ որովհետեւ դեռ ջուրերը բոլորովին քաշուած չէին , պարտաւորեցանք ուղեցոյց մը վարձելու որ առջեւնուս կերթար ձիով : Պ . Պրչէլ ու

եռալ ամենուն ետեւէն կերթայինք : Ճանրուն
աշխատութիւնը թեթեւցուցինք փիլիսոփա-
յական վիճաբանութիւններով , որուն քաջ
հմուտ կերեւէր : Բայց զիս առաւել զարմացը-
նող կէտը սա էր , որ թէպէտինձի պարագ ու-
նէր , այսու ամենայնիւ իր կարծիքներն այն-
պիսի յամառութեամբ մը կը պաշտպանէր , որ
դիտես թէ ինք ինձմէ առնելիք ունէր Մերթ
առ մերթ ճանրուն վրայ աեսնուած տուներուն
որու սեփականութիւն ըլլալը կը հասկըցընէր
ինձի : Գիշ մը հեռուն գեղեցիկ տուն մը ցու-
ցնելով , « Սա տունը Պ . Թըրնհիլ անուն երիւ-
տասարդ ազնուականինէ , ըստ , որ մեծ հա-
րսատութիւն ունի ձեռքը բայց բոլորովին իր
հօրեղբօրը Աըր Ուիլիըմ Թըրնհիլի կամքէն
կախեալէ : Այս վերջինը բաւականութեամբ
ապրելով , մնացեալ բոլոր հարսատութիւնն իր
եղբօրորդւոյն ձեռքը յանձնած է , եւ ինքը
մեծ մասամբ քաղաքը կը նստի : — Ի՞նչ կը-
մես , ըսի , մեր գեռահասակ կալուածատէը
եղբօրորդին է Աըր Ուիլիըմ Թըրնհիլին՝ որուն
առաքինութիւնը : առատաձեռնութիւնն ու
տարօրինակ բնաւորութիւնը աշխարհածա-
նօթ է եղած է : Աս լսեր եմ Աըր Ուիլիըմ Թըրն-
հիլի համար թէ Անգղիոյ մէջ ամենէն առա-
տաձեռն բայց մոտահած մարդոց մէկն է , եւ

վերջին աստիճան բարեգործ է : — Թերեւս քիչ
մը չափէն աւելի , բայց Պ . Պրշէլ . գոնէ երի-
մասարդ ժամանակը՝ բարեգործութիւնը չա-
փազանցութեան հասուցեր էր : Վասն զի այն
ժամանակ իր կիրքերն աւելի բուռն եւ մանա-
ւանգ բոլորովին առաքինութեան հակամէտ
ըլլալով , վիպապանական ծայրայեղութեանց
առաջնորդեցին զինքը : Կանուխ հետամուտ
ըլլալով զինուորական փառքի եւ գրադիտու-
թեան , շուտով նշանաւոր եղաւ զինուորական
ծառայութեան մէջ , եւ գրադիտութեան մա-
սին ալ բաւական անուն ստացաւ : Շողոքոր-
թիւնը միշտ փառասիրին ետեւէն կերթայ ,
վասն զի փառափրութիւնը մեծ հաճոյք կըզ-
գայ , շողոքորթութենէ : Խել մը մարդոցմէ շըր-
ջապատեալ էր , որոնք իրենց բնաւորութեան
մէկ կողմը միայն կը ցուցընէին իրեն . ասան-
կոյ իր սեփական օդտին մտադրութիւնը կոր-
սընցընել սկսաւ ընդհանուր համակրութեան
մը մէջ : Ամեն մարդ սիրելի էր իրեն , վասն զի
բազդը չէր թողուր իրեն տեսնել որ անոնց մէջ
չարագործներ ալ կային : Բժիշկներն հիւան-
գութիւն մը կը պատմեն , որուն մէջ մարդուս
բոլոր մարմինն այն աստիճան դիւրազգացու-
թիւն մը կունենայ որ թեթեւ մը դպչելով կը
ցաւի : Այս սկարոնն ալ նոյն դիւրազգացու-

թիւնը կը կրէր մոքին մէջ : Պինտ թեթեւա
զէտը՝ ստոյգ կամ կեղծ՝ սաստիկ կը վշա-
ցընէր զինքը , եւ իր հոգին այլոց աղէտնե-
րուն չափազանց զգացողութեամբը կը չար-
չարուէր : Այսպէս ամենուն օդնութեան հաս-
նելու տրամադրեալ ըլլալով , դիւրաւ կրնաք
մակարերել որչափ մարդիկ գտաւ իրմէ օգ-
նութիւն խնդրող : Շռայլութիւնն իր հարըս-
տութիւնը նուազեցընել սկսաւ , բայց սրտին
բարութիւնը չկրցաւ պակսեցընել . ընդհակա-
ռակն , քանի որ առաջինը կը պակսէր՝ վերջինն
այնչափ կաւելնար : Նախատեսութիւնը կոր-
սընցընելով միանգամայն աղքատացաւ . եւ
թէպէտ խօսքերը խելացի մարդու խօսքէին ,
բայց գործքը խենթի էր : Այսու ամենայնիւ-
տակաւին աղաչաւորներէ շրջապատեալ եւ ա-
նոնց ամենուն խնդիրը կատարելու անկարող ,
ու առաջ էօս+ տալ սկսաւ , իրօք ալ ասկէ աւեւ-
մի բան մը չէր կրնար տալ , Երեսն ալ չէր բըռ-
ներիոր իրմէ նովաստ ուղողիները մերժական պա-
տասխանով տրամեցընէր : Այս ճանքով խել մը
ակնկալուներ գլուխը ժողվեց , որոց յոյսն 'ի
դերեւ ենելուն տարակոյս չունէր , թէ եւ ա-
նոնց օգնելու կը բազձար : Ասոնք ժամանակ մը
սկասելէ ետեւ՝ արժանաւոր կշտամբանօք եւ
արհամարհութեամբ ձգեցին դաշին քովէն :

Սակայնուրիշներու առջեւ արհամարհելի ըլլա-
լուն չափ՝ ինք իր աչքին ալ անգոմնելի եղաւ ,
իր միտքը շողոքորթութեան յեցած ըլլալով ,
երբոր այս նեցուկը կորմնցուց , իր սրտին գո-
վութիւններէն չկրցաւ բերկրութիւն մը զդալ ,
վասն զի իր սիրտը չէր կրթած երբէք ինք-
զինքյարգելու : Աշխարհք ուրիշ դէմք մը ըս-
կըսաւ առնուլ իր աչքին : Իր բարեկամաց շո-
ղոմանքը լոկ հաւանութեան դարձաւ . հա-
ւանութիւնն ալ համարձակ խրատատուու-
թեան դարձաւ . եւ խրատն ալ՝ երբոր մերժը-
ուի՝ կշտամբանք կը բերէ : Այն ժամանակը
տեսաւ որ այն բարեկամները՝ զորոնք անձ-
նական շահն իր շուրջը գումարերէր , յարդա-
նաց արժանի մարդիկ չէին : Այն ժամանակը
հասկըսաւ որ ուրիշի մը սիրտը շահելու համար՝
իր սիրտն անոր տալուէ , վերջապէս , այն ժա-
մանակը հասկըսայ որ . . . որ . . . բայց մոռ-
ցայ բուն ըսելիքս վերջապէս , պարոն , որո-
շեց ինքինք հոգալ , եւ իր կործանեալ հա-
րըստութիւնը վերականգնելու հնարք մը մը-
տածեց : Եւրոպայի ամեն երկիրները քալելով
պարտեցաւ իր տարօրինակ բնաւորութեանը
համեմատ , եւ այն երկար ճանապարհորդու-
թեան միջոցին եկամուաները դիզուելով , գեռ
երսուն տարու չեղած՝ իր հարապութեան վի-

ճակն առաջուանէն աւելի ընդարձակեցաւ :
Եր բարերարութիւններն ալ աւելի պատշաճ
եւ չափաւոր են հիմա , բայց իր մտահաճ բը-
նաւորութիւնը դեռ կը պահէ , եւ միշտ հա-
ճոյք կ'զգայ տարօրինակ առաջինութիւննե-
րէ :

Պ . Պրչէլի այս պատմութիւնն այն աստի-
ճան ուշադրութիւնս գրաւեր էր , որ հազիւ-
առջեւի ճանրաս կը նայէի : Նոյն միջոցին յան-
կարծ ընտանեացս ահարեկ ճիշերը մեզ զար-
հուրեցուցին , եւ զարձայնայեցայ որ երկրորդ
աղջիկս սրբնթաց հեղեղի մը մէջ ինկեր էր ձի-
էն , եւ հոսանքը զինքը կը քշէր կը տանէր :
Երկու անգամ ջուրին յատակը իջեր էր , եւ ես
չէի կրնար շուտով օգնութեան հասնիլ : Այր-
տըս այն աստիճան խռովեր էր որ բան մը ը-
նելու կարող չէի : Աղջիկս անշուշտ պիտի
խղդուէր , եթէ Պ . Պրչէլ վտանգը տեսնե-
լուն պէս՝ ջուրը չնետուէր եւ մեծ աշխատու-
թեամբ զանի ցամաքը չհանէր : Մնացեալ ըն-
տանիքս ալ քիչ մը վերէն պտըտելով անվնաս
անցան հեղեղատը , եւ աղջկանս քով երթա-
լով անոր հետ ՚ի միասին չնորհակալութիւննիս
յայտնեցինք Պ . Պրչէլին : Աղջկանս երախ-
տագիտութիւնը աւելի դիւրին է երեւակայել
քսնթէնկարադրել : Սուաւելաչքերով չնոր-

հակալ կըլլար իր ազատչին՝ քանի խօսքով. եւ
երկար ժամանակ անոր թեւերուն կրթընած
մնաց՝ որպէս թէ տակաւին անոր ողնութեանը
կարօտ էր : Կինս ալ կը յուսար թէ օր մը անոր
այս երախտիքը փոխարինելու եւ մեր տունը
հրաւիրելով չնորհակալ ըլլալու բերկրութիւ-
նը կունենայ : Մօտակայ պանդոկը իջնելով,
բաւական հանգչելէ եւ 'ի միասին ճաշելէ ե-
տեւ, Պ. Պրչէլ՝ որ ուրիշ կողմ պիտի երթար՝
մնէ բաժնուեցաւ, եւ մենք ճանբայնիս շա-
րունակեցինք : Կինս ըսաւ ինձի ճանբան թէ
Պ. Պրչէլին շատ հաւներ էր, եւ աւելցուց որ
եթէ մեղի պէս ընտանիքէ մը աղջիկ առնելու
համար ազնուականութիւն եւ բաւական ալ հա-
րըստութիւն ունենար, անկէ աղէկ եւ արժա-
նաւոր մարդ չկար : Կնոջս այս խօսքերը լսած
ժամանակս չկրցայ ժպիտս բռնել : Մուրաց-
կութեան եզերքը հասած մէկու մը բերնէն ա-
սանկ ամբարհաւաճ փարթամութեան խօս-
քեր լսուիլը կրնար ծաղունիւթ ըլլալ չարամիա
մարդոց . բայց ես բան մը չի ըսեր այս անմեղ
երազներուն որ մեր սրտի երջանկութիւնն ա-
ւելցընելու առիթ են :

ԳԼՈՒԽ . Դ :

Ա. ԴՆԵՆ Ի ՀԱ-ՐՃ Բ-Շ-ՏՒ ՀԵ-Ց Ք-ՐԵ-Ր Հ-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր
- Ե-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր Ե-ՐԵ-Ր

Մեր նոր բնակութեան տեղը փոքրիկ
գիւղ մ'էր երկրագործ բնակիչներով , որոնք
ոչ հարուստ էին եւ ոչ ալ աղքատ : Իրենց հա-
մար գրեթէ ամեն պէտք եղածը տուներնուն
մէջ ունենալով , քիչ անգամ քաղաք կերթա-
յին աւելորդ բաներ գնելու : Բարակ մարդոց-
մէ հեռու ըլլալով , նախկին դարերու պար-
զութիւնը դեռ կը պահէին . եւ սակաւազէտ
կենաց վարժուած ըլլալով , հազիւ գիտէին
թէ ժուժկալութիւնն առաջինութիւն է : Դոր-
ծի օրերն ուրախ զուարթ կաշխատէին . բայց
տօները կը բռնէին իրեն պարապոյ եւ զուար-
ճութեան միջոցներ : Ծննդեան օրը կ'երգէին .
Սուրբ Վաղենտինոսի օրը մէկ մէկու սիրոյ կա-
պեր կը դրկէին . բարեկենդանին ըլլիթ կու-
տէին . ապրիլի առաջին օրը ճարտարմու-
թիւննին կը ցուցընէին , եւ հրեշտակապետաց

տօնին իրիկունը ջերմեռանդութեամբ ընկուղ
կը կոտրէին . Մեր գալուն լուրն առնելով՝ գե-
ղին բոլոր բնակիչքն իրենց վիճակաւոր երէ-
ցը դիմաւորելու եկան , ամենէն ծանր հան-
գերձներնին հագած , եւ առջեւնէն սրինդ ու
թմբուկ զարնելով : Մեզ ընդունելու համար՝
ճաշ պատրաստեր էին , որուն ուրախութեամբ
բազմեցանք : Խօսակցութիւններուն մէջ հան-
ճարին պակասը ծիծաղն ու զուարթութիւնը

լեռց :

Մեր փոքրիկ բնակարանը բլուրի մը ըս-
տորոտն էր : Ետեւնիս գեղեցիկ անտառակ
մը կար , առջեւնուս ալ կարկաջասահ առու
մը կանցնէր : Մէկ կողմերնիս մարդագետին ,
միւս կողմերնիս դալարավայր մ'էր : Ագա-
րակս երսուն արտավարի չափ գերազանց հող
մը ունէր որուն համար նախորդիս հարիւր լի-
րա տալով ինձի ձգելու հաճեցուցեր էի : Զի
կար ագարակ մը որ փոքրիկ կալուածէս աւելի
մաքուր եւ լաւ խնամուած ըլլար : Շուրջը պա-
տող կնձնիներուն ու ցանկերուն տեսքն զմայ-
լելի էր : Տունը միայարկ էր եւ յարդով ծած-
կուած , որն որ աւելի խաղաղ երեւոյթ մը կու-
տար անոր : Պատերը ներսի կողմէն մաքուր
սպիտակ ներկուած էին , զորոնք աղջիկներս
իրենց նկարած պատկերներով զարդարեցին :

Թէպէտ մի եւ նոյն սենեակը գահլիճ եւ խոհաւ
րան էր մեղ , բայց ասով աւելի տաք կըլլար
ձմեռը . ասկէց զատ , վերջին աստիճանու մաւ-
քուր պահուելով , պնակները , սկաւառակներ-
ընու պղինձ անօթները լաւ մը մաքրուած եւ
քիւերուն վրայ վայելուչ կարդաւ շարուած՝
ակնահաճոյ երեւոյթ մը ունէին եւ շքեղ կա-
րասիներու տեղ կը բռնէին : Երեք ալ ուրիշ
սենեակներ կային , մէկը կնոջս եւ ինձի հա-
մար , երկրորդը՝ որ մերինին մէջն էր՝ երկու
աղջկանցս համար , երրորդն ալ՝ որ երկու ան-
կողին ունէր՝ միւս որդւոցս համար .

Այս փոքրիկ հասարակապետութիւնը՝ ո-
րուն օրէնսդիրն էի ես , հետեւեալ կերպով
կարդադրուած էր : Առաւօտուն կանուխ դահ-
լիճը կը գումարուէինք , ուր արդէն սպասու-
հին կրակը վառած էր : Երար վայելուչ յար-
դանօք ողջունելէ ետեւ , (վասն զի ես միշտ
սա համոզումը ունեցած եմ , որ ամենէն մտե-
րիմ անձանց մէջ անդամ պէտք է արտաքին
քաղաքավարութեան ձեւեր պահել , առանց
որոյ ազատութիւնը միշտ կաւրէ բարեկամու-
թիւնը) , ամենքս ալ ծունդի վրայ կուդայինք
եւ Աստուծոյ փառք կուտայինք մեղինոր օր
մը չնորհելուն համար : Այս պարտականու-
թիւնը կտարելէ ետեւ , որդիս եւ ես մեր

գուրսի գործերուն կերթայինք , մինչդեռ կիւ-
նըս ու աղջիկներսնախաճաշը պատրաստելու
կ'զբաղէին , որ որոշեալ ժամուն միշտ պատ-
րաստ կըլար : Կէս ժամկը տեւէր նախաճաշը ,
իսկ ընթրիքնիս մէկ ժամ . եւ այս երկար ժա-
մանակը լցընելու համար կինս ու . աղջիկներս
անմեղ զուարճաբանութիւններ կընէին իրա-
րու , ես ալ փիլիսոփայական վիճաբանութիւն-
ներ կընէի որդւոյս հետ :

Առաւօտները կանուխ ենելնուս հա-
մար , իրիկուան մութը դեռ չկոխած աշխա-
տութիւննիս կը վերջացընէինք , եւ տուն կը
դառնայինք ընտանեացս քով որ փափաքանօք
մեզ կ'սպասէին , եւ ուրախագին դէմքով , գոհ
սրտով եւ լաւ կրակ մը վառած մեզ կընդունէ-
ին . Ընկերութենէ ալ զուրկ չէինք . Երբեմն
մեր դրացի Ֆլամագօրու վարձակալը՝ որ խօ-
սակցութենէ շատ կախորժէր , շատ անդամ
ալ գեղին մէջ բնակեալ կոյր մը՝ որ հովուա-
կան տիկ կը վիչէր , մեզի այցելութեան կուգա-
յին եւ մեր հաղարջի գինին կը խմէին , որուն
համար ունեցած համբաւնիս չէինք կորսնցու-
ցած : Այս երկու բարեմիտ մարդիկը տարրեր
միջոցներ ունէին զուարճալի ըլլալու . Մէկը
տիկը վիչած ատեն՝ միւսը սրտաշարժ երգ մը
կերգէր : Օրը կը լմննար՝ ինչպէս որ ոկսեր էւ-

ինք : Տղոցս ամենէն փոքրերը այս աւուր Ա .
դրոց դասերնին կը կարդային . եւ ով որ աւելի
բարձրածայն , աւելի յստակ եւ ուղիղ կարդար,
կիրակի օրը հինգ փարանոց մը ունէր աղքա-
տաց գանձանակը ձգելու համար :

Երբոր կիրակի կը լար , զարդարանաց օր
մէր , որուն դէմիմամեն պատուէրներս անօ-
գուտ կը լային : Մինչդեռ կերեւակայէի թէ
մնծամտութեան վրայ տուած քարոզներս աղ-
ջիկներուս սնափառութեանը յաղթած ըլլա-
լու էին , կը տեսնէի որ սրտովնին դեռ կապ-
ուած էին իրենց առջի պաճուճանքներուն Տա-
կաւին կը սիրէին ասղնենկարները , ծոպերն ու
շղարշները . խակ կինս իր մետաքսեայ կարմիր
կրկնոցին վրայ հոգի կուտար միշտ , վասն զի
անգամ մը դիպուածովը ըսեր էի թէ վայլեր էր
իրեն :

Գլխաւորապէս մեր հոն համնելուն առաջին
կիրակի օրը շատ վշտացայ ընտանեացս պըճ-
նասիրութեանը վրայ : Առջի իրիկուընէ պատ-
ուիրեր էի աղջկանցս որ առաւօտուն կանուխ
պատրաստ ըլլան . վասն զի միշտ կուզէի որ
ժողովուրդէն առաջ եկեղեցին գանուխմ : Ճըշ-
դիւ կատարեցին պատուէրս . բայց երբոր ա-
ռաւօտուն նախաճաշ ընելու սիտի ժողովէ-
լինք , տեսայ որ կինս ու աղջիկներս վար եկան

առաջուան պէս չքեղազարդեալ , մաղերնին
անուշահոտ խւղերով օծուած , երեմներնին պի-
սակաւորուած , երկայն քղանցքներ ետեւնուն
վեր ամփոփուած , որ քալած ժամանակնին կը
խշրտար . Ձկրցայ ծիծաղս բռնել մանաւանդ
կնոջս մնափառութեանը վրայ , որմէ առաւել
խոհեմութիւն կ'սպասէի : Ուստի մտածեցի
լուրջ դէմքով հրամայել որդւոյս որ կառքեր-
նիս երթայ բերել տայ : Աղջիկներս զարմա-
ցան այս հրամանիս վրայ . բայց ես առաւել
ծանրութեամբ կրկնեցինոյն հրամանը : « Ան-
շուշտ կատակ կընես , սիրելին , ըսաւ կինս .
մենք կրնանք խիստ աղէկ քալելով եկեղեցի
երթալ հոսկէց . եւ կառքի պէտք չունինք :
— Կը սխալիս , սիրելիս , ըսի , պէտք է որ կառ-
քով երթանք . վասն դի թէ որ այդ զարդա-
րանքով հետի երթանք , վիճակիս բոլոր տը-
ղայքը ետեւնուս կիյնան ու մեզ ծաղր կընեն :
— Ստուգիւ , ըսաւ կինս , ես միշտ կը կարծէի
որ այրս գոհ կըլլար իր զաւկըները մաքուր ու
պարկեշտօրէն հագուած տեսնելով : — Ուզա-
ծիդ չափ մաքուր եղիր , ըսի խօսքը կտրելով ,
բայց այդ ըրածնիդ մաքը ութիւն չէ : Այդ թե-
ղանիները , պիսակները , ծոպերը մեզ ատե-
լի պիտի ընեն դրացի կանանց : Ոչ որդեակ-
ներս , ոչ , ըսի աւելի հանողարտ դէմքով մը .

պէտք է որ ձեր այդ զգեստները փոխէք և
աւելի պարզ կերպով հադուիք . պաճուծանքը
չփայլեր մեզի պէս մարդոց , որ պատշաճ կեր-
պով ապրելու խակ կարողութիւն չունինք :
Չեմ դիտեր թէ այդ վերջաւորներն ու ժապա-
ւէններն հարուստներուն անդամ կը վայլեն ,
եթէ չափաւոր հաշուով մտածենք որ հա-
րուստներուն աւելորդ զարդարանքներովն
աղքատներուն մերկութիւնը կրնայ ծածկը-
ուիլ :

Այս կշտամբանքս ազդեցութիւն ըրաւ .
Խսկոյն գացին հեղութեամբ հանդերձնին փո-
խելու . եւ հետեւեալ օրը բերկութեամբ տե-
սայ աղջիկներս որ ինքնիննստերիբենց շրջա-
զգեստին երկար քղանցքը կը կարճըցընէին ,
որոց աւելցուկովը երկու փոքր տղոցս մէկ մէկ
կիրակիի բաճկոններ շինուեցան : Մանաւանդ
բերկրեցայ տեսնելով որ շրջազգեստներն աւ-
ելլի վայելչութիւն առին երբոր քիչ մը կար-
ճըցան :

առ ու նախաքը պղղմանամ որ առա զի՞ւ ու նու նու
շուման առնաբա - **ՊԼՈՒԽ** . Ե

աղիք նույսաբա որ , զարան անք մի մի ամելաբ
ու մատառ մակա ապաբաբ զի՞ւ ապաբաբ չոյն

Նոր եւ մեն շանօնաբեն իւ : Շառ անգամ այս բանը
որուն կըսը ամեն բանէ անելէ շանօնէն իւ դնենտ ,

ու որ այս ամեն աղբաբերէւ իւււու :

Ապաբաբ մասա զույց ապաբաբ մատառանաւու
ողիւն զանձի զաւուն ապաբաբ մատառանացիւն

Ցունէն քիչ մը հեռուն նախորդս նատա-
րան մը շիներ էր թեղօշներէ եւ այծիտերեւ-
ներէ հովանաւորեալ : Օդը լաւ եղած օրերը՝
երբոր գործերնիս կանուխ լմննար՝ հոն կեր-
թայինք 'ի միասին կը նսատէինք գեղեցիկ դաշ-
տերւն տեսքը վայելելու երեկոյեան անդոր-
րութեան մէջ : Հոն կը խմէինք երբեմն նաեւ
թէյը , որ հիմա արտաքոյ կարգի ճաշ մ'էր մեզ
համար . եւ այս ալ խիստ քիչ պատահելուն
պատճառաւ նոր ուրախութեան մը առիթ էր
մեզ : Տեսնելու բան մ'էր թէյին պատրաստու-
թեանը համար եղած իրարանցումն ու արարո-
ղութիւնները : Մեր խմած ժամանակը՝ երկու
փոքրերնիս ընթերցմունք կընէին սեղանին
վրայ , եւ մենէ ետքը անսոնք կը խմէին : Երբե-
մըն զուարճութիւննիս պէսպիսացընելու հա-
մար աղջիկներս կիթառով կերգէին , եւ այս

նուազերդութեան ժամանակը՝ իս ալ կնոջն
հետ քիչ մը անդին՝ կը ճեմէի ծածկագեղմար-
դագետնին վրայ, ու ուր մեր դաւեկըներուն վրայ
կը խօսէինք զմայլելով, եւ վիշած քաղցրասիդ
զեփիւռը կը վայելէինք որ միանգամայն ա-
ռողջութիւն ուներդաշնակութիւն կը բերէր
մեղ :

Այս կերպով սկսանք տեսնել որ կենաց
ամին վիճակ իր սեփական բերկրութիւնն ու-
նի : Առաւոտը մեզ աշխատութեան կարթըն-
ցընէր, բայց իրիւլունը պարապոյ զուարձու-
թեամբ կը փոխարինէր զայն :

Աշնան սկիզբը, տօնի օր մ'էր (տօնի օրեւ-
րը սուրբ կը պահէի իրբեւ աշխատութենէ
գաղրելու միջոցներ), երբօր ընտանիքս մեր
սովորական զբօսատեղին տարեր էի, եւ մեր
մանկամարդ երաժիշտներն ալ իրենց սովորա-
կան նուազերդութիւնն սկսեր էին, յանկարծ
եղջերու մը տեսանք որ մեր նստած տեղին
քան քայլաչափ մօտէն վաղեց անցաւ, եւ
տագնապէն հասկըցանք որ որսորդներէ կը
հալածուէր : Հազիւ խեղճ կենդանիին վտան-
դը մտածել կ'սկսէինք եւ ահա չուներնու որ-
սորդները տեսանք որ ետեւէն ինկեր կը հալա-
ծէին : Իսկոյն ուղեցի տուն գառնալ ընտան-
եօքս . բայց կինս ու աղջիկներս՝ հետաքրք-

բութեամբ թէ հիմացմամբ եւ կամ ուրիշ ներ-
 քին պատճառաւ մը տեղերնէն չշարժեցան .
 Յառաջընթաց որսորդն արագութեամբ անցաւ
 դնաց, անոր ետեւէն չորս հինգ ուրիշ որսորդ-
 ներ՝ նոյնպէս շտապով անցան : Ամենէն վերջը
 երիտասարդ մը հասաւ միւսներէն աւելի վա-
 յելչադէմ, որ մօտերնէս անցած ատեն ու-
 շադրութեամբ մեզ նկատելէն ետեւ կեցաւ,
 եւ ձին հետի սպասաւորին յանձնելով, իշխա-
 նական անփոյթ դէմքով մը քովերնիս եկաւ,
 եւ առանց իր ով ըլլալը մեզի ճանչցընել ու-
 զելու՝ դնաց ուղղակի աղջիկներս ողջունե-
 լու, որպէս թէ կասկած չունէր սիրով ըն-
 դունուելուն : Բայց անոնք կանխաւ սովորած
 էին յանդուդն նայուած քներն արհամարհել :
 Ասոր վրայ երիտասարդն խացուց մեզ թէ ին-
 քը շրջակայ երկրին տէրն էր եւ անունը Թօրն-
 հիլ էր : Յետոյ նորէն աղջիկներուս մօտեցաւ
 ողջունելու, եւ այնչափ մեծ եղաւ հարստու-
 թեան եւ շքեղ հագուստներուն աղդեցութիւ-
 նը՝ որ այս անդամ իր ողջոյնը չմերժուեցաւ .
 Խօսուածքն ու կերպերը յանձնապաստան՝
 բայց միանդամայն հեշտ եւ ախորժելի ըլլա-
 լուն՝ շուտով ընտելացանք իրարու, եւ քովեր-
 նիս երաժշտական դործիքներ տեսմնելով՝ նը-
 ռադածութիւն մը ըսնելու շնորհը խնդրեց :

Սս հաճ չըլլալով այսպիսի անհամեմատ ծանօթութեան մը, աչք ըրի աղջիկներուառը յանձն չառնուց բայց նոյն միջոցին կինս հակառակն ակնարկելով, աղջիկներս անոր հնազանդեցան, եւ գոհ դէմքով մը Տրայտընի մէկ երգը նուագեցին : Պ. Թօրնհիլ մնծապէս գոհութիւն ցուցուց թէ երգին ընարութեանը եւ թէ երգեցման եղանակին վրայ, եւ յետոյ կիթառը ձեռքն առնելովինքը նուագել սկսաւ, թէ եւ ոչ յաջողապէս . բայց մնծ աղջիկս անկէ ընդունած գովութիւնն առաւելովը իրեն վճարեց հաստատելով թէ իր վարպետէն աւելի աղդու կը հնչեցընէր կիթառը, Այս գովեստին Պ. Թօրնհիլ գլուխը խոնարհեցուց, աղջիկս ալ նոյնը ըրաւ յարգանօք : Պ. Թօրնհիլ գովեց աղջկանս կիրթ ախորժակը . աղջիկս ալ անոր հանճարը գովեց, այնպէս որ հարիւր տարուան ծանօթութիւնը չէր կրնար ասկէ աւելի իրար ճանչցընել : Անխելք մայրն ալ՝ որ աղջկանը չափ ուրախ կըլլար մտօքը՝ աղաչեց Պարոնին որ տուն հրամէ, եւ եւ մեր հաղարջի գինին ճաշակելու հաճի : Բոլոր ընտանիքս փոյթ մը ունէին անոր հաճոյ ըլլալու, աղջիկներս խելքովնին արդի ժամանակի նիւթոց վրայ կը խօսակցէին անոր հետ . Մովսէսս ալ ընդ հակառակն՝ հիներուն վրայ մէկ երկու հար-

ցումներ ըրաւ , որով անոնց ծիծաղը շաբժեց
իր վրայ . բայց ինքը դոհեղաւ՝ կարծելով թէ
իր խելացութեանը վրայ կը ինդային եւ ոչ
պարզմտութեանը : Փոքրերս ալ միւսներուն
չափ զբաղած էին եւ հիւրին քովին չէին զատ-
ուէր : Հազիւ կրնայի զանոնք արգելու որ
իրենց աղտոտ մատներովն անոր զգեստին ու-
կեթել ժապաւէններուն չդոզչին ու չկեղառ-
տեն եւ գրպանը վեր առնելով մէջը չնային :
Կրիկուան գէմՊարոնը մեկնեցաւ զնաց՝ վե-
րըստին այցելութեան դալու ինդիր ընելով ,
որն որ՝ մեր կալուածատէրն ըլլալուն համար՝
դիւրութեամբ ընդունեցինք :

Դուրս ենելուն պէս , կինս խորհուրդ ը-
րաւ այն աւուր անցքին վրայ , եւ ըստ թէ
խիստ յաջող գէպք մ'էր . վասն զի ինքը միշտ
տեսեր էր որ խիստ կարգէ դուրս բաները վեր-
ջէն բարի արգիւնք մը կունենան : Կը յուսար
տեսնել այն օրը՝ ուր պիտի կրնայինք տակա-
լին գլուխնիս բարձրացընել սինտ երեւելի ըն-
տանեաց մէջ , եւ խօսքը վերջացուց ըսելով
թէ ինքը պատճառ մը չէր տեսներ , ինչու հա-
մար երկու Վրինքլէրս օրիորդներն այնպիսի
հարուստ ու երեւելի ամուսիններ գտան ու իր
աղջիկները չպիտի կրնային գտնել : Այս վեր-
ջին խորհրդածութիւնն ինձի ուղղուած ըլլա-

լով , պատասխան տուի , թէ ես ալ ոչ . Այլին
եւ ոչ միւսին պատճառը չէի տեսներ . ինչպէս
նաեւ չէի տեսներ թէ ինչու համար մէկը վլ-
ճականանութեան մէջ հարիւր հաղար լիրա
կը վաստըկի , եւ միւսը ճերմակ տոմսակով
կը մնայ : « Բայց այն անձինքը , ըսի , որ ի-
րենցմէ վեր էրիկներ առնելու կամ վիճակա-
հանութեան մէջ հարիւր հաղար լիրանոց բա-
ժինը շահելու կը տենչան , թէ յաջողին եւ
թէ վրիպին՝ միապէս խենդէ են իրենց ծիծաղե-
լի պահանջմանը համար : — Ահա գոչեց կինս ,
միշտ այդպէս սրտերնիս կոտրել կուղես երրոր
քիչ մը ուրախ ըլլանք : Ըսէ ինձի Սոփիա , սի-
րելիս , ի՞նչ կը խորհիս մեր այս նոր ծանօթին
վրայ , բարերարոյ անձ մը չի՞թուիր քեզ :
— Վերջին ծայր , մայրիկ , պատասխանեց աղ-
ջիկս . կարծեմ որ ամեն բանի վրայ շատ խօսք
կրնայ ընել , եւ երբէք չվարանիր . որչափ չըն-
չիննիւթ մը ըլլայ , այնչափ շատ բան կըր-
նայ խօսիլ վրան : Առկէց դատ , շիտակը խօսե-
լով , խիստ գեղեցիկ մարդ մ'է : — Այո , ըստ
անդիէն Օլիվիա , էրիկ մարդու համար գէշ
չէ . բայց ես չհաւնեցայ իրեն : Այնչափ ըն-
տանութիւն կը ցուցընէ որ լրբութեան կը հաս-
նի . մանաւանդ երբոր կիթառ նուազելու կել-
նէ՝ անտանելի է : » Այս երկու դպրոցու-

թիւնները ես հակադարձ մոտօք մեկնեցի , եւ
աղջկանցս ըսածներէն սա գտայ , որ Սովիա
սրտովը կարհամարհէր զայն , իսկ Օլիվիա կըդ-
մացլէր վրան : «Ինչ որ տլրլլայ ձեր դատողու-
թիւնն անոր վրայ , ես կըխոստովանիմ որ ինձի
շատ հաճոյ չեղաւ : Որդեակներս , անհամեմատ
բարեկամութիւնները միշտ ձանձրոյթով կը-
վերջանան , եւ ինձի թուեցաւ թէ իր ու մեր
մէջ եղած հեռաւորութիւնը լիտվին կ'զգար :
Մեզի պէս եւ մեր կարգէն մարդիկ տեսնենք :
Արանց մէջ բաղդի ետեւէ վազողներուն պէս
արհամարհելի մարդիկ չկամ . չեմ գիտեր թէ ին-
չու համար բաղդախնդիր կանայք ալ նոյնպէս
արհամարհելի չըլլան : Ուստի ենթագրելով իսկ
թէ Գարոնին դիտումներն առայժմ պատուաւոր
են , շատ չանցած՝ արհամարհանքը պիտի յս-
ջորդէ . իսկ թէ որ պատուաւոր չեն , վրան
խորհելու անդամ կը սարսափիմ . վասն զի ,
թէպէտ զաւակացս բնաւորութենէն վախնա-
լու բան մը չունիմ , կը կարծեմ որ անոր բնա-
ւու . . . » Պիտի շարունակէի խօսքս , բայց ընդ-
մըջեցաւ Պարոնին մէկ ծառային վրայ հասնե-
լովք , որ իր տիրոջը կողմէն բարեւներ եւ մաս
մը որսի միս կը բերէր մեզ , միանդամայն իմաւ-
ցընելով թէ քանի մը օրէն պիտի դայ մեզի
հետ ճաշ ընէ : Այս ընծան յարմար ժամանակ

գալով հզսր ջատագով մը եղաւ Պարոնին , եւ
տեսայ որ այնուհետեւ ինչ ալ ըսէի ամոր դէմ՝
օգուտ չպիտի ընէր : Ուստի պարտաւորեցայ
լոելու , եւ միայն գոհ եղայ վտանգը ցուցընե-
լուս վրայ , որմէ զգուշանալն իրենց խոհեմու-
թեանը թողուցի : Այն առաքինութիւնը՝ որ
հանապաղ պահպանութեան պէտք ունի , պա-
հապսնի մը աշխատութիւնը չարժեր ։

ԳԼՈՒԽ Զ .

ՊԵՂԾԵՒՆԻՆ ՏԵԽԱԿ ՎԵՐԴԱԿԵՐՆԵԱՆԸ ՀՅ ՊԱՏ

Մեր վէճին մէջ քիչ մը կիրք մասածըլլա-
լով անուշ տեղը կապելու համար՝ միաբանու-
թեամբ որոշեցինք ընծայ զրկուած որսին մէկ
մասը իրիկուսն ճաշին ուտել , եւ աղջկիներս
ուրախութեամբ պատրաստել սկսան զայն :
« Շատ կը ցաւիմ , ըսի , որ դրացի մը կամհիւր
մը չունինք որ մեր այս խրախճանին մասնա-
կից ըլլալու հրաւիրէինք , վասն զի ես այնպէս
կը դանեմ որ այս տեսակ կերուխութներու-

զուարճութիւնը կը կրկնապատկի երբոր ու-
րիշն ալ մասնակից ըլլայ : — Աստուած ինձի
խեր տայ , ըսաւ իսկոյն կինս , ահա մեր Պ. Պըր-
չէլ բարեկամը կուդայ , որ խեղճ Սովիխաս հե-
զեղին մէջէն ազատեց , ևւ վիճաբանութեան
մէջ քու բերանդ լաւ կը գամէ : — Բերանս կը
գամէ մի . կը սխալիս , կնիկս . կը կարծեմ որ
այդ մասին մէկէ մը երկիւղ չունիմ : Ես քու
սագով կարկանդակ շինելու մասին աշխարհի
առաջին կինն ըլլալուդ վրայ չեմ վիճեր . բայց
տրամաբանութեան մասին կաղաչեմ որ ինձի
տեղի տաս : » Դեռ խօսքս բերանս էր՝ խեղճ
Պ. Պըչէլ ներս մտաւ : Բոլոր ընտանիքս զինքը
սիրով ողջունեցին՝ ամենն ալ զատ զատ ձեռքը
թոթուելով , մինչդեռ ՈՒիքարտիկս ալ աթո-
ռակ մը կը մօտեցընէր իրեն :

Այս խեղճ մարդուն բարեկամութիւնը
ինձի հաճելի էր երկու պատճառաւ . մէկ մը
որ գիտէի թէ ինքն ալ իմ բարեկամութեանս
պէտք ունէր . երկրորդ գիտէի թէ ինքն ալ
կրցածին չափ բարեկամ ըլլալու յօժարութիւն
ունէր : Շրջակայ երկրին մէջ ճանչուած էր
իբրեւ խեղճ ազնուական պարոն մը՝ որ իր ե-
րիտասարդութեան ժամանակը բան մը ընել
ուզած չէր , թէպէտ ևւ հիմա ալ երսուն տա-
րեկանէն սւելի չէր : Եր խօսակցութեանցը

մէջ երբեմն շատ խելացի խօսքեր կընէր . քայց
ընդ հանրապէս չափազանց կը սիրէր մանր տը-
ղայոց հետ ընկերակցիլը , զորոնք է-+էի առև-
տու-+նաւէ կը կոչէր : Տաղեր կերգէր անոնց եւ
վէպեր կը պատմէր : Քիչ կը պատահէր որ գըր-
պանին մէջ բան մը չունենար անոնց տալու
համար . ինչպէս համեմաւոր հաց , հինգ փա-
րանոց սուլիչներ եւ ուրիշ ասոնց նման մանր
մունր բաներ : Ասվորաբար տարին անգամ մը
կուդար այն կողմերը եւ ընակչաց հիւր ըլլա-
լով կապրէր : Խրիկուանն ձաշը մեզի հետ կերաւ
եւ կինո ալ առատ հաղարջի գինի խմցուց ա-
նոր : Խօսակցութիւնը տաքցաւ , Պ . Պըրչէլ
հին տաղեր երգեց , եւ աղայոց ալ Պէվէրլանտի
ու կրիզէլի այծեամին վէպը եւ Քասթքինի ու-
գեղեցիկ Ռօզամօնտէի արկածները պատմեց :
Մեր աքաղաղին ձայնը՝ որ միշտ կէս գիշերէն
ժամ մը առաջ կը խօսէր՝ խմացուց մեզ թէնըն-
ջելու ժամանակ էր . բայց նոյն միջոցին գըժ-
ուարութիւն մը երեւան ելաւ որ մտքերնէս
չէր անցած . այն էր գիտնալ թէ մեր հիւրը
ուր պիտի պառկեցնէինք : Մեզի պէտք ե-
ղածէն աւելի անկողին չունէինք , եւ ժամա-
նակն ալ ուշ ըլլալով չէինք կրնար զանի պան-
դոկը ննջելու վրկել : Այս տարակուսին մէջ
ՈՒՔարտիկս խոստացաւ իր անկողինը տալ՝ ե-

թէ իր Մովսէս եղբայրն հաճէր զինքը իւր
անկողնին մէջ ընդունելու : « Ես ալ , գոչեց
Ուխլիքմս^{*} , իմ անկողինս կուտամ եթէ քոյ-
քերսի զիս քովերնին առնուն : — Ապրիք ,
որդեակներա , ըսի , հիւրընկալութիւնը քրիս-
տոնէի մը առաջին պարտակութիւններէն մէկն
է : Անասուններն իրենց որջերուն մէջ եւ թըռ-
չունները տերեւներուն ներքեւ կը պատսպա-
րին : բայց թշուառ մարդն իր նմաններուն քով
միայն կրնայ պատսպարսն գտնել : Ան որ աշ-
խարհի մէջ ամենէն պանդուխտն եղաւ , ան էր
որ աշխարհս ֆրկելու եկած էր : Տուն չունե-
ցաւ , իրը թէ փորձել ուզելով թէ մեր մէջ հիւ-
րասիրութիւն ընողներ կը գտնուէին : Գերո-
քա , ըսի կնոջս , այդ տղայցս մէկ մէկ կտոր
շաքար տուր : բայց մեծ կտորը Ռիքարտիկին ,
վասն զի առաջ մն խօսեցաւ : »

Առաւօտուն կանուխ ընտանիքս կանչեցի
տարաժամ բուսած խոտերը երթալ քաղեւ-
լու . եւ մեր հիւրը մեզի օդնել ուզելով աշ-
խատաւորաց կարգն ընդունուեցաւ : Գործեր-
նիս շուտով յառաջ գնաց : Ես գլուխ կեցած
էի , միւսներն ալ իմ օրինակիս կը հետեւէին :
Սակայն նշմարեցի որ Պ. ՊԸՀՀԷԼ յատուկ փոյթ

* Ամենէն փոքր որդին :

մը ունէր Սովիայիս օգնելու : Երբոր իրեն ին-
կած դործը կը լմնցընէր , կերթար Սովիային
քով եւ երկար ու մտերիմ խօսակցութիւն մը
կ'սկսէր մէջերնին : Բայց ես Սովիային ողջմը-
տութեանը վրայ համարում ունենալով , եւ իր
փառասիրութիւնն ալ քաջ ճանչելով , երկիւղ
մը չոնէի իր վրայ , մանաւանդ ասանկ ինկած
մարդու մը կողմանէ , Երբոր այն աւուր դոր-
ծերնիս աւարտեցինք , Պ . Պըրչէլ իրիկունը
նորէն մեզի հիւրըլլալու հրաւիրուեցաւ , բայց
յանձն չառաւ ըսելով թէ մեր դրացիներէն մէ-
կուն առւնը պիտի երթար , որուն մանկանը
սուլիչ մը կը տանէր : Երբոր գնաց , ճաշին ժա-
մանակը մեր այս գժբաղդ հիւրին վրայ խօսք
բացուեցաւ : « Ի՞նչ զօրաւոր ապացոյց մէս սա
մարդը , ըսի , անխոհեմեւ անմիտ երիտասարդ
դութենէ յառաջ եկած թշուառութեանց ,
Խելք ունի , բայց ասովիր առջի յիմարութիւնս-
ներն առաւել աններելի կըլլան : Խեղճ չուա-
ռական . ուր են հիմա այն հացկատակները ,
այն շողոքորթները որոց պատղամկուտար եր-
բեմն եւ որոց վրայ կիշխէր : Անոնք թերեւս
հիմա ասոր անմտութիւններովն հարստացող
անառակ մը կը շնթեն : Ժամանակաւ զինքը կը
գովէին , հիմա այն ցոփը կը դովեն : Առաջ իր
խելքը կը պանծացընէին , հիմա իր յիմարու-

թիւնները կը հեղնեն երգիծանօք : Աղքատ
է , եւ թերեւս արժանի է ըլլալու . վասն զիոչ
անկախ ըլլալու փառախրութիւն ունի եւ ոչ
օդտակար ըլլալու հանձար : » Թերեւս գաղտ-
նի պատճառաւ մը չափազանց խօսութիւն բա-
նեցուցի այս դիտողութեանցս մէջ : Սովիա
մեղմով մը զիս յանդիմաննեց : « Հայրիկ , ըսաւ ,
իր առջի վարքնինչ ալ եղած ըլլայ , արդի վի-
ճակը պէտք է զանի քննագատութենէ աղաս
պահէ . իր այժմու չքաւորութիւնը բաւական
պատիժ է իր առջիյիմարութեանցը , եւ ես իսկ
լսած եմ թէ պէտք չէ երրէք անօգուտ տեղը
հարուածել այն մարդիկը՝ որոց վրայ արդէն
Նախախնամութեան ձեռքն իր բարկութեան
խարազանը վերուցեր է : — Իրաւունք ունիս ,
Սովիա , ըսաւ Մովսէս . հիներէն մէկն այդ յա-
շաղկոտ ընթացքը խիստ լաւ կը նկարագրէ
զեղացին առակովը՝ որ Մարսիասայ՝ * մորթը
քերթելու կաշխատէր , մինչդեռ արդէն Ապո-

* Մարսիաս Փոիւգացի , ճարտար փողա-
հար , որ հին հեթանոսներէն երաժշտութեան
Աստուած ճանչուած Ապողոնին հետ մրցելու
ելաւ սա պայմանաւ որ յաղթողն յաղթեալին
մորթը հանէ : Ապողոն յաղթող ենելով Մար-
սիասը ծառի մը կապեց ու մորթը հանեց :
(Ծան . Բորբոք.) :

զան զանի մորթեզերծ ըրած էր : Ասկէց զատ ,
չեմ դիտեր թէ այս խեղճ մարդուն կացութիւ-
նը՝ սիրելի հօրս նկարագրածին չափ դէշ է :
Մենք պէտք չէ որ այլոց զգացածը անոնց տե-
ղըն եղած ժամանակնիս զգացածնուս վրայ դա-
տենք : Խլուրդին բնակարանը մեզի մութ կե-
րեւի , բայց յիշեալ կենդանին զանի բաւական
լուսաւոր կը դանէ . եւ ճշմարիտը խօսելով ,
կը թուի թէ այդ մարդուն խելքն իր վիճակին
յարմար է . վասն զի ես չեմ տեսած մէկը որ
այնչափ աշխուժով խօսէր , ինչպէս այս մար-
դը կը խօսակցէր այսօր քեզի հետ : Այս վեր-
ջին խօսքերն առանց ամենափոքր դիտման
ըսաւ Մովսէս , սակայն աղջիկս շառագնեցաւ ,
եւ ջանաց կեղծ ծիծաղով մը ծածկելիր այլայ-
լութիւնը , միանգամայն հաւաստելով թէ հա-
զիւ ականջ կախեր էր այն մարդուն ըսածնե-
րուն . բայց կը կարծէր որ ժամանակաւ խիստ
քաղցրահաճոյ պարոն մը եղած ըլլալու էր :
Այս ինքզինք սլաշտպաննելու փոյթն եւ շաք
ուագնութիւնը ինձի խիստ անհաճոյ նշաններ
էին , բայց կասկածս զսպեցի :

Մեր կալուածատէրն հետեւեալ օրը ըս-
պասելնուահամար՝ կինս սկսաւ որսի մսով կար-
կանդակ մը շինել : Մովսէս որդիս նստած էր՝
մինչիս վոքրերուն համար կուտայի : Աղջիկը

Ներս ալ իրարանցումի մէջ էին , եւ դիտեցի որ
կրակին վրայ բան մը եփելու զբաղեր էին : Առ-
ջի բերանը կարծեցի թէ մօրերնուն կօգնէին :
բայց Ուիքարտիկս կամաց մը ինձի խմացուց որ
երեսնին քսելու ջուր մը կը պատրաստէին : Ես
այն տեսակ ջուրերու դէմ բնական հակակրու-
թիւն՝ մը ունէի . վասն զի գիտէի որ երեսն դոյ-
նը աւրելէ զատ բանի մը չեն ծառայեր : Ուս-
տի կամացուկ մը աթոռակս կրակին մօտե-
ցուցի , եւ կրակն արծարծելու պատրուակաւ
ունելիքը ձեռքս առնելով այն եփած ջուրը որ-
պէս թէ դիպուածովթափեցի , եւ ժամանակ
չկար որ նորէն շինէին :

ԳԼՈՒԽ Ե .

Դնուալին + իւլւայի քուշուլ + ուրուցիւն հը աւուրդէր : — Աւ-
նին անհիւններն ու ինան մէկ քու երի իւնան բնութիւն +
նին զուարճութու երեւանել :

Երբոր մեր կալուածատիրոջը ճաշ տալու
օրերնուս առաւօտն եղաւ , կրնայ մտածուիլ
որչափ պատրաստութիւններ եղան պարծերես

ելնելու համար։ Դիւրին է նաև երեւակայել
թէ կինսու աղջիկներս իրենց ամենէն ծանր
փետուրներովը զարդարու եցան։ Պ. Թօրնհիլ
եկաւ երկու բարեկամով եւ իր մատրանապե-
տին հետ, որ միանգամայն իր հաճոյակատարն
էր։ Քաղաքավարութեամբ ուզեց իր բաղմա-
թիւ ծառայները մօտակայ գինետունը ղրկել։
բայց կինս՝ ուրախութենէն ուռած՝ ստիպեց որ
կենան եւ կերակուրը մեր տունը ուտեն, մնա-
փառութիւն մը՝ որուն պատճառաւ՝ չմոռնանք
ըսելու՝ ընտանիքս երեք շաբաթ ծոմ բռնելու
հարկադրեցաւ։ Որովհետեւ Պ. Պըրչէլ առջի-
օրը իմացուցեր էր մեղ թէ Պ. Թօրնհիլ ամուս-
նութեան առաջարկութիւններ կընէր Վիլմօթ
օրիորդին, որ երբեմն իմ Գ.էորգ որդւոյս սի-
րուհին էր, այս լուրին վրայ ընտանիքս քիչ
մը պաղ կերպով ընդունելութիւն ըրաւ Պ.
Թօրնհիլին։ Բայց գիսպուածը մեր այս հոգը փա-
րատեց։ Վասն զի ընկերներէն մէկը Վիլմօթ
օրիորդին անունը տալով, Պ. Թօրնհիլ երդ-
մամբ հաստատեց թէ այնպիսի ձառադէմ մէ-
կը գեղեցիկ կոչելու պէս անտեղի բան մը եր-
բէքտեսած չէր։ «Դէմքս կերպարանափոխ ըլ-
լայ, ըսաւ, եթէ Ս. Տընսթանի* զանդակատան»

* Լոնտրայի մէջ եկեղեցի մ'է, որուն շըր-

կանդեղին լուսովվը սիրուհի մը ընտրելն աւելի
նախամեծար չհամարիմ : » Եւ մեծաձայն խըն-
դաց իր այս հանճարաբանութեանը վրայ . մենք
ալնոյնը ըրինք : Հարուստներուն զուարճաբա-
նութիւնները միշտ կը յաջողին : Օլիվիա ալ
իր կողմանէ չկրցաւ համբերել եւ լսուելու չափ-
ցած ձայնով մը ըսաւ թէ Պարոնը գերազանց
զուարճախօս մ'է :

Ըաշին վերջը՝ ես ըստ սովորութեանս բա-
ժակ առաջարկեցի եկեղեցւոյ համար : Մատ-
րանապետը շնորհակալ եղաւ ինձ՝ հաւաստե-
լով թէ իր սրախն միակ սիրուհին էր եկեղեցին :
« 0՞ն , Ֆրանք , անկեղծ եղիր , ըսաւ ասպետն
իր սովորական խրոխտութեամբը . ենթադ-
րենք թէ եկեղեցին քու սիրուհիդ ըլլայ . արդ-
եօք անոր անհաւատարմութիւն չես ըներ օրի-
որդ Առփիային համար : — Օրիորդ Առփիան սի-
րուն է , պատասխաննեց մատրանապետը : —
Ապրիս , Ֆրանք , գոչեց ասպետը . անկեղծու-
թիւնը առաքինութեանց առաջինն է . վասն զի
կեղծաւորութիւնը մոլութեանց ամենէն նող-
կալին է . ինչ կու զեն թող ըսեն բարոյախօս-
ները , որոնք կը կարծեն թէ պէտք չէ ամեն
ջակայնները բազմաթիւ անպարկեշտ աղջիկ-
ներ կը քնակիին խիստ ստորին կարդէ : (Ծան-
նաչէք .) :

մտքէն անցածը խօսիլ . եւ կուզեմայս ըսածա
հաստատել . — Ես ալ կուզէի որ հաստատէիք .
ըսաւ Մովսէս որդիս , եւ կարծեմ որ կրնամ
պատասխանել ձեզ : — Շատ աղէկ , (ըսաւ աս-
պետը , աչք ընելով ընկերութեան որպէս զի
պատրաստուին զուարճալի տեսարան մը տես-
նելու) , եթէ կուզէք հանդարտ կերպով այս
նիւթիս վրայ վիճաբանել , կընդունիմ հրաւէր-
նիդ , եւ նախ կը հարցընեմ թէ ի՞նչպէս կու-
զէք փաստաբանել . վիճաբանութեամբ թէ
տրամախօսութեամբ : — Պատճառաբանու-
թեամբ , ըսաւ Մովսէս , ուրախ ըլլալով որ
թոյլ կը տրուէր իրեն վիճաբանելու . — Դարձ-
եալ շատ աղէկ , ըսաւ ասպետը , եւ նախ կը
յուսամ որ չէք մխտեր թէ ինչ որ է՝ է : Եթէ
այս չընդունիք , հիմակուց կիմացընեմ ձեզ ,
թէ աւելի խօսք չեմ ըներ : — Ինչու սլիտի
չընդունիմ , սլատասխանեց Մովսէս : Կը կար-
ծեմ որ կրնամ ընդունիլ եւ բանիս ալ կուզայ :
— Կը յուսամ նաեւ , յարեց Պ . Թօրնէիլ , որ
կընդունիք թէ մասը բոլորէն փոքր է : — Այո ,
ըսաւ Մովսէս , կընդունիմ , վասն զի իրաւացի
է : — Կը յուսամ գարձեալ որ չէք ուրանար թէ
եռանկիւնի մը երեք անկիւնները երկու ուղիղ
անկեան հաւասար են : — Ատկէ պարզ բան չի
կայ , ըսաւ որդիս , ծանր դէմքով մը չորսդին

նայելով : — Ուրեմն խիստ լաւ , գոչեց ասպետը , արադ արագ խօսելով . հաւաքաբանութեան երկու առաջին մասերն այսպէս հաստատուելէ ետեւ , կանցնիմ նկատելու թէ էից կապակցութիւնը փոխադարձ կրկնապատկութեամբ յառաջադայելով բնապէս խնդրական տրամախօսութիւն մը կարտադրէ , որ մասմբ մը կապացուցանէ թէ հոգեւորութեան էութիւնը կրնայ երկրորդ ստորոգութեան վերաբերիւ — Կեցիք , կեցիք , գոչեց Մովսէս , կը կարծէք որ այդպիսի այլափառ առաջարկութիւնները թողում որ մեղմով անցնին : — Ի՞նչ . գոչեց ասպետը որպէս թէ զայրացած , չպիտի թողուք որ առաջարկութիւններո յառաջտանիմ : Չեզի սլարդ խնդիր մը առաջարկեմ , անոր պատաժիսանը տուէք : Կը կարծէք որ Սրբութէլ իրաւունք ունի երբոր կըսէ թէ առընչականներն յարաբերութիւն են : — Անշուշտ , պատաժիսանեց Մովսէս : — Ուրեմն , ըստ ասպետը , շուտով սլատաժիսան տուէք սա առաջարկութեանս . արդեօք ձեռնարկութեանս առաջին մասին վերլուծակ քանննութիւնը երբեք մէջ պակասաւոր կը դատես թէ չուցք նայիմ , շուտով : — Կը խոստովանիմ , Պալոն , ըստ Մովսէս , որ այդ խորհրդածութիւն-

Ներնուղ զօրութիւնը լաւ չեմ հասկընար բայց
եթէ ատսնք պարզ առաջարկութիւններու
վերածէք , կարծեմ որ կրնամ պատասխան
տալ . — Պարոն , ծառայ եմ ձեր մեծութեանը .
ըսաւ ասպետը : Կը տեսնեմ որ դուք կուզէք
ինէ որ միանգամայն փաստ եւ խելք մատու-
կարարեմ ձեզ : Ոչ , պարոն , ոչ , այդ պահան-
ջումնիդ չափազանց է » : Այս խօսքը բոլոր
նստողներուն ծիծաղը շարժեց խեղճ Մովսէսին
վրայ , որ տրտմելով երեսը կախեց եւ մինչեւ
վերջը մէկ մ'ալ բերանըչբացաւ :

Թէպէտ եւ այս բաներն ինձի հաճոյ չէին,
սակայն Օլխիայի վրայ ուրիշ ասպաւորութիւն
ըրբն , որ յիշողութեան արդիւնք եղող այս զը-
ուարձաբանութիւններն իմաստութիւն կար-
ծեց : Հետեւաբար ասպետին վրայ կատարեալ
բարեկիրժ անձի մը համարում ունեցաւ . եւ
երբ մտածուի թէ վայելչագեղ գէմք մը , գե-
ղեցիկ զգետներ եւ մեծ հարստութիւն մը այս
համարման մեծապէս կը նպաստեն , աղջկանս
կարծիքը կրնայ ներելի համարուիլ : Պ . Թօրն-
հիլ , թէպէտ եւ իրօք տգէտ էր , բայց խօսակ-
ցութեան սովորական նիւթերու վրայ կրնար
ճուռաբանել Ռւստի զարմանալի չէր որիր այս
տաղանդը դրաւէր այնպիսի աղջկան մը սիրուը ,
որ իր ստոցած դաստիարակութեամբը սովորել

էր արտաքին երեւոյթը իւր իսկ անձին վրայ յարդել, եւ հետեւաբար նոյնը ուրիշի մը վրայ տեսած ժամանակն ալ մեծ բանի մը տեղ դնել:

Երբոր մեր երիտասարդ կալուածատէրը գնաց, սկսանք անոր արժանեացը վրայ վիճաբանել: Եւ որովհետեւ Օլիվիայի վրայ անկեր էր միշտ իւր աչքը, եւ յաճախ անոր ուղղեր էր իւր խօսքը, տարակոյս չմնաց թէ անոր այցելութեան նպատակն ալ Օլիվիան էր: Այս նիւթիս վրայ եղբօրն ու քրոջը ըրած անմեղ հեզնութիւններն անհաճոյ չերեւցան իրեն: Կինս անգամնոյն օրուան փառքին մասնակից կը թուէր, եւ կուրախանար իր աղջկան յաղթութեանը վրայ, որպէս թէ ինք էր յաղթողը: « Աիրելիս, գոչեց ըստ որում գործն այս վիճակին հասաւ, պէտք է խոստովանիմ թէ ես խրատ տուի աղջկանցո որ ասպետին այցելութիւնները քաջալերեն: Ես միշտ քիչ մը փաստաիրութիւն ունեցեր եմ, եւ ահա կը տեսնես որ իրաւունք ունիմ եղեր, վասն զի ովլ զիտէ ինչ վախճան սլիտի ունենայ այս դործը: Արգարեւ ովլ գիտէ, ըստ ես ալ հառաչելով: Եթէ ինձի հարցընէք, այս բաներն ինձի հաճոյ շեն, եւ ես աւելի կը սիրեմ աղքատ եւ պարկեշտ մէկը ընտրել քան այս կատարեալ պարոնն իր հարատութեամբն ու անհաւտարմու-


թեամբը : Վասն զի գիտցէք , որ եթէ իմ կառ-
կածածիս սլէս է , կրօնի վրայ թեթեւ կերպով
խորհուղ մարդ մը երբէք չկրնար իմ աղջիկնե-
րէս մէ կը կի՞ն առնուլ : »

« Ստուդիւ , հայր , ըստ Մովսէս , չափա-
ղանց խիստ էք այդ մասին : Աստուած անոր
խորհածին համար երբէք հաշիւ չպահանջեր
անկէ , այլըսած գործերուն հաշիւը պիտի պա-
հանջէ : Մարդ մը չկայ որուն մտքին մէջ հա-
զարողը ըլլալու որ զանոնք վանէ : Կրօնի վրայ ա-
զատ խորհիւը կրնայ ակամայ գործ մը ըլլալ այս
պարոնին վրայ , այնպէս որ՝ թէ եւ իր զգացում-
ները սխալ ըլլան , այսու ամենայնիւ ինքը
պարզապէս կրող ըլլալուն համար , իր միտքը
զրաւող խորհուրդներուն համար ինքը մեղադ-
րելի չկրնար ըլլալ , ինչպէս որ պարիսպ չու-
նեցող քաղաքի մը կոռավարիչը չկրնար մե-
ղադրելի ըլլալ երբոր թշնամին երթաց զայն
զրաւէ : — Այդ ըստածք ձշմարիտ է , որդեակէ
իմ , պատասխանեցի . բայց թէ որ թշնամին հը-
րաւիրողը նոյն խկ կառավարիչն ըլլայ , այն
ժամանակ եղեռնագործ մէ , եւ միշտ այդ վի-
ճակին մէջ են մոլորութիւնն ընդունողները :
Այդ պակասութիւնը մեր մտքին վրայ տիրող
ապացոյցներուն անձնատուք ըլլալու վրայ չէ

կայանար, այլ՝ մեզի ներկայացուած ապացոյցներուն դէմ կամաւ կուրանալու վրայ կը կայսնայ : Այդպիսի անձնուք այն կաշառակուլ դատաւորներուն կը նմանին որոնք մէկ կողման փաստերը միայն մտիկ ընելով վճիռ կուտան՝ առանց միւս կողման փաստերուն ականջ գնելու : Ուստի, զաւակն, մեր սխալ կարծիքները թէ եւ կարենան ակամայ մըտքերնուս մէջ կուզմուիլ, այսու ամենայնիւ զանոնք ընդունած ժամանակնիս որովհետեւ մեզ կամաւ մոլորեցընելու յանձնառու կըլլանք, կամ զանոնք քննելու անհոգութիւն կընենք, պէտք է որիբրեւ յանցաւոր պատժուինք կամ իբրեւ յիմար արհամարհուինք : »

Կինս շարունակեց խօսակցութիւնը, բայց ապացուցութեանս չպատասխանեց: Դիտողութիւն ըրաւ թէ մեր ծանօթներուն մէջ խիստ խոհական անձինք կային որոնք թեթեւահաւատ էին, այսու ամենայնիւ լաւ ամուսին էին : Ասկէց զատ, ինքը աղջիկներ կը ճանչէր, որոնք իրենց այրերը դարձի բերելու չափ խելք ունին : « Եւ ովզիսէ, ըստ, Օլիվիաս ալ նոյն կարողութիւնը չունի՞ արդեօք : Աղջիկս շատ բան կրնայ խօսիլ որ եւ է նիւթոյ վրայ . եւ դիտեմ որ հակածառաթեան մէջ ալ ներհունէ :

« Կանչ կըսես, սիրելիս, ըսի : Աղջիկնիս ի՞նչ
մինաբանութեան դիրք կարդացեր է : Ես չեմ
յիշեր երբէք որ անոր ձեռքն այդ տեսակ դիրք
մը տուած ըլլամ : Անշուշտ չափազանց կը մեծ-
ցընես անոր տաղանդը : — Ոչ, հայր իմ, ըստ
Օլիվիա, սիրելի մայրս իրաւունք ունի : Ես չատ
վիճաբանական գրուածներ կարդացեր եմ, ինչ-
պէս են թուէյքըմի եւ Սքուէրի հակածառու-
թիւնները եւ Ռօպէնսօն Քրիւզօէի Ռւբաթ
դերին հետ ըրած մինաբանութիւնը : — Խիստ
լաւ, աղջիկս, ըսի . հիմա կը հաւատամոր
պիտի կրնաս դարձեր ընել . ուրեմն գնա մօրդ
օդնութիւն ըրէ հաղարջով կարկանդակ շինե-
լու : »



ԳԼՈՒԽ Բ .

Տ-րէն+ հը որ մէշ հարսուր-ըիւն շխատանք, այսու-
ուժնաշնիւ քնայ, անոր ինսու մը շընուրութ բերել :

Հետեւեալ առտուն, Պ . Պըրչէլ մեղ տեսու-
նելու եկաւ : Թէպէտ քանի մը պատճառներով
սկսեր էի դոհ չըլլալ անոր յաճախ այցելութե-

նէն , այսու ամենայնիւ անոր ընկերակցութիւ-
նը չմերժեցի եւ վառարանիս քով ընդունեցի :
Արդարեւ մեղի ըրած ծառայութիւնն՝ իր ծախ-
քը առաւելով կը հատուցանէր . վասն զի ան-
խոնջ կաշխատէր մեղի հետ , եւ խոտ չորցու-
ցած կամ դիզած ժամանակնիս միշտ գլուխ
կանցնէր : Ասկէց զատ միշտ զուարճալի խօսք
մը կը գտնէր ըսելիք , որով մեր աշխատութիւ-
նը կը թեթեւնար : Այնչափ այլանդակամիտ
եւ միանդամայն այնչափ մտացի էր , որ կը սի-
րէի զինքը , կը ծիծաղէի եւ կը դթայի իւր վը-
րայ : Երմէ գժգոհ ըլլալուս միակ պատճառն
էր Սովիիայիս ունեցած յարումը : Զանի իր փոք-
րիկ սիրուհին կը կոչէր կատակելով . եւ երբոր
զարդի համար ժապաւէններ գնէր աղջկանցա
համար , Սովիիայինը միշտ ամենէն գեղեցիկն
էր : Զեմգիտենր ինչպէս կըլլար , բայց կը թը-
ւէր թէ օր քան զօր ինքզինք աւելի կը սիր-
ցընէր , խելքը կաւելնար , եւ իր պարզութիւ-
նը խելքի վրայ հիմնեալ գերազանցութեան
դէմք մը կ'ստանար :

Օրին մէ կը արտերուն մէջ ճաշ կընէինք
անշուք սեղանի մը բոլորաիքը նոտած կամ մա-
նաւանդ պառկած , եւ սփռոցնիս խոտին վրայ
տարածուած . Պ . Պըրչէլ ուրախութիւն եւ
զուարթութիւն կը ծառալէր մնը այն գեղջկա-

կան խնճոյից վրայ : Զուարճութիւննիս աւել-
ցընելու համար՝ երկու սարեւակիրարու կը պա-
տասխանէին երկու հանդիպակաց ցանկերու
վրայէն : Ընտանի կարմրալանջը կուգար ձեռ-
քերնուս մէջէն հացի փշրանք կը կոցէր : Կը
թուէր թէ մեր շուրջը գտնուած ամեն բան
մեր անդորրութեանը մասնակից կըլային եւ
կաւելցընէին : « Ամեն անգամ ասանկ նստած
ժամանակնիս , ըսաւ Սովիա , Պ. Կէյի նկարագ-
րած երկու տարփաւորներուն վախճանը միտ-
քըս կուգայ որոնք իրարու բազկացը մէջ մե-
ռեր են՝ որացներու կոյտ մը վրանին իյնալով :
Այնպէս սրտաշարժ է այն նկարագիրը , որ հա-
րիւր անգամ կարգացեր եմ զմայլելով : — Ին-
ձի որ հարցընէք , ըսաւ որդիս , այն նկարագ-
րին ամենէն ազդու կէտերը չեն կրնար հաս-
նիլ Ովիդիոսի նկարագրած Ալիսին ու Գաղա-
տէային : Հռոմայեցի բանաստեղծն աւելի յա-
ջողակ է ընդդիմակի ձեւը գործածելու . եւ
այն ձեւին ճարտար գործածութենէն կախ-
եալ է սրտաշարժին բոլոր զօրութիւնը : — Նը-
շանակութեան արժանի է , ըսաւ Պ. Պըրչէլ .
որ այդ յիշուած բանաստեղծներուն երկուքն
ալ իրենց երկրին մէջ սուտ ախորժակ մը մըտ-
ցուցին՝ բոլոր գրածնուն մէջ մակդիրներ կու-
տակելով : Նուազ հանճարի տէր բանաստեղծ-

ներն աւ ելի դիւրին գտան անոնց թերութեանց
ցը նմանող բլլալ . եւ անգղիական բանաստեղ-
ծութիւնն ալ՝ Հռոմայեցւոց կայսրութեան վեր-
ջին դարերուն բանաստեղծութեանը պէս՝ ու-
րիշ բան չէ հիմա , բայց միայն ճոխ պատկեր-
ներու բաղադրութիւն մը՝ առանց ձեւի եւ կա-
պակցութեան . մակդիրներու շարք մը՝ որներ-
դաշնակութիւնը կաւելցընեն , բայց իմաստին
ուժ մը չեն տար : Բայց թերեւս , տիկին , մըտ-
քովնիդ կըսէք թէ ուրիշները քննադատած
ժամանակս արդարութիւնը կը պահանջէ որ
ես ալ անոնց առիթ մը տամնոյնը ինձի հատու-
ցանելու . եւ ճշմարիտը խօսելով , այս դիտո-
զութիւնը ընելուս միակ նպատակն ալ առիթ
գտնել էր տաղերդութիւն մը ձեզի կարդալու ,
որ ուրիշ ինչ թերութիւններ ալ ունենայ , դոնէ
այն յիշած թերութիւններէս աղատ է :

ՏԱՂԵՐԳՈՒԹԻՒՆ

Հասիր , բարի միայնակեաց , եւ առաջնոր-
դէ ինձի այս անմարդութեանս մէջ դէպի այդ
հովհար՝ որ հիւրասէր ճրագիդ լուսովը կը զբ-
ուարթանայ :

Քանողի անտէր եւ կորսուած կը թափա-
ռիմ հոս տկար եւ դողդոջ քայլերով , եւ կը

թուի թէ անապատն անհռուն կերպով կը տարածի եւ ճանբառ քանի կերթամ կերկնուայ :

Զդուշացիր , որդեակ , գոչեց միայնակեացը , այս վտանգաւոր մութին մէջ ճանապարհորդելէ . վասն զիայն տեսած լոյսդ՝ նենդաւոր մոլի հուր մ'է որ քեզ հրապուրելով կը կորսնցընէ :

Խմգուռս միշտ բաց է անապաստան աղքատորդիին . եւ ուտելիքս թէպէտ քիչ է , սիրով կը նուիրեմ քեզ :

Հոս կեցի այս զիշեր եւ խրճթիս մէջ գըտածդ վստահութեամբ վայելէ , պրառուեայ անկողինս , աղքատիկ կերակուրս , երջանկութիւնս եւ խաղաղիկ քունս :

Դաշտին մէջ ճարակող ոչխարները չեմ մորթեր . ինձի գթացող գերագոյն լակէն՝ առնոնց վրայ գթալ կը սովորիմ :

Այլ՝ լերան պարարտագեղ կողերէն անմեեղ ուտելիներ կը բերեմ , պարկ մը բանջարեղէն եւ պտուղ . մօտակայ ակին ջուրն ալ ծարաւս կանցունէ :

Հոս կեցի ուրեմն , ուխտաւոր , ամենն հոգերը վանէ մաքէդ , վասն զի երկրածնաց ամեն հոգերն անիրաւ են . մարդ այս աշխարհիս

մէջ՝ քիչ բանի կարօտ է, եւ այն քիչն ալ ոչ եր-
կար ժամանակ :

Միայնակեացին խօսքերը երկինքէնիջած
ցողի պէս քաղցր էին : Համեստ ճանապարհոր-
դը գլուխը ծռելով շնորհակալ կըլլայ եւ ետե-
ւէն խրճիթը կերթայ :

Միայնակեացին նուաստ բնակարանը մա-
ցառուախ մը մէջ էր . աղքատին եւ մոլորիալ
ճանապարհորդին ապաստանն էր :

Իր յարդածածուկ յարկին տակ խնամքի
ալէտք ունեցող նպարներ չկային : Դուռը պարզ
փակոցվ մը բացուեցաւ եւ անմնդ զոյգը ներս
մտաւ :

Գիշերուան այն ժամն էր ուր մարդիկ տե-
ղերնին կը քաշուին ուրախութիւն ընելու
կամ հանդ չելու համար : Միայնակեացն իր
փոքրիկ վառարանը կարծարծէ եւ իր մտախոհ
հիւրը զուարթացընելու կը ջանայ :

Իր բուսեղէն նպարը կը հանէ ծիծաղաղին
գիմօք, անոր կը հրամցընէ, եւ վարք . Ալր-
բոցի հմուտ ըլլալով, ձանձրալի ժամանակը
կարծեցընելու համար Սրբոց վէտեր կը պատ-
մէ :

Քովը, փոքրիկ կատու մը, իր դուարթու-

թեանը մասնակից ըլլալով կը խաղայ . ծղրիաբ
կերդէ վառարանին մէջ , խորհւներու տրցակը
ճարճատելով կայրի :

Բայց ճանապարհորդին տիսրութիւնը չը
փարատիր . վասն զի սիրաը կը ճնշուի վիշտե-
րուն ծանրութեանը ներքեւ , եւ արտասուքը
թորիլ կ'սկսի աշքէն :

Միայնակեացը կը դիտէ անոր տրտմու-
թիւնը եւ կարեկից կը լլայ : «Դժբանդ պատա-
նի կը գոչէ , ի՞նչ է այդ տիսրութեանդ պատ-
ճառը :

Արդեօք կորտուած հարստութիւն մ'է ,
ապերախտութեամբ հատուցուած բարեկա-
մութիւն մ'է , կամ արհամարհեալ սէր մ'է :

Աւագ , հարստութեան տուած բերկրու-
թիւններն ունայն ու կորստական են . եւ ա-
նոնք որ այն մնութիւններուն յարդ կուտան , ա-
նոնցմէ առաւել արհամարհելի են :

Եւ ի՞նչ է բարեկամութիւնը . պարագ ա-
նուն մը , մտախաբ հրասլոյր մը որ մեզ կ'որորէ
ու կը քնացրնէ . սառւեր մը որ հարստութեան
եւ համբաւի ետեւէն կերթայ . բայց թշուա-
սին քովին կը փախչի եւ զանի առանձին կը
թողու :

Աէրն ալ աւելի ունայն անուն մ'է , զոռող
դեղուհիներուն ծաղրածութեան նիւթ մը .
ճշմարիտ սէրը չգտնուիր աշխարհիս վրայ ,
բայց թերեւս երբոր տատրակին բոյնըտաք-
ցընէ :

Ուրեմն խելքդ գլուխդ ժողվէ , պատանի ,
եւ արհամարհէ սեռը : Այս խօսքն ըսած ժա-
մանակը պատանիին երեսը կը կարմրի :

Բազմաթիւ հրապոյրներ կը պարզին աչ-
քին , այն պայծառ ամպերուննման՝ որ այգուն
ծագած ժամանակ երկինքը կը զարդարեն ,
արշալուսոյ պէս լուսափայլ եւ անոր պէս վա-
ղանցիկ :

Աչերը , բերանը , սրտաբախ կուրծքը հետ
զհետէ շփոթութիւն կը ձգեն միայնակեացին
սրտին մէջ : Կը հասկցուի որ այն ճանապար-
հորդը չքնաղագեղ օրիորդ մ'էր :

Աւազ , ներեցէք , կը դոչէ , ինձի պէս
անքաղաքավար հիւրի մը , լքեալ թշուառի
մը , որ իր տարաբաղդ քայլերը կը բերէ այս
տեղ ուր երկինք եւ դուք կը բնակիք :

Բայց գթացէք օրիորդի մը վրայ որ սիրոյ
երեսէն թափառական լեռնէ լեռ կը պատըտի ,
հանգիստ կը վնասէ , եւ ամենն տեղ յուսահա-
տութիւն կը դանէ :

իմ հայրս Թայն գետին եզերքը կը բնակէր : Հարուստ եւ հզօր ազնուական մ'էր . իր ամեն ունեցածն իմս պիտի ըլլար . վասն զի ես անոր միակ զաւակն էի :

Անթիւ տարփաւորներ զիս ստանալ ուզեցին , տարփաւորներ՝ որ գեղեցկութիւնս պահծացընելով զիս կը սիրէին կամսիրել կը կերծէին :

Ամեն առտու անոնց պայծառ խումբը կը վութար բոլորտիքո կը գումարուէր ամենաշըքեղ ընծայներով : Անոնց մէջ Ետպին պատանին կը քծնէր ինձի , բայց երբէք սիրոյ խօսք չէր ըներ :

Հազուստը պարզ էր . ոչ հարստութիւն ունէր , ոչ մեծութիւն . բոլոր ունեցածն հաւատարիմսիրտ մ'էր , բայց այն սիրտը բոլորովին ինձի տրուած էր : Արեւուն առաջին ճառագայթէն բացուած ծաղիկը , օդէն զտուած ցողը չէին կրնար հաւասարիլ անոր սրտին մաքրութեանը :

Ցօղը , ծաղիկները հրապոյրներ ունին . բայց կարճատեւ . Ետպին անոնց հրապոյրն ունեցաւ , ես ալ անոնց յեղականութիւնը :

Քանզի մնալիառ եւ գոռող ըլլալով , ովը

բանաց ամեն արուեստներն ՚ի դործ կը դնէի
զանի խոշտանդելու համար , եւ մինչ անոր
խանդակաթ սէրը սրտիս կը դպչէր , ես կը
պարծէի զանի չարչարելուս վրայ :

Վերջապէս արհամարհանքէս ընկճեալ ,
զիս դոռողութեանս թողուց , եւ զնաց անաւ
պատներուն մէջ առանձնութիւն փնտոնց , եւ
հոն մեռաւ :

Բայց հիմա օխալմանս ապաշաւը կը մնայ
իրմի , եւ միայն մահուամբս կրնամ զայն քա-
ռել : Կուզեկմանոր քաշուած առանձնութիւնը
գտնել եւ մեռած տեղին վրայ տարածուիլ :

Հոն , կորուսեալ , յուսահատեալ , ամեն
աչքերէ ծածուկ , պիտի պառկիմ գետնին վը-
րայ եւ մեռնիմ : Այսպէս մեռաւ կտվին ինձ
համար . ես ալ այսպէս սկսոի մեռնիմ անոր
համար :

Ո՞չ . այդ բանը չպիտի ընես , գոչեց միայ-
նակեացն անոր փաթթուելով : Գեղեցկուհին
հիացեալ՝ զանի սկսոի կշտամբէր . բայց լրեն
փաթթուողն կտվինն էր :

Ինձի նայէ , Անձէլին , գու որ միշտ սիրե-
լի եղար ինձի . նայէ , գեղեցիկդ իմ , անս եր-
կար ժամանակէ ՚ի վեր կորուսած կտվինդ :

կենդանի , եւ քու սիրոյդ գարձած :


Թոյլ տուր որ քեզ սրախս վրայ սեղմեմնէւ քաշած ամեն տառապանքս մոռնամ . յաւիտեան չզատուինք իրարմէ , ո՞հ , երբէք չզատուինք , վասն զի իմ ամեն բարիքս դու ես :

Այս , երբէք չպիտի զատուինք իրարմէ , մէկ զմէկ պիտի սիրենք , եւ մէկ մէկու համար սիտի ասլրինք միշտ . քու կեանքդ վերջացնող հառաչքը՝ կտվինիդ ալ կեանքը սիտի վերջացընէ :

Երբոր Պ . Պըրչէլ այս տաղերգութիւնը կը կարդար , Սոփիա իր հաւանութեանը հետ նաև խանդաղատանք մը ցոյց կուտար . Բայց մեր մնդորբութիւնը շուտով շփոթեցաւ մօտերնիս արձակուած հրացանի մը դղրդիւնէն . եւ անմիջապէս մարդ մը ցանկապատէն դուրս ցատկեց զարկած որսն առնելու համար . Որսորդը ասպետին մատրանապետն էր , որ մեղ զրոսցընող սարեւակիներուն մէկը զարկեր էր . Մոտէն եկած այն որոտնը գոստ բոմբիւնէն աղջիկներս վեր ցատկեցին , եւ նշմարեցի որ Սոփիաս զարհուրելով Պ . Պըրչէլի թեւերուն մէջ ինկեր էր . Մատրանապետը քովերնիս եկաւ եւ մեղ զափոցընելուն համար ներում խնդրեց , հաւաստելով թէ մեր հոն ըլլալը չէր զիսեր Ծեռոց Յ-

Ավագիս քովը նստելով, քաղաքավարութեամ
այն առառուն զարկած որան անոր ընծայեց։ Աղ-
ջիկս չէր ուղեր ընդունիլ, բայց մայրն անդի-
էն կամաց մը աչք ըրաւ որ չմերժէ ոււստի աղ-
ջիկս ալ ընդունեց այն ընծան, թէ եւ քիչ
մը գմկամակութեամբ։ Վինս՝ սովորութեանը
համեմատ՝ իր մեծամատութիւնը յայտնեց ա-
կանջս ՚ի վար ըսելով թէ Սովիիա մատրանա-
պետին սիրտը դրաւեր էր, ինչպէս քոյրն ալ
ասպետին սիրտը։ Սակայն ես աւելի հաւանա-
կանութեամբ կը կասկածէի թէ անոր սէրն ու-
րիշի վրայ էր։ Մատրանապետը եկեր էր մեզ
իմացընելու թէ Պ. Թօրնհիլ նուագածուներ
բուներ, դոփարար ըմպելիներ պատրաստեր, ի-
րիկունը լուսնի լուսով մեր դրան առջեւի մար-
դագեսնին վրայ օրիորդներու պարահանդէս
մը տալու միաք ունէր։ « Եւ ձշմարիաը ըսելով
պէտք է խոսանվանիմ, ըսաւ, որ այս լուրը ամե-
նէն առաջ ես ձեզի թերել ուղելու մնշահասէր
ողւով չէր։ Ինձի իբրեւ վարձ՝ կը յուսամ որ
օրիորդ Սովիիա ձեռքը ինձի տալու եւ հետս կա-
քաւելու սլատիւը կընէ ինձ։ » Աղջիկս պա-
տասխանեց թէ չէր գմկամակիր իր առաջար-
կութեանը՝ եթէ կրնար համեստաբար ընդու-
նիլ։ Շբայց ահա հս պարոն մը կայ, ըսաւ Պ.
Պըրչէլի նայելով, որ ցերեկուան աշխատու-

թեանս մէջ ինձի օդնեց, եւ պէտք է որ զուար
ճութեանցս ալ բաժանորդ ըլլայ իրաւաւմբ » :
Պ . Պըրչէլ շնորհակալ եղաւ անոր այս քաղա-
քավարութենէն , բայց իրաւունքը մատրա-
նապետին թողհւց , ըսելով թէ իրիկունը հինգ
մղոն հեռուն հնձոց ընթրիքի մը հրաւիրեալ
էր եւ հոն պիտի երթար : Անոր այս հրաժա-
րումը քիչ մը զարմանալի երեւցաւ ինձ , եւ
չէի կրնար մեկնել թէ կրտսեր աղջկանս պէս
մտացի օրիորդ մը ի՞նչ պէս այս սնանկացած
մարդը նախամեծար կը դասէր այսպիսի ան-
ձէ մը որ մեծամեծ ակնկալութիւններ կու-
տար : Բայց , ինչպէս որ այրերն աւելի լաւ կը
դատեն կանանց արժանիքը , նոյնապէս ալ կա-
նայք աւելի ճիշդ դատողութիւնկընենարանց
վրայ : Կը թուփ թէ երկու սեռն իրար զննելու
սահմանուած են , եւ այս փոխադարձ զըն-
նութեան համար աարդերյաջողակութիւննեւ
հանձար ունին :



ԳԼՈՒԽ թ .

Երւա - պետք - լու + ունաւ + երւաւ Աւշտա : Գերաւան
ւրբաւուն + երեւ + գլու Աւաւ եւ լորիւն + կաւ
գերաւանաւն + լու + լուրդա :

Հաղիւ Պ . Պըրչէլ մեկներ , եւ Սոփիա ալ
մատրանապետին հետ պարելու հաճեր էր ,
մանկիլներս վազելով եկան լուր տուխն թէ աս-
պետը բազմաթիւ ընկերներով մեր տունը ե-
կեր էր : Անմիջապէս տուն դարձանք եւ մեր
կալուածատէրը հոն դտանք երկու պարոննե-
րու եւ երկու պանապաճոյն սիկնանց հետ ,
զորոնք իբրեւ խիստ պատուաւոր եւ ազնը-
ուական քաղաքացի տիկիններ մեզ ներկայա-
ցուց : Այս եկած հիւրերուն աթոռնիս չբաւե-
լով , Պ . Թօրնհիլ իսկոյն առաջարկեց որ պա-
րոնները տիկնանց գիրկը նստին : Այս առա-
ջարկութեան բացարձակապէս գէմկեցայ , թէ
եւ կինս ծուռ ծուռ երեսս նայեցաւ : Մովսէսը
դրկեցինք գրացիներէն երկու աթոռ փոխ առ-
նելու . եւ որովհետեւ ընդ դիմապարի համար
ալ զեռ տիկնայք կը պակսէին , Պ . Թօրնհիլի
հետ եկող երկու պարոնները որդւոյն հետ գա-

ցին երկու պարող տիկնայք դանելու : Դարձան եկան ֆլամպօրու զրացիկս երկու աղջիկներուն հետ , որոնք իրենց կարմիր գլխակապովը կը պանծային : Բայց ձախորդ պարտդայ մը երեւան ելաւ որ մէկուն մտքէն չէր անցներ : Ֆլամպօրուի աղջիկները թէպէտ մեր թեմին ամենէն ընտիր կաքաւիչներն համարուած էին , եւ կաքաւի ու շրջապտոյտ պարերու քաջավարժ էին , բայց ընդդիմապար խաղալու բնաւ ծանօթութիւն չունէին : Այս բանը մեզ շփոթեց առջի բերանը , սակայն ձեւերը քիչ մը ցոյց տրուելէ եւ զիրենք յառաջ ու ետ մը զելէ ետեւ վարժուեցան եւ սկսան բաւական յաջողութեամբ խաղալ : Նուագարաննիս կը բաղկանար երկու ջութակէ , մէկ սրնգէ , եւ մէկ թմբուկէ : Լուսինը խիստ պայծառ էր : Պթօրնհիլ եւ մեծ աղջիկս պարտլուի էին : Ի մեծ զուարճութիւն հանդիսատեսաց . վամն զի զրացիներն իմանալովիսուներամմենց տեսնելու եկեր էին : Ազջիկս այնչափ շնորհօք եւ յաջողակութեամբ կը խաղար որ կինս շկրնալով իր սրտին ամբարհաւաճութիւնը ծածկել . ըսաւ ինձի թէ փոքրիկ վարպետորդին իրմէ սովորեր էր այն ճարտար ու գեղեցիկ քայլափոխները : Քաղաքացի տիկնայք հոգինին կը հանէին որ սնոր պէս խաղան , բայց չէին կը բ

նար : Գլուխնին կը դառնար , կը տարածուե-
ին , կը նուազէին , կը կայթէին , բայց անօ-
գուտ տեղը : Հանդիսատեսներն այս ամենուն
կը հաւնէին . բայց Ֆլամագորու դրացիս դի-
տել առւաւ ինձ թէ օրիորդ Օլիվիայի քայլա-
փոխները ճիշդ կը յարմարէին նուազարաննե-
րուն ձայնին՝ ինչպէս լերան արձագանքը որ
անոնց եղանակները կը կրկնէր : Ժամու մը չափ
պարելէ ետեւ , քաղաքացի տիկնայք՝ հար-
թուխըլլալէ վախնալով՝ պարահանդէսը դադ-
րեցուցին : Մէջերնէն մէկը խօսք մը ըրաւ որ
ինձի խիստ կոշտ թուեցաւ : Ըստ թէ իր
ամենն կողմէն քրտինք կը կաթէր : Երբոր տուն
մտանք , գեղեցիկ պաղ ընթրիք մը հոն պատ-
րաստ դտանք , որ Պ. Թօրնհիլ բերել տուերէր :
Խօսակցութիւնն առաջուանէն աւելի զգու-
շաւոր եղաւ : Աղջիկներս բոլորովին նսեմացան
երկու տիկնանց քով , վամն զի անոնք մեծա-
մեծ ընտանիքներու , բարձր ընկերութիւններու
եւ ուրիշ ասոնց նման նորաձեւ նիւթերու վրայ
միայն կը խօսէին , ինչպէս նկարներու . կիրթ
ճաշակի , թատերական խաղերու , երաժշտու-
թեան , եւ այլն : Արդարեւ երկու երեք ան-
գամ մեզ սաստիկ վիրաւորեցին՝ բերաննուն
հայհոյանք հանելով . բայց աս բանը անոնց
ազնուական ըլլալուն ապացոյց մը կերեւեր ին-

ձի , թէպէտ ետքը խմացայ որ հայհոյանքը հիմա վերցած է բարեկիրթ ընկերութեանց մէջէն : Սակայն իրենց պատճուճանքը կը քօզարկէր իրենց խօսակցութեան կոշտութիւնը : Աղջիկներս կը թուէր թէնախանձելով կը նայէին անոնց գերագոյն կատարելութեանցը վրայ , եւ վրանին տեսմուած պակասութիւններն ալ բարեկիրթ դաստիարակութեան աւելորդները կը համարէին : Բայց անոնց հաճոյակատարութիւնը ուրիշ ամեն բարեմասնութիւններէն աւելի էր : Մէջերնէն մէկը ըսաւ որ եթէ օրիորդ Օլվիա քիչ մը աւելի աշխարհ տեսած ըբլար , շատ աւելի կատարելութիւններ կունենար : Ասոր վրայ միւսն ալ աւելցուց , որ եթէ օրիորդ Առփիա ձմեռ մը քաղաքին մէջ անցունէր , ուրիշ կերպ կըլլար : Կինս ալ անոնց կարծեացը իրաւունք տալով աւելցուց թէ շատ կը փափաքէր որ աղջիկները դոնէ ձմեռ մը քաղաքը կենալով աւելի բարակ կրթութիւն ստանային : Ասոնք լսած ժամանակս չը կրցայ համբերել , եւ պատասխան տուի թէ աղջիկներուս արդէն ստացած կրթութիւնն իրենց վիճակէն բարձր է . ասկէց աւելին ուրիշ բանի չծառայեր , բայց միայն անոնց աղքատութիւնը ծաղրելի ընելու , եւ զուարձութեանց հաշակ մը իրենց աալու , զոր յուսալու

իրաւունք չունէին : « Եւ ինչո՞ւ իրաւունք չի
պիտի ունենան յուսալու , դոչեց Պ . Թօքնհիլ ,
այս օրիորդները՝ որ այսպիսի մեծ զուարձու-
թիւններ հայթայթելու վիճակի մէջ են : « Աստ
իս , յարեց , բաւական մեծ հարստութիւն ու-
նիմ . եւ միակ սկզբունքս են՝ սէր , ազատու-
թիւն եւ հեշտութիւն : Բայց , Աստուած հո-
գիս առնէ թէ որ հարստութեանս կէսը կրնար
սիրուն Օլիվիայիս զուարձութիւն հայթայթել
եւ չտայի իրեն : Ասոր փոխարէն սա միակ շը-
նորհը կը խնդրէի որ ներէր ինձի իմ անձս ալ
աւելցընելնոյն նուէրին վրայ : » Ես բաւական
ճանչած ըլլալով զաշխարհ , կը հասկընայի որ
այսխօսքընախատական առաջարկութեան մը
լրբութիւնը քօղարկելու համար նորաձեւ ոճ
մ'էր . բայց բարկութիւնս զսպելու ջանացի :
« Պարոն , ըսի , կիրքով , ձերներկայ ընկերու-
թեամբը պատուել ուզած ընտանիքնիդ ձեղի
չափ պատուոյ փափուկ զդացմանց մէջ մնեալ
ընտանիք մ'է : Անոր պատուոյն դպչելու որ եւ
իցէ փորձ մը խիստ վտանգաւոր հետեւանք
կրնայ յառաջ բերել : Մեղի հիմա մնացած մի-
ակ բարիք՝ պատիւնիս է , եւ այնպիսի դանձ
մ'է այն՝ որ յատուկ խնամքով պէտք է պահ-
պանենք » : Այս վերջին խօսքերը կիրքով ը-
մելուս վրայ զղջացի երբոր տեսայ որ երիտա-

սարդ ասպետը ձեռքս սեղմելով երդում ըրաւ
որ այս գաղափարս կը գովիչը , եւ կասկածա-
նացս դէմ տհաճութիւն յայտնեց : « Այդ ինձի
ուղղած խօսքերնուդ դէմկը բողոքեմ , ըսաւ-
այդպիսի խորհուրդ մը բոլորովին հեռու էր իմ
մտքէս : Ոչ . աշխարհի մէջ ինչ որ կրնայ ըլլալ
հրապուրիչ , անոնց ամենուն վրայ երդումկը-
նեմթէ կանոնաւոր պաշարման պէտք ունե-
ցող առաքինութիւնն իմ ախորժակիս չյար-
մարիր երբէք . այլ իմ ամեն տարիանքներս
յանկարծական յարձակումով են :

Երկու տիկնայքը որ մնացեալներուն ան-
գէտ ըլլալ կը կեղծէին , այս վերջին համար-
ձակ խօսքերէն դժոհն ըլլալ ձեւացուցին , եւ
խոհական ու ծանր արամախօսութիւն մը սկը-
սան առաքինութեան վրայ : Կինս , մատրա-
նապետը եւ ես իսկոյն միաբանեցանք անոնց
հետ , եւ վերջապէս ասպետն ալ պարտաւո-
րեցաւ իր առջի անզգաստութիւններուն վրայ
զզջալու : Ժուժկալութեան վրայ խօսեցանք
եւ մոլութեամբ չաւրուած սրտի մը մաքրու-
թիւնը գովեցինք : Գոհ եղայ որ կրտսեր որ-
դիքս այս օգտակար խօսակցութիւնը մտիկ
ընելու համար սովորականէն աւելի արթուն
նստան : Պ . Թօրնհիլ աւելի յառաջ գնաց՝ հար-
ցընելով թէ իրիկուան աղօթքն ընելու կը հա-

ճէի՞ . Ուրախութեամբ ընդունեցի անոր առաջարկութիւնը , եւ գիշերը խիստ հաճոյական կերպով անցաւ , մինչեւ որ հիւրերը մեկնելու միտք ըրբն : Տիկինները խիստ գժկամակ կերեւէին աղջիկներէս բաժնուելնուն վրայ , որոց հետ սրտերնին սիրով կապուեր էր , եւ միաձայն աղաչեցին ինձի որ աղջիկներս իրենց տունը այցելութեան զրկելու չնորհ ընեմ : Ապակետն ուժ առւաւ անոնց խնդրուածքին , եւ կինս ալ միաբանեցաւ անոնց հետ : Իակ ես վարանելով երկու երեք պատճառամք յառաջ բերի , բայց աղջիկներս իսկոյն ջրեցին . այնպէս որ վերջապէս հարկադրեցայ բացարձակալէս մերժել , որն որ հետեւեալ օրը խոժոռ երեսներ տեսնելու եւ կարճ պատճառիսաններ լսելու պատճառ եղաւ ինձի :

—————♦♦♦————

Գլուխ ք .

Այն օրէն ՚իվեր սկսայ նշմարել որ չափաւորութեան , պարզութեան եւ բաւականասիրու-

թեան վրայ տուած երկար եւ տաժանադին խը-
րատներս բոլորովին արհամարհուեր էին։ Աս-
տիճանաւ եւ հարստութեամբ մննէ բարձր ան-
ձերու մեղի ըրած քաղաքավարութիւններէն
ընտանեացս հին գոռոզութիւնն արթնցեր էր։
զոր թմրեցուցեր էի, բայց չէի կըցեր մարել։ Ե-
րեսի ու պարանոցի համար գործածուած ջուրե-
րըն առջի պէս շարուիլ սկսան պատուհաններ-
նուս մէջ։ Արեղակը՝ մարմնոյ մորթին փափ-
կութիւնը եղծելուն, եւ կրակն ալ տան մէջ ե-
րեսի դոյնն աւրելուն համար արգիլուեցան։
Կինս դիտողութիւն ըրաւ թէ առաւօտուն կա-
նուխ ելնելն աղջկանցս աչքերը կը տգեղցընէ։
Ճաշէն ետեւ աշխատիլը քթերնին կը կարմըր-
ցընէ, եւ համոզեց զիս թէ ձեռութնին ձիւնի
պէս կը ճերմկնար երբոր բնաւ չաշխատէին։
Ուստի փոխանակ գէորգ որդւոյս շապիկները
լմնցընելու, տեսայ որ նորէն իրենց առջի քուր-
չերը ձեռք առեր եւ շղարշ կը բանէին։ Խեղճ
ֆլամպօրու օրիորդները՝ որ առաջ աղջկանցս
հաճոյ ընկերներ էին, երեսէ ինկան իրեւ-
խիստ ստորին կարգի ծանօթներ . եւ ընտան-
եացս բոլոր խօսակցութիւնը բարձր եւ հա-
րուստ ընկերութիւններու, նկարներու, փափ-
կութեան, թատերահանդէսի եւ երաժշտու-
թեան վրայ դառնալ սկսաւ։

Այս ամենը տակաւին հանդուրժելի կրնային ըլլաւ, եթէ գնչուտ կին մը՝ որ բաղդ կը գուշակէ եղեր, չիգար եւ մեր դլուխը քոլորին չդարձընէր մեծութեան ու բարձրութեան գաղափարներով։ Աղջիկներս՝ թխադէմ Սիրիլան տեսնելուն պէս՝ վրաս վազեցին եւ մէկ մէկ շիլինկ ուղեցին որպէս զի բաղդ գուշակելու գործողութեան համար պէտք եղած արծաթէ խաչը գնեն։ Ճշմարիտը ըսելով, ես ալ ձանձրացեր էի խոհեմութիւն ըանեցընելէ, եւ շիկրցայ մերժել անոնց խնդիրը, վասն զի կուզէի որ միշտ ուրախ եւ գոհ տեսնեմ զիրենք։ Ուստի մէկ մէկ շիլինկ տուի իրենց։ Սակայն պէտք է ըսեմ, ընտանեացս պատույն համար, թէ աղջիկներուս քով ստակ պակաս չէր երբէք։ Վասն զի կինս միշտ մէկ մէկ ոսկի կը ձգէր դըրապաննին, խստիւ պատուիրելով որ երբէք չաւըեն։ Բաղդադուշակ կնոջ հետ քիչ մը ժամանակ առանձնանալէ ետեւ, դիւրաւ կարդացի աչքերնուն մէջ որ մեծ բաներ խոստացուեր էր իրենց։ « Է՛ աղջիկներս, դո՞հ էք հիմա։ Ըսէ լնածի, Օլխիճա, բաղդադուշակը քու շիլինկիդ փոխարէն ստըկի մը բան տուածւ։ — Համարձակ կըսեմ քեզի, հայրիկ, ըսաւ լուրջ դէմքով մը, որ կը հաւատամթէ այն կինը յարաբերութիւն ունի այնոպիսի մէկու մը հետ։

որուն անունը տալու չեմ համարձակիր . վասըն զի՞ հաստատութեամբ ըստ ինձի , թէ տարի մը չանցած՝ ասպետի մը հետ պիտի ամուսնանամ : — Խիստ լաւ . եւ դուն Սովիա , աղջիկս , դուն ի՞նչ էրիկ պիտի առնուս . — Հայրիկ , ըստ . քոյրս ասպետին հետ ամուսնանաւուն վրայ շատ չանցած՝ զիս ալ լորտ մը պիտի առնուս : — Ալտոնք են , դոչեցի , ձեր երկու շիլնկին փոխարէն առածնիդ . մէկդ ասպետ մը , մէկդ ալ լորտ մը : Խենթ էք , ի՞նչ էք . ես մէկ շիլնկով թագաւորազոն մը եւ Նապատ^{*} մը ձեզ կը խոստանայի :

Աղջկանցս այս հետաքրքրութիւնը խիստ ծանր արդիւնք ունեցաւ : Ակսանք մենք մեզ բարձր բաղրի մը նախասահմանեալ համարիլ , եւ մեր ասպադայ մնծութեանը համեմատ ընթացք մը բռնիլ :

Հազար անդամ եղած է սա դիտողութիւնը , եւ ես նորէն անդամ մ'ալ ընեմ : Երջանկութեան յոյսերու մէջ անցուցած ժամերնիս առաւել քաղցր ու բերկրալի են մեզ՝ քան այն յոյսերուն վայելմամբ ոսակուած ժամերը : Առաջին վկակին մէջ՝ կերակուրները մեր ճաշակին համեմատ կը համեմինք . իսկ երկրորդին

* Խշխան կամ թաղաւոր Հնդ կազ :

մէջ բնութիւնը կը համեմէ մեղ համար + Անհը-
նար է նկարագրել այն հաճոյական երազները
որ կը տեսնէինք : Կը մտածէինք թէ մեր հա-
րքստութիւնը պիտինորոգուէր , եւ որովհե-
տեւ թեմին բոլոր ժողովուրդը կը հաւաստէր
թէ ասպետն աղջկանս սիրահարերէր , աղջիկս
ալ վերջապէս հաւաստալով՝ ինքն ալ ասպետին
սիրահարերէր : Այս բերկրապատար ժամանա-
կին մէջ՝ կինս ալ երջանիկ երազներ կը տես-
նէր եւ ամեն առտու մեզի կը պատմէր վերջին
աստիճան լրջութեամբ եւ ճշդիւ : Գիշեր մը
դադաղ եւ խաչաձեւ դրուած ոսկրներ կե-
րազէր , որ մօտաւոր ամուսնութեան նշան էր
Ռւրիշ անգամ մ'ալ կը տեսնէր որ աղջիկներուն
դրպանները մամր պղինձ դրամներով լեցուն
էին . այսալ նշան մ'էր որ օր մը ոսկրով պիտի
լցուէր : Աղջիկներս ալ կանխազդածութիւն-
ներ ունէին : Համբոյրներ կ'զգային իրենց շըր-
թանցը վրայ : Կանգեզին մէջ օղակներ , իրա-
կին մէջ քսակներ եւ թէյի գաւաթին տակը օի-
րոյ կապեր կը տեսնէին :

Եաբթուն վերջը քաղաքացի տիկնանց
կողմէն տոմսակ մը ստացանք , որովբարեւներ
կը դրկէին մեղ եւ յառաջիկայ կիրակին մեր
քնտանիքը եկեղեցին տեսնելու բաղձանք կը
յայսնէին : Ասոր վրայ նշմարեցի որ շաբաթ

աւատու կինո ու աղջիկներս իրարծւ հետ երկաւ
բօրէն դադանի խօսակցութիւն մը ունէին .
և ժամանակ ժամանակ ինձի կը նայէին այնու
պիսի աչքերով որ ինձի կիմացընէին թէ բան
մը կը նիւթուէր : Կանկածեցի թէ հետեւեալ օ-
րը շքեղ երեւնալու համար կարգէ դուրս խոր-
հուրդ մը կը մաքենայուէր : Խրիկունը կանո-
նաւոր կերպով գործողութեան սկսան , և կի-
նը յառաջ նետուեցաւ : Թէյէն ետեւ , երբոր
ես զուարթ կիրեւնայի , հետեւեալ կերպով
խօսք բացաւ : « Աը կարծեմ , սիրելիս , որ վա-
ղը եկեղեցին բաղմաթիւ անձանց գեղնցիկ
ընկերութիւն մը պիտի ունենանք : — Թերեւս
լաւ ընկերութիւն մը , ըսի . բայց ձեզի համար
անհանդիստ ըլլալու բան մը չկայ : Գան , չի
գան , ես քարոզմը պիտի տամ միշտ : — Միտ-
քէս կանցնէր այդ ըսելիքդ , ըսաւ կինս . բայց
կը կարծեմ , սիրելիս , որ հնար եղածին չափ
վայելուչ պէտք է երեւանք եկեղեցւոյն մէջ .
վասն զի ով գիտէ ինչ կրնայ պատահիլ : — Զեր
այդ նախահոգ զգուշութիւնները խիստ գովե-
լի են , պատաժիսաննեցի : Եկեղեցւոյ մէջ պար-
կեշտ կերպարանքը զիս կ'զմայլեցնէ : հան՝
զուարթութեան ու զոհութեան հետ ջերմե-
ռանդութիւն ու խոնարհութիւն պէտք է ու-
նենանք միշտ : — Այս , զիտեմ այդ , դոչեց .

բայց ես ըսել կուզեմ թէ պէտք է որ հնար եւ¹
զածինչափ պատշաճ կերպով երթանք եւ ոչ թէ
մեր շրջակայ շինականներուն պէս : — Կատար-
եալ իրաւունք ունիս, ըստ ես ալ նոյն բանը պի-
տի ըսէի քեզ : Պատշաճ կերպն է հնար եղածին
չափ կանուխ երթալ, որպէս զի քարողին սկը-
սելէն առաջ աղօթելու ժամանակ ունենանք :

— Լաւ, լաւ, ըսաւ կինս՝ խօսքս կտրելով, առ
ամենը դիտենք: Խմըսածս այդ չէ. ես ըսել կու-
զեմ թէ վայելուչ կերպով պէտք է երթանք :

Գիտէք որ եկեղեցին մեր տունէն երկու մղոն
հեռու է. եւ կը հաւաստեմ որ ես բնաւ չեմ
սիրեր տեսնել աղջիկներդ որ ճանրուն երկա-
րութենէն շունչերնին հատած, կասկարմիր
եղած, եւ շապիկ մը վաստը կելու համար ար-
շաւի մրցումէ ենող գեղացի աղջկանց դէմ-
քով եկեղեցին մտնեն ու բաղմութիւնը հրմըր-
տըկելով իրենց նստարանին քով երթան : Ուս-
տի, սիրելիս, սա առաջարկութիւնը կուզեմ
ընել ձեզ : Մենք երկու ձի ունինք արոր քա-
շող, որոնք ամիսէ մը 'ի վեր աշխատած չեն, եւ
հետեւարար անդործ մնալով կը գիրնան ու կը
ծուլնան : Խնչու համար անոնք ալ մեզի պէս
չաշխատին : Կրնամ հաւաստել ձեզ, թէ երբոր
Մովսէս զանոնք յարդարէ, վայելուչ երեւոցի
մը կունինան : »

Այս առաջարկութեան պատասխանեցի
թէ այնպիսի գէշ ձիերով երթալին հարիւրա-
պատիկ աւելի վայելուչ էր ոտքով երթալը :
Ձիերնուուս մէկը միականի էր, միւսն ալ ազի
չունէր, եւ երկուքն ալ վարժուած չէին մարդ
կրելու . վերջապէս հազար կերպ թերութիւն
ունէին, եւ մենք ալ ընդամենը մէկ թամբ մը
ունէինք : Այս ամեն առարկութիւններս անօ-
դուաւ եղան, եւ վերջապէս պարաւորեցայ
զիջանելու : Հետեւեալ առաւօտուն տեսայ որ
ճանրուն համար պէտք եղած պատրաստու-
թիւններն ընելու զբաղած էին . բայց նայելով
որ երկար պիտի տեւէր, ես ամսնցմէ առաջ
ճանբայ ելայ ու քալելով եկեղեցի դացի . ի-
րենք ալխօսք տուին շուտով ետեւէս համե-
լու : Մէկ ժամու չափ եկեղեցւոյն բեմին վրայ
սպասեցի որ գան, բայց ակնկալութիւնս 'ի
գերեւելաւ, եւ սիրտս նեղանալով ժամեր-
գութիւնն ակսայ : Վշտագնութիւնս աւելցաւ
երբոր տեսայ որ եկեղեցին արձակուեցաւ եւ
ընտանիքս դեռ երեւան չէր ելած : Ուստի տուն
դարձայ ձիաւորներուն ճանրէն որ հինգ մլմնի
չափ կը տեւէր, մինչդեռ հետեւակներուն ճան-
բան երկու մզոնէն աւելի երկայնութիւն չու-
նէր կէս ճանբան հասնելուուս՝ տեսայ որ թափո-
րի պէս ճանր դանր զէտլ 'ի եկեղեցի կուգային,

Մավաէսս կինս եւ երկու մանրերս ձիերէն մէ-
կոն վրայ հեծած , երկու աղջիկներս ալ միւ-
սին վրայ : Հարցուցի ուշ մնալնուն պատճառը .
բայց շուտով գուշակեցի դէմքերնէն՝ որ ճան-
բան հազար կերպ ձախորդութիւն եկեր էր
դլուխնուն : Նախ ձիերը չէին ուզեր տունէն
դուրս ելնել , մինչեւ որ Պ . Պէրչէլ օգնութեան
հասեր , եւ գաւազգանի հարուածով երկու հար-
իւր դրկաչափակաղ դանոնք քալեցուցեր էր :
Յետոյ կնոջս ձիուն փոկերը բրդեր եւ նորո-
գելու համար կանգ առնելու ստիպուեր էին :
Ա երջապէս ձիերէն մէկուն յամառութիւնը
բռներ , ճանրան կեցեր էր , եւ ոչ ծեծ , ոչ
փայփայանք չէին կրցեր զանի քալեցընել :
Ձիուն այս կամահաճութիւնընոր անցեր էր եր-
բոր ես դիմաւորեցի զիրենք . բայց ձշմարիաը
խօսելով , երբոր տեսայ որ իրենց վնաս մը չէր
եղեր , երած ձախորդութիւննին անհաճոյ չե-
ղաւ ինձի . վասն զի ապագային մէջ խօսքս
քալեցընելու համար զօրաւոր փաստ մը կը
մատակարարէր ինձի եւ աղջկանցս ալ խոնար-
հութիւն կըսովլրեցըներ :

— 22 —
ա , ով առ իրան առ սկզբան ու շնչոթ . թ
առ առ առ , ով իրան ով տալիս պահան մասուր ք մասն
մաքանչ խորացած ու առ առ պահան մաքանչ առ
այսպես ու առ , առ առ պահան պահան ու առ առ
Երեսն ը դ ա ն է ը դ ա ն է ի ս ը դ ա ն է ն է

ո ն է ը դ ա ն է ը դ ա ն է :

Հետեւեալ օրը Հրեշտակապեաի տօն ըւ-
լալով , իրիկունը մեր Ձլամպօրու գրացիին
տունը հրաւիրուեցանք կաղին կոտրտելու եւ
ուրիշ խաղեր խաղալու , Մեր առջի օրուան
ձախորդութիւնը քիչ մը քիթերնիս իջեցու-
ցեր էր . ապա թէ ոչ շատ հաւանական էր որ
գրացիիս հրաւէրն արհամարհանոք մնիրժուէր .
Ուստի յօժարամտութեամբ ընդունեցինք հը-
րաւէրը : Մեր համեստ գրացիին սագն ու կար-
կանդակները համով էին , եւ գարեջուրն ալ
խիստ պատուական դատուեցաւ , մինչեւ ան-
դամ կնոջմէս՝ որ գարեջուրը լաւ կը ճանչէր .
Ստոյդ է որ պատմութիւն ընելու կերպին այն-
չափ ախորժելի չէր : Խիստ երկար , յոյժ ձանձ-
րալի եւ միշտ իր անձին վրայօք էին : Արդէն
տասն անգամ ղանոնք պատմեր ու մեզ ծիծա-
զեցուցեր էր , բայց եւ այնպէս անգամ մ'ալ
ծիծաղելու յանձնաւու եղանք քաղաքավար-
րութեամբ :

Պ . Պրչէլ՝ որ նոյնպէս հոն ներկայ էր , ևւ
անմեղ զրօսանքները միշտ կը սիրէր , տղայքս
ու աղջիկներս դրդեց որ աչքկապուկ խաղան :
Կինս ալ անոնց հետ մէկ եղաւ , եւ ես ուրախ
եղայ մտածելով որ դեռ շատ պառուած չէր :
Դրացիս եւ ես հանդիսատես էինք . մէկը բըռ-
նուէր նէ կը ծիծաղէինք , եւ մեր տղայու-
թեան ժամանակ ունեցած ճարապիկութիւն-
նիս կը դովիշինք : Ետքը ձեռնզարկի* խա-
ղընսկսաւ : Յետոյ առեղծուածի հարց պա-
տասխան սկսաւ : Վերջապէս նոտան կոշիկ
խաղալու : Այս հին ժամանակի խաղին ամեն
մարդ տեղեակ չըլլալուն համար հարկ կը հա-
մարիմ նկարագրել : Խաղողները բոլորակ
կազմած գեախնը կը նատին՝ բաց 'ի մէկէն որ
մէջ տեղը ստքի վրայ կը կանդնի , եւ նատող-
ներուն ձեռքէն յափշտակել կը ջանայ այն
կոշիկը՝ որ մէկ մէկու սրունքին տակէն ձեռքէ
ձեռք կանցունեն ոստայնակի կկոցին պէս : Եւ
որովհետեւ մէջ տեղը կանդնողին անհնարէ
որ շրջանակ կազմողներուն ամենուն ալ երեսը
մէկէն տեսնէ , խաղին զուարճալի մասն է կոշ-
իին դարշապարովն անոր ետեւին զարնել : Այս

* Խաղ մը , որուն մէջ մէկուն աշքը կա-
պելով ձեռքին կը զարնեն , մինչեւ որ զարնո-
վին ով ըլլալը դուշակէ :

կերպով մեծ աղջիկս բռնուեր էր՝ բոլորակին
մէջ տեղը, եւ մէկ կողմէն միւս կողմէկը ցատ-
կէր կոչկին հաեւէն վաղելով, կասկարմիր ե-
զած եւ ուռած, աւագունէն է՛ ընէ+, աւագունէն է՛
ընէ+ դոչելով, այնպիսի սուր ձայնով մը որ կըր-
նար փողոցներու երգեցիկ մը խլցընել: Այս
միջոցին դռնէն ներս մտան. — Ո՞վ. — Մեր եր-
կու ծանօթ քաղաքացի մեծաշուք տիկնայք,
Տիկին Պլարնէ եւ Օրիորդ Քարոլինա-վիլելմի-
նա-Ամելիա Աքեդս: Զեղ կը թողում դատել
ծագած շփոթութիւնը: Ընտանեացս ինչ աս-
տիճան ամօթահար ըլլալը եթէ նկարագրեմ,
դաղափարը շատ կը տկարանայ: Ա՛ն, Երկինք,
այսպիսի գռեհիկ դիրքի մը մէջ տեսնուիլ ա-
նանկ բարեկիրթ տիկիններու առջեւ: Բայց Պ.
Ֆլամպօրուի առաջարկած խաղն ասկէց աւելի
շնորհքով չէր կրնար ըլլալ: Զարմանքնուս
գիտես թէ քար կտրած՝ դետինը փակեր էինք:

Երկու տիկինայք նախ մեր տունը գացեր էին
մեղ տեսնելու, եւ հօն չգանելով Ֆլամպօրուի
տունը և կեր էին հետերնիտ տեսնուելու եւ առ-
ջի օրն ընտանեացս և կեղեցի երթալուն արգելք
եղող դիպուածին վրայ լուր առնելու: Օլիվիա
սամնուն կողմէն պատասխան տուաւ, եւ պատ-
մութիւնը համառօտելով՝ ըստ թէ ձիէն վար
ինկեր էին: Տիկինայքը շատ ցաւեցան այս ար-

կածին վրայ , բայց վնաս մը պատահած չըլլալը
իմանալնուն պէս չափաղանց ուրախ եղան :
Յետոյ լսելով որ ընտանիքս վախենուուն լիւ-
զապատառ եղեր էին , սաստիկ տրամեցան .
բայց ետքը իմանալով որ գիշերը խիստ հան-
գիստ քնացեր էին , նորէն ուրախացան : Կար-
գէ դուրս շողմութիւն ցոյց տուին աղջկանցս :
Վերջին անգամ զիրենք տեսած ժամանակ-
նիս ջերմ համակրութեան յայտարարութիւն-
ներ ըրեր էին . այս անգամ աւելի եռանգագին
էին : Երդում ըրին որ մտերմադոյն կերպով կապ-
ուիլ կուղէին աղջկանցս հետ : Տիկին Պըլար-
նէ մասնաւորապէս Օլիվիայի յարած էր . Օրի-
որդ Քարօլինա-Վիլելմինա-Ամելիա Սքեգս ալ
(ես կը սիրեմ մարդոց բոլոր անունները մէ-
կէն տալ) Սովիխայի հաւնած էր : Երկու տիկինայք
երկար խօս ակցեցան , եւ աղջիկներս ալ կ'զմայ-
էին անոնց գերազանց բարեկրթութեանը վը-
րայ : Բայց որովհետեւ շատ հաւանական է որ
ընթերցողներս՝ որչափ եւ հասարակ մարդիկ
ըլլան՝ այսպիսի բարձր վիճակէ անձանց խօ-
սակցութիւնը , եւ լորտերու , տիկիններու եւ
նշանակիր ասպետներու պատմութիւնները լը-
սելու հետաքրքրութիւն ունենան , թողու-
թիւն կը խնդրեմ յիշեալ խօսակցութեան վեր-
ջին մասը հոս դնելու :

« Այն գործին վրայ բոլոր զիտցածս սա է
որ , ըստ Օրիորդ Աքեզս , կրնայ հշմարիտ ըլ-
լալ , կամոչ . բայց սա կրնամ հաւաստել ձեզ .
Տիկին , որ համայն ժողովականնելն արժնցան .
Միլորտին դէմքն հաղար դոյն եղաւ , Տիկինը
մարեցաւ . բայց Թօմքին սեպուհը թուրը քա-
շելով երդուաւ որ մինչեւ իր արեան վերջին
կաթիլն անկէ չպիտի զատուէր : »

« Խիստ լաւ , պատասխանեց Տիկին Պլար-
նէ . բայց ես սա կրնամ ըսել , որ դքառւին թը-
նաւ խօսք չբացաւ ինձի այդ գործին վրայ . եւ
աներկրայ եմ որ Նորին ազնուութիւնն ինչ
բան չպահեր : — Բայց սա ստոյդ է , եւ կրնաք
հաւատալ , որ հետեւեալ առաւօտուն Միլորտ
դուքմն երեք անդամ գոչեց իր սենեկապա-
նին . Ճերնիկան , Ճերնիկան , Ճերնիկան , պատ-
ուանշաններս բեր : »

Մոռցայ իմացընելու թէ այս խօսակցու-
թեան միջոցին Պ . Պրէէլ մնձ անքաղաքա-
վարութեամբ կը վարուէր : Երեսը վառարա-
նին կողմը դարձուցեր , տիկինանց ամեն մէկ
խօսքին վերջը՝ արհամարհանաց եւ տհաճու-
թեան խօսք մը կը նետէր , որ ամենուս ալ
զայրոյթ կը պատճառէր եւ խօսակցութեան
աւելի տաքնալուն կերպավմը արդեւք կըլար :

« Ասկէց զատ , օիրելի Աքեզս , (շարու-

նակեց Տիկինը) , ասոր վրայօք բառ մը անգամ
չկայ Տոքթոր Պըրտօքի տաղաչափութեանը
մէջ որ այս նիւթիս վրայ շինած է : »

« Կը զարմանամ ատոր , զոչեց Օրիորդ
Սքեզս . վասն զի խիստ քիչ կը պատահի իրեն
այսպիսի պարագաներու վրայէն լոռութեամբ
անցնիլ , մանաւանդ որ իր զբոսանացը համար
միայն կը դրէ : Բայց Զեր ազնուութիւնը կրնայ
այն ոտանաւորներն ինձի ցոյց տալու շնորհն
ընել : »

Միրելիս , ըստ Տիկինը , կը կարծէք որ
այդ տեսակ բանները վրաս կը պահեմ , թէ եւ
խիստ գեղեցիկ են հաւաստեաւ , եւ կը կարծեմ
որ քիչ մը կը հասկընամ ընտիր դրուածներէ .
գոնէ ինձի հաճոյ եղածը զիտեմ : Ճշմարիտը
խօսելով , ես միշտ հաւնած եմ Ցօքթոր Պըրտօ-
քի մանր տաղաչափութիւններուն . վասն զի
իրեններն եւ Հանօվէր հրապարակի միրելի-
լի կոմունւոյն վերաբերեալները մէկդի առ-
նելով , մնացեալները խեղճ բաներ են : Ազնը-
ուական ընկերութեանց արժանի խօսք մը չի
կայ անոնց մէջ : »

« Զեր ազնուութիւնը պէտք էր իրաց առ-
նուր , ըստ Օրիորդ Սքեզս , Շումբան Տէրաց
ամսաթերթին մէջ ձեր հրատարակածները : Կը
յուսամբ որ դուք ալ կը խօստովանիք թէ ա-

նոնց մէջ բարձր ընկերութեանց հաճելի չըլ-
լալիք բան մը չկայ . բայց կարծեմոր այն կող-
մէն բան մը չպիտի ունենանք այսուհետեւ :

« Գիտէք , ըսաւ Տիկինը , որ իմ ընթերցող
եւ ընկեր օրիորդս զիս թողուց ու Ռօչ զօրա-
պետին հետ ամուսնացաւ . եւ որովհետեւ աչ-
քիս տկար տեսութիւնը չներեր ինձի որ ես գը-
րեմ , ժամանակէ մը 'ի վեր մէկը կը փնտուեմ
անոր տեղը : Արդարեւ դիւրին չէ յարմար մէկը
դսմնել , եւ տարին երսուն լիրան ալ շատ չէ
կարդալ զրել զիտցող եւ բարեկիրթ օրիորդի
մը համար : Քաղաքին մէջ մեծցած աղջիկնե-
րուն խօսքը մի ընէք ինձի . անոնց մէջ ուզա-
ծըս գտնել անհնարինէ : »(սնապարծութիւն):

Ափսնա , ըսաւ Օրիորդ Աքեզս , ես այդ փոր-
ձովս զիտեմ . վասն զի այս վեց ամսոյս մէջ ե-
րեք ընկերակից օրիորդ բռնեցի , որոց մէկը
չէր ուզեր օրը ժամմը հասարակ գործի մը աշ-
խատիլ . երկրորդը քսանուհինդ կինէ* տարե-
կան թոշակը խիստ քիչ կը համարէր : Իսկ եր-
րորդը ճանբելու պարտաւորեցայ , վասն զի
կասկածեցի որ մատրանապետիս հետ գաղտնի
խորհուրդ մը ունէր : Առաքինութիւնը , սիրե-

* Ոսկի գրամ Անգղիոյ որ մէկ միրայէն շի-
լինկ մը աւելի կարժէ :

լի Տիկին , գին չունի , բայց ուր դանելու է աջ
(սնապարծութիւն) :

Կինս երկար բարակ մտիկ ըրեր էր այս
խօսակցութիւնը . բայց վերջի խօսքերը մաս-
նաւոր կերպով իր ուշը գրաւեցին : Երառւն լի-
րա եւ քսանուհինգ կինէն՝ յիսունուվեց լիրա
հինգ շիլինկ կընէր , որ զրեթէ պարագ տեղը
կերթար , եւ կրնար դիւրութեամբ մեր ձեռքը
անցնիլ : Վայրկեան մը երեսս նայեցաւ կարծի-
քըս հասկընալու համար , եւ ճշմարիտը խօսե-
լով ես ալ կը մտածէի որ երկու ասանկ վիճակ
խիստ լաւ կը յարմարէին մեր երկու աղջիկնե-
րուն : Ասկէց զատ , եթէ ասպետն ստուգիւ-
սէր ունէր մեծ աղջկանս վրայ , այս բանը ճան-
բայ մը կըլլար ամեն կերպով անոր բաղդին
յարմարելու : Ուստի կինս միտքը դրաւ որ այս
բարեպատեհ առիթը անվատահութեամբ ձեռ-
քէ չփախցունէ եւ ընտանեացս կողմէն խօսե-
լովըսաւ . « Կըյուսամ որ ձեր Ազնուութիւնն
համարձակութեանս կը ներէ : Աքդարեւ իրա-
ւունք չունիմ այդպիսի չնորհներ պահանջե-
լու , բայց բնականէ որ զաւակացս յառաջ եր-
թալուն փափաքիմ : Կը համարձակիմ ըսել թէ
երկու աղջիկներս խիստ լաւ կրթութիւն ա-
ռած եւ կատարելութիւնն ստացած են , գոնէ
որչափ կարելի է գաւառաց մէջ , կը կարդան ,

կը գրեն, կը հաշուեն, կը կարեն, կը հիւսեն,
կասզնեգործեն, եւ ամեն կերտ կար ձեռուը-
նուն կուգայ, ասզնենկար, կիտուած, շղարչ,
շապկի օձիք եւ քիչ մ'ալ երաժշտութիւն :
Մեծ աղջիկս ձեւել գիտէ, պղափկս ալ խիստ
ճարտար է խաղի թուղթերու մէջ բաղդ գու-
շակելու : »

Կինս այս ճարտարախօս ճառը լմնցուց,
երկու տիկնայք քանի մը վայրկեան իրարու-
երես նայեցան լուութեամբ, ծանր եւ երկմիտ
դէմքով մը : Յետոյ Օրիորդ Քարօլինա-նիլել-
մինա-Ամելիա Աքեգս հաճեցաւ ըսելու թէ
ինքը որչափ որ այսչափ թեթեւ ծանօթու-
թեամբ մը կրնար դատել . երկու մատաղ օրի-
որդները խիստ յարմար կը թուէին այս պաշ-
տօններուն : « Բայց, Տիկին, ըսաւ կնոջս, այս-
պիսի դործ մը կատարեալ քննութիւն կը պա-
հանջէ անոր բնաւորութեանը, եւ աւելի մաս-
նաւոր կերպով ծանօթութիւն իրարու : Ըսել
չէ որ, Տիկին, այս մատաղ օրիորդին առա-
քինութեանը, խոհեմութեանն ու հանճարին
վրայ կը կասկածիմ . բայց տեսակ մը պայման
կայ, տիկին, տեսակ մը պայման կայ այս դոր-
ծին մէջ : »

Կինսալ իրաւունք տուաւ այս անվատա-
հութիւններուն, ըսելով թէ ինքն ալ խիստ

կասկածու է . բայց իր աղջիկներուն բնաւութեանը մասին դրացիները կրնային վկայել , Տիկինը ըստ թէ ուրիշ անձանց վկայութիւնը անօգուտ էր . իր քեռորդւոյն Թօրնհիլ ասպետին յանձնարարութիւնը բաւական էր . ուստի մեր խնդրոյն կատարումը կախ թողւեցաւ մինչեւ որ Տիկինն ասպետին հետ խօսէր :

ԳԼՈՒԽ ԺԲ.

የመተዳደሪያዎች በመተዳደሪያዎች የሚታረው ነው፡፡

Նրբոր տուն դարձանք , բոլոր գիշերն ապագայ մեծութեան խորհուրդներով անցաւ : Ավելա իր բոլոր ճարտարմութիւնը գործածեց կանխադատելու համար թէ իր աղջիկներէն որը լաւագոյն պաշտօն պիտի ունենար եւ բարձր ընկերութիւններ տեսնելու աւելի առիթ : Մեր յառաջադիմութիւնն ուչացընող միակ արգելքն ասպետէն սպասուած բարի վկայութիւնն էր , բայց արդէն ասպետը մեղի

այնչափ բարեկամութեան նշաններ տուեր էր :
որ յուսացուած յանձնարարութիւնը ընելուն
տարակոյս չկար : Մինչեւ անդամ անկողնոյն
մէջ շարունակեց կինս իր սիրական մահածու-
թիւնը : « Ճշմարիտը ըսելով , սիրելիս , խօս-
քը մէջերնիս , կարծեմ որ այսօր երջանիկ օր
մը անցուցինք : — Բաւական աղէկ օր մը , պա-
տասխանեցի՝ ինչ ըսելիքս չգիտնալով : — Ի՞նչ-
պէս բաւական աղէկ , դոչեց կինս , կարծեմոր
առկէց լաւագոյնը չէր կրնար ըլլար : Ենթադ-
րենք ՚որ մեր աղջիկները յաջողին Լոնտրայի
մէջ աղնուական անձանց ծանօթանալու : Ես
համոզուած եմ որ Լոնտրա քաղաքն աշխար-
հիս ամենէն յարմար տեղն է էրիկ դանելու մա-
սմն : Ասկէց զատ , սիրելիս , ամեն օր տարօրի-
նակ բաներ պակաս չեն . եւ եթէ ասանկ աղ-
նուական տիկնայք աղջիկներուս վրայ այսչափ
սէր ունին , ինչու համար ազնուական այրեր
ալսէր չպիտի ձգեն անոնց վրայ : Խօսքը մէջեր-
նիս , ես չատ կը սիրեմ Պլարնէ տիկինը . ի՞նչ
քաղցրաբարոյ ու քաղաքավար կին . սակայն
Օրիորդ Քարոլինա-Վիլելմինա-Ամելիա Աքեդ-
ուն ալ կը սիրեմ : Եւ երբոր եկան ու քաղաքին
մէջ օրիորդաց վերաբերեալ պաշտօններու վը-
րայ խօսք ըրին , տեսած , ինչպէս խկոյն զի-
րենք բռնեցի : Ըսէ ինձի , սիրելիս , այս ըրա-

ծըս զաւելներուս համար . . . — Ա՞հ , ըստ չի-
դիանալով ինչ խորհելիքս , Աստուած տայ որ
երեք ամիս ետքն աւելիի լաւ ըլլան : » Այս դի-
տողութիւնս այն աւեսակէն էր որ սովորութիւն
ունէի ամեն առթի մէջ ընելու , որպէս զի կինս
մեծ համարում մը ունենայ կորովամտութեաւ-
նըս վրայ . վասն զի թէ որ ազջիկներս յաջողէ-
ին , իմ ըրած դիտողութիւնս բարեսլաշտական
մաղթանք մ'էր եւ կատարուած կըլլար . իսկ
թէ որ ձախորդութիւն մը պատահէր , այն ժա-
մանակ իմ խօսքս մարդարէութեան մը կեր-
պարանք կառնուր : Սակայն բոլոր այս խօ-
սակցութիւնը նախապատրաստութիւն մ'էր
կնոջս մէկ ուրիշ դիտաւորութեանը որ քիչ եր-
կիւղ չէր պատճառեր ինձ : Որովհետեւ հիմա
մեծամեծ մարդոց հետ յարաբերութիւն սլիտի
ունենայինք , կը վայլէր որ ծերացած մտքուկ-
նիս տօնավաճառ մը տանէինք եւ անոր տեղ
չնորհոք ձի մը դնէինք , որ եկեղեցի երթալ
կամ այցելութիւն մը ընել ոլէտք եղած ատեն
կարենար երկու հոգի կրել : Առջիբերանը բա-
ցարձակալէս դէմ իեցայ այս խորհուրդին .
բայց կինս արիարար պաշտպանեց իր ա-
ռաջարկութիւնը , եւ այնչափ ըրաւ որ զիս
կակուզցուց եւ վերջապէս մտքուկը վաճառե-
լու հաճութիւն առւի :

Հետեւեալ օրը տօնավաճառի օր էր եւ ես
միտք ունէի հոն երթալու , բայց կինս զիս հա-
մողեց որ հարբուխ եղեր էի եւ չթողուց տու-
նէն դուրս ենելու : « ԶըԱպր , սիրելիս , ը-
ստւ . Մովսէս ճարպիկ տղայ մ'է , շահաւոր
կերպով առուծախք ընել խիստ լաւ գիտէ .
գիտես որ ամեն աժան առած բաներնիս անոր
ձեռօքն եղած են . կը գիմանայ , սակարկու-
թիւն կընէ մինչեւ որ առուտուր ըրած մարդի-
կըն իր ուղած գնոյն հաճեցընէ »

Որդւոյս խելքին վրայ ես ալ լաւ համա-
րում ունենալով , գործն անոր յանձնելու շատ
չգիմացայ : Առաւօտուն տեսայ որ քոյրերը զա-
նի կը հագուեցընէին տօնավաճառ երթալու
համար , մաղերը կը գանգրէին , խոպտպիները
կը մաքրէին եւ փեղոյրին եղերքը գնտասե-
դով կը հանգրիմէին : Երբոր հագուփլը լմնցաւ ,
հաճութեամբ տեսանք որ մտրուկին վրայ հե-
ծաւ , առջեւը եղեւնեայ տուփ մը զրած , որուն
մէջ գնելիք մանր մունը նիւթերը պիտի լեցը-
նէր : Թիկնոց մը հազեր էր այն տեսակ չուխա-
յէ որ փոթորիկներու լաւ գիմանալուն հա-
մար ու ու ու ու կը կոչուի . եւ թէպէտ վրա-
յին կարճըցերէր , բայց դեռնոր ըլլալուն հա-
մար չէր կընար մէկդի ձգուիլ : Բաճկոնը կա-
նանչ կերպասէ էր եւ քոյրերը լայն սեւ ժապա-

ւէնով մը մաղերը հիւսեր էին : Ամենքսալ
քիչ մը տեղ ետեւէն դացինք , բուհածութեան ,
բուհածութեան պոռալով , մինչեւ որ հեռացաւ :

Արդիանոր մեկներ էր , Պ . Թօրնհիլի մա-
տակարարը եկաւ մեր բարեբաղդութեանը վը-
րայ ուրախակից ըլլալու . վասն զի լսեր էր որ
իր տէրը միր վրայ գովեստներ խօսեր է երկու
աղնուական ախիլիններու :

Բարեբաղդութիւն մը երբէք միայնակ չի
դար : Ասպետին մէկ ուրիշ սպասաւորը տոմ-
սակ մը բերաւ աղջիկներուս . որովերկու տիկ-
նայք կիմացընէինթէ Պ . Թօրնհիլ մեզ համար
խիստ գոհացուցիչ վկայութիւններ տուեր էր ,
եւ կը յուսային որ քանի մը ուրիշ տեղեկու-
թիւններ ալ առնելէ ետեւ լիովին զոհ պիտի
ըլլային : « Ա՞հ , գոչեց կինս , հիմա կը տեսնեմ
որ մեծերու տուն մտնելը գիւրին բան չէ . բայց
երբոր մէկը յաջողի անգամ մը մտնելու , այն
ժամանակը , ինչպէս կըսէ Մովսէս , հանդիսաւ
ննջելու է : » Այս անհեղեղ ձայնարկութիւնը՝
որ կնոջո աչքին խելացի խօսք մը կը թուէր ,
աղջիկներուս չափազանց բերկրութիւն պատ-
ճառելով , բարձրածայն ծիծաղեցան : Ակեր-
ջապէս կինո այն աստիճան ուրախացաւ սպա-
սառըին բերած լուրէն , որ ձեռքը գրպանը
խոթեց եւ հօթն ու կէսպղինձ տասնոց պար-

գեւ տուաւ անոր :

Այս օրը այցելութիւններ ընդունելու օր մեղաւ մեղ համար : Պ . Պըրչէլ , որ աօնավաճառէն կուդար , ներս մտաւ : Փոքրիկներուս ամեն մէկին համար տասն փարանոց քաքարներ բերերէր , զորոնք կինս առաւ պահեց , որպէս զի ժամանակ ժամանակ անոնց տայ երբոր լաւ կարդան : Աղջիկներուս ալ մէկ մէկ տուփ բերեր էր , որպէս զի մէջը նամակի կնքանըշխար , ծխախոտ , շնծու պիսակներ , եւ ստակ պահեն երբոր վաստըկին : Կինս սովորաբար ագիսի մորթէ քսակները կը սիրէր՝ իրեւրադդաբեր , բացց քանի որ այն քսակներէն չկար , այս տուփերն ալ զէշ չէլին : Պ . Պըչէլի վրայ դեռ յարդ ունէինք , թէ եւ երկու տիկնանց խօսակցութեան ատեն անոր տմարդի վարմունքն անհաճոյ եղեր էր մեղ : Չկրցանք ծածկել անկէ մեր բարեբաղդութիւնը , եւ խորհուրդ հարցուցինք անոր . վասն զի որչափ որ ուրիշի խորհրդոցն անսալու տրամադրութիւն չունէինք ալնէ , հարցունելու յօժարութիւն ունէինք : Երբոր նամակը կարդաց , զլուխը երերցընելով ըսաւ թէ այսպիսի զործի մը մէջ մեծ զգուշաւորութիւն հարկ էր : Այս անվըստահութեան ցոյցը խիստ անհաճոյ եղաւ կնոջըս : « Երբէք չէի կասկածեր , Պարոն , որ

դուք այսպէս հակառակ ըլլաք միշտ ինձ եւ
ազջկանցս : Դուք պէտք եղած էն աւելի դգու-
շաւորութիւն ունիք . սակայն կարծեմոր խոր-
հուրդի պէտք ունեցած ժամանակնիս այնպի-
սի մարդոց պէտք է հարցընենք որո՞ք ինք-
նին բարի խորհրդոց հետաեւած ըլլան : — Ինչ
որ ալ եղած ըլլայ իմ վարքս , Տիկին , խնդիրն
անոր վրայ չէ հիմա , ըսաւ Պ . Պրչէլ . թէպէտ
եսխորհրդոց չեմանսացեր , բայց հարցընողին
խզմտանքիս ազդածը ըսելու պարտական
եմ : Ես վախնալով որ այս խօսքին աւելի կը-
ծու եւ անհանճար պատասխան մը կը տրուի ,
խօսքը դարձուցի եւ սկսայ զարմանք ցու-
ցընել թէ ինչու համար մեր որդին ուշացաւ
տօնավաճառէն . վասն զի արդէն իրիկուն ե-
ղեր էր : « Անհոգ եղիր ըսաւ կինս , անիկա իր
գործը դիտէ . անձրեւոտ օրը հաւ չծախեր .
ես անոր այնպիսի սակարկութիւնները տեսեր
եմ որ զիս զարմացուցեր են : Ձեզի մէկ ըրածը
պատմեմ որ խնդալէն կողերնիդ ճաթի . բայց
ահա կուգայ Մովսէս , առանց ձիու , տուփը
շալակը առած : »

Կինս այս խօսքն ըսած ժամանակ՝ Մովսէս
հասաւ՝ արիւն քրտինք եղած եղեւնեայ տու-
փին ներքեւ՝ որ փոկով մը կընակին կապած էր
« Բարի եկար . Մովսէս , բարի եկար . նայինք ,

որդեսնկ , ինչ բերիր մեզի տօնավաճառէն : —
Ինքզինքս բերի , ըստ , խորամանկնայուած-
քով մը , եւ տուփը սեղանատախտակին վրայ
դնելով : — Այս . գիտենք այդ , ըստ կինս .
բայց ձին ուր է : — Վաճառեցի , ըստ Մով-
սէս , երեք լիրա հինգ շիլինկ եւ երկու պը-
ղինձի : — Ապրէս , սիրելի որդեակս , ես գիտէի
որ դուն վարպետ ես այդ գործին մէջ : Խօսքը
մէջերնիս , երեք լիրա հինգ շիլինկ եւ երկու
պըղինձը դէշ չէ : Հանէ նայինք : — Ստակը չբե-
րի , ըստ Մովսէս , ուրիշ ապրանքի մը հետ
փոխանակեցի . եւ ծոցէն ծրար մը հանեց , ո-
րուն մէջ տամներկու տուզինա կանանչ ակնոց
կար արծաթեայ շրջանակներով , սեկ պատ-
եաններու մէջ : — Տամներկու տուզինա կա-
նանչ ակնոց , կրկնեց կինս տկար ձայնով մը :
Մտրուկը տուիր , եւ անոր տեղն այս տամներ-
կու տուզինա անպլատան ակնոցները բերիր :
— Սիրելի մայր , դոչեց որդիս , ինչու համար
պատճառը մտիկ չես ըներ : Ես անոնք մեռած
գնով առեր եմ . ապա թէ ոչ չէի դներ : Միայն
արծաթ շրջանակները տուած ստակիս կրկնա-
պատիկը կարմեն : — Թուզ մը անդամչեն ար-
ժեր այդ շրջանակներդ , դոչեց կինս զայրաց-
մամբ : Երդում կընեմ որ տուած ստակիդ կէուը
չեն արժեր . թէ որ հին արծաթի դնով վա-

ճառուին՝ մէկ ունկին հինկ շիլինկ կընէ: — Շըր-
ջանակներուն արժէ քին համար այդ չափ սիրտ
մի հատցունէք, ըսի · վասն զի ճերմիթած պը-
ղինձ են: — Ի՞նչ կըսես, գոչեց կինս, շրջանակ-
ներն արծաթ չեն մի, արծաթ չեն մի: — Ոչ,
ըսի, քու կերակուր եփելու փոքրիկ տապա-
կէդ աւելի արծաթ չեն: — Ուրեմն մեր մտրու-
կը կորմնցուցինք ու տեղը տասներկու տուղի-
նա կանանչ ակնոց ստացանք պղինձ շրջանակ-
ներով ու սեկ պատեսաններով: Սատանան տա-
նի այդ խարէութիւնն ընողը: Ո՞հ, քիթէն բըռ-
նուեր է մեր տխմարը · պէտք չէր որ առու-
տուր ըրած մարդիկը լաւ ճանչէր: — Այդ մա-
սին սխալ ես, սիրելիս, ըսի · բնաւ պէտք չէր
որ ճանչէր: — Գետինն անցնի, անբանը, գո-
չեց կինս, որ այդ անպիտան բաներն առեր բե-
րեր է · ամենն ալ կրակը ձգելու է: — Գարձ-
եալ կը սխալիս, սիրելիս, ըսի · պէտք է պա-
հենք զանոնք · որովհետեւ առելի լաւ է պղինձ
ակնոցներ ունենալ քան թէ ոչ ինչ: »

Այս խօսակցութեան ժամանակ խեղձ
Մովսէս հասկըցաւ գլխուն եկածը: Տեսաւ որ
վարպետ գողի մը պատահեր, պատրաստ որս մը
եղեր էր անոր իր կերպարանքովը: Եւ հար-
ցուցի իրեն այս եղելութեամս պատճառները,
Մտրուկը վաճառեր է եւ ուրիշ ձի մը դժննելու

համար տօնավաճառին մէջ պուլսած ժամանակ՝ յարգելի դէմքով մարդ մը զինքը իւր վլրանը տարեր է ըսելով թէ ծախու ձի մը ունի . Հոն ուրիշ մարդ մը տեսեր է շնորհքով հագուած , որ քսան լիրա փոխ առնուլ կուզէ եղեր այս ակնոցներուն վրայ , ըսելով թէ անհըրաժեշտ պէտք ունէր ստակի եւ իր ասպանքը արժէքին երրորդ մասովը պիտի տար . Առաջին պարոնը՝ որ որդւոյս բարեկամ ձեւացեր էր , ականչն ՚ի վար յորդորեր է որ զանոնք դնէ , եւ ասանկ լաւ առիթ մը ձեռքէ չփախցընէ : Որդիս ալ Պ . Ֆլամալօրուն կանչեր է . որ նոյնպէս համոզուեր է , եւ վերջապէս մարդուն քսանեւչորս տուզինա ակնոցը գնելով կէս առկէս մէջներնին բաժնելու որոշում ըրեր են :

ԴԼՈՒԽ ԺԴ .

Պ . Պրւել աւագանու իրադարձութեալ համար համար համար համար :

Ըստանիքս կուզէր որ փայլէր , բայց ամեն անգամ անտեխնկալ պատահար մը վրայ գա-

լովիրխորհուրդը կը տապալէր : Ես կը ջանայի
օգուտ քաղել ամեն մէկ ձախողուածէ , որպէս
զի փառասիրութեան կողմանէ ըրած կորուստ-
ներնոււն չափավը խոհականութիւննին աւել-
նայ : « Ահա կը տեսնէք , դաւկներս , կըսէի ,
որչափ պզափկ կիյնայ մարդ երբոր իրմէ վ'րե-
րուն համառզ ըլլալու համար ինքինք բար-
ձըր երեւցընել կուղէ հասարակութեան : Հա-
րուսաներուն հետ կենակցիլ ուզոզ աղքառ-
ներն՝ իրենց հաւասարներուն ատելի եւ իրենց-
մէ վերերուն ալ արհամարհելի կըլլան : Ահա-
ւասար ընկերակցութիւնները միշտ վնասակար
են տկարագոյն կողմին . եւ այսպիսի ընկերակ-
ցութենէ մը ծագած բոլոր բերկրութիւննե-
րն հարուստը կը քաղէ , գ ժպատենութիւնն-
երն ալ աղքառար : Այս ըսածիս խիստյարմար
կուգայ , Ռիքարտիկ , նու առակը որ կը կար-
դայիր այսօր . կրկնէ տեսնեմ : »

« Օրին մէկը , գոչեց տղան , հսկայմը եւ
թզուկ մը կային որ իրարու բարեկամէին եւ
մէկտեղ կապրէին : Խօսք տալով իրարու որ եր-
բէք չզատուին իրարմէ , ՚ի միասին ճանքայ ե-
լան բաղդ վնասուելու : Առաջ երկու սարակինոս
ելան դէմերնին , եւ կոռուեցան անոնց հետ :
Թզուկը որ խիստ սրտատ էր , երկու սարակի-
նոսներուն մէկուն հարուած մը տուաւ ամեն-

նայն զօրութեամբ . բայց ան հարուածը մեծ
վնաս մը չտուառ սարակինոսին, որ թուրք վեր-
ցընելով՝ այնպէս ուժդին իջուց թղուկին թե-
ւին որ կտրեց վար ձգեց : Խնդը մեծ վտանգի
մէջ էր՝ հսկան օգնութեան հասաւ եւ երկու
սարակինոսներն սպաննեց : Թղուկը՝ կատա-
ղութենէն՝ իր հակառակորդ սարակինոսին դը-
լուխը կտրեց : Նորէն ճանքայ ելան , եւ ուրիշ
արկածի մը հանդիպեցան : Երեք վայրենիներ
օրիորդ մը յափշտակեր կը տանէին : Թղուկն իր
առջի քաջարառութիւնը կորանցուցեր էր , այ-
սու ամենայնիւ առաջին հարուածը ինք աը-
ւաւ . վայրենիներէն մէկն ալ վրան յարձակե-
լով այնպէս սաստիկ հարուած մը տուաւ որ
թղուկին մէկ աչքը զլիսէն գուրս նետուեցաւ .
Անմիջապէս հսկան վրայ հասաւ , եւ եթէ վայ-
րենիները չփախչէին , անշուշտ երեքն ալ կը ս-
պաննէին : Երկու յազթողներն ու օրիորդը ու-
րախ եղան այս յազթութեան վրայ , եւ ազտա-
նալ գեղուհին ալ հսկային սիրահարելով՝ ա-
մուսնացան իրարու հետ : Նորէն շարօւնակե-
ցին ճանբան , եւ վերջապէս զողերու ջոկքը մը
զէմերնին ելաւ : Այս անդամ հսկան առջեւն
էր , բայց թղուկն ալ հեռու չէր անկէ : Երկար
եւ խիստ յամառ կոիւ մը եղաւ . հսկան զար-
կածը կը տապալէր , բայց թղուկը քանի մը

անդամ մազ մնաց պիտի սպաննուէր , Վերջաւ
սէս յաղթութիւնը երկու բաղդախմոդիրնե-
րուն մնաց . բայց թղուկը կռուին մէջ մէկ ուս-
քը կորսնցուց . ուստի մէկ ոտքով , մէկ ձեռ-
քով եւ մէկ աչքով մնաց . իսկ հսկան՝ որ
վէրք մը անդամ չէր առած , կը գոչէր անոր .
օ՞ն , քեզ տեսնեմ , փոքրիկ դիւցազունս ,
ահա ասոր կըսեն գործ տեսնել . յաղթութիւն
մ'ալ ընենք , եւ այն ժամանակ անմահ փառք
կը ժառանդենք : — Աչ , ըսաւ թղուկը , որուն
խելքը գլուխնեկեր էր , ոչ , ալ չեմ պատե-
րազմիր ես . վասն զի կը տեսնեմ որ ամեն կը-
ռիւներու մէջ բոլոր փառքն ու օդուտը դուն
կը շահիս , եւ ես հարուած միայն կուտեմ :

Այս առակն ընտանեացս բոնած ընթաց-
քին պատշաճեցընելու վրայ էի , կնոջս եւ Պ.
Պրչէլի մէջ ջերմ վիճաբանութիւն մը ծագե-
ցաւ . աղջկանցս քաղաքին մէջ ունենալիք ա-
պագայ պաշտօններուն վրայ : Կինս կը պնդէր
թէ խիստ օդտակար պիտի ըլլային աղջկանցս .
Պ . Պրչէլ ընդ հակառակն կը ջանար համոզե-
լու որ դանոնք քաղաքը չպկէ . իսկ ես չէզոք
կը կենայի : Պ . Պրչէլի պատճառաբանութիւն-
ներն առաւօտուն տուած խորհրդոցը հետե-
ւութիւններն էին , որ կնոջս խիստ անհաճոյ
եղեր էին . Վէճը տաքցաւ , եւ խեղճ կինս փո-

խաճակ ողջմտութեամբ պատճառաքանելու՝
ձայնը կը բարձրացընէր, եւ վերջապէս չկըր-
նալով պոռալ, պարտաւորեցաւ կոիւէն հրա-
ժարելու . Սակայն իր վերջի խօսքերը խիստ
անհաճոյ եղան ամենուս ալ: «Մարդիկ կը
ճանչեմ որ իրենց խորհրդատութեանցը հա-
մար ծածուկ պատճառներ ունին . բայց կաղա-
չեմ զանոնք որ այսուհետեւ տունս ոտք չկո-
խեն: — Տիկին, բայտ Պ. Պրչէլ հանդարա-
գէմքով մը որ աւելի կը զայրացընէր կինս .
երբոր ծածուկ պատճառներու խօսք կընէք,
իրաւունք ունիք: Ես ծածուկ պատճառներ
ունիմ որ չեմուզեր ըսել, վասն զի դուք յայտ-
նի պատճառաքարանութիւններուս անդամ պա-
տասխանելու կարող չէք: Բայց կը տեսնեմոր
իմ հոս գալս ձանձրութիւն կը պատճառէ ձեզ.
վասն որոյ մնաք բարօվ, եւ մէկ մ'ալ թերեւս
այս երկրէն գացած ատենս զամ վերջին ող-
ջոյնս տալու: » Այս խօսքն ըսելով վեզոյրն ա-
ռաւ, եւ առանց ուշադրութիւն ընելու Սովի-
այինայուածքին որ իր աճապարանքն յանդի-
մանելու երեւոյթ մը ունէր, մեկնեցաւ զնաց:

Երբոր դուրս ելաւ, քանի մը վայրկեան
շփոթած իրաբու երես նայեցանք: Կինս՝ որ
պատճառն ինք ըլլալը կ'զգար, իր շփոթու-
թիւնը ծածկել ուզեց բռնի ժայռով եւ վըս-

տահ նայուածքով մը որ կշտամբեցի : Հաւ-
նեցար ըրածիդ , կինս , ըսի . ատանկ հիւրնկա-
լութիւն կընեն օտարներու . ատանկ կը փո-
խարինեն անոնց բարեկամութիւնը : Հաւա-
տա , սիրելիս , որ երբէք այնչափ կծու եւ ին-
ձի անհաճոյ խօսքեր ելած չունէին բերնէդ .
— Ինչու զիս զրգուեց . ըսաւ կինս . ես անոր
տուած խորհուրդին պատճառը զիտեմ կուզէ
որ աղջիկներս Լոնտրա չերթան , որպէս զիին-
քը կրտսեր աղջկանս հետ ընկերակցելով զը-
ւարճանայ : Բայց ինչ որ ալ պատահի , աղջի-
կըս այսպիսի գոեհիկ մարդոցմէ լաւագոյն ըն-
կերակիցներ կընայ գտնել : — Գոեհիկ մի ,
գոչեցի . ուրեմն չարաչար խարուեր էինք այդ
մարդուն բնաւորութեանը վրայ , որ շատ ա-
ռիթներու մէջ խիստ բարեկիրթ մարդ մը ե-
րեւցած էր ինձ : Ըսէ ինձի Սոփիիա , աղջիկս ,
այդ մարդը սիրոյ գաղտնի փորձ մը տուած է
քեզ : — Հայրիկ , ըսաւ աղջիկս , ինձի հետ ը-
րած խօսակցութիւնները միշտ մտացի , պար-
կեշտ եւ հաճոյական էին . բայց ուրիշ բան մը
չկար ամենեւին . սակայն կը յիշեմ որ անդամ
մը ըսաւ ինձի թէ երբէք տեսած չէր կին մը որ
աղքատ մարդու մը վրայ համարում ունենայ .
— Ահա սիրելիս , ըսի , այդ բերանը կը բանե-
թընեն միշտ ամեն թշուառ եւ ծոյլ մարդիկ .

բայց կը յուսամոր գուն այդ տեսակ մարդիկն արժանապէս զատելը սովորած ես, եւ կ'զգաս որ իրերջանկութիւնն այնպէս չարաչար տընտեսող մարդէ մը երջանկութիւն սպասելը խենթութիւն է : Մայրդ ու ես հիմալաւագոյն դիտումներ ունինք ձեզ համար ։ Յառաջիկայ ձմեռը, որ հաւանականաբար Լոնտրա պիտի անցունէք, աւելի յարմար ընտրութիւն մը ընելու առիթներ պիտի մատակարարէ ձեզ :

Այս խօսքիս վրայ Սովիտային մտքէն անցածը չեմ դիտեր . բայց սրտովս գոհ էի որ անանկ երկիւղալի հիւրէ մը աղատեցանք : Արդարեւ հիւրընկալութեան դրժենիս քիչ մը խղճմտանքիս դպաւ, բայց այններքին աղդարարը շուտ լուցուցի երկու կամ երեք ճշմարտակերտ պատճառներով, որոնք բաւական եղան զիս գոհ ընելու եւ զիս ինքզինքիս հետ հաշտեցընելու ։ Յանցանք գործող մարդու մը խղճմտանքին աղդած ցաւը շուտով կանցնի : Խղճմտանքը վեհերուտէ . վասն զի երբոր յանցանք մը արդիլելու համար բաւական զօրութիւն չունի, դատախազելու համար ալ բաւական արդարութիւն հազիւ կունենայ :

ተረሰብና ተተ

የመንግሥት ተስፋ ነው እና ስራውን ተስፋ ነው እና ስራውን ተስፋ ነው

Աղջկանցս լոնտրա երթալը որոշուեցաւ :
Պ . Թօրմնհիլ ազնուաբար խօսք տուաւ մեզ թէ
անձամբ պիտի հսկէր անոնց կենցաղավարու-
թեանը վրայ , եւ գրով մեզի խմացընէր . Բայց
մտածեցինք որ իրենց հագուստն ալ իրենց
քարձր ակնկալութեանցը յարմար պէտք էր
ըլլար , եւ առոր համար քիչ մը ծախք ընել
հարկ էր : Ուստի խորհուրդ ըրինք թէ ինչ մի-
ջոցով կրնայինք ստակ ճարել , կամ աւելի
պարզ խօսելով . ինչ ծախելու էինք որ ստակ
ունենայինք : Խորհուրդնիս երկար չեղաւ : Ո-
րոշեցինք որ ձեռուընիս մնացած ձին ընկեր
չունենալուն համար ըոլորովին անպիտան էր
արօրի , եւ մէկ աչքը կոյր ըլլալուն՝ հեծնա-
լու ալ չէր դար : Ուստի որոշեցինք որ մօ-
տակայ տօնտավաճառը դրկենք ծախենք , եւ
այս անդամ ես անձամբ տանիս որպէս զի նոր
խարէութեան մ'ալ չհանդիպինք : Թէ պէտ եւ
առաջին առեւտրական գործողութիւնա սլիտի

ըլլար այս բանը , սակայն պարծերես լմնցընելուս վրայ տարակոյս չունէի : Մարդու մը իր խելքին վրայ ունեցած համարումը՝ իր հետ գտնուող ընկերներուն վրայ չափելով է . և որովհետեւ իմ ընկերս ալ ընտանիքս էր միշտ , ուստի ես ալ դէշ համարում մը չունէի խելքիս վրայ : Սակայն կինս , հետեւեալ առտուն , երբոր տօնավաճառը կերթայի , տունէն քանի մը քայլ հեռանալուա՛ դիս ետ կանչեց եւ ականջս 'ի վար ըսաւ որ զգոյշ կենամ :

Տօնավաճառը համնելուս , ըստ սովորութեան ամեն կերպ շարժումներ ընել տուի ձիուս , բայց գնող չէր ելներ : Վերջապէս մէկը եկաւ եւ անոր ամեն կողմը լաւ մը քննելէ ետեւ . մէկ աչքը կոյր գտաւ ու զին չտուաւ : Յետոյ ուրիշ մը եկաւ , եւ անոր մէկ սրունքն ուռած գտնելով ըսաւ թէ ձրի անգամ արուէր իրեն , չէր ընդուներ : Երրորդ մը եկաւ ու տեսաւ որ սուքերը ջուր իջած էին , անտղ զին չի տուաւ : Գորրորդ մը աչքերուն մէջ պալարներ գտաւ : Ձմնգերորդ մը՝ որ առաջիններէն լրբագոյն էր , հարցուց ինձի թէ ինչ ապուր ուտելու տօնավաճառը տարեր էի այն կաղ , կոյր եւ խեղաթիւր կենդանին որ մորթեղերծ ըլլալու դրկելէ զատ ուրիշ բանի չէր գար : Այս ամեն զատողութիւնները չարաչար աչքէս հանեցին

իւեղձ կենդանին, եւ գրեթէ կամաչէի երբնոր
գնող մը կը մօտենար . վասն զի թէ եւ ամեն
ըսածնուն չէի հաւատար, բայց կը մտածէի թէ
վկայութիւններուն թիւը՝ բարեգործութեան
վրայ Սուրբ Դրիգորի ունեցած կարծեացը հա-
մեմատ՝ ճշմարտութեան զօրաւոր հաւանակա-
նութիւն մը կը կազմէր :

Այս ամօթահար վիճակին մէջ էի, երբոր
պաշտօնակիցներէս մէկը, վաղեմի ծանօթ մը,
որ նոյնալէս գործ ունի եղեր տօնավաճառը,
քովս եկաւ ու ձեռքէս բոնելով առաջարկեց
որ գինետուն մը մտնենք եւ մէկ մէկ գաւաթ
ըմպելի խմենք : Խակոյն ընդունեցի առաջար-
կութիւնը, եւ գարեջրոյ պանդոկ մը մտնելով,
ետեւի կողմը փոքրիկ սենեակ մը դրին մեղ, ուր
սկասելի ծերունի մը նստած՝ մեծ դիրք մը
կը կարդար խորին ու շագրութեամբ : Կենացս
մէջ տեսած չէի դէմք մը որ ինձի այնչափ հա-
մակրութիւն ազգած ըլլար . աղեքեկ մազեր
ճակտին վկայ հովանի կընէին ու ակնածութիւն
կազդէին, եւ իր առոյդ ու կորովի ծերութիւնը
քաջառողջութեան ու բարեսրտութեան ար-
դասիք կը թուէին : Սակայն անոր ներկայու-
թիւնն արդելք չեղաւ մեր խօսակցութեանը .
բարեկամս ու ևս մեր կրած զանազան ճախոր-
թութիւնները կը պատմէինք իւալոււ Երկրորդ

ամուսնութեան վրայ ըրած վիճաբանութեան-
թըս , վերջին անդամ հրատարակած տետրա-
կիս , նախասարկաւագին տուած պատասխա-
նին , եւ ինձի դէմ 'ի գործ դրուած բռնու-
թիւններուն վրայ խօսեցանք . բայց ուշադ-
րութիւննիս վայրկեան մը զարտուղեցաւ մեր
խօսակցութենէն՝ պատանիի մը ներս մտնելու-
վը , որ ծերունիին քովը գնաց եւ ականջն ՚ի
վար բան մը ըսաւ : և Ներում խնդրելու բան
մը չկայ , տղաս , ըսաւ ծերունին . մեր նմաննե-
րուն բարիք ընելը պարտականութիւն մ'է որ
պէտք է վճարենք : Ա՛ռ սա ստակը . կուղէի որ
աւելիի պէտք ունենայիր , բայց թէ որ հինգ
լիրան կրնայ քու թշուառութիւնդ սփոփել ,
յօժար սրտով կուտամ քեզ : Համեստ պատա-
նին չնորհակալութենէն լալ սկսաւ : Բայց իմ
չնորհակալութիւնս անկէ աւելի եղաւ : Այն-
չափ բերկրութիւն զգացի ծերունիին բարե-
րարութենէն որ կուղէի պարանոցն իյնալ եւ
զինքը համբուրել : Ծերունին նորէն սկսաւ իր
գիրքը կարդալ , եւ մենք ալ չարունակեցինք
մեր խօսակցութիւնը մինչեւ որ ընկերս տօնա-
վածառին մէջ ունեցած մէկ գործը յիշելով
դուրս ելաւ , խօսք տալով որ քանի մը վայր-
կեանէն ետ դառնայ , եւ աւելցուց թէ ինքը
միշտ կը փափաքէր հնար եղածին չափ երկա-

րօրէն տեսմուիլ Քրիմբօղ վարդասլետին հետ
 Ծերունին , անունս լսելով ուշագրութեամբ
 երեսսնայեցաւ , և երբոր բարեկամս զուրս
 ելաւ , խորին յարդութեամբ մը հարցուց ինձի
 թէ արդ հօք ազգական էի մեծին Քրիմբօղի ,
 միակնութեան այն արի պաշտպանին , որ եկե-
 ղեցւոյ պարիսպն եղած էր : Այս հարցումն
 այնպիսի ուրախութիւն մը ազդեց սրտիս , ո-
 րուն նմանը երբէք զդացած չէի : « Պարոն ,
 դոչեցի , ձեզի պէս առաքինի անձի մը գովու-
 թիւնները՝ ձեր բարեգործութեամբն արդէն
 սրտիս մէջ ծագած զոհութիւնը կը կրինա-
 պատկեն : Քրիմբօղ վարդապեաը , միակնու-
 թեան ջատադովը , զոր դուք Մեծ անուանե-
 լու հաճեցաք , ես եմ . ես եմ այն տարաքաղդ
 եկեղեցականը որ երկար ժամանակ , եւ կը հա-
 մարձակիմ ըսել . այնչափ յաջողութեամբ մա-
 քառեցայ երկրորդ ամումնութեանց զէմ :
 — Պարոն , դոչեց ձերունին յարդական զմայլ-
 մամբ մը , կը վախնամ որ չափազանց ընտա-
 նութեամբ մը վարուեցայ ձեզի հետ . բայց
 կաղաչեմ , ներեցէք հետաքրքրութեանս :
 — Պարոն , ըսի խակոյն ձեռքը ըռնելավ , քաւ-
 իցի որ ձեր ընտանութիւնը զիս վիրաւորած
 ըլլայ . կաղաչեմ , ընդունիցէք իմ բարեկա-
 մութիւնս , ինչպէս որ արդէն համարումս ըս-

տացած էք : — Շնորհակալութեամբ կընդուռ
նիմ առաջարկութիւննիդ , ըսաւ ձեռքս սեղ-
մելով . ո՞հ , ինչ երջանկութիւն է ինձի տես-
նել ձեզ , ո հաստատուն սիւնդ ուղղափառու-
թեան . . . » Ընդմիջեցի իր խօսքը . վասն զի ,
թէպէտ իբրեւ իր գրուածներուն համար գո-
վիստ ընդունով հեղինակ մը՝ խոշոր շողոքոր-
թութիւններ մարսելու տրամադրութեան մէջ
էի , սակայն համեստութիւնս չներեց աւելին
կընել : Ինչ եւ իցէ , վիպասանութեանց մէջնը՝
կարագրուած երկու տարիաւորներ անդամ
մեղի չափ շուտով իրարու հետ բարեկամե-
զած չունին : Զանազան նիւթոց վրայ խօսք
ըրինք . նախ դատեցի որ աւելի բարեպաշտէր
քան թէ գիտուն . եւ սկսայ կարծելթէ մարդ-
կային ամեն գիտութիւններն աղքի պէս կար-
համարհէր : Ասկայն ասով համարումս չպակ-
սեցաւ իր վրայ . որովհետեւ արդէն ժամանակէ
մը ՚ի վեր ես ալ նոյն կարծիքն ունենալ սկսեր
էի : Ուստի առիթ ասի ըսելու թէ աշխարհո
ընդհանրապէս վարդապետականնիւթոց վրայ
եպերելի անհոգութիւննմը ունէր եւ չափէն ա-
ւելի անձնատուրեղեր եր մարդկային շահագի-
տութեանց , « Ո՞հ , այս , Պարոն , ըսաւ , որպէս
թէ իր բոլոր գիտութիւնն այն վայրկենին հա-
մար պահել եր . ըսածնիդ չատ ճշմարիտ է .

աշխարհս վատթարանալու վրայ է . եւ սակայն
երկրածնութիւնը , կամ աշխարհի ստեղծումն
ամենն զարերու փիլիսոփայները չփոթեցուց :
Ի՞նչ անհեթեթ կարծիքներու իսպանուրդ մը
կազմեցին աշխարհի ստեղծման վրայ : Սանքո-
նիատոս , Մանեթոն , Քերոս և Ոկելլոս Լուկա-
նոս , ամենն ալ պարագ տեղն աշխատեցան բա-
ցասրելու : Վերջինին մէջ հետեւեալխօսքերը
կը տեսնենք . Անուբան ու +ոյ անելւ-նոյն բան .
որ կը նշանակէ թէ « Ամենն բան անսկիզբն է եւ
անվախճան » : Մանեթոն՝ որ Կաբուգոդսն-Ա-
սարի ժամանակները կապրէր , (Ասար՝ ասորե-
րէն բառ մ'է , որ նոյն երկրին թաղաւորներուն
սովորական մակդիրն էր , ինչպէս Թագղաթ-
Փաղ-Ասար , Կաբուգ-Ասար) , Մանեթոն ալ նոյն-
պէս անտեղի կարծիք մը ցուցըցած է : Վա-
սըն զի , ինչպէս որ մենք ընդհանրապէս կը-
սենք , Եւ Բա Հելլէն Հելլենէնեա , որ կը նշա-
նակէ թէ աշխարհս զրոց մէջ չսովորուիր , նոյն-
պէս ան ալ փորձ փորձեց բացատրելու . . .
բայց , Պարսն , ներում կը ինդրեմձենէ խընդ-
րէն դարտուղելուս համար : » Յիրաւի կը զար-
տուղէր , եւ ես չեի կրնար տեսնել թէ աշխարհ-
իս ստեղծումն ինչ յարաբերութիւն ունէր
մեր նիւթին հետ : Բայց ասով առ կրցայ հաս-
կընալ որ դրոց աշակերտ էր , եւ հետեւ արար

յարդանքս աւելցաւ վրան : Այս պատճառաւ
 միաքս դրեր էի որ իրեն հետ վիճաբանութիւն
 բանամ . բայց անի չափազանց քաջրաբարոյեւ
 քաղաքավար ըլլալով՝ չէր ուզեր ինձի հետ
 մրցիլ : Ամեն անգամ որ իր առարկութեանցը
 գէմ դիտողութիւն մը կընէի , կը ժպտէր , գը-
 լուխը կը շարժէր , եւ պատախան չէր տար .
 որով այսպէս կը կարծեցընէր ինձի թէ շատ
 բան կրնար ըսել՝ եթէ պատշաճ դատէր : Խօ-
 սակցութեան նիւթը աշխարհի ստեղծումէն
 անդպալաբար մեր երկու քինալ տօնավաճառը
 երթալու պատճառներուն իջաւ : « Իմ հոռ գա-
 լուս նպատակը ձի մը վաճառելէ . ըսի » : Բա-
 րեբաղդաբար անանկ յարմարեցաւ որ անոր
 գալուն նպատակն ալ ձի մը գնելէ եղեր իր
 վարձակալներէն մէկուն համար : Խակոյն ձիս
 ցուցըցի իրեն , եւ սակարկութիւնն անմիջա-
 պէս եղաւ : Միայն ստակը վճարել կը մնար .
 Առոր համար , ծոցէն երսուն լիրանոց Պան քայի
 տումս մը հանեց եւ ինձի առաջարկեց որ մնա-
 ցածը ետ տամ իրեն : Ես ալ վրաս այնչափ ըս-
 տակ չունենալով , հրամայեց պանդոկապետին
 տիրոջը որ իր ստասաւորը դրկէ : Խակոյն եկաւ
 սպասաւորը՝ որ զեղեցիկ նշանազդեստ մը հա-
 դած էր : « Աքրահմամ , ըստ անոր , զնա սա տոմ-
 սակին աւրել տաւր , եւ ստակը շոտով բեր .

մեր դրացի ժաքսօնին կամ ուրիշներու դնա ,
անոնք կաւրեն . » Երբոր ծառան դուլս ելաւ ,
մեր ծերունազարդ բարեկամը սրտաշարժ բա-
նախօսութիւն մը ըրաւ ինձի արծաթ դրամոց
նուաղութեանը վրայ . Ես ալ անկէ աւելի սըր-
տաշարժ բանախօսութիւն մը ըրի ոսկի դրա-
մոցնուաղութեանը վրայ . Եւ երբոր Արքահամ
դարձաւ եկաւ , մենք արդէն համաձայն վըճ-
ռեր էինք թէ երբէք այս աստիճան ստակինը-
ւազութիւն տեսնուած չէր . Արքահամ լուր
քերաւ թէ տօնավաճառին ամեն կողմը վազեր ,
տոմսակն աւրող մը չէր կրցեր գտնել , թէ եւ
կէս շիլինկ վարձ առաջարկեր էր . Երկու քիս
ալ մեծ տժդոհութիւն պատճառեց այս բանը .
բայց ծերունին՝ վայրկեան մը մտածելէ ետեւ՝
հարցուց ինձի թէ մեր կողմերը Սողոմոն Ֆը-
լամորու անունով մէկը կը ճանչէի . Երբոր
պատասխանեցի թէ դրացիս էր , « Ուրիմն ը-
սաւ , կը կարծեմ որ կրնանք ձեզի հետ գործ
ընել . փոխանակագիր մը տամ ծեզ անոր վրայ ,
որ տեսնելուն պէս վճարէ . Եւ գիտէք որ չըր-
ջակայ հինգ մղոն երկրին մէջ անոր պէս շիտակ
մարդ չկայ : Համեստ Սողոմոն եւ ես երկար
ժամանակէ ՚ի վեր բարեկամ ենք . Միտքս
կուգայ որ ժամանակաւ անոր հետ էր-էուց* կը

* Խաղ մը՝ որուն մէջ երկու քայլափոխ եւ

խաղայինք , և միշտեսկը յաղթէի . բայց մէկ ոտքով ցատկելու խաղին մէջ անինէ յաջողակ էր : » Դրացին վրայ փոխանակագիր մը ինձի համար ստակ էր . որովհետեւ վճարելու կարող ըլլալը դիտէի : Ուստի փոխանակագիրն ստորագրուեցաւ ու ձեռքս տրուեցաւ . և Պ . Ժէնքինաօն սղատկառելի ծերունին , իր Ադամ սղասաւորը եւ իմ ձիս ելան գացին իրարմէ խիստ զոհ :

Երբոր մինակ մնացի , խորհիղ սկսայ եւ մտածեցի որ անծանօթ մարդէ մը փոխանակագիր առնելո խոհեմութիւն չէր . ուստի որոշեցի ձիս ետ առնուլ . ճանրայ ելայ ծերունին ետեւէն , բայց ժամանակն անցեր էր . այս պատճառաւ տանս ճանրան բռնեցի , որպէս զի երթամ ժամ առաջ փոխանակագիրը դրացին վճարել տամ : Պ . Ֆլամպօրու իր տանը դուռը կանգնած՝ ծուխ կը քաշէր . տումսակն իրեն ներկայացուցի : Առաւ , երկու անդամ կարդաց : « Կարծեմ որ անունը լաւ կը կարգաք , ըստ . Եվրեամ Ժէնքինաթըն է : — Այո , այո , պատասխանեց , անունը բաւական ազէկ գրուած է . մարդն ալ կը ճանչեմ , աշխարհիս ամենէն

եւ մէկ ոսախւն ընելով՝ աւելի հեռուն ցատկուը կը շահի : Տաճէլ . Ատըմ կամ Ատըմ աթլամք :

մեծ անզգամը. այդ թշուառականն էր որ ականցները մեղի վաճառեց. Պատկառելի դէմքով ու աղերէկ մազերով մարդ մը չէր. Յունաբէն հատուածներ կարդաց, երկրածնութեան վրայ, աշխարհի վրայ, եւ այն բանախօսութիւնները ըրմաւ: » Հառաչանքով մը պատասխանեցի այս հարցման: « Չարաճճին քանի մը ուսումնական խօսքեր գոյ ըրեր, զրադէտ մարդ մը դտնելուն պէս՝ անոր կը ծախէ. բայց ես կը ճանչեմ այդ անզգամը եւ կուզեմ կախել տալ: »

Այս ձախորդ դէպքը զիս որչափ տրամեցուց՝ աւելորդ է պատմել. բայց աւելի մեծ էր շփոթութիւնս երբոր կը մտածէի թէ ինչ երեսովինոջսու աղջկանցս պիտի երեւնայի: Դըպքոցէն փախչող աշակերտ մը վարժապետին դէմն ելնելու համար ինձի չափ չէր վախնար: Սակայն միտքս դրի որ բարկացայտ դէմքով մը սուն մտնեմ, ու կոիւ հանելով ընտանեացըս բարկութեան առաջն առնում:

Բայց աւազ. տունէն ներս մտնելուս տեսայ որ ընտանիքս վիճելու տրամադրութիւն չունէր: Կինս ու աղջիկներս նստեր կուլային: Պ. Թօրնհիլ խմացուցեր էր իրենց, որ աղջկանցըս լոնտրա երթալու եւ պաշտօն դտնելու յոյս չկար. չարամիոտ անձինք մեր վրայ դէշ

աեղեկութիւններ տուեր էին երկու մեծաշուք
տիկնանց , որոնք նոյն օրը Լոնտրա դարձեր
էին . Պ . Թօրնհիլ չէր կրցեր ոչ այն սուտ տե-
ղեկութիւններուն աղբիւրը գտնել եւ ոչ այն
տեղեկութեանց ինչ ըլլալը խմանալ . բայց ովք
որ ալ ըլլային անոնց հեղինակները , Պ . Թօրն-
հիլ խօսք կուտար մեզի բարեկամ եւ պաշտ-
պան մնալու , Հետեւաբար տեսայ որ ընտա-
նիքո իմ գլխուս եկած ձախորդութեան ան-
տըրտունջ համբերելու վիճակին մէջ էր , ո-
րովհետեւ աւելի զդալի ձախորդութիւն մը
պատահեր էր իրենց : Բայց ամեն բանէ աւե-
լի մտատանջութիւն եւ տագնադ կը կըէինք
դռչակելու թէ որ ցածրիտ եւ սեւհոզի
մարդը կրցեր էր վատահամբաւել մեզի պէս
անմեղ ընտանիք մը՝ որ ոչ ուրիշի նախանձը
շարժելու չափ բարձր էր , եւ ոչ ուրիշի ատե-
լութիւնը զրգուելու չափ :

ԳԼՈՒԽ ԺԵ .

Պ . ՊԵՏՎԵԼ ԱՐԵՐԵՆԻՆ ԷՎԱՐԵՐԵՆԻ : Զ-Ք-Ե-Լ-Ն-Ն
Ի-Հ-Ե-Ն-Ն-Ի-Ն-Ն ԷՎԱՐԵՐԵՆԻ-Ն :

Այն իրիկունք եւ հետեւեալ աւուր մէկ
մասը գործածեցինք մեր թշնամեաց ով ըլլալը
հասկընալու : Դրացի չմնաց որ մեր կասկած-
ներէն ազատէր , եւ ամեն մէկս մէկ մէկ պատ-
ճառ կը գտնէինք կարծիքնիս հաստատելու ,
նրբոր այս կասկածներուն մէջ կը տատամաբէ-
ինք , մեր մանկիկներէն մէկը՝ որ դուքսը կը
խաղաք , թղթապանակ մը բերաւ , որ խոսե-
քուն վրայէն գտեր էր : Խակոյն ճանչեցինք որ Պ.
Պըչէլին էր , եւ զննելով տեսանք որ մէջը զա-
նազան նիւթաց վրայ ծանօթութիւններ կա-
մին : Բայց ամենէն աւելի մեր ուշադրութիւ-
նը զրաւեց կնքեալ թուղթ մը՝ որուն վրայ հե-
տեւեալ մակադիրը կար . Յաջնահետեւ ողոքածու գոր-
նառնելու ունանելու շրջանուն օրինութեաւ : Մէկնէն
՚ի մէկ միտքերնիս եկաւ թէ մեզ վատաքար
զրովարացողն ան էր , եւ խորհուրդ ըթինք թէ
հայմակը բայսանք : Ես գէմ կեցայ . բայց Սո-
վիս՝ վկայելով որ Պ . Պըչէլ այնովիսի վատու-

թիւն մը ընող մարդ չէր, պնդեց որ թուղթը
բանանք կարդանք : Միւսներն ալ անօք հետ
միացան, եւ ես ալ թախանձանքներնուն չգի-
մանալով՝ նամակը բացի եւ հետեւեալը կար-
դացի :

« Տիկնայք :

« Թուղթս բերողը ձեզի պիտի հառկըցը-
նէ ուսկից ըլլալը : Գրողը գոնէ այնպիսի մէկն
է որ անմեղութիւնը կը սիրէ, եւ չուզեր թո-
ղուլ որ հրապուրուի : Լաւ տեղէ իմացայ որ
դուք դիտաւ որութիւն ունիք երկու խնձի ծա-
նօթ մատաղ օրիորդ Լոնտրա տանելու իրրեւ
ընկեր օրիորդներ, Որովհետեւ չեմուզեր պար-
զաւթիւնը խարուած եւ առաքինութիւնը
պղծուած տեսնել, կիմացընեմ ձեզ թէ այդ
անխօնեմ ընթացքը խիստ վտանգաւոր հետե-
ւանք կրնալ ունենալ : Ես սովորութիւն չու-
նիմ անազարկեշտ եւ վատահամբաւ անձանց
հետ խստիւ վարուելու . եւ այս առթիս մէջ
ալ լուռ կը կենայի : Եթէ յիմարութիւնը ոճիր
մը գործելու չելնէք ։ Ուրեմն օկուտքաղեցէք
բարեկամի մը ազգաքարութենէն, եւ մինչեւ
հիմա խաղաղութեան ու անմեղութեան օթե-
ւան եղող տան մը մէջ մոլութիւն ու վատա-
համբաւութիւն մտցընելու հետեւանքներուն
վրայ լաւ մտածեցէք : »

Այս տողերը կարդալնուս վրայ՝ տարա-
կոյմնիս փարատեցաւ : Թէպէտ այնապիսի խօս-
քեր կային այսնամակին մէջ որ երկու կող-
ման ալ կրնային յարմարիլ , եւ պարունակած
խիստ դատաքննութիւններն ալ՝ որոց որ գըր-
ուած էին՝ անոնց կրնային վերաբերիլ քան թէ
մեզի , այսու ամենայնիւ դէշ մտօք մեկնելն
աւելի բնականէր , եւ աւելի հեռուն չգայինք
կինս հազիւ մինչեւ վերջը մտիկ ընելու համե-
րերութիւն ունեցաւ , եւ անհնարին զայրաժ-
մամբ կանիծէրնամակը գրողը : Օլիվիա ալ չէր
կրնար իր բարկութիւնը դատել . իսկ Սովիա
ապշեր ափիբերան եղեր էր : Ես ալ այս գործը
նոգիալի առերախտութեան մը ապացոյց կը
համարէի . եւ ուրիշ պատճառ մը չէի գտներ ,
բայց միայն կրտսեր աղջիկս տունէն չհեռացը-
նել՝ որպէս դի յաճախ հետը տեսնուելու ա-
ռիթ ունենայ : Երբոր ամենքս ալ այս վիճա-
կին մէջ նատած՝ վրէժ առնելու հնարքներ կը
խորհէինք , մեր մանկիկներէն մէկը վազելով
լուր բերաւ մեզ թէ Պ , Պրչէլ արտին միւս ծայ-
րէն կուդար : Աւելի դիւրին է երեւակայել
քան թէ նկարագրել նոր թշնամանքի մը կըս-
կիծէն եւ մօտաւոր վրէժինդրութեան մը բերկա-
րութենէն յառաջ եկած զանազան զգացում-
ները որ մարդ կը կրէ այսապիսի պարտգայի մը

մէջ : Թէսպէտ մնաք անոր ապերախտութիւնը
կշտամբելէ զատ ուրիշ դիտաւորութիւն չու-
նէինք , սակայն որոշեցինք որ հնար եղածին
չափ կծու կերպով ընենք : Ասոր համար խոր-
հուրդ ըրինք որ ուրիշ ժամանակներու պէս
զուարթ գէմքով եւ բարեկամաբար զանի ըն-
դունինք , եւնախ սովորականէն աւելի քաղց-
րութեամբ խօսինք , որպէս զի քիչ մը զուար-
ճանայ , եւ յետոյ այն չողոքորթ հանդարտու-
թեան մէջ վոթորիկի պէս վրան յարձակինք
եւ իր վատութեան կշտամբանքներովը զինքը
ընկձենք : Այսպէս որոշելէ ետեւ , կինո իր վը-
րայ առաւ կատարել , եւ ստուգիւալ յաջողակ
էր կատարելու : Պ. Պրչէլներս մտաւ , աթոռ մը
առաւ նստաւ : «Խիստ գեղեցիկ է այսօր օդը , Պ.
Պրչէլ — Այս , վարդապետ , խիստ գեղեցիկ է .
թէսպէտ կոշտերուս ցաւէն կիմանամոր անձրեւ
պիտի գայ : — Զեր կոտոշներուն * ցաւէն մի ,
գոչեց կինո բարձրաձայն ծիծաղելով , եւ ետքն
ալ ներում խնդրեց ըրած զուարձաբանու-
թեանը համարու — ձշմարտիւ , տիկին , ըստ Պ.
Պրչէլ , յօժար որտով կը ներեմ , վասն զիւ , եթէ

* Անդ զիերէնին մէջ սցս հանճարաբանու-
թեան աեղի տուող բառերուն յարաբերութիւ-
նըն աւելի մօտ է . +օքն (կոշտ ուժից , տաճկ . նա-
ոըր) եւ հօքն (եղջիւը կամ կսառը) :

դուք չըսէիք՝ իմ մատքէս անդամ չպիտի անց-
նէք զուարճարսութիւն ըլլալը : — Կարելի
է որ այդպէս ըլլայ , Պարսին , ըսաւ կինս աչք
ընելով մեզ . և աակայն աներկրայ եմ որ դուք
լաւ դիտէք թէ որչափ այդ ծանրութենէն
ողէտք կըլլայ ունկի մը կշռելու համար : — Ըս-
տուգիւ , տիկին , ըսաւ Պ . Պրչէլ կը կարծեմոր
այս առտու հրամանքնիդ զուարճարան դիրք
մը կարգացեր էք . վասն զի մեծ տրամադրու-
թիւն ունիք զուարճարանութիւններ ընելու .
սակայն , տիկին , անկեղծաբար խօսելով , եռ
աւելի կը սիրեմ ունկի մը ողջմտութիւնը :
— Կը հաւատամ ատոր , ըսաւ կինս ծիծաղու-
ղէմ մեզինայելով , թէ եւ պղտիկ ինկած էք .
սակայն անանկ անձինք կը տեսնեմ որ ողջմր-
տութիւնը բերաննէն վար չեն ձգեր , ու իրենք
խիստ քիչ ողջմտութիւն ունին : — Ատորտա-
րակոյս շկայ , ըսաւ Պ . Պրչէլ . դուք այնպիսի
տիկնայք ճանչեցիք որ խելքի կողմանէ հրա-
շալեաց կարգ անցած են , բայց բնաւ խելք
չունին : » Շուտովնչմարեցի որ կինս չպիտի
կրնար պարծերես ելնել այս վիճաբանութեւ-
նէն , ուստի հարկ սեպեցի խնդրոյն մէջ մասնել
եւ լրջաբար խօսիլ : « Խելքն ու հմտութիւնը ,
ըսի , ոչինչ բաններ են առանց համեստութեան ,
եւ այս է որ արժէք կուտայ մարդուն : Տղէտ

բայց անստգիւտ շինական մը մոլի փիլիսոփիայէ
մը աղէկ է . Վասն զի ի՞նչ է հանճարը կամ
քաջութիւնն առանց սրտի : Պարկեշտ մարդն
արարչին ամենէն աղնիւ գործն է : — Փոփին
այդ սիրելի կարծիքը , ըսաւ Պ . Պրչէլ , իրեն
պէս մեծահանճար մարդումը անտրժան հա-
մարած եմ միշտ , անսարժան իր բուն գերադան-
ցութեանը . Եւ ինչպէս որ զրքի մը համբաւը՝
չէ թէ անոր թերութենէ աղատ ըլլալէն՝ այլ
մեծամեծ գեղեցկութիւններ սլարունակելէն
կախեալէ , այնպէս ալ մարդոց համբաւը՝ չէ թէ
անոնց անստգիւտ ըլլալէն՝ այլ ունեցած մեծա-
մեծ առաքինութիւններէն պէտք է կախեալ
ըլլայ : Գիտուն մարդ մը կրնայ անխոհեմ ըլ-
լալ , տէրութեան պաշաննեայ մը հպարտու-
թիւն եւ պատերազմական մ'ալ անգթութիւն
ունենալ . բայց ասոր համար կրնանք անոնցմէ
նախամեծար դասել ստորին արհեստաւոր մը
որ տարժանելով կեանք կը վարէ , առանց ար-
ժանի ըլլալու՝ ոչ գովեստի եւ ոչ քննագատու-
թեան : Եթէ այնպէս ըլլալ , պէտք էր նոյն ի-
րաւամբ Յանտրեան դպրոցին պաղ բայց կա-
նոնաւոր նկարներն իտալական վրձինին ան-
կանոն բայց վսկէմ արտադրութիւններէն նա-
խապատիւ դասել : »

« Պարտն , ըսի , ձեր գիտողութիւնը ձիւց

Է այն սղարադային մէջ՝ ուր սղայծառ առաքենութեանց հետ մանրթերութիւններ ալ գըտնուին . բայց երբոր մի եւ նոյն անձին վրայ կարգէ դուրս առաքինութիւններու հետ նաև մեծամեծ մոլութիւններ դանուին, այնպիսի մարդ մը արհամարհանաց միայն արժանի է : »

« Թերեւս, սղատասխանեց Պ. Պրչէլ, գըտնուին այդպիսի հրէշներ որոնք մեծամեծ առաքինութեանց հետ մեծամեծ մոլութիւններ ալ ունենան . սակայն ես կենացս մէջ այդպիսի մարդ մը երբէք չեմտեսած . ընդ հակառակն , միշտ նկատեր եմ, որ մեծ հանճար ունեցող մարդոց զգացումներն ալ լաւ են : Եւ յիրաւի, Նախախնամութիւնն այս մասին մեծ բարիք ըրածէ մեզ՝ մոլի սրտերուն խմացականութիւնը տկարացընելով, եւ չարիք ընել ուզողներուն կարողութիւնը նուազեցընելով : Այս կանոնը կը թուի թէ միւս կենդանեաց վրայ ալ տարածուած է . մանրերը նենգաւոր անգութ եւ վատ կըլլան , մինչդեռ դօրաւորներն արի վեհանձն, եւ քաղցր են : »

« Այդ դիտողութիւնները խիստ գեղեցիկ են, ըստ . սակայն ես դիւրաւ կրնամյիշելայն-պիսի մարդ մը , (այս խօսքն ըսած ժամանակա աչքս իւր վրայ տնկեցի) , որուն գլուխն ու սիրտը նողկալի ընդպիսակառկեր մը կը ձեւացը-

նեն : Այս , պարոն , ըսի , շատ դիւրին է ինձի
անոր երեսին դիմակը հիմա հոս վար առնուլիք
աներկեւանութեանը մէջ . . . : Կը ճանչէք ,
ողարոն , սա թղթապանակը : — Այս , պարոն ,
պատասխանեց ; իմս է եւուրախ եմ գտնելուս
վրայ : — Կը ճանչէք սա նամակն ալ , գոչեցի
. . . ոչ , ոչ , փախուստ պէտք չէ . երեսս նայե-
ցէք . . . կը ճանչէք սա նամակը : — Այդ նամա-
կը . այս , ես գրած եմ : — Եւ ի՞նչպէս կրցաք
այդպիսի նամակ մը դրելու ցածութիւնը սե-
ւութիւնն ու ապաշնորհութիւնը յանձն առ-
նուլ : — Ի՞նչպէս դուք ալ կրցաք այդ նամա-
կը բանալու ցածութիւնն յանձն առնուլ , ը-
սաւ , (անօրինակ լրբութեամբ մը երեսսնայե-
լով) : Զէք դիտեր որ ամենդ ալ կրնամ կախել
տալ այդ բանին համար . բաւական է որ եր-
թամ խաղաղութեան գատաւորի մը եւ երդ-
նում որ դուք իմ թղթապանակս բացեր էք ,
եւ ամենդ ալ այս դրան առջեւ կախել կու-
տամ : » Այս ժայրհութիւնը՝ որուն չէի սպա-
սեր՝ զիս այն աստիճան զայրացուց որ դժուա-
րաւ կրնացի ինքիննքս բռնել : « Ապերախտ ,
անզգամ , կորիր , գնա , եւ մի՛ պղծեր տունս
քու պժգալի ներկայութեամբդ , կորիր , եւ ան-
զամ մ'ալ տունս ոտք մի կոխեր : Քեզի ուրիշ
ողատիժ չեմ ըղձանար , բայց միայն խոռովիտ

խղճմտանք մը՝ որ մշտնջենաւոր դահիճ մ'ըլ-
լայ քեզ : » Ասոնք ըսելով թղթապանակն ի-
րեն նետեցի , որ ժպտելով գետնէն առաւ եւ
վերջին աստիճանի պաղարիւնութեամբ մը զո-
ցեց զնաց՝ մեզ զարմանքի մէջ թողլով իր ան-
խըուով հանդարտութեանն ու վստահութեանը
վրայ : Կինս մասնաւորապէս կը զայրանար որ չի
կրցանք անոր սիրտը կսկծցընել եւ կամ ըրած
ցածութեանը վրայ ամչցընել : Իսկ ես ուղելով
կնօջս ու աղջկանցս կիրքը հանդարտել , որ
մեզի չվայլելու կերպով բորբոքուեր էին ,
« Սիրելիս , ըսի , պէտք չէ զարմանանք չա-
րերուն անամօթութեանը վրայ : Անոնք այն
ժամանակը միայն կամաչեն՝ երբոր բարի գործ
մը կատարենին տեսնուի . իսկ չար գործերը
փառք կը համարին իրենց :

« Ոճիրն ու ամօթը առաջ ընկեր եղան ,
կըսէ այլաբանական առակ մը , եւ իրենց ճա-
նապարհորդութեան սկիզբը միշտ մէկտեղ կը
քալէին . բայց իրենց այս ընկերութիւնը եր-
կուքին ալ անհաճոյ եւ ճանձրալի եղաւ : Ոճի-
րըն յաճախ դժոհութեան առիթ կուտար ա-
մօթին , ամօթն ալ շատ անդամ ոճիրին դիտա-
ւորութիւններն երեւան կը հանէր : Շատ վի-
ճելէ ետեւ՝ իրարմէ յաւիտեան բամուռելու ո-
րոշում ըրէին : Ոճիրն աներկիւղութեամբ մի-

նակ քալեց՝ ճակատագրին ետեւէն համնելու
համար, որ դահճի կերպարանքով առ ջեւէն կեր-
թար : Բայց ամօթը ընականաբար երկչոտ ըլ-
լալուն՝ ետ դարձաւ ու գնաց առաքինութեան
հետ ընկերացաւ, որն որ ճանապարհորդութեան
սկիզբէն ետ թողուցեր էին : Ահա այսպէս,
զաւակներս, երբոր մարդիկ մոլութեան ճանա-
բուն մէջ քիչ մը յառաջ երթան, չարագոր-
ծութեան վրայ ամշնալէ կը դադրին, եւ ամօ-
թըն անոնց առաքինութեանցը հետ միայն կըն-
կերանայ : »

Գ. Ա. ՈՒԽԻ Ժ. Զ .

Երեցն ըստունիւց կորուրունիւն է բանեցնեւ :

Բոյց ու ու ու ու ու կորուրունիւն է բանեցնեւ :

Հանդիպիւ :

Սովիսային դաղափարն ու զգացումներն
ինչ որ աւ ըլլային, ընամնեացս միւս անդամ-
ները Պ . Պրչէլի բացակայութեանը վրայ դիւ-
րաւ մխիթարուեցան մեր կալուածատէրին ըն-
կերակցութեամբը, որ աւելի յաճախ եւ եր-
կար այցելութիւններ ընել սկսաւ մեզ : Թէ-

Եւ չկրցաւ իր փափաքանացը համեմատ Կոնտ-
րայի զուարձութիւններն աղջկանցս հայթայ-
թել , բայց անոնց տեղը լեցէնելու համար՝
ամեն կերպ մանր զուարձութիւններ անոնց կը
հայթայթէր , որչափ որ մեր բնակարանը կը նե-
րէր . Սովորաբար առաւօտները կուդար . Եւ
մինչ ես ու որդիս մեր գործերուն համար դուրս
կերթայինք , անի ընտանեացս հետ սունը կը
նստէր եւ քաղաքին նկարագրութիւններովը
զանոնք կը զուարձացընէր : Թատրոնի վերա-
բերեալ ամեն դիտողութիւնները կը յեղյեղէր ,
եւ խելացիներուն նշանաւոր խօսքերը՝ գեռ
հանճարաբանութեանց հաւաքումներուն մէջ
չմտած՝ բերնուց դիտէր : Խօսակցութեանց
ընդհատած միջոցներուն Բիքէ խաղալ կը սով-
բեցընէր աղջկանցս , կամ երբեմն երկու փո-
քըր մանչերս իրարու հետ բռնցի կը կոռուե-
ցընէր , որպէս զի սթափին կը սէր : Բայց զա-
նի մեր փեսան տեսնելու յայսերնիս՝ մեզ կեր-
պով մը կը կուրացընէր անոր այս ամեն թերու-
թիւններուն վրայ : Պէտք է խոսատվանինք որ
կինս հաղար տեսակ մանր խորամանկութիւն-
ներ ՚ի գործ կը դնէր զանի բռնելու համար .
կամ աւելի պարկեշտ բառ մը գործածելով , ա-
մեն վարպետութիւն ՚ի գործ կը դնէր իր աղջ-
կանցը կատարելութիւնները փայլեցընելու

համար։ Աթէ թէյին պաքսիմտտները լաւ չոր-
ցած ըլլային՝ Օլիվիային շինածն էին . եթէ հա-
զարջի գինին հանուէր՝ հաղարջներն Օլիվիա-
յին քաղածն էին . անոր ճարտարութեամբնէր
որ քացախսը դրուած պտուղներն իրենց բնա-
կան գոյնը չէին կորանցըներ . իսկ ալիւրով ,
ծուծով եւ անկուտ չամչով պղակուտոր շինե-
լու մասին ոտքը եկող չկար . Երբեմն ալ
խեղճ կինս կըսէր առպետին թէ կը կարծէր որ
ինքն եւ Օլիվիա հաւասար էին հասակաւ , եւ
երկուքն ալ ոտք հանելով քովէ քով կըկանդ-
նեցընէր , որպէս զի տեսնէ թէ որին հասակն
աւելի բարձր էր : Այս մանր վարօնետութիւն-
ները՝ որ անոշմարելի կը կարծէր՝ ամենուն
աչքին կը զարնէին . բայց խիստ հաճելի էին
մեր բարերարին , որ հանապաղնորանոր վոր-
ձերկուտար իր սիրոյն . եւ թէպէտ այն փորձեա-
րը երբէք ամուսնութեան առաջարկութիւնա-
ներու չէին հասներ , բայց մենք կը կարծէինք
թէ շատ հեռու չէին : Այս կէտին վրայ գեռ
իր միտքը չյայտնելը մերթ բնական անվըս-
տահութեան մը կուտայինք , մերթ ալ իր հա-
րուստ հօրեզբօրն անհաճոյ ըլլալու երկիւղի
մը : Շատ չանցաւ պարագայ մը վրայ եկաւ որ
ամենեւին առարկոյս չթողուց մեր ընտանեաց
հետ միանալու դիտաւորութեանը վրայ . մին-

չեւ անդամ կինս յայտնի խոստմունք մը հաշ
մարեց զայն :

Կինս ու աղջիկներս մեր ֆլամալօրու դրա-
ցին փոխադարձ այցելութեան երթալով ,
տեսան որ անոր ընտանիքն իրենց պատկերը
քաշել տուեր էին պատկերհանի մը՝ որ գեղերը
կը պտըտէր եւ հատը տասնեւհինգ շիլինկի
պատկեր կը շինէր : Որովհետեւ ֆլամալօրուի
ընտանիքն ու իմս երկար ժամանակէ 'ի վեր
կիրթ ճաշակի մասին իրար գերազանցելունա-
խանձ մը ունէին , ընտանիքս իրար անցաւ եր-
բորտեսաւ որ անոնք մենէ առաջ եւ մենէ
դաղտուկ այս բանն ըրեր էին . եւ թէպէտ շատ
ջանացի կինս ու աղջիկներս համոզելու , եւ
շատ բան ըսի , բայց մտիկ չըրին եւ վերջապէս
որոշուեցաւ որ մեր ալ պատկերները նկար-
ուի : Իմաց տրուեցաւ պատկերհանին , վասն
զի ես ի՞նչ կրնացի ընել . յետոյ խորհուրդ ը-
րինք թէ ի՞նչ դիրքի մէջ նկարել տանք ինք-
զինքնիս որպէս զի մեր ճաշակին գերազան-
ցութիւնը ցուցընենք . վասն զի մեր դիացիին
ընտանիքը եօթն հոգիէ կը բաղկանար , եւ
ամենն ալ ձեռքերնին մէկ մէկ նարինջ բռնած
նկարագրուեր էին , որն որ եօթն նարինջ կը-
նէր , եւ անվայելուչ , միակերպ , եւ տձեւ ե-
րեւոյթ մը կուտար պատկերին : Մինք ուղե-

ցինք աւելի գեղեցիկ ու պայծառ բան մը ը-
նել , եւ շատ վիճաբանութիւններէ ետեւ հա-
մաձայնութեամբ որոշեցինք մեզ ամենս մէկ
պատկերի մէջ նկարել տալ պատմական դէմ-
քերով : Այս կերպը ոչ միայն գիւրագին կըլ-
լար եւ մէկ շրջանակի մէջ կը լմննար , այլ եւ
խիստ գեղեցիկ կըլլար , վասն զի ամեն կիրթ
ճաշակի տէր անձանց ընտանիքն այս կերպով
կընկարուէին այն ժամանակը : Եւ որովհետեւ
ամենուս ալ յարմարելիք պատմականնիւթ մը
չէր գար մտքերնիս , որոշեցինք որ ամեն մէկո
իրարմէ տարբեր ու անկախ պատմական դէմ-
քով ինքզինքնիս հանել տանք : Կինս ուղեց
Աստղկան կերպարանքովնկարուիլ . կուրծքին
վրայ սրտի հատուած մը անդամանգններով ըն-
գելուզեալ , եւ երկու փոքր տղայքն ալ կու-
պիտոնի կերպարանքով իր քովք . ես ալ իմ քա-
հանայական վերաբերուովս ու գոտիովս պիտի
նկարուէի , երկրորդ ամուսնութեանց վրայ յօ-
րինած վիճաբանութեան գիրքերս Աստղկան
մատուցանելով : Օլիվիա ուղեց Ամազոն նը-
կարուիլ՝ հեծեալի կանանչ եւ ոսկեթել ըգ-
գեստով եւ ձեռքն ալ մտրակ մը : Սովիտ խաշ-
նարածուհիի կերպարանքովնկարուիլ կուզէր ,
եւ չորս բոլորը բազմաթիւ խաշինքներ , որչափ
որ պատկերհանը կընար սղմեցընել . Մովսէ

ալ ճերմակ փետուրով փեղոյր մը կրել կուզէք
դլուխը : Մեր այս ընտրութիւնն այնչափ հա-
ճոյ եղաւ ասպետին , որ խնդրեց ինքն ալ այս
ընտանեկան պատկերին մէջ գտնուիլ Մեծն
Աղէքսանդրի կերպարանքով , Օլիվիայի ոտքն
լինկած : Այս խնդիրը՝ մեր ընտանեաց մէջ մըտ-
նելու բաղձանքին նշան մը համարելով՝ չկըր-
ցանք մերմել : Պատկերհանը գործի սկասւ , եւ
անընդ հատ ու շուտ աշխատելուն համար չորս
աւուր մէջ լմնցուց : Պատկերը մեծ էր եւ ե-
րանդներն ալ խնայուած չէին , որուն համար
կինս շատ դոմեստ շոայլեց պատկերհանին :
Ամենքս ալ գոհ եղանք նկարուածէն , բայց
ձախորդ պարագայ մը՝ որ պատկերին շինուե-
լէն ետքը եկաւ . մտքերնիս , մեզ սաստիկ տըրտ-
մեցուց : Այնչափ մեծ էր պատկերը որ մեր տա-
նը սենեակներուն մէջ չէր սղմեր : Զարմանալի
բան է որ ի՞նչպէս չէինք կրցեր յառաջուց մը-
տածել այս կարեւոր կէտը . բայց տարակոյս
չկայ որ մտքերնիս չէր եկեր : Ուստի դժբաղդ
պատկերը՝ փոխանակ մեր բաղձանացը համե-
մատ մեր սնափառութեանը ծառայելու , խո-
հարանին պատին առջեւ մնաց , ուր որ կտաւը
փակուցեր էին նկարելու համար : Այնչափ մեծ
էր , որ ոչ սենեակներնուս մէջ կընար մտնել եւ
ոչ գուսներէն պնդնիլ : Առանկով մեր գրացիւ-

ներուն ծաղրաբանութեանց նիւթ եղաւ . մէկը զայն Ռոպէնսոնի մակոյկին կը նմանեցընէր , որ խիստ մեծ շինելուն համար չէր կրցեր անդէն չարժել : Մէկ ուրիշը կըսէր թէ շիշի մէջ շինուած կարժառներու կը նմանէր : Ոմանք ալ կը զարժանային թէ ինչպէս կրցեր էր հոն մտնել , եւ ինչպէս դուրս պիտի համուէր :

Բայց մեր պատկերը ոմանց այս ծաղրաբանութիւններուն նիւթ տուած ժամանակ՝ ուրիշներու ալ չարամիտ մեինաբանութիւններու առիթ կը մատակարարէր : Ասպեախն պատկերը՝ մերիններուն հետ գտնուելով մեծ պատիւ կընէր մեզ , բայց ուրիշներուն նախանձը կը չարժէր : Ուստի մեր վրայօք անհաճոյ շշունչներ պտղտիլ սկսան , եւ խեր մը անձինք ալ մեր թշնամիններուն խօսածները բարեկամաբար մեզի իմացընելով հանդստութիւննիւ աւրեցին : Այն զրոյցներուն արժան եղածին պէս ցասմամբ կը պատասխանէինք , բայց այս ցասումն աւելի կը գրգռէր զրպարփիչները : Ուստի մեր թշնամեաց չարախմօսութիւնները լուեցըննելու խորհուրդ ընելով , վերջապէս որոշում մը ըրինք որինձի շատ հանճարեղ եւ գոհացուցիչ երեւցաւ , եւ այս էր : Որովհետեւ մեր ամենէն կարեւոր բաղձանքը Պ . Թօրոնհիլին այնչափ մեր տունը յանախելուն բուննպատ ա-

Կը հասկընալ էր . կինս վրան առաւ զանի հետաղօտել՝ մեծ աղջկանս այր մը ընտրելու վըրայ անոր կարծիքն հարցընելու պատրուակաւ . թէ որ այս հնարքը բաւական չըլլար անոր միտքը հասկընալու , այն ժամանակ կինս զանի սլիտի վախցընէր՝ ըսելով թէ աղջիկս ուրիշ ուղող կայ . եւ կը կարծուէր որ այս վերջին միջոցով ասպետը՝ կը հարկադրէր իր միտքըն յայտնելու , որչափ եւ յամառու ըլլար . բայց ես չէի ուղեր այս վերջի խորհուրդին հաճութիւն տալ՝ մինչեւ որ Օլիսիա հաստատ կերպով խօսք չտար ինձի թէ Պ . Թօրնհիլի հակառակորդ ենթադրուած անձին հետ ամուսնանալու յանձնառու էր՝ թէ որ Պ . Թօրնհիլ չփութար միւսին առաջքն առնելու համար աղջկանս հետ ամուսնանալու : Այս խորհուրդին հաւանութիւն տրուեցաւ , բայց ես այն չափ հաճ չէի , թէ պէտ բոլորովին ալ գէմ չկեցայ :

Առաջին անգամ որ Պ . Թօրնհիլ մեզ տեսնելու եկաւ , աղջիկներս խոհեմութիւն բանեցընելով դուրս ելան , որպէս զի մայրերնին առիթ ունենայ իր խորհուրդը գործադրելու . բայց քովի սենեակէն անդին չգացին , ուսկից կրնային ականջ դնել ըլլալիք խօսակցութիւններուն : Կինս վարպետութեամբ մը խօսք բա-

ցաւ՝ ըսելով թէ Ֆլամպօրուի աղջիկներէն մէ-
կը յաջող ամուսնութիւն մը ընելու վրայ է Պ.
Սրանքէրի հետ : Ասպետն իրաւունք տալով,
կինս խօսակցութիւնը շարունակեց՝ դիտողու-
թիւն ընելով թէ « Հարստութիւն ունեցող օ-
րիորդները միշտ ասպահով են լաւ ամուսիններ
գտնելու . բայց հարստութիւն չունեցողներուն
Աստուած ողորմի , ըսաւ : Ի՞նչ է գեղեցկու-
թիւնը , ի՞նչ են ամեն առաքինութիւններն ու
բարեմանութիւնները այս շահամոլ զարուս
մէջ » Չեն հարցըներ թէ « Հետո , այլ՝ Է՞նչո՞ւ կը
հարցընեն : »

« Տիկին , ըսաւ ասպետը , ձեր դիտողու-
թիւնը իրաւացի եւ միանդամայն նոր է . բայց
եթէ ես թագաւոր ըլլայի , այնպէս չէր ըլլար .
Հարստութիւն չունեցող գեղեցիկ ու սիրուն
օրիորդները երջանիկ ժամանակ մը կունենա-
յին : Չեր երկու օրիորդներն առաջին բաղդա-
ւորները կըլլային : »

« Ո՞հ , Պարոն , ըսաւ կինս , կարելի է պի-
տի խնդաք ըսածիս . բայց ես թագուհի ըլլա-
լու էի , այն ժամանակ զիտէի ուր կը գանուէին
այրերը . Բայց աղէկ միտքս ձդեցիք , Պ. Թօրն-
հիլ . կը ճանչէք այնպիսի մէկը որ մեծ աղջ-
կանս այր ըլլալու յարմարի : Տամն եւ ինն տա-
րու է հիմա , հասակը կտտարեալ զարդացած ,

լաւ կրթուած , եւ իմ տկար կարծեօքս՝ բաւ-
ւական արժանիք ունի : » յամառնաւ դուռը ու

Տիկին , պատասխանեց ասպետը , թէ որ
այս բանն իմ ընտրութեանս թողուփք , հրեշ-
տակ մը երջանիկ ընելու համար բաւական կա-
տարելութիւններ ունեցող մէկը կուզէի գըտ-
նել . այնպիսի մէկը՝ որ խելք , հարստութիւն ,
կիրթ ճաշակ եւ անկեղծութիւն ունենար . ա-
հա այսպիսի այր մը կուզէի ձեր օրիորդ աղջ-
կանը : — Այո , բայց կը ճանչէք այդպիսի մէ-
կը , ըսաւ կինս : — Ոչ , Տիկին , ըսաւ առպե-
տը , անհնար է ճանչել այնպիսի մէկը որ անոր
այր ըլլալու արժանի ըլլայ : Անիկա այնպիսի
մեծ դանձ մ'է որ մէկ մարդ մը չկրնար ստա-
նալ զայն . անիկա դիցուհի մ'է : Հոգւոյս վրայ
կերդնում որ իմ համոզումս կըսեմ ձեզ . անիկա
հրեշտակ մ'է : — Ահ , Պ . Թօրնհիլ , չափա-
դանց կը գովէք աղջիկս . բայց մենք խորհեշ-
ցանք ձեր վարձակալներէն մէկուն տալ , որուն
մայրն անցեալները մեռաւ , եւ տանտիկով մը
պէտք ունի : Գիտէք որու համար է խօսքս . . .
Ուիլիըմ վարձակալին : Գործունեայ մարդ մ'է ,
ու կրնայ իր հացը ճարել , եւ արդէն առաջար-
կութիւններ ալ ըրած է մեզ (այս խօսքն ստոյգ
էր) : Բայց կը փախաքիմ , Պարոն , որ ձեր հա-
ւանութիւնն ալ ստանսմ մեր ընտրութեանը

Վրայ : Ի՞նչ կըսէք , Տիկին , ի՞նչ կըսէք , իմհաւ-
ւանութիւնս ստանաք այդպիսի ընտրութեան
մը . . . : Այդչափ գեղեցկութիւն՝ խելք , հան-
ճար զոհել այնպիսի մէկու մը՝ որ իր երջանկու-
թիւնը չպիտի զգայ : Ներում կը խնդրեմ ըսե-
լու , թէ ես երբէք չեմ կրնար հաւանութիւն
տալ այդպիսի բացայատ անիրաւութեան մը ,
եւ պատճառներ ունիմ : — Արդարեւ , գոչեց
կինս , եթէ պատճառներ ունիք , այդ ուրիշ
բան է . բայց կուզէի հասկընալ ձեր պատ-
ճառները : — Ներեցէք , տիկին , պատասխա-
նեց ասպետը , պատճառներս չեմ կրնար ձեզ
յայտնել : Անոնք հոս թաղուած , գամուած են
(ըսաւ ձեռքը կուրծքին վրայ դնելով) : »

Երբոր ասպետը գնաց , ընտանեացս հետ
խորհուրդ ըրինք , եւ չկրցանք անոր զգաց-
մանց ինչ ըլլալը որոշել : Օլիվիա ամենափա-
փուկ սիրոյ մը ապացոյց կը համարէր զանոնք:
Իսկ ես ուրիշ աչքով կը նկատէի . աւելի տար-
փանք կը տեսնէի՝ քան թէ ամումնանալու
բաղձանք : Սակայն ինչ որ ալ ըլլար նպատա-
կը , մենք որոշեցինք վարձակալ Ուիլիըմին
առաջարկութեանցն ուշադիր ըլլալ , որ մեր
այն երկիրը ընակելէն 'ի վեր սիրոյ նշաններ
ցուցըցեր էր աղջկանս :

ԳԼՈՒԽ ԺԷ :

ԽԵՂԱԿ ՔԻՆ ԱՐԱ+ԲՆԱ-ՑԻՆ Ք-Ա ԱՐ ԵՐԵ-
Հ-Ա-Ց-Ա ՀՐԱՊԱ-ՐԻ ՏԸ ԴԻ Խ-Ա-Յ :

Զաւակացս ճշմարիտ երջանկութեանը
մտադիր ըլլալուս համար , Պ . Ուիլիբռմի հե-
տամտութիւնը ինձի հաճոյ եղեր էր . վասն զի
չափաւոր գոյք մը ունէր եւ ինք ալ խոհական
ու անկեղծ էր : Մեծ քաջալերութիւն մը հարկ
չեղաւ իր առջի սէրն արթնցընելու համար .
այնպէս որ երկու երեք օր ետքը Պ . Թօրնհիլ
եւ Պ . Ուիլիբռմիրիկուն մը իրարու պատահե-
ցան մեր տան մէջ , եւ քիչ մը ժամանակ բար-
կացայտ աչօք իրարու նայեցան : Բայց Ուիլիբռմ
իր կալուածատիրոջը պարտք չունենալուն՝ ա-
նոր բարկութենէն չէր վախնար : Օլիվիա ալ ,
եթէ իր բնաւորութեանը համեմատ վարուիլը
կրնայ գեր մը խաղալ կոչուիլ , կատարեալ պըչ-
բողի մը գործ կը կատարէր , իր ամեն գորո-
վասրտութիւնընոր տարփաւորին շոայլել կեղ-
ծելով : Պ . Թօրնհիլ այս նախամեծարութենէն
սաստիկ վշտացած երեւցաւ , եւ մտայոյդ դէմ-
քով մը մեկնեցաւ մենէ , որն որ զիս շատ զար-

մացուց . վասն զի կրնար մեծ դիւրութեամբ
իր տրամաւթեան պատճառը դադրեցընել՝ պար-
կեշտ սիրոյ մը յայտարարութիւն ընելով . բայց
Պ . Թօրնհիլ որչափ եւ սիրտը կոտրած երեւ-
ցաւ , Օլիվիա եւս առաւել տրտմած էր : Իր
տարփաւորացն հետ ըրած այս տեսակցութիւն-
ներէն ետեւ , որ խիստ յաճախ եղան , առանձ-
նութիւն կը վնատըռէր , որպէս զի իւր տիսրու-
թեանն անձնատուր ըլլայ : Իրիկուն մը այս վի-
ճակին մէջ գտայ դինքը , եւ քիչ մը ժամա-
նակ ինքզինք զուարթ ցուցընելու աշխատե-
լէն ետեւ , և կը տեսնես հիմա , զաւակս , ըսի .
որ Պ . Թօրնհիլի սիրոյն անկեղծութեանը վրայ
ունեցած վստահութիւնդ երազ մ'է եղեր . իր-
մէ ստորին մէկու մը հետամտութեանը կը հան-
դուրմէ , թէ եւ գիտէ որ իր ձեռքն է պար-
կեշտ յայտարարութեամբ մը քու ստացումդ
ապահովել : — Այս , հայրիկ , ըսաւ , բայց ես
դիտեմ որ ու շացընելու պատճառներ ունի : Իր
նայուած քներուն ու խօսքերուն անկեղծու-
թեւէն համոզուած եմ որ ճշմարտիւ ինձի հաւ-
նած է . կը յուսամոր քիչ ժամանակէն պիտի
յայտնէ իր զգացմանց ազնուութիւնը , եւայն
ժամանակը պիտի տեսնէք որ անոր վրայիմու-
նեցած կարծիքս ձերինէն ուղիղէ , — Օլիվիա ,
սիրելին աղջիկս , ըսի , մինչեւ հիմա անոր միտ-

ՔԸ հասկընաւու համար ինչ ընթացք եւ մը
ջոցներ որ բռնուեցան՝ քու խորհրդովդ էր . եւ
չես կրնար ըսել որ քեզի արդելք եղած կամ
նեղութիւն մը տուած եմ . բայց պէտք չէ յոււ
սաս որ պարկեշտ մարդ մը քու կեղակարծ կը-
րիցդ խաղալիկ ընելու գործիք կըլլամ եաւ
նւզածիդ չափ ժամանակ կուտամ քեզ . որ
կարծեցեալ հաւնողգ յօժարեցընես միտքը
յայտնելու , բայց պայմանաժամը լրանալէն ե-
տեւ , եթէ տակաւին միտքը յայսնած չըլ-
լայ , բացարձակապէս կը պահանջնեմ որ Պ .
Ուիլիբմի անկեղծ հաւատարմութիւնը վար-
ձատրուի . կենացս մէջ մինչեւ հիմա բռնած ու
պաշտպանած վարքս կը պահանջէ որ այս ըն-
թացքը բռնեմ . եւ վրադ ունեցած հայրենի
գորովս կրքէք չկրնար ազդեցութիւն ունենալ
մարդավայել ուղղութեանս վրայ Ուրեմն պայ-
մանաժամ մը նշանակէ . որչափ հրկար որ կու-
զես եւ միանգամայն քեզ ուրիշի տալ ուզելուս
որոշ ժամանակը Պ . Թօրնհիլի իմացու . Եթէ
ստուգիւ քեզ կը միրէ . իր խելքին գատողու-
թեամբը դիւրաւ կրնայ գտնել որ քեզ յաւիտ-
եան չկորաընցընելու համար մէկ բան մը միայն
ունի ընելիք . Ովիվիաայս առաջարկութեանս
արդարութիւնը ճանչելով ընդունեցւ Հաստատ
կերպով խօսք տուաւ Պ . Ուիլիբմի հետ պամու-

Նանալու եթէ միւսն անզգայ կենայ . եւառա-
ջին անգամ տեսնուելնուս , Պ . Թօրն հիլիներ-
կայութեամբը որոշեցինք որ այն օրէն ամիս
մը ետքը անոր հակառակորդին հետ ամուս-
նանայ :

Այս կտրուկ միջոցներուն վրայ Պ . Թօրն
հիլի անհանգստութիւնն աւելցած կը թուէր .
բայց Օլիվիայի կրած տագնասին ալ զգալի կեր-
պով սրափս կը դպչէր . իր կրիցն ու բանավա-
րութեանը մէջ ծաղած այս կոսուին մէջիր բը-
նական աշխոյժը բոլորովին կորանցուց . եւ
միշտ առանձնանալու եւ ինքնիրեն լողու աւ-
ռիթ կը վնարուէր . Շաբաթ մ'անցաւ ու սիր-
ահարը բնաւ ջանք մը չըրաւ անոր տմուս-
նութեանն առաջքն առնելու Հետեւեալ շաբ-
թուն դարձեալ իր այցելութիւնները շարու-
նակեց . բայց դարձեալ խօսք շբացաւ . Երրորդ
շաբթուն այցելութիւնը բոլորովին դազրե-
ցուց . եւ աղջիկս՝ փոխանակ սննամքերու-
թիւն մը ցուցընելու . մտախոհ հանդարտու-
թիւն մը ցոյց կուտար , զոր եւ համբերատա-
րութեան տեղ կը դնէի . Բերկրութեամբ կը
մտածէի որ աւղջիկս դիւրակեաց եւ խաղա-
գասէր վիճակի մը պիտի տիրանար . եւ յաճախ
կը դովիէի իր վերջին որոշումը . Ամուսնու-
թեսմի հոմայր որոշուած օրէն չորս օր առաջ

շնտանիքս իրիկունըլաւ կրակի մը շաւրջը բաշ-
լորուած , անցեալ ժամանակներու վէպերով
եւ ապագային համար զանազան մտածութիւն-
ներ ընելով ժամանակ կանցունէր : Այսպէս
անմեղութեամբ զբաղելով մտքերնէս անցած
խենթութիւններուն վրայ կը ծիծաղէինք .
« Ե՞ , Մովսէս , գոչեցի , քիչ օրէն հարսնիք մը
ունինք տուներնուս մէջ . ի՞նչ կըսես , տղան ,
քու կարծիքդ ի՞նչ է այս բանիս վրայ : — Իմ
կարծիքս , հայրինկ , սա է , որ գործը կարգին
է . քիչ մը առաջկը մտածէի թէ Օլիվիա քոյրս
Ուկիլիմ վարձակալին հետ ամուսնանալու ըլ-
լայնէ . գարենջուր շինելու մամուլն ու կատ-
սաները մեզի փոխ կուտայ : — Ատոր տարա-
կոյս չկայ , ըսի . ատկէց զատ՝ մեզ զուարթա-
ցընելու համար Մահուանեւ Տիկնոջ երգը կեր-
գէ : — Այդ երգը Ռիքարտիկ եղբօրս սովոր-
ցուցած է , ըսաւ Մովսէս , եւ կարծեմորխիստ
լաւ կերգէ : — Շատ աղէկ . ըսի , թող երգէ
նայիմ . ուրէ Ռիքարտիկը . թող շուտ ընէ , եր-
գէ համարձակ : — Ռիքարտիկն հիմա դուրս ե-
լաւ Օլիվիա քրոջս հետ , ըսաւ կրտսեր եղբայ-
րը . բայց Պ . Ռւիլիլը ինձի ալ երկու երդ սով-
րեցուցած է . եւ եթէ կուզէք . հայրիկ . երգեմ
զանոնիք : Ո՞րը կախորժէք . Օւհասաւա կու-
թէ կուրուկ չն է բահուանը կըս , ողբերգութիւնը ,

— Ողբերգութիւնը , տղաս , ողբերգութիւնը ,
ըսի , վասն զի դեռ մտիկ ըրած չեմ : Եւ դու .
կինս , դիտես , որ կակիծը մարդս կը գէցընէ .
մեզի շիշ մը հաղարջի լաւ զինի բեր , որ տըխ-
րութիւնան դէմ ինքզինքնիս բռնենք : Ողբեր-
գութիւնները զիս այնչափ լացուցին անցեալ-
ները , որ եթէ զուարթանալու համար մէկ եր-
կու գաւաթ չխմեմ , կը վախնամ որ այս ող-
բերգութիւնը չափազանց թաղծեցընէ զիս :
Եւ դու , Սովիհա , սիրելիս , առ սա կիթառդ
եւ սա տղուն երգակցէ : »

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ

ԿԱՏԱՂԻ ՇԱՆ ՄՅ ՄԱՀՈՒԱՆԸ ՎՐԱՅ

Արդ . լսեցէք , մեծամեծք եւ փոքունք ,
ականչ դրէք երգիս , եւ եթէ կարճ դանէք ,
ձեղ երկար ժամանակ չզբաղեցըներ :

Մարդ մը կար խալինթընքաղաքը , որուն
համար կրնար ըսուիլ թէ խխատ լաւ կեանք կը
վարէր ամեն անգամ որաղօթքի կը կանգնէր .
Դիւրագորով եւ ողորմած սիրտ մը ունէր . բա-
րեկամներուն ալ թշնամիներուն ալ բարիք
կընէր . ամեն օր մերկ մը կ'զգեցընէր երբոր իր
զգեսաները կը հաղնէր :

Այն քաղաքին մէջ շուն մը կար , ինչպէս
որ ամեն տեսակ շուն շատ կը գտնուի հոն .
գամփոներ , բարակներ , քերծէներ եւ ուրիշ
շատեր :

Շունն ու մարդը նախ բարեկամ եղան ,
բայց ետքը աւրուեցան իրարու հետ , եւ շու-
նը՝ իր վերջին կէտին համելու համար՝ կատ-
ղեցաւ ու մարդը խածաւ :

Դրացիները զարհութելով շրջակայ փո-
ղոցներէն հոն դիմեցին , եւ երդում կընէին թէ
շունը խենթեցեր էր որ այնպիսի լաւ տէր մը
խածեր էր :

Խեղճ քրիստոնէին վէրքը վտանդաւոր եւ
մահարեր կերեւէր ամենուն . որոնք մինչդեռ
կերդնուին թէ շունը կատղեր էր , միանդամայն
կընէին թէ մարդը պիտի մեռնէր :

Բայց շատ չանցաւ՝ մնծ սքանչելիք մը
տեսնուեցաւ որ զանոնք սուտ հանեց : Մար-
դուն վէրքը բժշկեցաւ . իսկ շունը մեռաւ :

« Յիրաւի շատ աղէկ տղայ մ'է մեր Ուի-
լիքմը , բսի , եւ իր ողբերգութիւնն ալ իրա-
ւամբ եղերական կրնայ կոչուիլ : Խմենք , աը-
դաքս , Ուիլիքմին կենացը , մաղթենք որ օր մը
հովիսկոսլոս ըլլայ :

« Յամենայն սրտէ կը մաղթեմ, գոչեց
կինս, եւ ամսերկրայ եմոր կրնայ ըլլալ, Մեր
բոլոր ընտանիքը, մօրս կողմէն, քաջ երդե-
ցիկ էին . եւ ամեն մարդ կըսէր երկրին մէջ
թէ Ոլէնքէնսօբները չէին կրնար երբէք առ-
ջեւնին շխառակ նայիլ, ոչ Հիւկկէնսները կրնա-
յին ճրադ մարել, ոչ Կրօկրամները երգ մը
հնչեցընել օդին մէջ, ոչ Մաժօրամները վէպ
մը պատմել . բայց մեր ընտանիքը . . . — Ինչ
որ է նէ, ըսի, ամենէն հասարակ տաղերն ընդ-
հանրապէս աւելի հաճոյ են ինձի քան արդի
գեղօններն ու երդերը որ իրենց մէկ տունին
մէջ մնգ կը քարացընեն . եւ սակայն դանոնք
արհամարհած Ժամանակնիս՝ միանգամայն կը
գովենք ալ . . . Գաւաթը Մովսէս եղբօրդ ան-
ցու . . . Ողբերգութիւն շինողներուն մեծ սը-
խալը սա է որ վերջին յուսահատութեան մէջ
կիյնան այնպիսի տարաբաղդութեանց հա-
մար՝ որոնք ողջամիտ մարդոց բնաւ վիշտ չեն
պատճառեր, Տիկին մը իր սկունդը կը կոր-
սընցընէ, եւ անխելքին մէկն ալ այս տիսուր
արկածին վրայ ոտանաւոր կը շինէ : »

«Այդ ըսածնիդ վսեմբանաստեղծութիւն-
ներու մէջ սովորական կրնայ ըլլալ, ըսաւ Մով-
սէս . բայց Ուէնէլահի* երգերը՝ որ հոս մեր

* Վանարայի մօտ գեղեցիկ ակմբանոցմէ :

ձեռքը կը հասնին , բոլորովին պարզ են , եւ ամենն ալ մէկ կաղապարէ ելած : Քօլին կը հանդիպի Տոլլիին , եւ տօնավաճառէն գընած քանի մը ծաղիկ անոր կընծայէ որ գըլովսը խոթէ , Տօլիի ալ փոխարէն ծաղկեփունջ մը կուտայ անոր : Երկուքն ալ եկեղեցի կերթան , եւ հոն յաւերժահարսերուն ու հովիւներուն խրատ կուտան որ կրցածնուն չափ շուտով ամուսնանան :

« Խիստ լաւ խրատ մ'է այդ , գոչեցի : Լըսած եմ նաև թէ այդ Ռէնէլահ ըսուած ակըմբանոցն այնպիսի տեղ մ'է , ուր այդ պիսի խըրատ մը աւելի ճահաւոր կերպով կրնայ տըրուիլ . վասն զի ամուսնանուալու խրատին հետ միանգամացն կանայք ալ կրնան մատակարարուիլ հոն . եւ յիրաւի , տղաս , գերազանց է այն վաճառանոցը՝ որ մեզի պէտք եղած վաճառքը կը ճանչեցընէ եւ միանգամայն կը մատակարէ : »

« Այս , հայրիկ , ըսաւ Մովսէս , եւ ես երկու վաճառանոց միայն կը ճանչեմ Եւրոպայի մէջ կանանց համար . Ռէնէլահ Անգղիոյ մէջ , եւ Ֆօնթէրապի Սպանիոյ մէջ : Ֆօնթէրապի

ուր անգղիացիք ամառը կերթան թէյ կը խըմին եւ երգեր ու նուազածութիւններ լսելով կ'զքօսնուն :

տարբին մէկ անգամ կը բացուի . բայց մերինը
ամեն իրիկուն է »

« Իրաւունք ունիս , որդեակ , ըսաւ մայ-
րը . Անգղիա աշխարհիս ամենէն յարմար եր-
կիրն է մարդոց համար կին դանելու . . . — կա-
նանց ալ իրենց երիկը կառավարելու , ըսի .
կնոջա խօսքը ընդմիջելով : Վասն զի հասարակ
առած մ'է որ եթէ ծովուն վրայ կամուրջ մը
շինուէր , աշխարհի ամեն կանայք Անգղիա
կուգային մերինններէն օրինակ առնելու : »

« Բայց կինս , ուրիշ ժիշ մ'ալ բեր , եւ Մով-
սէս գեղեցիկ երդ մը կարգայ մէզի : Ո՛րչափ
փառք տալու ենք Աստուծոյ՝ մզի շնորհած
անդորրութեան , առողջութեան եւ կենաց
պիտոյից համար : Ես հիմա ինքզինքս աշխար-
հի ամենէն մեծ թագաւորէն երջանկագոյն
կը համարիմ : Վասն զի ոչ առանկ լաւ վառա-
րան մը ունի , եւ ոչիր շուրջն այսպիսի զուարթ
դէմքեր : Այո , սիրելի կինս , մենք ծերանա-
լու վրայ ենք . բայց մեր կենաց իրիկունը եր-
ջանիկ ըլլալու ամեն երեւոյթներն ունի : Մեր
նախահարքն անստգիւտ ապրեցան եւ մենք
ալ պարկեշտ եւ առաքինի զաւակներ պիտի
թողունք մենէ ետեւ : Մեր կենդանութեանը
մզի նեցուկ պիտի ըլլան , եւ մեմնելնէս ետեւ
ալ մեր պատիւը անարատ իրենց զաւակներուն

պիտի աւանդեն . . . 0՞ն , տղաս , երգէնաւ-
յինք . Եւ մենք ալ միաբերան ձայնակից ըլ-
լանք քեզ . . . : Բայց ուրէ սիրելի 0լիվիաս ,
որուն ձայնն այնչափ քաղցր ու հաճոյական է
նուագերգութեան մէջ : » Հազիւ այս խօսքն
ըսեր էի , Ոիքարտիկ վազելով ներս մտաւ .
և , հայրիկ , հայրիկ , դնաց , 0լիվիա քոյրս
դնաց : — Գնաց մի՞ : — Այո , գնաց երկու պա-
րոններու հետ սուրհանդակի կառքովմը : Պա-
րոններուն մէկը զանի կը զրկէր ու կը գգուէր
խօստանալով որ իրեն համար կեանքը կու-
տարու Քոյրս ալ ամենայն զօրութեամբ կը պո-
ռար եւ ետ դառնալ կուզէր . բայց պարոնը
զանի նորէն գրկելով , քոյրս կառքը մտաւ ու
ըսաւ . և , ի՞նչ պիտի ըլլայ խեղճ հայրս , եր-
բոր իմանայ թէ կորսուած եմ : — Ուրեմն ,
զաւակներս . թշուառութենէ զատուրիշ բան
չմնար մեզի , գոչեցի . վասն զի այսուհետեւ
ուրախութեան վայրկեան մը չպիտի ունենանք
կեանքերնուս մէջ : Աստուծոյ յաւիտենական
վրէմինդրութեանը հանդիպի զաւակս ձեռո-
քէս յափշտակող գարշելին : Անշուշտ պիտի
լսէ Աստուած իմ ձայնս , եւ զանի պիտի պատ-
ժէ՝ այնպիսի խոհեմ ու առաքինի զաւակ մը
ձեռքէս առնելուն համար , զոր ես երկինք
կառաջնորդէի : Աւաղ , զաւակս , թշուառ եւ

վատահամբաւ պիտի ըլլաս . . . Ո՞հ , սիրտս
կը կարտի . — Հայրիկ , գոչեց որդիս , մյս է
քու արիութիւնդ : — Իմ արիութիւնս , որդ
եակ . այոն , պիտի տեսնես որ՝ ունիմ : Յերէք
ատրճանակներս . հիմա պիտի ելնեմ դաւաճա-
նին ետեւէն իյնամ , եւ մինչեւ աշխարհի ծայ-
րը հալածեմ : Պիտի տեսնէ , որ թէպէտ ծեր եմ
բացց տակաւին մարդ եմ : Անզգամը , սրիկան
. . . Այս ըսելով ատրճանակներս առի . բայց
կինս , որնոյնպէս սաստիկ կիրք ելած էր , ին-
ձի փաթթուեցաւ . « Սիրելիս , սիրելիս , գո-
չեց , քու այդ հասակիդ միակ վայելուչ զէնքը
սուրբ գիրքն է . բաց զանի , եւ դժբաղդու-
թեանդ համբերել սովորէ . վասն զի վատու-
թեամբ մեզ խարեց . . . » Արտին կսկիծը չի
թողուց որ խօսքը լմնցընէր : — « Ստուգիւ ,
հայրիկ , ըսաւ որդիս քիչ մը ետքը , կը կար-
ծեմ որ ձեր բարկութիւնը չափազանց եւ ան-
պատեհ է : Դուք մօրս միսիթարիչ ըլլալու-
տեղ , աւելի կը դառնացընէք անոր կսկիծը .
Չեզի , ձեր աստիճանն ունեցող մարդու մը չի
վայլեր մարդ անիծել , մինչեւ անգամձեր ո-
խերիմ թշնամին : Պէտք չէր որ նզովէիք այն
սրիկան , որչափ եւ սրիկայ ըլլայ : — Ես չանի-
ծեցի զաւակս , անիծեցի՞ որ : — Այոն , հայ-
րիկ , անիծեցիք , երկու անդամ անիծեցիք .

Աստուած նէրէ անոր . եւ եթէ անիծեցի ,
ինձի ալ ներէ : Հիմա լաւ կը տեսնեմ , որդեակ ,
որ գերմարդկային սէր մը ըլլալու էր այն սէրը՝
որ թշնամինիս օրհնել կը սովորեցընէ : Օրհնեալ
ըլլայ Աստուած ինձի տուած բարիքին հա-
մար . օրհնեալ ըլլայ նաև ձեռքէս առածին
համար : Բայց ասիկա հասարակ դժբաղդու-
թիւն մը չէ . ոչ , հասարակ դժբաղդութիւն
մը չէ այս , որ երկար տարիներէ ՚ի վեր չացող
աշքերէն արտառուք կը վազցընէ : Միրելի՛ զա-
ւակս . . . հն , սիրելի՛ զաւակս ձեռքէս յա-
փըշտակել . . . Անիծեմլ ըլլայ . . . Ո՛հ ,
ներէ Աստուած ըսելիքս : Կը յիշես , սիրելի՛ կի-
նըս . որչափ խելացի էր Օլիմփիաս . ամեն կեր-
պով սիրուն էր : Մինչեւ այս աղետալի վայր-
կեանը՝ մեղի հաճոյ ըլլալու փոյթ ունէր միշտ:
Ա՛հ , ինչու չմեռաւ . բայց գնաց . ընտանիքիս
պատիւն աղտոտեցաւ : Ո՛չ , ալ այս աշխարհիս
վրայ երջանկութեան յոյս չկայ ինձի : Բայց ,
տղաս , երթալնին անսար . թերիւս բանի վեր-
առոց տարաւ : Եթէ բռնի է , կրնայ աղջիկս ան-
մեղ ըլլաէ : — Ոչ , հայրիկ , գոչեց աղաս , պա-
րոնը զանի կը համբուրէր . իր հրեշտակը կը
կոչէր . Օլիմփիա ալ կուլար եւ անոր թեւերուն
կը կրթնէր . կառքն ալ վազելով գնաց : — Ա-
պաշնորհ արարած մ'է եղեր աղջիկնիս , որ այս

Ճանճան բռնեց մեզի , գոչեց կիստ , որ լալէն
հաղիւ կրնար խօսիլ : Իր սրտին հակումը եր-
բէք ջնեղեցինք : Թշուառականը այսպէս ա-
ռանց ամենափոքր պատճառի իր ծնողքը ձը-
գեց , որսկէս զի քու սպիտակ մազերդ գերեզ-
ման իջեցընէ , ուր շատ չանցած եւ ալ ետե-
ւէդ սլիտի գամ : »

Այսպէս դառն տրտունջներով եւ զայրա-
գին զգացմանց յայտարարութիւններով ան-
ցաւ այն դիշերը , որ ճշմարիա տարաբաղդու-
թեան մը առաջին դիշերն էր մեզ համար : Սա-
կայն միտքս դրի որ յափշտակողն ուր էր նէ եր-
թամ գմնեմ , եւ իր վատութիւնը կշտամբեմ :
Հետեւեալ առաւօտուն մեր թշուառ աղջիկը
ներկայ չէր նախաճաշին , ուր ամեն անդամ
ուրախութիւն ու զուարթութիւն կազդէր ըն-
տանեացս : Կինս նորէն սկսաւ . կշտամբանք-
ներով իր սիրտն սիրովել : « Երբէք , գոչեց ,
մեր ընտանեաց այս նախատինքը ուաք չպիտի
կոխէ հոս եւ մեր անմեղ բնակարանը պղծէ
իր ներկայութեամբը : Այսուհետեւ այն իմ
աղջիկս չէ : Ոչ . թող երթայ վատշուէրն իր
անզգամ հրապուրչին հետ ապրի . մեզի ան-
պատուութիւն կրնայ բերել , բայց նորէն չի
կրնար խարել :

« Կնիկ , ըսի , այդպէս խստութեամբ մի

խօսիր : Ես ալ քեզի չափ անոր յանցանքը կատեմ . բայց այս տունն ու այս սիրտը միշտ բաց պիտի ըլլան ապաշաւող խեղճ մեղաւորի մը . Ո՞րչափ չուտ ետ դառնայիր սխալումէն , այնչափ սիրով կընդունուի : Ամենէն արդար մարդը կրնայ առաջին անգամ սխալիլ . ճարտար խորամանկութիւնը կրնայ զանի խարել , նորութիւնն իր հրապոյրներովը պատրել : Առաջին յանցանքը պարզութեան ծնունդն է . բայց անկէ ետքինները չարութեան արգասիք են , Այո , մեր դժբաղդ աղջիկը միշտ սիրով կընդունուի այս սրտին եւ այս տանս մէջ՝ թէեւ հազար տեսակ մոլութիւններով առլականնեալ ըլլայ : Կուզեմ տակաւին անոր ներդաշնակաւոր ձայնը լսել . կուզեմ տակաւին գորովանօք սրտիս վրայ սեղմել զինքը՝ եթէ զղջումտեսնեմիր վրայ : Տղաս , բեր սա Աստուածաշշունչս ու գաւազանս . պիտի ենեմ ետեւէն երթամ , եւ ուր է նէ գտնեմ . եթէ չկրնամ իր նախատինքին առաջքն առնուլ , գոնէ անկարգութեան շարունակութիւնը կրնամ խափանել :



ԳԼՈՒԽ ՃԸ

Հոր Տէ Գոյթն Եւ Պատահ Սուս Քիւն Բեռ
Բո՞ Դուշուն Եւ Հորուն :

Թէպէտ եւ տղան չկրցաւ իր քրոջը ձեռ
քէն բռնող ու սուրհանդակի կառքն հանող
անձը նկարագրել . բայց մեր կասկածը բնա-
կանաբար մեր երիտասարդ երկրատէրին վրայ
ինկաւ , որուն բնաւորութիւնն ամենուն յայտ-
նի էր այս կերպ նենգութեանց համար : Ուստի
ճանբաս դէպ 'ի Թօրնհիլի ապարանքն ուղեւ-
ցի , միտքս դնելով որ զինքն արժանապէս կըշ-
տամքեմ , եւ եթէ կարելի էր՝ աղջիկս առնեմ
տուն բերեմ : Բայց Թօրնհիլի ապարանքը չհա-
սած թեմականներէս մէկը դէմս ելաւ եւ ինձի
ըսաւ թէ ճանբան սուրհանդակի ճեղքնթաց
կառք մը տեսեր էր , որուն մէջ Պարոնի մը
հետ ծաղկահասակ օրիորդ մը նստած էր որ
աղջկանս շատ կը նմանէր , եւ Պարոնին վրայ
ըրած նկարագրութենէն դատեցի որ Պ . Պրչէլ
ըլլալու էր : Այս տեղեկութիւնը զիս ամեննեւին
գոն չըրաւ : Ուստի շիտակ տոպեաին աւզա-

րանքը գացի . եւ թէպէտ խիստ կանուխ էր ;
այսու ամենայնիւ խնդրեցի որ անմիջապէս
տեմնուիմիր հետ ։ Եատ չանցաւ ասպետը քո-
վըս եկաւ բաց եւ զուարթ դէմքով , եւ չափա-
զանց զարմանք ցուցուց աղջկանս փախչելուն
վրայ , խօսք տալով պատուոյն վրայ որ ինքը
բնաւ մամնակցութիւն չունէր այս գործին մէջ :
Այն ժամանակ սկսայ իմ առջի կասկածներս
մեղադրել , եւ ալ այնուհետեւ Պ. Պրչէլէն
դատ ուրիշ մարդու վրայ չհաստատուեցաւ
կասկածս , մանաւանդ երբոր միտքս եկաւ որ
աղջիկս ժամանակէ մը 'ի վեր քանի մը անգամ
առանձին խօսակցութիւններ ըրեր էր անոր
հետ . Բայց բնաւին տարակոյսս չմնաց անոր
վատութեանը վրայ՝ երբոր ուրիշ մէկը լուր
տուաւ լնձիթէ Պ. Պրչէլու աղջիկս հանքային
ջուրերը գացեր էին , որ գտնուած տեղէս եր-
սուն մղոնի չափէնուու էր , եւ շատ բազմութիւն
կար հոն . Այս տեղեկութեան վրայ որոշեցի
հոն երթալ վիճուել զիրենք : Քայլերս մեծ-
ցուցի եւ ճանրան քանի մը մարդու պատա-
հելով տեղեկութիւն հարցուցի , բայց բան մը
չկըցի իմանալ : Սակայն քաղաքը մտած ատենս
ձիաւոր մարդ մը տեսայ որ արդէն ասպետին
տունը տեսած էի , այն մարդը հաւաստեց , որ
եթէ ձիարշատի մրցում եղած տեղին երթայի որ

քաղաքէն երսուն մղտն միայն հեռու էր, հան
անվրէպ կը գտնէի զանոնք . վասն զինոյն գի-
շերը զանոնք հանքային բաղնիքները տեսեր
էր, որ կը կաքաւէին, եւ ամենն հոն գտնուող-
ներն զմայլեր էին աղջկանս գեղեցկութեանը
վրայ . Այս տեղեկութեան վրայ, հետեւեալ
առաւօտուն կանուխ ճանբայ և լայ ձիարշաւ
եղած տեղն երթալու, եւ կէս օրը չորս ժամ
անցած հոն հասայ : Հանդէմն արդարեւ խիստ
չքեղ էր, եւ ամեն մարդ զբօսանքի զբաղած :
Խնչ մեծ տարբերութիւն կար անոնց ու իմ
մէջ, որ հոն գացեր էի առաքինութեան ճան-
քէն խոտորած զաւակ մը գտնելու : Բազմու-
թեան մէջ ինէ քիչ մը հեռու Պ. Պրշէլ աչքիս
երեւցաւ . բայց զիս տեսնելէ վախնալու պէս՝
բազմութեան մէջ խառնուեցաւ երբոր ես ի-
րեն մօտեցայ, եւ անհնար եղաւ ինձի նորէն
զինքը տեսնել : Այն ժամանակ խորհեցայ որ
խուզարկութիւնս աւելի հեռու քշել անօգուա
էր . եւ որոշեցի տուն գտնալ անմեղ ըն-
տանեացս քով՝ որուն իմ ներկայութիւնուհար-
կաւոր էր : Բայց սրտիս յուզմունքն եւ ճան-
բուն յոգնութիւնը տենդ մը պատճառեցին ին-
ձի, որուն նշանները կրկէսէն մեկնելէս առաջ
զգացի : Այս զէպքն ալ մեծ տագնապի մէջ
ձգեց զիս, վասն զի տունէս հօթանասուն մըւ-

Դոն հեռու էր՝ ձանքէն դուրս փոքրիկ պան-
չոկ մը քաշուեցայ, որուն տեսքը կը ցուցընէր
որ աղքատութեան ու սակաւապիտութեան
օթեւան մ'էր. հոն անկողին մտայ՝ հիւանդու-
թեանս ելքին սպասելու համար: Երեք շաբա-
թի չափ հոն տառապելէ ետեւ, վերջապէս բը-
նութիւնս օգնելով առողջացայ, բայց պանդո-
կին ծախքը վճարելու ասակ չունէր: Այն աս-
տիճան մտատանջութեան մէջ ինկայ որ հի-
ւանդութիւնս կրնար նորոգիլ՝ եթէ զովանա-
լու համար դիպուածով պանդոկը մտնող ճա-
նապարհորդ մը ինձի օգնութիւն չընէր: Այս
անձը կոնտրայի Ս. Պօղոս եկեղեցւոյն մօտի
համեստ գրավաճառնէր՝ որ շատ մը մանր գըր-
քեր գրած էր տղայոց համար: Խնքղինք տը-
ղայոց բարեկամկը կոչէր, բայց իրօք ընդհա-
նուր մարդկութեան բարեկամն էր: Ներս մը տ-
նելուն պէս՝ նորէն դուրս ելնել ուզեց. վասն
զի ամեն ժամանակ կարեւոր եւ սափափսղական
գործ մը կունենար, եւ այն օրերն ալ Պ. Թով-
մաս Թրիբ անուն մէկու մը պատմութիւնը դը-
րելու համար նիւթ հաւաքելու զբաղած էր:
Ճանչեցի զինքը իր պալարալից գէմքէն, վա-
սըն զի երկրորդ ամուսնութեանց գէմ գրած-
ներս ան հրատարակեր էր: Ցէմ մը տապկ փոփ
առի իրմէ, խոպտանալով որ տուն դառնալուս

վճարեմ։ Աւստի պանդոկէն դուրս ելայ, եւ
դեռ տկար ըլլալուս համար՝ որոշեցի օրը տա-
սըն մղոն ճանրայ միայն քալելով կամաց կա-
մաց տուն դառնալ։ Սովորական առողջու-
թիւնս ու հանդարտութիւնս գրեթէ բոլորո-
վին վերահաստատուելով, սկսայ դատապար-
տելիմ ամբարտաւանութիւնս՝ որով Նախախ-
նամութեան դէմ վտարանջեր էի զիս պատ-
ժելուն համար։ Մարդիկ իրենց կարողութե-
նէն վեր եղող գժբաղդութիւնները՝ մինչեւ որ
չկրեն՝ չեն ճանչեր։ Օրինակի համար, փա-
ռասէր մարդը՝ որ վարէն ամեն բան պայծառ
կը տեսնէ, քանի որ վեր ելնէ՝ կը նայի որ իր
ամեն մէկ քայլափոխին մէկ մէկ ծածկեալ ձա-
խողութիւն կելնէ իր դէմը զորսնք յառաջուց
չէր նշամարած։ ասանկ ՚ալ գժբաղդ մարդը՝
մեր մտքին բնական տրամադրութեանը համե-
մատ՝ որ իր գտնուած ամեն վիճակին մէջ զը-
ւարճութիւն գանելու զբաղած է, քանի որ
թշուառութեան անդունքը իջնէ, վինքը հա-
ճեցընող ու զարմացընողբան մը կրնայ գտնել
հոն, մինչդեռ զուարճութեան բարձունքէն
հոն նայած ատեն՝ ամեն բան խաւարին եւ
սոսկալի կերեւէր իրեն։ Քանի որ վարիջնենք,
իրերը կը լուսաւորին, անակնկալ երեւոյթներ
մեզ կը զուարճացընեն, եւ մտաց աչքը կը

վարժիու կը յարմարի զինքը պատող խռացրին :

Երկու ժամու չափ քալելէ ետեւ հեռուստն կառք մը տեսայ որ գոց սայլ մը ինձի թըւեցաւ : Ուղեցի համնիլ այն կառքին : Երբոր մօտեցայ , տեսայ որ սայլը գեղացի կատակերգակներու խումբի մը զդեստները , զարդերն ու կարասիները մերձակայ գիւղը կը տանէր , ուր յիշեալ կատակերգակները խաղ պիտիներկայացընէին : Միայն սայլորդ մը կար որ կառքը կը վարէր . եւ սայլին մէջ ալ կատակերգակներէն մէկը նօտած էր . իսկ միւսներն հետեւեալ օրը պիտի հասնէին : Լաւ ընկերութիւնը ճանքան կը կարճեցընէ , կըսէ առածը : Առտի ես ալ խօսակցութիւն բացի խեղճ կատակերգակին հետ . եւ որովհետեւ ես ալ ժամանակաւ թատերախաղի վրայ քիչ մը հմտութիւն ստացած էի , համառօտ բանախօսութիւն մը ըրինոյն նիւթին վրայ իմ սովորական ազատահիւսութեամբս : Բայց թատրոնի ներկայ վիճակին վրայ բաւական տևղեկութիւն չունենալուն , հարցուցի թէ ներկային մէջ որո՞նք էին հռչակաւոր թատրերգակները . որո՞նք էին այն աւուր Տրայացըներն ու Օթվէյաները , ու կարծեմ որ , Պարոն , պատասխանեց կատակերգակը , մեր այսօրուան հեղինակնե-

րուն մէջ խիստ քիչ անձինք կան որ ինքզինք նին ձեր այդ անուանած հեղինակներուն հետ բաղգատուելու պատուոյն արժանի համարին։ Տրայտընի ու Ռէյվի գրուածներն հիմա այնչափ յարդ չունին։ Մեր ճաշակը անոնցմէ դար մը հին հեղինակներէ կախորժի։ Ֆլէշէրի, Պէս Հօնստնի եւ Շէքսրիրի թատրերդութիւնները միայն կը խաղացուին հիմա։ — Կ'ոչ կըսէք, գոչեցի, հնամը է որ մեր դարն այն խաղերուն վաղեմի լեզուովն եւ անոնց մէջ ծայրէ ծայր լցուած չարամիտ ծաղրաբանութիւններովն ու անբնական նկարագիրներով կարենայ զբունուլ։ — Պարոն, պատասխանեց ուղեկիցս, հասարակութիւնը ոչ լեզուին միտ կը գնէ, ոչ ծաղրաբանութեանը եւ ոչ նկարագրին։ ասնք չեն իր փնտուածը ։ այլ միայն զուարճանալու համար կերթայ թատրոն, եւ չափազանց զոհ կը լլայ երբոր Շէքսրիրի կամ Պէս Հօնստնի անուանը տակ մնջկատակ մ'ալ խաղացուի։ — Ուրեմն, ըսի, մեր արդի հեղինակներն առաւել Շէքսրիրի ոճին նմանելու կը ջանան քան թէ ընականին։ — Ճշմարիտը խօսելով, երկու քին ալ չեն նմանիք, պատասխանեց ուղեկիցս։ Եւ հասարակութիւնն այ այդ չպահանջեր անոնցմէ։ Իր ծափահարութեանցն արժանի ըլլալու համար գրուած քիչ

ոճին չնայուիր , այլ հնար եղածին չտփ գործ ,
կեցուածք եւ շաբժուածք պէտք է մտցընել
խաղերուն մէջ : Կատակերգութիւնն մը գիտեմ,
որուն մէջ բնաւ զուարճաբանութիւն չկար .
բայց հասարակութեան խիստ հաճելի եղաւ ,
վասն զի մէջը շատ ուս թոթվել կար : Ուրիշ
խաղ մ'ալ գիտեմ , որ բնաւ հաճելի չպիտի ըլ-
լար՝ եթէ հեղինակն յանկարծական փորուցաւ
մը մտցուցած չըլլար մէջը : Ոչ , պարոն , Քօնկ-
րէվի եւ Ֆարկուէյրի թատերախաղերն արդի
ճաշակին նայելով խիստ բարձր են : Մերներ-
կայ արամախօսութիւնն աւելի բնական է :

Այս խօսակցութեան միջոցին դերասա-
նաց խումբը գեղն հասաւ , որուն բնակիչները
կերեւի թէ մեր գալն իմանալով՝ մեզ նկատե-
լու ելեր էին . վասն զի ուղեկիցս ըսաւ թէ
գեղջկական դերասաններն առաւել շատ հան-
դիսատես ունին դուրսը քան թէ ներսը : Այս-
պիսի ընկերութեան մը մէջ գտնուիլս որչափ
ամօթէր ինձի՝ չկրցայ մտածել մինչեւ որ խառ-
նաղանն բազմութիւնը չորս կողմերնիս պա-
տեց : Ուստի շուտով փախայ ու դէմս ելած ա-
ռաջին գինետունը մտայ : Հոն շնորհօք հազ-
ուած մարդ մը դէմս ելաւ ու ինձի հարցուց թէ
խումբին մատրանապետն էի , կամ թէ ես ալ
դէքասան ըլլալով խաղի համար եկեղեցակա-

Նի կերպարմնք մտեր էի . Ես ալ գործին ինչ
ըլլալը եւ դերասանաց խումբին հետ յարաբե-
րութիւն չունենալս հասկըցուցի : Այն ժամա-
նակ մարդը քաղաքավարութեամբ զիս եւ կա-
տակերգակն հրաւիրեց գաւաթ մը ջերմօղի
խմելու իրեն հետ , եւ մինչ կը խմէինք , ինքը
սկսաւ քաղաքականութեան վրայ խօսիլ այն-
պիսի եռանդեամբ ու կրքով , որ զինք խոր-
հըրդարանի անդամ կարծեցի : Այս կարծիք-
հաստատուեցաւ . երբոր հարցուց թէ ընթրի-
քի համար ինչ ուտելիք կար զինետան մէջ ,
եւ գտնուածէն գոհ շըլլալով , սախակեց մեղ որ
իր տունը երթանք ընթրենք : Ես ալ քիչ մը
դէմ կենալէ ետեւ յանձն առի :

Երթալիք տուներնիս դեկէն քիչ հեռու
ըստառի, մնդ հրաւիրողն ըստ թէ կառքը

պատրաստ ՆըԱՓԹՈՒՆ համար քալելով պիտի
երթայինք . եւ չատ չանցած՝ գեղեցիկ ամա-
րատուն մը գացինք . Մեղ սևնեակ մը մոցու-
ցին որ խիստ վայել չագեղեղ եւ արդի ձեւով զար-
դուրուած էր . Մեղ հիւրընկալողը դուրս ելաւ
ընթրիքին համար պէտք եղած հրամանները
տայլու . կատակերգակն աչք ըրաւ ինձի թէ
այն օրը բաղդաւոր էինք . Պատուական ընթ-
րիք մը ընէլնէս կտնեւ , երկու ախկնայք առ-
տընին բաց կերպարանքով ներս մտան , եւ
զուարթադին խօսակցութիւն մը բացուեցաւ .
Մեր հիւրընկալը գլխաւորապէս քաղաքակա-
նութեան վրայ կը խօսէր , վասն զի կը հաւաս-
ուէր թէ ազատութիւնը միանգամայն իրի առ-
քըն ու սարսափն էր . Երբոր սեղանը վերցաւ ,
հարցուց ինձի թէ վերջին Մռէնէւը կար-
դացեր էի . Երբոր պատասխանեցի թէ ոչ ,
«Գոնէ Օռէնէւը կարդացած ըլլալու էք . ըսաւ
— Ոչ , պարոն , պատասխանեցի , երկուքնալ
չեմ կարդացեր : — Զարմանալի՛ բան , կարգէ
դուրս բան , ըսաւ հիւրընկալս . Ես ամեն ելած
քաղաքական լրագիրները կը կարդամ . Ցէլէն ,
Բէ-Ռէւէւը , Լեռճաք , Քէռէւէւը , Լըտօ-Իընէւը ,
Վէնէւ-Իընէւը , տասն եւ հօթն Մ-է-՛լները ,
երկու Հաւուիները . եւ թէսէտ այս ամեն այլ
եւ այլ լրագրաց հեղինակներն իրար չարաշար

կատեն ; այսու ամենայնիւ ես ամենն ալ կը
սիրեմ : Ազատութիւնը , Պարոն , Անգղացւոյ
մը փառքն է , եւ Քօրնուէյլի հանքերուս վրայ
կերդնում որ անոր պաշտպանները կը յարա-
գեմ : — Ուրեմն , ըսի , կը յուսամ որ թագա-
ւորը կը յարգէք : — Այո , պատասխանեց հիւր-
ընկալալ , երբոր մերուզածը կընէ . բայց երբոր
անցեալներն ըրածին պէս ընէ , իր գործերուն
չպիտի խառնուիմ : Բան մը չեմ խօսիր , այլ
մտածելով կը բաւականամ : Շատ բաներ կան
որ աւելի լաւ կրնային ըլլալ՝ եթէ անոնց վար-
չութիւնն իմ ձեռքսըլլար . կը կարծեմոր բա-
ւական խորհրդակցութիւննեղած չէ անոնց վը-
րայ : Պէտք էր որ իրեն խորհուրդ տալ ուզող
անձանց ամենուն ալ կարծիքը հասկընար . այն
ժամանակ ամեն բանլաւ կերթար : »

կուզէի որ այդ անկոչ խորհրդատուններն
առակ նշաւակի ըլլային , ըսի : Արդէն պար-
կեշտ մարդոց պարտքն է պաշտպանութիւն
ընել մեր սահմանադրութեան տկար կողմին ,
այն է թագաւորական սրբանուէր իշխանու-
թեան որ քանի մը տարիէ 'ի վեր իյնալու վրայ
է , եւ աէրութեան մէջ ունենալիք պարտ ու
պատշաճ ազդեցութիւնը կը կորսնցընէ : Բայց
խել մը տղէտներ հանապազ ազատութիւն կը
գոչեն . եւ եթէ քիչ մը ծանրութիւն ունին ,

վատաբար կշռոյն այն կողմը կը դնեն որ արդէն հակածէ : »

« Ի՞նչ, գոչեց տիկիններէն մէկը , տեսնելու էի այդ աստիճան անարդ եւ վատչուէր մարդ մը որ ազատութեան թշնամի եւ բռնաւորաց պաշտպան ըլլայ : Ազատութիւնը երկնից անզին պարդեւն է . Քրիտանացւոց փառաւոր արտօնութիւննէ : »

« Հնարաւոր բան է , գոչեց հիւրընկալնիս ալ , որ այսօրուան օրս գերութեան ջատագով փաստաբաններ , Քրիտանացւոց՝ արտօնութիւնները վատաբար լքանելու ձեռնհամ մարդիկ դժմութին : Կրնայ այդ աստիճան վատ մարդ մը դժմութիլ , Պարոն : »

Ոչ , Պարոն , պատասխանեցի , ես ազատութեան կողմնակից եմ , որ Արտուծոյ ստորոգելիններէն մէկն է . այն փառաւոր ազատութեան , որ արդի հրապարակախօսութեանց գլխաւոր առարկան է : Ես կուզէի որ ամեն մարդ թադաւոր ըլլար : Կուզէի որ ես ալ թագաւոր ըլլայի : Ամենքս ալ մի եւ նոյն իրաւունքը ունինք թագաւորական աթոռին վրայ , վասն զի ամենքս ալ ՚ի բնէ հաւասար ենք : Այս է իմ կարծիքս , այս էր նաև ժամանակաւ տեսակ մը պարկեցտ մարդոց կարծիքը , որ Հոռորդութեամ Հոռուց կը կոչուէին : Ասոնք փորձ փոր-

ձեցին այնպիսի ընկերութիւն մը կազմելու՝
ուր ամենն ալ հաւասարապէս ազատ ըլլան :
Բայց՝ աւաղ, այս բանը չէր կրնար երբէք յա-
ջողիլ . վասն զի, մէջերնէն ոմանք աւելի ու-
ժեղ, ոմանք ալ աւելի խորամանկ ըլլալով
միւսներուն վրայ տիրեցին : Գանզի տարակոյս
չկայ, որ ձեր ձիավարը՝ ձեր ձիերէն աւելի խո-
րագէտ կենդանի մը ըլլալուն համար՝ անոնց
վրայ կը հեծնէ . իրմէ խորարանկ կամ հզօր
կենդանի մ'ալ իր ուսերուն վրայ կրնայ հեծ-
նել : Արդ, որովհետեւ հարկ է որ մարդ մէկու
մը իշխանութեան ներքեւ ըլլայ, եւ մարդոց-
մէ ոմանք հրամայելու, ոմանք ալ հնազանդե-
լու համար ծնած ըլլան, եւ ըստ որում հարկաւ
տէրեր պիտի գտնուին, կը մնայ որոշել թէ
զանոնք մեզի հետ տուներնուս մէջ ունենալը
լաւ է, թէ նոյն գեղին մէջ, կամ աւելի հե-
ռուն՝ մայրաքաղաքին մէջ: Ինձի համար, Պա-
րոն, որովհետեւ տիրոջ մը ներկայութիւնը
ընականաբար կատեմ, որչափ աւելի մենէ հե-
ռու ըլլայ, այնչափ աւելի գոհ կըլլամ: Մար-
դոց մեծադոյն մասն ալ իմ կարծիքէս են: Հա-
մակամ հաճութեամք թագաւոր մը ընտրուե-
ցաւ, որուն ընտրութիւնը մէկ կողմէ մանր
բռնաւորներուն թիւը կը պակսեցընէ, եւ
բռնաւորութիւնը հնար եղածին չափ ժողո-

վըրդեան մեծագոյն մասէն կը հեռացընէ : Ա-
նոնք՝ որ թագաւորին ընտրուելէն առաջ բըռ-
նաւոր էին , բնականաբար թշնամի են իրենց
վրայ բարձրացած իշխանութեան , որուն կշի-
ռըն իրենցմէ աւելի ծանր է տէրութեան ստո-
րին կարգերուն վրայ : Այս պատճառաւ մեծա-
մեծներուն սեպիհական շահը կը պահանջէ որ
կրցածնուն չափ թագաւորին իշխանութիւնը
նուազեցընեն , վասն զի ինչ որ անոր վրայէն
վերցնեն , բնականաբար իրենց վրայ կըդառ-
նայ . ուստի տէրութեան մէջ իրենց միակ գոր-
ծըն է՝ թագաւորին հօրը փորել , որպէս զի ի-
րենց նախակին իշխանութիւնը վերստին ձեռք
ձգեն : Արդ , տէրութիւնն մը կրնայ այն կերպ
սահմանադրեալ ըլլալ , այնպիսի օրէնքներ ու-
նենալ , եւ իր հպատակներն ալ՝ հարուստ եւ
հղօր՝ այն սստիճան չարախորհուրդ ըլլալ , որ
ամենն ալ կրնան միաբանիլ թագաւորական
դահը կործանելու . օրինակի համար , եթէ տէ-
րութիւնն այնպիսի հանգամանքներու մէջ է ,
որ հարստութեանց կուտակումը կը դիւրացը-
նէ եւ արդէն հարուստ եղողները մեծահա-
րուստ կընէ , անոնց հարստութեանը հետ մի-
անգամայն զօրութիւնն ու փառասիրութիւնն
ալ կաճի : Արդ , տէրութեան մը մէջ հարստու-
թիւնը կը բազմապատկի ու կը դիզուի , եր-

բոր այն տէրութիւնն առաւել հարստութիւնն
կը շահի արտաքին վաճառականութենէ՝ քան
թէ իւր ներքին ճարտարութենէն . վասն զի մի-
այն հարուստները կրնան շահաւէտ կերպով
արտաքին վաճառականութիւն ընել . միանդա-
մայն ներքին ճարտարութեան բոլոր արդիւն-
քըն ալ իրենց ձեռքը կանցունեն . այնպէս որ
այսպիսի տէրութեան մը մէջ հարուստը երկու
աղբիւր ունի հարստութիւն կուտելու , մինչ-
դեռ աղքատը մէկ աղբիւր մը ունի : Այս մի-
ջոցով է որ վաճառաշահ տէրութեանց մէջ
միշտ հարստութեան կուտակում տեսնուած
է , եւ այն տէրութեանց ամենն ալ ետքէն աղ-
նուապետական եղած են : Ասկէց զատ , երկրի
մը օրէնքներն անդամ կրնան նպաստել մաս-
նաւորաց ձեռքն այսպէս չափաղանց հարըս-
տութիւն դիզուելուն : Ինչպէս , օրինակի հա-
մար , երբոր հարուստներն ու աղքատները
միացընող կապերը խզին , եւ կանոն ըլլայ որ
հարուստներն աղքատաց հետ խնամութիւն
չընեն . կամ երբոր իմաստուն մարդիկ՝ հա-
րուստ չըլլալնուն համար չկրնան իրենց երկ-
րին ծառայել իբրեւ խորհրդական , եւ այս կեր-
պով հարստութիւնը խոհական մարդոց փա-
ռասիրութեաննիւթ ըլլայ . այս եւ ասոր նման
միջոցներով , կըսեմ , հաբստութիւնները կը

զիզուին ։ Այսպէս դիզուած հարստութեանց
տէրերը՝ կենաց պիտոյքն ու զուարձութիւն-
ներն հայթայթելէ ետեւ, հարստութեան ա-
ւելորդովն ալ իշխանութիւն ձեռք բերելու կը
ջանան ։ կամ որ նոյնէ, իրենց հաղատակներ կը
պատրաստեն՝ չունեւորներուն կամ վարձկան
հօգիներուն աղատութիւնը գնելով, այնպիսի
մարդոց, որք հացի համար իրենց աչքին առ-
ջեւ բռնաւորութեան կը հանդուրժենն ։ Այս
կերպով է որ ընչաւէտ մարդն ընդհանրապէս
իր բոլորտիքն աղքատ ժողովրեան շրջանակ
մը կը գումարէ ։ Եւ աէրութիւն մը որ իր մէջ
այսպիսի հարուստներ շատ ունի, կրնայ Տէքար-
թի դրութեանը համեմատիլ, ուր ամեն մէկ
գունատ իրսեփական յորդանքն ունի իր բոլորտի-
քը ։ Սակայն մեծերու յորդանքին մէջ այսպէս
տարութերելու յանձնառու եղողները դերու-
թեան տրամադրեալ անձինք միայն կրնանը լ-
լալ, սինլքոր մարդիկ, որոց սիրուը ծառայու-
թեան համար յօրինուած է, եւ աղատութեան
անունը միայն ծանօթէ իրենց, Բայց տակաւին
շատ մարդիկ կը գտնուին որ հարուստներուն
աղդեցութեան շրջանակէն դհերս կը մնան
Ասոնք են այն դասու քաղաքացիք, որ բաւա-
կան հարուստ ըլլալով իրենց դրացին իշխա-
նութեանը ներքեւ չեն մտներ, բայց այնչափ

մեծ հարստութիւն ալ չունին որ բռնաւոր
կանգնին : Այս միջակ կարդին մէջէ , որ ար-
ուեստները , խոհեմութիւնն ու ընկերական ա-
ռաքինութիւնները կը գտնուին : Այս կարգն է
միայն ազատութեան պահապանը եւ կրնայ ժո-
ղովուրդ կոչուիլ : Արդ կրնայ ըլլալ որ մի-
ջակ կարգն իր աղդեցութիւնը կորսնցընէ տէ-
րութեան մէջ , եւ իր ճայնը խաժամուժին աղաւ-
զակներէն խղդուի : Քանոյի եթէ տէրութեան
դործերուն մէջ ձայն ունենալու համար այսօր-
ուան օրս պէտք եղած հարստութիւնը՝ սահ-
մանագրութեան կազմուած ժամանակ հար-
կաւոր գատուածէն տասնապատիկ պակաս ըլ-
լայ . յայտնի է որ այն ժամանակ աւելի բաղ-
մաթիւ սինլքոր մարդիկ քաղաքական դրու-
թեան մէջ կը մանեն , եւ մեծամեծայ շրջա-
նակին մէջ միշտ շարժելով , ուր որ մեծութիւ-
նը զիրենք ուղղէ՝ հոն կերթան : Այսպիսի տէ-
րութեան մը մէջ , միջակ կարդին միակ ընե-
լիքն է՝ միապետին իրաւունքն ու արտօնու-
թիւնները մեծ խնամօք պահողանել ու պաշտ-
ուանել . վասն զի թագաւորն հարուստներուն
իշխանութիւնը բաժնելով՝ թող չտար մեծա-
մեծներուն որ գերադոյն ծանրութեամբ ի-
րենցմէ ստորին կարդին զրայ իշնան : Միջին
կարդը կրնայ քաղաքի մը նմանիլ զոր հա-

ըուստները կը պաշարեն, եւ թագաւորն ալ
քաղաքին օդնութեան հասնելու կը փութայ:
Քանի որ պաշարողները դուրսէն թշնամիէ եր-
կիւղ ունենան, բնականէ որ խիստ օդտակար
սկայմաններ կառաջարկեն քաղաքին, շողո-
քորթ խօսքեր կընեն պաշարելոց, եւ արտօ-
նութիւններ կը խոստանան: Բայց երբոր թա-
գաւորին յաղթեն, այն ժամանակ քաղաքին
պարխապները չեն կրնար հզօր ապաւէն մը ըլ-
լալ բնակչաց, եւ իրենց գլխուն գալիքնյայտ-
նի կը տեսնուի: Հօլանտան, ձենովան, եւ Վե-
նետիկն աչքերնուն առջին օրինակ ունենալով,
ուր օրէնքն աղքատներուն կիշխէ, հարուստ-
ներն ալ օրինաց կիշխեն: Ուստի ես չորս ձեռ-
քով կը բռնեմ միապետութիւնը, եւ անոր
նուիրական իշխանութեանը համար կեանքս
կուտամ: Վասն զի եթէ մարդոց մէջ նուիրա-
կան բան մը կայ, թագաւորն է, Աստուծոյ
օծեան է. եւ անոր իշխանութեանը հասած որ
եւ իցէ վնաս, թէ պատերազմի մէջ ըլլայ եւ
թէ խաղաղութեան մէջ էապէս իր հպատակ-
ներուն ազատութեանցը կը դպչի: Ազատու-
թիւն, հայրենասիրութիւն եւ բրիտանացի
բառերն արդէն չափէն աւելի գործ կատարե-
ցին: Ըղձալի է որ ազատութեան ճշմարիտ որ-
դեքն այսուհետեւ թող չտան ասոնց աւելի

բաներ ընելու : Ես ժամանակաւ ազատութեան այս արի ախոյեաններէն շատեր ճանչեցի , բայց մէջերնէն մէկը չեմյիշեր որ իր սըրտին եւ տանը մէջ բռնաւոր մը չըլլար :

Նշմարեցի որ այս նիւթիս վրայ ունեցած կիրքո՝ քաղաքավարութեան սահմանէն աւելի երկնցուցեր էր բանախօսութիւնս : Բայց հիւրընկազիս անհամբերութիւնը՝ որ յաճախ զիս ընդմիջելու փորձ ըրեր էր՝ չկրցաւ աւելի երկար դիմանալ : « Ըսել է որ , գոչեց , երէցի կերպարան քով ճիզուիթ մը ընդուներ եմ սեղանս : Բայց Քօրնուէյլի բոլոր ածխահան քերուն վրայ կերպնում , որ եթէ իմ անունս Ուիլքինաըն է , այս մարդը շուտով պիտի երթայ այս տունէն » : Այն ժամանակ զգացի որ շատ հեռուն դացեր էի , եւ ներում խնդրեցի այնչափ տաքութեամբ խօսելուս համար : « Ներում մի , գոչեց զայրազին . տասն հազար անդամ մեղայ ըսես՝ չևս կրնար ներում ստանալ այդպիսի սկզբանց համար : Ազատութիւնըն ու սեպհականութիւնը լքանելը , լրադրին ըսածին պէս , վատաքար իւր թիկունքը գաւազանի հարուած ընդունելու խոնարհեցը նելէ . . . կը պահանջեմ , պարոն , որ հիմա գուրսելնես այս տունէն : Եթէ չես ուզեր որ աւելի մեծ դէշութիւն մը քեզի պատահի :

Նորէն կը պատրաստուէի փաստաբանելու, ըստ
պասաւոր մը դուռը զարկաւ : Իսկոյն երկու
տիկնայք շիոթելով գոչեցին . «Ո՞հ, չար սա-
տանայ, մեր տէրն ու տիրուհին եկեր են : » Այս
ժամանակ հասկըցայ որ մեր հիւրընկալը տանը
մառանապետն է եղեր, որ տիրոջը բացակա-
յութեան ժամանակն ուղեր է իրեւտէր վար-
ուիլ : Եւ շիտակը խօսելով, գեղացի ազնուա-
կանաց շատերուն պէս քաղաքագիտութեան
տեղեակ կերեւէր : Բայց անհնար է նկարազրել
իմ շիոթութիւնս երբոր տէրն ու տիրուհին
ներս մտան, եւ մենէ ոչ պակաս զարմացմամբ
այսպիսի ընկերութիւն ու կերուիում մը գը-
տան իրենց տանը մէջ : «Պարոններ, ըստ ճշ-
մարիտ տանուտէրն ինձի եւ ընկերիս, ձեր ա-
մենախոնարհ ծառան եմ . այս ինձի ըրած այ-
ցելութիւննիդ այնչափ մեծ չնորհ մ'է, որ չեմ
գիտեր ինչպէս շնորհակալութիւնս ձեզյայտ-
նեմ : » Ո՛քչափ եւ անակնկալ երեւէր իրեն մեր
ընկերութիւնը, իրենն ալ ոչ պակաս անակըն-
կալ էր մեզ համար, ուստի առանց բերանս
բանալու՝ մունջ կեցեր՝ ըրած անխոհեմութեա-
նըս վրայ կը մտածէի : Յանկարծ տեսայ որ ա-
նոնց ետեւէն ներս մտաւ Արապէլլա Վիլմօթ
օրիորդը՝ որ ժամանակաւ Գէորդ որդւոյս նը-
շանածն էր, եւ ինչպէս արդէն պատմած

եմ, ծնողքը ետքէն աւրեր էին գործը : Զիս
տեսնելուն պէս՝ վազեց ուրախութեամբ թե-
ւերուս մէջ ինկաւ : « Սիրելի պարոն, դոչեց,
աս ի՞նչ բարեբաստ դիպուած մ'է որ ձեր այ-
ցեյութեան բերկը ութիւնը կը պարգևեէ մեզ :
Աներկը այս որ մօրեղբայրս ու տիկինը չափէ
դուրս պիտի ուրախանան երբոր լան թէ բա-
րեհամբաւ Բրիմրոզ վարդապետն է իրենց հիւ-
րը : » Տանուտէրն ու տիկինը՝ անունս լսելուն
պէս՝ յառաջ եկան եւ խիստ քաղաքավար ու
սիրալիր կերպով զիս բարեւեցին : Զկրցան ծի-
ծաղնին բռնել երբոր այցելութեանս պատմու-
թիւնը լսեցին . իսկ թշուառ մառանապետն
անմիջապէս վոնտել ուղեցին, բայց իմ աղա-
չանօքս ներեցին յանցանացը :

¶ Արնօլտ եւ իր ամուսինը՝ որ տանը տէրերն
էին, շատ աղաչեցին ինձի որ քանի մը օր հոն
կենամ . եւ որովհետեւ իրենց քեռորդին, իմ
սիրուն սանս, որ լաւ դաստիարակութիւն մը
առած էր ինէ, անոնց հետ մէկ եղաւ, պարտա-
ւորեցայ աղաչան քնին ընդունելու : Այն գի-
շեր փառաւոր սենեակ մը ինձի տուին . եւ հե-
տեւեալ առաւօտուն՝ վիլմօթ օրիորդն աղա-
չեց ինձի որ երթանք մէկտեղ պարտէզը պը-
տըտինք, որն որ արդի ձեւով զարդարուած
էր : Քիչ մը ժամանակ պարտէզին զեղեցկու-

թիւններն ինձի ցուցընելէ ետեւ , անշահասէր
դէմքով մը հարցուց ինձի թէ Գէորդ որդիկա
լուր ունէի՞ : « Աւաղ , տիկին , ըսի , երեք տա-
րի է որ հեռացած է առնէն , եւ գիր մը չէ գը-
րած՝ ոչ ինձի եւ ոչ իր բարեկամներէն մէկուն
Զեմ գիտեր ուր է . թերեւս մէկ մ'ալ պինքը
տեսնելիք չունիմ , ինչպէս նաև իմ առջի եր-
ջանկութիւնս : Ոչ , սիրելին օրիորդ , ալ տեսնե-
լիք շունինք այն բերկրալի ժամերը որ մեր
Վէքֆիլտի տունը կանցունէինք : Իմ փոքրիկ
ընտանիքս ցրուիլ կ'սկսի . եւ ոչ միայն աղքա-
տութիւնը՝ այլ եւ անպատճութիւնը կը ծան-
րանայ վրայնիս : » Օրիորդ Վիլմօթին ազնիւ
օիրաը չկրցաւ առանց արտասուելու լսել այս
խօսքերս . իր դիւրաղդածութիւնը տեսնելով ,
մեր դժբաղդութիւնները մանրադամնաբար
ողատմել չուզեցի : Սակայն մեծապէս միսիթար-
ուեցայ տեսնելով որիր սիրոյն զգացումը ժա-
մանակ անցնելով չէրսկոխուած , եւ մեր Վէք-
ֆիլտէն ենելէն . ի վեր շատ մարդիկ զին-
քը ամուսնութեան ուզեր էին , ըայց մէկն ալ
չէր ընդունած : Զիս ողարտէզին ամեն կողմե-
րը պտուացուց , ուր որ յաւելուածներ կամ
պճնազարդութիւններ եղեր էին . ցուցուցին-
ձի զանազան ծառուղիները , թաւուաները ,
եւ ամեն մէկ նիւթէ առիթ առնելով Գէորդ

որդւոյս վրայօք բան մը կը հարցընէր ինձի .
Այս կերպով անցուցինք առաւտեան ժամերը՝
մինչեւ որ եկան մեղի իմաց տուլն թէ ճաշի
ժամանակ էր : Ճաշին ներկայ գտանք շարժա-
կան դերասանաց խումբին տնօրէնը , որ նոյն
երիկուան ներկայացուելիք Առշետու հեռա-
անուն խաղին համար տումատկ բաժնելու եկեր
էր . եւ կըսէր թէ յիշեալ խաղին մէջ Ռվրա-
տիոսի դերը խաղցողը նորասի պատանի մ'էր
որ դեռ ոչ մէկ թատրոնի մը մէջ խաղցած չէր .
Զերմգովեստներ կըսէր այն նոր դերասանին վը-
շայ , եւ կը հաւաստէր թէ անոր չափ յաջոզու-
թեան յոյս տուող դերասան մը երբէք տեսած
չէր : « Լաւ խաղալը , կըսէր , մէկ աւուր դործ
չէ բայց այն երիտասարդը թատրոնի համար
ստեղծուած կերեւի : Զայնը դէմքը եւ շար-
ժուածքն աքանչելի են : Զինքը դիպուածով
այս անգամ հոռ եկած ժամանակիս գտանք »
Այս դովեստները մեր հետաքրքրութիւնը գլո-
գուեցին , եւ ախկնանց թախանձանքէն ամիս-
եալ՝ հաճեցայ հետերնին թատրոնը երթալու .
որ ցորենի որայներ պահելու տաղաւար մ'էր .
Եւ որովհետեւ նետագանուող ախկնայք տեղ-
ոյն ամենէն երեւելիք բնակիչներէն եին , մեծ
յարդանօք ընդունուեցանք եւ տեսարամնն
դիմացն առաջին կարգով դրուեցանք , ուր քիչ

մը ժամանակ անհամբերութեամբ սպասեցինք
Ովրատիոսը տեսնելու : Աւերջապէս նոր դերա-
սանը յառաջ եկաւ , եւ տեսայ որ իմ դժբաղդ
որդիս էր : Պիտի սկսէր խաղը , մէկ մ'ալ աչ-
քը հանդիսատեսներուն վրայ պտըտցնելով
մեզ տեսնելուն պէս՝ լուռ եւ անշարժ մնաց :
Տեսարանին ետեւը կանոնող գերասանները
կարծելով որ որդւոյս լուռ կենալուն պատճա-
ռը նոր սկսողի մը բնական եղած երկչոտու-
թիւնն էր , զանի խրախուսելու կը ջանային .
բայց որդիս՝ փոխանակ սկսելու լալով ետ քաշ-
ւեցաւ : Ձեմ զիտեր ինչ զգացումներ կրեցի այն
վայրկենին , վասն զի այն աստիճան երագ յա-
ջորդեցին իրարու որ չեմ կրնար նկարագրել ,
Բայց շատ չանցաւ : Վիլմօթ օրիորդը զիս սթա-
փեցուց , եւ դալկահար դէմքով ու դողա-
լով ըստ ինձի որ նորէն զինքը տունը դար-
ձունեմ : Երբոր տուն դարձանք , Պ . Արնօլտ՝
որ մեր կարգէ դուրս ընթացքէն բան մը չէր
հասկըցեր , իմանալով որնոր սկսող դերասանն
իմ որդիս էր , իր կառքը զրկեց եւ զանի տուն
հրաւիրեց : Որդիս թատրոնին վրայ երեւնալ
չուզելուն համար , կատակերգակներն անոր
տեղ ուրիշ մը դրեր էին , եւ շատ չանցած որ-
դիս տուն եկաւ : Պ . Արնօլտ սիրալիթ քաղա-
քավարութեամբ ընդունեց զանի , իս ալ առ-

Վորական ուրախութեամբն ընդունեցի . վասն
զի երբէք չէի կրնար բարկութիւն կեղծել :
Վիլմօթ օրիորդն ալ կեղծ անտարբերութիւն
մը ցուցուց անոր . եւ կը տեսնէի որ անտար-
բեր երեւնալու յատուկ ջանք մը ունէր : Սըր-
տին այլայլութիւնը գեա հանդարտած չէր , եւ
ուրախութեան երեւոյթ ունեցող հազար կերպ
խօսքեր կընէր . ետքն ալ իր անխորհրդու-
թեանը վրայ կը խնդար : Ժամանակ ժամանակ
հայելին կը նալէր , որպէս թէ իր գեղեցկու-
թեան անդիմադրելի դօրութիւնը հասկընալ
ուղելով , եւ ստէալ հարցումներ կընէր՝ առանց
անոնց պատասխանը մտիկ ընելու :

ԳԼՈՒԽ Ե

լով չընդունեց անոր առաջարկութիւնը . բայց
տիկինը շատ պնդելով , վերջապէս որդիս հար-
կադրեցաւ խոստովանելու թէ աշխարհի վր-
բայ ունեցած բողոք կարաօին՝ դաւազան մը եւ
պայուսակ մ'էր : և Այս , որդեակ , գոչեցի ,
աղքատ մնկնեցար քովէս , եւ աղքատ կը դառ-
նաս . բայց գոնէ շատ տեղ պարտեցար եւ աշ-
խարհք տեսար : — Այս , հայրիկ , պատասխա-
նեց . բայց բաղդին ետեւէն վազելը՝ զանի
ձեռք ձգելու միջոց մը չէ . եւ ճշմարիտը խօ-
սելով , ժամանակէ մը ի վեր դադրած եմ այս
հետամտութենէն : — Կարծեմ որ ձեր արկած-
ներուն պատմութիւնը զուարճալի ըլլալու է ,
ըսաւ Արնօլտ տիկինը : Անոնց մէկ մասը յա-
ճախ լսած եմ քեռորդիէս . բայց եթէ մնացա-
ծըն ալ դուք պատմելու հաճիք , ընկերու-
թիւնս շատ շնորհակալ կըլլայ ձեզ : — Տիկին ,
ըսաւ որդիս , կրնամ ձեզ հաւաստել . որ իմ
դլիսուս եկածները պատմելու մնափառութիւ-
նըս ձեր մտիկ ընելու բերկրութենէն շատ ա-
ւելի պիտի ըլլայ : Սակայն չեմկրնար արկած-
ներ խոստանալ ձեզ . վասն զի աւելի շատ բան
տեսած եմ : քան թէ ըրած : կենացս առաջին
փորձուաթիւնը՝ որ արդէն ձեզի ծանօթ է .
մած եր : զիս դառնապէս վշանցուց : բայց չի
երցաւ արտօքրէկ ընել : Աչ ոք ինձի շափի ինք-

զինք յուսով պարապելու քաղցր տրամադրութիւն մը ունեցած է երբէք : Ո՞րչափ բաղդնինձի հակառակ ըլլար այն ժամանակը , այնչափ կը յուսայի որ ուրիշ ժամանակ մը զիս պիտի վարձատրէր . եւ որովհետեւ անոր անոյն տակի կողմն էի . կը կարծէի որ դառնաւու ըլլարնէ՝ վեր պիտի ելնէի : Ուստի օրին մէկը ճանբայ ելայ Լոնտրա երթալու համար . առանց վաղուանը մտածելու , բայց ճանբուռ վրայ գեղգեղող թռչնոց պէս ուրախ էի : Միրտը կը քաջալերէր մտածելով որ Լոնտրա բուն այն տեղն էր ուր ամեն տեսակ հանճարները կընային ճանչուիլ ու վարձատրիլ :

Երբոր Լոնտրա հասայ , առաջին փոյթս եղաւ ձեր յանձնարարական գիրը տանիլ ձեր եղբօրորդւոյն տալ , զոր ինէ շատ լաւագոյն վիճակի մը մէջ չգտայ : Առաջին դիտաւորութիւնը , ինչպէս որ կը յիշէք , գողոցի մը մէջ մանկավարժ ըլլալէր , եւ այս բանիս վրայ անոր կարծէքն հարցուցի : Ձեր եղբօրորդին բարձրաձայն ծիծաղեցաւ . առաջարկութեանս վրայ . « Արդարեւ փիստ գեղեցիկ վիճակ մը ընտրեր էք , ըստեւ : Խսալ գիշերօթիկ վարժարանի մը մէջ մանկավարժութիւն ըրած եմ , բայց կերպնում որ բիւրապատիկ աւելի կընտրեմ Նիւկէյթի »

* Լոնտրայի մէջ բանտ մ'է : Ծ . Բ .

բանտապաններուն մէ կուն հսկողութեանը ներքեւ ապրիլ կանուխ կենէի . ուշ կը պառկէի : Տնօրէնը խրոխտ աչքով մը կը նայէր խնձի . Տնօրէնուհին ալ զիս կատէր գեղեցիկ երիտասարդ մը չըլլալուս համար : Տղայքը զիս կը կատղեցընէին տանը մէջ , եւ ազատութիւն չունէի քուրս ելնելու եւ մարդավարութիւն փնտուելու . Բայց վատահնես գաբոց մը մտնելու եւ մանեկավարժութիւն ընելու յարմարութեանդ վրայ Տեսնենք քիչ մը : Կրնամս ամենն պաշտօն կատարել : — Ոչ : — Ուրեմն գիշերօթիկ վարժարանի չես կրնար յարմարիլ : Կրնամս տղայոց մազերը յաշդարել : — Ոչ : — Ուրեմն գիշերօթիկ վարժարանի չես կրնար յարմարիլ : Ծաղիկ հանած ես : — Ոչ : — Ուրեմն գիշերօթիկ վարժարանի չես կրնար յարմարիլ : Կրնամս երեք հոգի մէկ անկողնի մէջ պառկիլ : — Ոչ : — Ուրեմն գիշերօթիկ վարժարանի չես կրնար յարմարիլ : Ախորժակդ տեղն է : — Այս : — Ուրեմն գիշերօթիկ վարժարանի չես կրնար յարմարիլ : Ոչ , սիրելի հօրեղբօրորդիս , եթէ դեղեցիկ եւ հեշտ արհեստ մը կուզես , դնաւ եօթն տարի աշակերտութիւն ըրէ գանակագործի մը քով եւ անոր ճախարակը դարձուր , բայց փախիր մանկավարժութենէ : Սակայն կը տեսնեմ որ դուն զգացում եւ գիտութիւն ունեցող

տղայ մ'ես . կուզես ինձի պէս մատենագիր ըլ-
լալ : Անչուշտ կարդացեր ես զիրքերուդ մէջ ,
որ գերահանձար մարդիկ մատենագրութեամբ
ապրելով անօթի մնուած են . բայց այսօրուան
օրս քառասուն անոմիա կը ցուցընեմ այս քաղա-
քիս մէջոր անով կապրին եւ կը հարստանան :
Ասոնք համեստ շինականներ են , որ մեղմով եւ
միապէսիրենց ճանբան կերթան , պատմու-
թեան ու քաղաքականութեան վրայ կը զրեն
եւ գովեստ կընդունին : Եթէ կարուակ ըլլա-
յին , բոլոր կեանքերնուն մէջ կոչիկ կարկատե-
լու պիտի զբաղէին՝ առանցնորը երբէք շինե-
լու : » Տեսնելով որ գիշերօթիկ գորոցի մը մէջ
մանկավարժի արհետոր պատուաւոր բան մը
չէր , հօրեղբօրդիիս առաջարկութիւնն ըն-
դունելու որոշում ըրի . եւ զրականութեան
վրայ մեծ համարում ունենալուս , յարգանօք
ողջունեցի հոչակաւոր կրիւպսթրիթ փողոցը :
Գլուխս պայծառ գաղափարներով լեցուն էր .
կերեւակայէի որ Տրայտըններուն ու Օթվէյ-
ներուն հետոցը վրայ պիտի քալէի : Գրագի-
տական ասպարէզին նկատմամբ՝ այս երկրին

* Լոնտրայի մէջ խեղճ փողոց մ'է , ուր
պանդոկներն ու տուները դիւրագին ըլլալով .
աղքատ մատենագիրները սովորաբար հոն կը
բնակին

գիցուհին գերազանց մայր մը կը համարէի .
Վասն զի թէ եւ աշխարհային առընչութիւն-
ներն ու գործերը մարդոց խելքը կը սրեն ,
սակայն գիցուհին ալ իր ետեւէն գացողներուն
աղքատութիւն բաշխելով անոնց հանճարը կը
բարձրացընէ : Այս խօրհրդածութիւններով
գործի սկսայ , եւ մտածելով որ սուտի կողմէն
խիստ գեղեցիկ բաներ կային ըսուելիք , որո-
շեցի այնպիսի գիրք մը շինել որ բոլորովիննոր
Ըլլար : Ուստի երեք նորանշան եւ անհեթեթ
առաջարկութիւններ ճշմարտանուման փաստե-
րով հագուեցուցի : Առաջարկութիւններս սուտ
էին անշուշտ , բայց նորէին : Ճշմարտութեան
խսկական աղամաննդներն այնպիսի փաճառք
մ'են՝ որ խիստ յաճախ ներկայացուած են հա-
սարակութեան . ես ուրիշ բան չէի կրնար ը-
նել , բայց միայն պայծառափայլ իր մը ներ-
կայացընել , որ հեռուէն տեսանուած ժամանակ
աղամանողի նմանէր : Ի՞նչ մնձ համարում մը
ունէի զրչիս վրայ՝ երբոր կը գրէի : Անտարա-
կոյս էի որ բոլոր գրաւորական աշխարհն իմ
գրութեանս դէմ պիտի ենէր , բայց անոնց
ամենուն ալ դէմ դնելու պատրաստուած էի ,
Նման ողնիի , որ ինք իր վրայ թաւալելով իր
մորթին վրայի փուշերն իրրեւ զէնք կը ներ-
կայացընէ , ես ալ գրիչս սրեր էի վրաս յարձո-

կողներուն դէմ : »

« Եատ աղէկ , որդեակօ , գոչեցի , եւ ի՞նչ
նիւթոց վրայ գրեցիր : Կը յուսամ որ եկեղե-
ցականաց երկրորդ ամուսնութեան կարեւոր
ինդիրը չմոռցար : Բայց խօսքդ կընդմիջեմ :
Շարունակէ նայիմ : Ըսել է որ քու նորանշան
առաջարկութիւններդ հրատարակեցիր . եւ
ի՞նչ ըսին դրագէտները : »

« Աւաղ , պատասխանեց որդիս . գրա-
գէաները բան մը չըսին իմ նորանշան առա-
ջարկութիւններուս : Բնաւ բան մը չըսին . վա-
սըն զի իւրաքանչիւրն զրազած էր ինքզինք ու
բարեկամները գովելու կամ թշնամիները դա-
տաքննելու . եւ դժբաղդաբար ես ոչ բարե-
կամ ունէի , ոչ թշնամի : Ուստի վիշտերուն ա-
մենէն սաստիկը կը կրէի , այն է արհամարհանք :
Օրին մէկը սրճարան մը նստած՝ նորանշան ա-
ռաջարկութեանցս վիճակին վրայ կը մտածէի ,
կարճահասակ մարդ մը ներս մտաւ , դիմացս
սեղանի մը առջեւ նստաւ , եւ քանի մը վայր-
կեան խօսակցութենէ ետեւ , տեսնելով որ ետ
ալ գրագէտ եմ , զրպանէն ծրար մը յայտա-
րարութիւն հանեց , եւ աղաչեց որ Բրօքէրուի
երկրորդ եւ հանդերձ ծանօթութեամբ տպադ-
րութեանը համար տտորագրուիմ : Այս խընդ-
րոյն հարկ եղաւ պատասխանել թէ ստակ չու-

նէի . եւ այս խոստովանութիւնս առիթ տուաւ
անոր հարցընելու թէ ի՞նչ յոյսեր ունէի : Տես-
նելովիմ տատասխանէս որ յոյսերս ալ քսակիս
պէս դատարկ էին , « Կը տեսնեմ , ըստ , որ
դուք այս քաղաքը չէք ճանչեր . ուստի ճեղի
քանի մը տեղեկութիւններ տամ անոր վրայ :
Նայէ սա յայտարարութիւնները : Ասոնց մի-
ջոցաւ տասներկու տարի հանգիստ ապրեցայ :
Խամայի քայէն հարուստ դադթական մը կամ
դաւառաբնակ ազնուական այրի մը հոս հաս-
նելուն պէս , կերթամ , կը դտնեմ եւ կառա-
ջարկեմ որ ստորագրուին : Նախ չողոքորթու-
թիւններով անոնց սիրտը կը պաշարեմ , եւ եր-
բոր այս կերպով խրամատեմ , յայտարարու-
թիւններս կը քշեմ : Եթէ առանց դժուարու-
թեան ստորագրուին , այն ժամանակ կաղա-
չեմ որ թոյլ տան ինձի գիրքս իրենց անուանը
նուիրելու : Երբոր ասոր ալ հաճութիւն տան ,
կը խնդրեմ որ թոյլ տան ինձի նաեւ իրենց զի-
նանշանը գրքիս ուղերձին գլուխը փորագրել
տալու : Այսպէս , հանգիստ կեանք կը վարեմ
մնափառութեան ծախքովը , եւ վրան կը ծի-
ծաղիմ Բայց խօսքը մէջերնիս , հիմա չատ
մարդ զիս ճանչել սկսած է , ուստի չատ դոհ
կըլլամ եթէ այս մասին ինձի օդնէք : Երեւելի
աղնուական մը նոր եկած է խտալիայէն : Նըս-

տած տանը դռնապանը զիս կը ճանչէ . բայց
ձեզ չճանչեր , եթէ յանձն կառնուք սա ոտա-
նաւորն անոր տանիլ ներկայացընել , աներկ-
բայ եմ որ կը յաջողիք , եւ շահը մէջերնիս կը
բաժնենք : »

« Աստուած խեր տայ ինձի , գէորգ , գո-
չեցի , այդ է մեր հիմակուան բանաստեղծնե-
րուն ընթացքը : Գերագոյն հանճարի տէր ան-
ձինք այդ աստիճան վատութեան կրնամն խո-
նարիլ : Կրնամն այդպէս ամօթալի կերպով ան-
պատուել բանաստեղծութեան արուեստը՝ հա-
ցի համար գովեստի անարդ շահավաճառ մը
ընելով : »

« Ո՞չ , հայրիկ , ոչ , պատասխանեց որ-
դիս . ճշմարիտ բանաստեղծ մը երբէք այս աս-
տիճան ինքինք չցածցըներ . վասն զի ուր
բարձր հանճար կայ , հոն մնեանձնութիւն ալ
կայ : Իմ ձեզի նկարագրած մարդիկս տաղա-
չափութեան մուրացկաններ են : Ճշմարիտ բա-
նաստեղծ մը՝ ոչ միայն վառք վաստըկելու
համար ամեն դժուարութիւնները կարհամա-
րէ , այլ եւ արհամարհանք կրելէ կը վախնայ :
Այն անձինքը որ ուրիշի պաշտպանութիւնը
խնդրելու կը խոնարհին , անարժան են պաշտ-
պանութեան : Ես այս վատութիւններուն խո-
նարհելու չափ ցած սիրո չունենալով , եւ

փառք վաստըկելու համար երկրորդ ջանք մը
ընելու չափ կարողութիւն չունենալով, հար-
կագրեցայ միջին ճանքայ մը բռնելու, եւ հաց
գտնելու համար գրելու, Բայց պէտք եղած
ձիրքերը չունէի այնպիսի արուեստի մը հա-
մար՝ որուն մէջ ճարտարութիւնը միայն կրնայ
ապահովապէս յաջողիլ։ Ձէի կրնար գովեստ
յսելուներքին բաղձանքս զսպել, այս պատճա-
ռաւ կըցածիս չափ լաւեւ ճիշդ գրելու կը գոր-
ծածէի ժամանակս, որ կրնար աւելի օգտակար
կերպով գործածուիլ միջակ բայց չառ գրելու։
Սակայն իմ փոքրիկ հեղինակութիւններս ան-
տես եղան պարբերական զրուածոց բաղմու-
թեան մէջ։ Հասարակութիւնը խիստ կարե-
ւոր զբաղումներ ունենալով, իմ ոճիս հեշտու-
թիւնն ու հաճոյական պարզութիւնը նշմարե-
լու ժամանակ չէր գտներ, եւ պարբերութիւն-
ներուս ներդաշնակութիւնը մոռացութեան
մէջ թաղուեցաւ։ Շարագրած ճաշակներս մե-
ռան Աղատութեան ու Արեւելեան վիպաց վրայ
հրատարակուած ճաշակներուն եւ կատաղի շանց
խածուած քի համար ցոյց տրուած դեղերուն
հետ, մինչդեռ ինչ էրեւ բոցեւ-իւ, ու լուսաթիւն բոցեւ-իւ,
Հունիս բոցեւ-իւ՝ ինչ աղէկ կը գրէին, որով-

հետեւ արագ կը գրէին : Ասանկով սկսայ ին-
ձի պէս երեսնին չնայուած հեղինակներ միայն
ինձի ընկեր ունենալ , որոնք իրար կը գովէին,
իրարու կը գանգատէին եւ իրար կարհամար-
հէին : Հասարակութեան առջեւ յարգ դանող
հեղինակներուն գրուածներէն զգացած հա-
ճութիւննիս անոնց արժանաւորութեան հա-
կաղարձ չափովն էր . Ուրիշներուն խելքը չէր
կրնար ինձի հաճոյ ըլլալ . Իմ նորանշան առա-
ջարկութիւններուս կրած ճախորդութիւնը
բոլորովին ցամքեցուցեր էր ինձի համար գո-
հունակութեան աղբիւրը . Չէի կրնար ոչ կար-
դալ , եւ ոչ ինձի հաճոյ ըլլալու կերպով գրել .
վասն զի ուրիշին գերազանցութիւնը ինձի ա-
տելի էր . սակայն արհեստու գրել էր : Այս տը-
խուր մուածութիւններով օր մը Սէնթ-ձէյմսի
ծառաստանին մէջ նստած ժամանակս , պատ-
ւաւոր ընտանիքէ երիտասարդ մը՝ որ Համալը-
սարանը եղած ժամանակս ինձի ծանօթ էր ,
ինձի մօտեցաւ , եւ երկուքս ալ վարանելով ի-
րար ողջունեցինք , ան գրեթէ ամաչելով ին-
ձի պէս գծուծ մէկէ մը ճանչուելուն վրայ ,
ես ալ վախնալով որ զիս կարհամարհէ : Իմ եր-

րաբար իրենց վրայ այն ամեն քազաքական
հեղինակները՝ որ լրացիրներու մէջ նամակներ
կը հրատարակեն :

կիւղս շուտով փարատեցաւ . վասն զի տեսայ
որ Էտուարտ Թօրնհիլ բարեսիրտ տղայ մ'էր :

« Ի՞նչ կըսես , Գէորգ , գոչեցի խօսքը
կտրելով , Թօրնհիլի անունը կուտաս : Ան-
շուշտ մեր կալուածատէրն ըլլալու է : Ա՛հ . գո-
չեց Ալնօլտ տիկինը , այդչափ մօտ էք Պ .
Թօրնհիլի , որ երկար ժամանակէ ՚ի վեր մեր
ընտանեաց բարեկամն է , եւ քիչ օրէն այցե-
լութիւն մը ունի մեզի ընելիք : »

« Բարեկամիս առաջին փոյթն եղաւ , շա-
րունակեց որդիս , իմ խեղճուկ հագուստու փո-
խել , եւ ինձի դեղեցիկ հագուստ մը տալ .
վերջապէս զիս իր սեղանն ընդունեց կէս բա-
րեկամի , կէս սիրելոյ մը պէս : Իմ պաշտօնս
էր վաճառանոցները երթալիրեն հետ , իր պատ-
կերը քաշուած ժամանակ զինքը զուարճացը-
նել , կառքին մէջ ուրիշ ընկեր չունեցած ժա-
մանակ ձախ կողմը նստիլ , եւ ցոփութիւն ը-
նել ուզած ժամանակիրեն օժանդակել : Ասկէց
զատ խեր մը մանր մունր բաներ ունէի ընելիք՝
առանց ինձի հրամայուելու . զինիի սրուակնե-
րու խցահան մը կը պահէի վրաս՝ պէտք եղտծ
ժամանակ իրեն ներկայացընելու համար .
իր կողմէն փոխանորդաբար իր ծառայներուն
տղաքը կը կնքէի . ինձի առաջարկուած ատեն
կերգէի . միշտ զուարթ էի , միշտ խոնարհ , եւ

կը նէ զո՞ն : Սակայն այս պատուաւոր պաշ-
տօնիս մէջ առանց հակառակորդի չէի : Ծո-
վային գօրաց հրամանատար մը՝ որ 'ի բնէ այս-
պիսի պաշտօնիս մը համար ծնած կը թուէր :
պաշտպանիս սէրն ու վստահութիւնը ինէ յա-
փշտակելու կը ջանար : Մայրը ժամանա-
կաւ ազնուականի մը լուացմարանն է եղեր :
ուստի ինքն ալ այս միջոցով իր անտիական
հասակէն հաճոյք ստացեր էր սիրահարական
հնարիմացութիւններէ եւ ծննդաբանութենէ :
Ըստ որում այս մարդն իրեն միակ գործ ըրեր
էր մեծ մարդոց քով մանել ենել . թէ եւ շա-
տերը զանի մերժեր էին իր տիսմարութեանը
համար , բայց իր խելքէն եղողները երես կու-
տային անոր : Շողոքորթութիւնն իր արհեստն
ըլլալով , զարմանալի դիւրութեամք մը 'ի գործ
կը դնէր . եւ քանի որ չողոքորթուելու բաղ-
ձանքը պաշտպանիս քով կաւելնար , իր թե-
րութիւններուն վրայ օր քան զօր ստացած
ծանօթութիւնս զիս կը զզուեցընէր զինքը գո-
վելէ : Ուստի երբոր պատերազմի դաշտը բո-
լորովին հրամանատարին թողլու վրայ էի , ա-
ռիթ մը ներկայացաւ , որուն մէջ կարծեցնալ
բարեկամս իմ օգնականութեանս պէտք ու-
նեցաւ : Հարկ եղաւ իր տեղը մենամարտի ազ-
նուական պարոնի մը հետ , որուն քրոջը հետ

իմ պաշտպանս չարաչար վարուեր է եզեր :
Առանցգժկամակութեան ընդունեցի այս յանձ-
նարարութիւնը , եւ թէպէտ կը տեսնեմ որ այս
վարմունքս ձեզ հաճոյ չէ , այսու ամենայնին
բարեկամական պարտք մը սեպեցի չմերժել :
Ուստի ծեծկուեցայ յիշեալ պարոնին հետ , զա-
նի ղէնընկէց ըրի , եւ յետոյ իմացայ որ թըշ-
նամանեալ տիկինը հասարակ կին մ'էր , եւ
ինձի հետ մենամարտողն ալ արիկային մէկը՝ որ
այնակնոջ հետ կը նստէր կելնէր : Պաշտպանու-
սրտագին շնորհակալեաց հաւաստիներ ինձի
շուայլեց՝ այս ըրած ծառայութեանս համար :
Քանի մը օր ետքը քաղաքէն մեկնելու դիտա-
ւորութիւն ունենալով , ինձի օգտակար ըլլա-
լու ուրիշ միջոց մը չկրցաւ գտնել , բայց միայն
յանձնարարական դիրերով զիս իր հօրեղբօրը
Աըր Ռէիլիք Թօրնհիլի եւ ուրիշ բարձրաստի-
հանաղնուականի մը պաշտպանութեանը յանձ-
նել : Իր մեկնելէն ետեւ փութացայ յանձնա-
րարական գիրու իր հօրեղբօրը տանելու : Աըր
Ռէիլիք Թօրնհիլ առաքինի մարդ մը համար-
ուած էր . բայց արդարասէր էր : Իր մարդիկը
խիստ պարկեցաւ կերպով զիս ընդունեցին : Տի-
բրոջ մը բնաւորութիւնը՝ ծառայներուն վար-
մունքէն կը հասկցուի միշտ : Մեծ որա՞ մը
զիս մոցուցին ուր քիչ մը ետքը Աըր Ռէիլիք

Թօրնհիլ զիս տեսանելու եկաւ : Իրեն մատուցի
յանձնարարական դիրս , որ կարդաց , եւ քա-
նի մը վայրկեան խորհելէ ետեւ , « ի՞նչ ծա-
ռայութիւն ըրած էք , Պարոն , իմ եղրօրորդ-
ւոյս , որ այսպէս ջերմ կերպով յանձնարարու-
թիւն կընէ ձեզ համար , ըստ . Բայց կարծեմ
որ անոր առջեւ ունեցած արժանիքնիդ՝ իրեն
համար ծեծկուենիդ ըլլալու է , եւ կ'սպասէք
որ անոր մոլութեանցը գործիք ըլլալնուդ հա-
մար ձեզ վարձատրեմ , կ'ըղձամ'ի բոլոր սրտէ
որ ինէ գտած մերժումնիդ ձեր այդ յանցան-
քին պատիժ մը ըլլաց , եւ մանկաւանդ կ'ըղձամ
որ ձեր զղջմանը առաջնորդէ . . . : » Այսըն-
դունելութեան խստութեանը անտրտունջ
համբերեցի , վասն զի կ'զգայի որ արդար էր .
Աւստի միակ յոյսս միւս յանձնարարական նա-
մակին վրայ մնաց : Մեծամեծներուն դռները
զրեթէ միշտ պաշարուած ըլլալով այսպիսի
մարդոցմէ որ չնշին կամ ծաղրաշարժ աղերտ-
ներով զանոնք կը ձանձրացընեն , բաւա-
կան դժուարութիւն կրեցի երկրորդ անձին
ներկայանալու համար՝ որ բարձրաստիճանն պաշ-
տոնատէր մ'էր : Ունեցած սաըկիս կէսը ծառայ-
ներուն ընծայներ տալու գործածելէ ետեւ : զիս
ընդարձակ պրահ մը մոտցուցին , ուր սպասեցի
որ նամակս մեծ աւորին առնին առն . Մինչեւ

պատանիսանը դալուն՝ ժա խնակ ունեցայ դըտ-
նուած սրանս զիտելու : Ամեն բան մեծ եւ զե-
զեցիլ էր . Ակարները , ոսկի գրուագները , կա-
հերը զիս կ'զ բայլեցընէին եւ տիրոջը վրայ
խիստ մեծ գաղափարներ կուտային ինձի . Ա՛ ,
կըսէի ես ինձի , որչափ մոծ մարդ ըլլալու է
այս ամենուն տէրը , որ տէրութեան գործերն
իր զլխուն մէջ , եւ թագաւորութեան հարրո-
տութիւններուն կէմն ալ իր տանը մէջ մթե-
րած է : Ստուդիւ անհուն խելքի տէր մարդ մը
պէտք է ըլլայ : Այս վսեմ մտածութիւններն ը-
րած ժամանակս ծանր ոտնաձայն մը լսեցի :
Ա՛ , ըսի , ահա մեծ մարդը կուդայ : Բայց շատ
չանցաւ տիսայ որ սպասուհի մ'էր եկողը : Քիչ
մը ետքընորէն ոտնաձայն մը լսեցի : Այս ըլ-
լալու է ըսի . բայց ասեկողն ալ մեծ մարդուն
անհեկապան ծառան էր : Վերջապէս Նորին
Մեծութիւնը երեւցաւ : « Դժւք էք այս նա-
մակը բերողը , հարցուց ինձի : — Այս , պա-
տասխանեցի խոնարհելով : — Ա՛ , ըսաւ , կի-
մացընէ ինձի թէ . . . այս . . . ուրեմն . . . »
Նոյն միջոցին ծառայ մը ներս մտաւ , տոմսակ
մը տուաւ անոր , եւ ան ալ առանց այլ եւս ին-
ձի ուշադրութիւն ընելու , սրահէն դուրս ե-
լաւ : Թողլով զիս որ երջանկութեանս վրայ
հանգիստ խորհրդածեմ : Աւ չտեսայ զինքը

մինչեւ որ սպասաւոր մը եկաւ ինձի ըսաւ թէ
Նորին Մեծութիւնը վար կիջնէ կառ քը նըս-
տելու : Խակոյն վար վաղեցի , եւ հոն ուրիշ եր-
կու ինձի պէս չնորհ ինդրող անձանց հետ
միացուցի ձայնս : Բայց Նորին Մեծութիւնը
խիստ արագ կերթար , եւ մեծ քայլափոխնե-
րով իր կառ քին քով կը համնէր , անանկ որ
պարտաւորեցայ կրցածիո չափ ձայնս բարձրա-
ցընելու , որպէս զի պատասխան մը ընդունիմ :
Այս միջոցին կէս ձայնով պատասխան մը մըր-
մըռաց որուն կէմն հազիւ կրցայ լսել . խօկ միւս
կէսը կառ քին անուոց շառաչմանը հետ խառ-
նուեցաւ : Հոն քիչ մը ժամանակ կհցայ՝ խօսք
հասկընալու ուշադիր եղող անձի մը պէս պա-
րանոցս եր ինցուցած , մինչեւ որ բոլորտիքս
նայելով ինքդինքս միայնակ գտայ Նորին Մե-
ծութեան դուռը : Ալ համբերութիւնս հատեր
էր : Կրած նախատինքներէս յուսահատած ,
միտքս դրի ինքդինքս գահավիժել , եւ միայն
զիհ մը կը պակսէր զիս գլխիվայր անոր մէջ
նետելու համար : Ինքդինքս այն խոտան կա-
րասիներուն կառ քը կը դնէի , զոր բնութիւ-
նըն իր պահարանին մէջ ձգած էր՝ մոռացու-
թեան ու անարդութեան մէջ կորսուելու հա-
մար : Սակայն քովս կէս կինէ մնացած էր , եւ
վախնալով որբազու զիս անկէց ալ չպրկէ , միտ-

Քըս դրի երթալ շուտով ծախսել՝ քանի որ ձեռն
քըս էր, և անկէ ետեւ ինքինքո դիմուա-
ծին յանձնել : Այս դիտաւորութեամբ ճանքայ
ելնելով, Պ. Քրիբարի յանձնարարական գրա-
պենեակին առ ջեւէն անցած ժամանակո՛ներս
մանելու հրապոյր մը եւկաւ բնձի : Այս գրասնն-
եակին մէջ Պ. Քրիբս մարդասիրաբար երգուն
լիրա տարեկան վարձ կը խոստանար այս ամեն
անգղիացւոց, որք իրենց ազատութենէն հը-
քամաբելով գերիփ պէս Անդրիկա տարուելու-
համէին, Բարեկազգ սեպեցի զիս այսողիաի տեղ
մը գտնելուս համար ուր կրնայի երկիւ զննելու
ցուսահատութեան, մէջ խզդել : Ուստի իրեն
նկուղը մտայ, վասն զի գրատունն այնչափ
մութ, խոնաւ և զաղիր էր որ նկուղ կրնար
կոչուիլ : Հօն բաղմաթիւ թշուառներ գտայ
ամենուն ալ վիճակիը իմինիս նման, որոնք Պ.
Քրիբարի գալուն կ'սպասէին՝ անգղիական ան-
համբերութեան ազգուու տեսարան մը ընծայե-
լով իրենց խրոխա հոգիները բաղդին հետ ա-
րաւելով, անոր անիրաւութիւններն իրենց
սրտերուն վրայ կը թափէին : Աերջապէս Պ.
Քրիբս վար իջաւ և ամեն տրտունջները դադ-
րեցան : Պ. Քրիբս մամնաւոր ուշադրութեամբ
մը բնձի նայեցաւ, և ամիսէ մը ՚ի վեր տեսած
մարդոցս մէջ առաջինն եղաւ որ զուարդ գէմ-

քով մը հետո խօսեցաւ : Քանի մը բան հարցուց ինձի եւ դտաւ .որ ամեն դործի յարմարութիւն ունէի : Ինձի դործ մը զանելու միջոցներուն վրայ քիչ մը խորհնելէ եաւ , ձեռքը ճակտին ղարձաւ : որպէս թէ միտքն իյնալով որ այն օրերը խօսք կար թէ թէնախրվանխայի սինադը գենապանութիւն մը սկիտի ղրկէր Եփաքառ ըսուած հնդիկներուն քով , եւ խոսացաւ : որ այն զեսպանութեան քարտուզարի սկաշտօնը ինձի առնել տալու ջանայ : Միտքս կը վկայէր սուտ ըլլալուն , սակայն ըրած խոստանունքը գեղեցիկ ըլլալուն պատճառաւ զիս բերկրեցուց : Աւստի կէս կինէս երկուքի բաժնեցի : կէսը Պ . Քրիբով երտուն հազար վրա հարատութեանն ընկեր ըլլալու գընաց , միւս կէսովն ալ որոշեցի դէմս ելած առաջին պինուսունը մտնելու դիս անկէ աւելի երջանիկ ընել : Երբոր այս զիտաւորութեամբ Պ . Քրիբովն կուղէն դուրս կելնէի , նաւապետ մը դէմս ելաւ . որուն հետ ժամանակաւ թեթեւ ծանօթութիւն մը ունէի , եւ հաճեցաւ ինձի ընկերակից ըլլալ գտւաթ մը ջերմօղի խմելու : Արհակս իրեն ծանուցի , եւ հաւասարեց որ Պ . Քրիբովն խոստմանցն ականջ կախելու վերջն աստիճան վնասակար էր ինձի , վասըն դիս այն խստամանց նպատակը զիս Ամերի-

Էացւոց վաճառել էր իրբնւ հողագործ դերի :
« Բայց, կը կարծեմ որ, ըստ, առանց այդ չափ
հեռուներն երթալու կրնաք դիւրութեամբ
ապրելու միջոց մը գտնել : Հաւատացէք ին-
ձի , վաղը նաւս ճանբայ պիտի ելնէ Ամսդըր-
տամ երթալու համար : Եկէք ձեզ ալ Ամսդըր-
տամ տանիմ , եւ հոն Հոլանտացւոց անգղիե-
րէն սովորեցուցէք . կը հաւասառեմ ձեզ , որ ոչ
աշակերտ կը պակսի ձեզ եւ ոչ ստակ : Կը
կարծեմ որ անգղիերէն լաւ գիտէք , ապա թէ
ոչ սատանան մէջ կը մտնէ : » Պատախանեցի
թէ կրնար այս մասին ապահով ըլլալ . բայց
տարակոյս ցուցը թէ արդե օք Հոլանտացիք
անգղիերէն սովորելու հետաքրքի՞ր էին : Երդ-
մամբ վստահացուց զիս թէ անգղիերէնի խենթ
էին : Վերջապէս իր տուած ապահովութիւն-
ներէն համոզուելով՝ հետեւեալ օրը նաւ մտայ
Հոլանտա երթալու եւ անգղիերէն դաս տալու
համար : Հողմը յաջող ըլլալով , ճանբանիս կարճ
եղաւ : Զգեստներուս կէսովը ճանբուս ծախ-
քը վճարելէ ետեւ , երկինքէն Հոլանտայի մնած
քաղաքներուն մէջ ինկած անծանօթի մը պէս
գտայ ինքզինքու Խեղճ եւ կարօտվիճակիս մէջ
պարապ ժամանակ անցունել չուղելով , դէմս
ելնող եւ պատուաւոր կերպարանք ունեցող
երկու երեք մարդոց մօտեցայ , բայց իրարու-

խօսք հասկընալ անհնարին եղաւ : Այս ժամանակ կրցայ մտածել որ Հոլանտացւոց անդ զիերէն սովորեցընելու համար պէտք էր որ նախ անոնք ինձի հոլանտերէն սովորեցընէին . Զարմացայ ես ինձի թէ ի՞նչպէս չէի կըցեր այսչափ պարզ բան մը մտածել . բայց ստոյգ է որ չէի մտածեր :

Այս յոյսս ալ պարապելնելէ ետեւ , ուզեցի շուտովնաւ նատիլ ու Անգղիա դառնալ . բայց իրլանտացի ուսանողի մը պատահելով , մէջերնիս գրականութեան վրայ խօսք բացուեցաւ . վասն զի պէտք է սա ալ հարեւանցի մը հասկցընեմ , որ երբ գրական նիւթոց վրայ խօսակցելու առիթ մը գտնէի , թշուտառութիւնս կը մոռնայի : Լուր տոււաւ ինձի թէ իր գացած համալսարանին մէջ երկու մարդ չկար յունարէն հասկըցող : Զարմացայ , եւ իսկոյն միտքս դրի Լուվին երթալ եւ հոն յունարէն դաս տալով ապրիլ : Այս խորհուրդս 'ի գործ դնելու զիս քաջալերեց ընկերս՝ հաւաստելով որ ոչ միայն կընայի ապրիլ , այլ եւ հարստանալ :

« Հետեւեալ օրը առաւօտուն ճանբայ եւ լայ յուսալից : Զգեստներուս բեռն օր քան գօր կը թեթեւնար Եզորոսի հացի զամբիւղին պէս , վասն զի քանի որ ճանապարհորդէի , օթեւանը վճարելու համար հանգերձներէս մէկը

կուտայիւ Երբոր Լումէն հասայ . չուզեցի հա-
մազարանին ուստրին կարգի դասատրւններուն
դիմել . այլ որոշեցի ուղղակի վերապեսչին Եր-
թալ եւ խմտաղանդս անոր առաջարկել . Գա-
ցի , քովն ընդունուեցայ , եւ ինքդինքս անոր
առաջարկեցի իրին յունարէնի դասապուտ Վե-
րատեսուչը նախ տարակոյս ցուցուց իմ հըմ-
տութեան վրայ . բայց ես՝ զինքը շուտով հա-
մոզելու համար՝ առաջարկեցի իր ընտրած որ
եւ իցէ յոյն հեղլինակէն երես մը բան լատինեւ-
րէնի թարգմաննել իր առջեւը ։ Երբոր տեսաւ
որ լրջութեամբ կը խօսիմ , հետեւեալ պա-
տասխանը տուաւ ինձի . « Կը տեսնէք , պա-
տանի , որ ես բնաւ յունարէն չեմսովրած , եւ
երբէք ալ պէտք ունեցած չեմ անոր . վար-
ժապետութեան խոյր եւ պատմունան ստա-
ցայ առանց յունարէնի . տարին տասն հազար
ֆիորին եկամուտ ունիմ առանց յունարէնի .
լաւ կուտեմ լաւ կը խօսեմ առանց յունարէնի .
Վերջապէս բնաւ յունարէն չեմ գիտեր , եւ
չեմ ալ կարծեր որ բանի մը պէտք ըլլայ : »
« Հայրենիքէ՞ շատ հեռու ըլլալով ետ
դառնալը դժուար էր ինձի . ուստի միտքա
դրի յառաջ երթալ . Գիչ մը երաժշտութիւն
գիտէի , եւ ձայնս ալ դէշ չէր . ուստի ժամաս-
նակաւ զբօսանքս եղած բանն ապրուատի մի-

ջոց մը ըրի ինձի ։ Ֆլամնտրիայի այն մասով պը տրտեցայ ուր դեղացին և րն աղքատեւ ուրախ էին . վասն զի միշտ դիտեցի թէ որչափ աւելի թշուառ էին , այնչափ աւելի զուարթ էին . Նրբոր իրիկուան դէմ զեղացի մը տանը մօտենայի , խմամննէն զուարթ եղանակներէս մէկը կը նուագէի . ասով ոչ միայն գիշերուան օթեւան կը գտնէի , այլ եւ հետեւեալ աւուր պարէնս ալ կը հայթայթէի : Մէկ երկու անդամ փորձ փորձեցի վեր կարդի անձանց համար նուագէլ , բայց չհաւնեցան եւ ինձի դանկ մը չտուին : Այս բանը չառ զարմացուց զիս . վասն զի ժամանակաւ երբոր իմ զուարճութեանս համար կը նուագէի , ամեն մօրիկ ընդուները կ'զմայլէին , մանաւանդ տիկնայք . բայց հիմա ապրուստի միակ միջոց ըլլալուն համար չէր հաւնուէր . ասի ապացոյց մ'է , որ ապրուստի միջոց եղած տաղանդները մարդոց առ ջեւ յարդ չեն ունենար :

« Այս կերպով Փարիզ հասայ քաղաքը տեմնելու եւ ետ դառնալու դիտաւորութեամբ : Փարիզի ժողովուրդն աւելի կը սիրէ ստակ ունեցող օտարականները՝ քան թէ խելք ունեցողները , Ես երկուքէն ալ զուրկ ըլլալով , կրնաք երեւակայել թէ լաւ ընդունելութիւն մը չդաայ , Զորս հինդ օր քաղաքին

մէջ պտըտելէ եւ ամննէն գեղեցիկ տուները
դուրսէն տեսնելէ ետեւ , երբոր կը պատրաս-
տուէի մեկնիլ այն քաղաքէն՝ ուր հիւրընկա-
լութիւնը շահասիրութեան նիւթ մ'է , գլխա-
ւոր փողոցներուն մէկէն անցած ժամանակու-
մեր հօրեղբօրորդւոյն պատահեցայ որուն
յանձնարարական գիր գրած էիք ինձ համար :
Իր հանդիպումը մեծ ուրախութիւն պատճա-
ռեց ինձի , եւ իմս ալ կարծեմ անհաճոյ չեղաւ
իրեն : Փարիզ երթալուս պատճառներն հար-
ցուց ինձի , եւ իմացուց որ ինքը հոն պատկեր-
ներ , շքադրամներ , քանդակներ եւ ամեն տե-
սակ հնութիւններ հաւաքելու կ'զբաղէր լոնտ-
րա բնակեալ անձի մը համար , որ յանկարծակի
մեծ հարստութեան եւ ճաշակի տէր եղեր էր :
Հօրեղբօրորդւոյս այսավիսի պաշտօնի մը հա-
մար ընտրուած ըլլալը զիս շատ զարմացուց ,
վասն զի քանի մը անգամ ինք ըսած էր ինձի
թէ այս տեսակ բաներու բնաւ ծանօթութիւն
չունէր : Երբոր հարցուցի իրեն թէ ի՞նչպէս
կրցեր էր քիչ ժամանակի մէջ ճանաչող ըլլալ ,
պատասխանեց թէ անկէ դիւրին բան չկար ,
բոլոր գաղտնիքը երկու կանոնի վրայ կը կա-
յանար . առաջինն էր՝ միշտ դիտողութիւնը
նել թէ պատկերը կրնար աւելի գեղեցիկ ըլ-
լաւ թէ որնկարիչն աւելի ուշագրութեամբ

աշխատած ըլլար . երկրորդն էր Բիէթրօ Բէ-
րուճինօի շինած պատկերները գովել : « Բայց ,
ըստ , որովհետեւ ժամանակաւ քեզի Լոնտ-
րայի մէջ մատենագիր ըլլալու ճանրան սով-
րեցուցեր եմ , հիմա ալ ֆարիզի մէջ պատկեր-
ներ գնելու արուեստը սովորեցընեմ : »

« Հաճութեամբ ընդունեցի իր առաջար-
կութիւնը , վասն զի այս ալ ապրուստի միջոց
մ' էր , եւ իմ վնոտուածս ալ ապրուստ էր : Աւս-
տի իւր բնակարանը գացի , իր օդնութեամբը վրաս
վլուխա շտկեցի , եւ հետը պատկերի վա-
ճառանոցը գացի՝ ուր անդղիացիներ կ'սպաս-
ուէին գնելու : Մեծ եղաւ զարմանքս՝ երբոր
տեսայ որ հօրեզքօրորդիս մեծամեծ ազնուա-
կաններու ծանօթ եղեր էր , որոնք ամեն մէկ
պատկերի կամ հնութեան վրայ անոր դատո-
ղութիւնը կուղէին իմանալ՝ իրբեւ անսխալ եւ
ամենակիրթ առաջնորդի մը : Իմներկայութե-
նէս ալ մեծ օգուտ կը քաղէր . վասն զի երբոր
իր կարծիքն հարցընէին , լրջաբար զիս մէկ
կողմ կառնէր , ուսերը վեր կը վերցընէր , բա-
րակ մը կը դիտէր , եւ յետոյ կը դառնար ընկե-
րութեան կըսէր թէ այսպիսի կարեւոր գործի
մը վրայ չէր կրնար իր կարծիքը տալ : Սակայն
երթեմն այսպիսի առիթներ կը պատահէր՝ ուր
աւելի յանդուգն լրբութիւն մը պէտք կըլլար :

Առքէս չելներ որ անգամ մը պատկերի մընը-
կարին համար ու բաւական փառիիւն չունի ։
Ըսեղով , վատահութեամբ վրձին մը եւ մուբ
գոյն վերնիճ մը առաւոր դեպուածով հոն դըր-
ուած էր , եւ հանդարտութեամբ պատկերը
շիեց ընկերութեան առջեւ . յետոյ հարցուց
թէ զայներն աւելի շգեղեցկացմն իր այս գոր-
ծողութեամբը :

Ո Փարիզի մէջ իր պաշտօնը լմնցընելէ ե-
տեւ , զիս հոն թողուց՝ յանձնարարութիւն ը-
նելով բազմաթիւ երեւելի մարդոց թէ ճանա-
պարհորդութիւն ընել ուզող անփորձ պատան-
եաց կառավարիչ ըլլալու խիստ քաջայարժար
էի , եւ ժամանակէ մը ետեւ սոյն պաշտօնին
գործածուեցայ Անդիացիէ մը՝ որ իր աշակեր-
տը Փարիզ տարեր , հոնկէց ալ Եւրոպայի ամեն
կողմը պտըտելու կը դրկէր : Եւստի պատանիին
կառավարիչ ընտրուեցայ օա պայմանուա որ
միշտ իր ուզած կերպովը պիտի կառավար-
ուէր : Եւ արդարեւ , աշակերտու ինէ չատ աւե-
լի հմտութէ իր խնայութեան արուեստին : Երկու
հարիւր հազար լիրա հարատութիւն ժառանգեր
էր Արեւելեան Հարկաստանի մէջ մեռնող հօ-
ռեզօքի մը , եւ իրինասմակալներն ալ՝ իր հա-
ըստութիւնը կառավարելու վիճակի մէջ զա-
նի ոնելու համար գուստուանական գործա-

կալի մը քով գրեր էին . ասանկով կծծութիւն
նըն իր գլխաւոր մոլութիւնն եղեր էր : Ճան-
բան իր բոլոր առած տեղեկութիւնները ինաւ-
յութեան միջոցներու եւ քիչ ծախքով ճանա-
պարհորդելու վրայ կը դառնար , եւ այնպիսի
վաճառքներ կը բնաըռէր , զորոնք արժան գը-
նելով Առնտրա զրկէր ու հոն շահով վաճառել
տար : Բաւական ճաշակ ունէր ճանբուն վրայ
գտնուած հետաքրքրական նիւթոց համար
եթէ կրնար ձրի տեսնել . բայց երբոր բան
մը վճարել պէտք էր , սովորաբար կը հաւաս-
տէր թէ տեսնելու արժանի բաներ չէին : Ամեն
անգամ ծախուց հաշուեցուցակ մը իրեն ներ-
կայացուած ատեն , կը գանգատէր թէ ճանա-
պարհորդութեան մէջ ծախքը տեռ քսանեւմէկ տա-
ռու չկար : Երբոր Արքունօ գացինք , նաւահան-
գըստին վրայ պարտած ժամանակնիս հասկընալ
ուզնց թէ հոնվից ծովով Անգղիա երթալու հա-
մար որչափ ծախք կերթար : Իմանալով որ
ցամաքի ծախքին հետ բաղդատելով ոչ ինչ
բան մ'էր , չկրցաւ ինքզինք բռնել : Ուստի
արդէն բանած վարձուս փոքրիկ գումարն ին-
ձի վճարելով զիս թողուց եւ միայն մէկ ծա-
ռայովնաւ նստաւ Առնտրա երթալու համար :

« Այսպէս նորէն լքեալ մնացի աշխարհէ »

մէջ առանց ապրուստի , բայց արդէն վար-
ժուած էի չքաւորութեան : Երաժշտական տա-
ղանդս չէր կրնար ինձի ծառայել այնպիսի երկ-
րի մը մէջ՝ ուր յետին գեղացին ինէ ճարտար
երաժիշտ էր : Այն ժամանակներն ուրիշ տա-
ղանդ մը ձեռք բերեր էի որ կրնար նոյնպէս
լաւ կերպով ինձի ծառայել . այն է վիճաբա-
նելու ճարտարութիւն : Եւրոպայի ամեն հա-
մալարաններուն ու վանքերուն մէջ սահման-
եալ օրեր կան՝ ուր փիլիսոփայական խնդրոց
վրայ հակածառութիւններ կըլլան , եւ երբոր
հակածառողը ճարտարութիւն ցուցընէ , ար-
ծաթեայ փոքրիկ ընծայ մը , ճաշ մը կամ գի-
շերուան անկողին մը կը տրուի իրեն : Այս մի-
ջոցով Խտալիայէն մինչեւ Անգղիա ճանապար-
հորդեցի , քաղաքէ քաղաք երթալով , մար-
դիկ մօտէն քնննելով , եւ կրնամ ըսելթէ պատ-
կերին երկու երեսն ալ տեսայ : Սակայն դիտո-
ղութիւններս շատ չկրցան ըլլալ : Տեսայ որ
միապետութիւնները լաւագոյն կառավարու-
թիւնն են աղքատաց համար . հասարակապե-
տութիւնն ալ հարուստներուն համար : Տեսայ
որ ամեն երկրի մէջ հարստութիւնը անուն մ'է
որ ազատութեան տեղը կը բռնէ . եւ չկայ ա-
զատասէր մարդ մը՝ որ քանի մը մարդոց՝ կամ-
քըն իր կամացը հնազանդեցընել չուզէ ,

«Երբոր Անգղիա հասայ , կուզէինախ գալ
ձեզ տեսնել , եւ յետոյ կամաւոր զինուորու-
թեան մտնելով գուրս երթալ . բայց ճանրան
դիտաւորութիւնս փոխուեցաւ հին ծանօթնե-
րէս մէկուն պատահելով , որ կատակերգակ-
ներու խումբի մը անդամէր , եւ ամառը գե-
ղերը կերթային կատակերգութիւն խաղա-
լու : Խումբը չդժկամակեցաւ զիս ալ անդամ
ընդունելու , բայց դերասանները միաբերան
հասկըցուցին ինձի , որ կատակերգակ դերա-
սանութիւնը դիւրին գործ չէր . ըսին թէ հա-
սարակութիւնը բազմադիմսի ճիւաղ մ'է , թէ
անոր հաճոյ ըլլալու համար լաւ գլուխ մը ու-
նենալու է , թէ խաղալ սովորիլը մէկ աւուր
գործ չէ , եւ թէ առանց ուսերս շարժելու , որ
հինաւանդ սովորութիւն մ'է եւ հարիւր տարիէ
՚ի վեր թատրոններու վրայ կը գործածուի , ան-
հընար է հաճելի ըլլալ : Ուրիշ գժուարութիւն
մ'ալ ինձի համար դեր որոշելը եղաւ , վասն զի
գրեթէ ամեն դերերն ալ բաժնուած էին : Ուս-
տի ժամանակ մը զիս դերէ դեր պտացուցին ,
մինչեւ որ վերջապէս որոշեցին Ռվասիոսի
դերը տալ , զոր ձեր ներկայութիւնը բարե-
բաղդաբար զիս արգիլեց խաղալէ :

ԳԼՈՒԽ ԻԱ :

ԱՐԵ ԽԵՐԵՐԵՒՆ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ

Հ-ՏԱԿ ԳՐԱԿ :

Որդւոյս ըրած պատմութիւնը շատ երկար
ըլլալով մէկ անգամուն չկրցաւ լմննալ : Առ
աջին մասն իրիկունը պատմեր էր, երկրորդն
ալ հետեւեալ աւուր ճաշէն ետեւ լմնցընելու
վրայէր, երբոր Պ. Թօրնհիլի կառքն ու ծա-
ռայները դրանն առջեւ համնելով ընկերու-
թեան ընդհանուր հաճութիւնն ընդմիջեցին :
Մառանապետը՝ որ ինձի բարեկամ եղեր էր,
ականջէս ըստ թէ ասպետն ամուսնութեան
առաջարկութիւնըրեր էր Ախմօթ օրիորդին,
եւ թէ հօրեզրայրն ու հօրաքոյրը բոլորով սըր-
տիւ հաճութիւն տուած կերեւէին նոյն առա-
ջարկութեան : Պ. Թօրնհիլ ներս մտած ժա-
մանակը՝ զիս եւ որդիս տեսնելուն պէս ընկըր-
կեցաւ . բայց ես իրայս շարժումն աւելի մեզ
հոն տեսնելով զարմանալուն առօի քան թէ
դժոհ ըլլալուն : Այսու ամենայնիւ, երբոր
յառաջ դացինք զինքը ողջունելու, վերջին

աստիճան անմեղ դէմքով մը մեր ողջոյնն ընդունեց , եւ քանի մը վայրկենի մէջ ակումբին զուարթութիւնը գիտեա թէ աւելցաւ անոր նորկայութեամբը :

Թէյէն ետեւ զիս մէկ կողմ առաւ եւ աղջկանս վրայ լուրեր հարցուց : Երբոր իմացուցի իրեն թէ խուզարկութիւններս ընդունայն եղեր էին , չափէ դուրս զարմանք ցուցուց եւ յաւելցուց թէ տունէն մեկնելէս ետեւ քանի մը անգամ ընտանիքու միսիթարելու գացեր է եւ քաջառողջ վիճակի մէջ են եղեր : Յետոյ հարցուց ինձի թէ գլխուս եկած փորձութիւնը Վիլմօթ օրիորդին եւ որդւոյս իմացուցեր էի : Երբոր պատասխանեցի թէ տակաւին չէի ըստած , գովեց իոհեմութիւնս , եւ խրատ տըւաւ որ չյայտնեմ անոնց : « Վասն զի , ըստ , անոր անպատուութիւնն հրապարակելէ զատ ուրիշ քանի չծառայեր , եւ օրիորդ Օլիվիա ակ կրնայ կարծուածին չափ մեղապարտ չըւլալ : » Այս միջացին ծառայ մը եկաւ իմացուց ասպետին թէ ընդդիմապար խաղալու համար զինքը կը խնդրէին : Ուստի զիս թողուց զնաց , եւ ես շատ գոհ եղայ վշաացսցուցըցած կարեկցութենէն : Ասկայն օրիորդ Վիլմօթիննկատմամբ ցուցըցած ու շաղըութիւնն ու հանապազորդութիւնն աչքի զարնելու եւ սիստ չհասկը-

նալու չափ նշանաւոր էին . այսու ամենայնիւ
Օրիորդը խիստ գոհ չէր երեւնար , եւ աւելի
կը թուէր թէ իր հօրաքեռ սիրտը չկոտրելու
համար կը հանդուրժէր անոնց՝ քան թէ իր սըր-
տին ուղելովք . Մինչեւ անդամ հաճութեամբ
կը նշմարէի որ ծածկաբար դորովալից նայ-
ուածք մը կը նետէր դժբաղդ որդւոյս վրայ .
եւ ասոր շարժառիթը ոչ որդւոյս հարստութիւ-
նը կրնար ըլլալ եւ ոչ հանապազորդութիւնը .
Սակայն Պ . Թօրնհիլի ցուցըցած արտաքին
հանդարտութիւնը զիս կը զարմացընէր : Ար-
դէն շաբաթ մը կար որ այն տունը մնացեր է-
ինք Պ . Արնօլտի թախանձանօքը . բայց քա-
նի որ Վիլմօթ օրիորդին որդւոյս վրայ ցուցը-
ցած գորովը կաւելնար , այնչափ ալ կը թուէր
թէ Պ . Թօրնհիլի բարեկամութիւնը կաւելնար
որդւոյս վրայ :

Արդէն ուրիշ անդամ ալ բարեկամաբար
խոստացեր էր մեզ օդտակար ըլլալու համար ա-
մեն ձեռքէն եկածն ընել . բայց աս անդամիր
ազնուասրտութիւնը լոկ խոստմունքը բաւա-
կան չսեպեց . Մեկնելու օրուանս առտուն Պ .
Թօրնհիլ եկաւ ուրախութեամբ իմացուց ինձի
թէ իր Գէորգ բարեկամին համար լաւ պաշտօն
մը գտած էր , այն է Հնդկաստան գացող զօրաց
գունդի մը դրօշակրի պաշտօնը՝ որուն համար

երեք հարիւր լիրա վճարել հարկ էր, բայց հարիւր լիրայի լմնցուցեր էր : «Այս ըրածս, ըսաւ, շնչին ծառայութիւն մ'է» որուն համար ուրիշ զարձ չեմ ուզեր՝ բայց միայն բարեկամիս ծառայութիւն մը ըրած ըլլալու բերկրութիւնը . իսկ վճարուելիք հարիւր լիրային գալով, եթէ հիմա աալու ժամանակ չունիք, ես կուտամ, եւ դուք ալ երբ դիւրութիւն ունենաք, ինձի կը վճարէք: » Որդիս և ես բաւական խօսք չկրցանք դտնել այս մեծ շնորհին համար ըզգացած երախտագիտութիւննիս իրեն յայտնելու, Մուրհակ մը զրեցի տուփ հարիւր լիրայի, եւ բոլորովին ինձի շնորհածի չափ շընորհակալութիւն ըրի իրեն :

Գէորդս հետեւեալ օրը Լոնդրա պիտի երթար իր պաշտօնն ապահովցընելու . վասն զի իւր ազնուասիրտ պաշտպանը կըսէրթէ առանց յագաղելու շուտով երթալ պէտք էր, որպէս զի ուրիշ մէկը չերթար եւ աւելի շահաւէտ պայմաններ առաջարկելով գործը շյափըշտակէր : Ուստի հետեւեալ առաւտուն դեռահասակ պաշտօնակալը կանուխ ճանքայ իլնելու պատրաստուեցաւ, եւ կը թուէր թէ իր միկնելուն վրայ միայն ինքն էր որ չէր տրամիր : Ոչ յանձն առած յոզնութիւններն ու վախճանները, ոչ իր բարեկամներէն բաժա-

նումը , եւ ոչ իր սիրուհին թռղուլը (վասն զի) Ախլմօթ օրիորդը զանի յայտնապէս կը սիրէր) զինքը շարամնցուցին . Երբոր հրաժարական ողջայնը տուաւ ամենուն , ես ալ ունեցած տուի իրեն , այն էր օրհնութիւնս : Ահա , որդեմակ գոչեցի , հայրենեացդ համար պատերազմելու կերթաս : Միտքդ բեր քու արի պապդ . որ թագաւորին նուիրական անձը պաշտպանելու համար քաջութեամբ կռուեցաւ , այնպիսի ժամանակ մը՝ ուր թագաւորին հաւատարիմէնակն առաջնութիւն մ'էր Անգղիացւոց մէջ : Գնա , որդեմակ , անոր նմանէ ամեն բանի մէջ , ՚ի բաց առեալ անոր կրած դըժքաղդութիւնն երը . եթէ դմբաղդութիւն էր լորտ ֆալքլանտի հետ մեռնիլը Գնա , որդեմակ , եթէ պատերազմի մէջ մեռնիս , հայրենիքէդ հեռու , երեսի վրայ . եւ առանց քու սիրելի ընտանիքէդ լացուելու , միտքդ բեր որ ամենէն պատուական արտսուքն այն է զոր երկինք կը ցողէ արի պատերազմոզի մը անթագ մարմնոյն վրայ ։

Հետեւեալ առաւօտուն քամեռնեցայ այն ազնիւ ընտանիքէն որ զիս այնպէս մարդուի ըութեամբ երկար ժամանակ հիւրընկալերէր . զմուցայնաեւ նորէն չնոր հակալութիւնս յայտնելու Պատուակամու-

թեանը համար ։ Թողուցի զանոնք ամենն ալ
իրենց բարեկեցութեանը մէջ՝ զոր լիութիւնը
կրնայ հայթայթել , եւ սանս ճանբան բռնե-
ցի աղջիկս դանելէ յուստահատած , բայց հա-
ռաչանք արձակելով եւ երկիրքէն անոր մե-
ղացը թողութիւն խնդրելով ։ Տունէս տասն
մղոնի չափ հեռու ըլլալով . ձի մը վարձեցի ,
վասն զի գեռ տկար էի , եւ կը միսիթարուէի .
յուսալովոր մօս ժամանակէն իմ ամենասիրե-
լիներս պիտի տեսնէի . Բայց գիշերը վրայ դա-
լով ճանբուն վրայ վոքրիկ պանդոկ մը իջայ ,
եւ խնդրեցի պանդոկապետէն որ հետո շիշ մը
գինի խոմէ . Խոհարանի կրակին առջեւ նըս-
տանք , որ տանը լաւագոյն ռենեակն էր , եւ
քաղաքականութեան ու երկրին վերաբերեալ
զանտգան լուրերու վրայ խօսակցեցանք ։ Շատ
խօսքերէ ետեւ երիտասարդ Թօրնհիլ առպե-
տին վրայ խօսք բացուեցաւ , որուն համար
պանդոկապետն ըստու թէ երկրին մէջ ամենուն
ատելի էր . մինչդեռ իր հօրեղբայրը՝ որ ժամա-
նակ ժամանակ այն կողմերը կուգար՝ ամենուն
սիրելի էր . Ըստու թէ երիտասարդ ասպետին
գլխաւոր եւ միակ զրադմունքն էր մտած ե-
լած տուներուն աղջիկները դլիսէ հանել , եւ
երկու երեք շաբաթ զանոնք դործածելէ ե-
տեւ առանց ամենասփոքը վարձատշութեան

երեսի վրայ թողուլ : Այս խօսքերն ըրած ժամանակնիս՝ պահպակապետին կինը՝ որ ստակ քերելու դացեր էր, ներս մտաւ, եւ տեսնելով որ իր այրը դինի խմելու զուարճութեան զբաղած էր առանց իր ընկերակցութեանը, քարկանալով հարցուց թէ ի՞նչ կընէր . այրն ալ զանի հեղնելով կենացը համար դինի մը խմեց : « Պ. Սիմոնոս, գոչեց կինը, գունչառ գէշ կը վարուիս ինձի հետ. ալ համբերելու կարողութիւնս չմնաց : Գործին երեք չորրորդն իմ վրայ կը թողուս, եւ մնացած մէկ չորրորդն ալ չկատարուիր. իսկ դուն առտուընէ մինչեւ իրիկուն եկող գացողին հետ խմելու կը բաղիս, մինչդեռ ես տենդիս համար դրդալ մը գինի խմելու կարօտեմ, եւ կաթիլ մ'անգամ չես տար : » Հասկրցայ միտքը, եւ իսկոյն գառաթ մը գինի լցուցի տուի իրեն, որ յարգանօք առաւ եւ կինացս համար խմեց : « Տէր իմ, ըստ այսուհետեւ, իմ նեղանալս գինիին համար շէ . բայց կրնայ մէկ մարդ մը զուարթ ըլլալ երբոր ամենն բան ձախորդ կերթայ տան մը մէջ: Յաճախորդներէ կամհիւրերէ ստակ պահանջելու դործն իմ վրաս է . իսկ այրս՝ աւելի յանձն կառնու սա գաւաթն ուտել՝ քան թէ բան մը ընելու համար տեղէն շարժիլ : Վերը գեռահասակ կին մը կայ, որ հոս օթե-

ւանելու եկած է , եւ չեմ կարծեր որ իր այն-
չափ փտափուի քաղաքավարութիւններուն հետ
ստակ ալ ունենայ : Քաջ գիտեմ որ իր ստակը
երկար ժամանակ դալիք չունի , կուզեմ որ
ճարը նայել տամ իրեն : — Ի՞նչ ըսել է ճարը
նայել տալ . ըսաւ պանդոկապետը : Ստակին
գալը կուշանայ , բայց ապահով է : — Ես այդ
չեմ զիտեր , ըսաւ կինը . իմ գիտցածս սա է որ
տասնեւհինդ օրէ ՚ի վեր հոս է , եւ դեռ ստա-
կի երես չտեսանք : — Ըսել է որ , սիրելիս ,
ըսաւ պանդոկապետը , ամենը մէկէն պիտի
ստանանք : — Ամենը մէկէն մի , գոչեց կինը .
Ես կուզեմ որ ինչ կերպով որ ըլլայ՝ ստանանք,
եւ միտքո դրած եմ որ այս իրիկուն անպատ-
ճառ ստակիներն առնում , ապա թէ ոչ պիտի
վոնտեմ : — Բայց կնիք ըսաւ պանդոկապետը ,
այդ կինն հասարակ կին մը չերեւիր . պէտք է
ակնածութեամբ հետը վարուիլ : — Ո՛հ , ըսաւ
կինը , պատուաւոր կամ հասարակ , աղնուա-
կան կամ անազգի . ինչ կըլլայ ըլլայ՝ պիտի
վոնտեմ : Շնորհքով մարդիկ կրնան խիստ պար-
կեշտ անձինք ըլլալ երբոր կը գննն ու ստակն
անմիջապէս կը վճարեն . բայց ես մեծ շահ մը
չեմ անսած անոնցմէ : Այսխօսքն ըսելով , վա-
զեց ՚եղ սանդուղքէ մը խոհարանին վրայի
սենեակն ելաւ , եւ շատ չանցած նշմարեցի իը

բարձրագոչ աղաղակներէն եւ կծու կշտամ-
բանքներէն որ ստակ չկար : Կլնայի որոշ կեր-
պով լսել իր խօսքերը : « Շուտով դուրս եւ
ասկէց , թշուառական , դուրս ել , ապա թէ
ոչ քեզի ծեծ մը կուտամ որուն ցաւը երեք
ամիս չես մոռնար : Ի՞նչպէս , կեղծաւոր , ա-
ռանց դանկ մը ունենալու կուդասայո պար-
կեշտ տունը կը բնակիս : Վար իջիր կըսեմ
քեզի : — Ո՞հ , սիրելի տիկին , կը գոչէր կինը ,
ողորմէ ինձի , ողորմէ այս գիշերալ թշուառ
արարածի մը . մահը շուտով քեզ կազատէ ի-
նէ : » Խակոյն ճանչեցի դժբազդդ Օլիվիայիս
Ճայնը : Օդնութեան վազեցի եւ պանդոկապե-
տին կնոջը ձեռքէն առի , որ մազերէն բոնած
սանդուղքն 'ի վար կը քաշէր , եւ տարաբաղդ
սիրելի կորուսեալը թեւերուս մէջ առի : « Բա-
րի եկար , հազար բարի եկար խեղճ ծերունի
հօրդ թեւերուն մէջ , սիրելիս , զանձո , գոչի
ցի : Թէ եւ մոփիները քեզ երեսէ թողուն , սա-
կայն աշխարհի մէջ մէկը կայ որ քեզ չպիտի
մոռնայ երբէք : Թէ եւ հազար յանցանք ու-
նենաս , ամենն ալ կը ներէ : — Ո՞վ սիրելի . . .
(քանի մը վայրկեանի չափ չկրցաւ աւելի ըսել)
սիրելի հայրիմ , հրեշտակները կրնային քենէ
աւելի քաղցր ըլլալ : Ի՞նչպէս կրնամ այդ չափ
քարեարտութեան արժանի ըլլալ : Դաւանա-

նը , կատեմ , բայց զիս ալ կատեմ ձեզի ամօթ
եւ նախատինք ըլլալուս համար : Զէք կրնար
ինձի ներել , ոչ : գիտեմ որ չէք կրնար ներել
— Այս , դաւակս , բոլոր որտավս կը ներեմ .
միտյն զղջա , եւ ամենքս ալ երջանիք կըլ-
լանք , ու տակաւին բերկրապի օրեր կը տես-
նենք , սիրելի Օլիվիաս : — Ո՞հ , երբէք , եր-
բէք , սիրելի հայրիկ իմ թշուառ կենացս մը-
նացուածը տան մէջ ամօթ եւ օտարաց առջեւ
նախատինք պիտի ըլլայ : Բայց հայրիկ , սովո-
րականէն աւելի դժգոյն կերեւիք . արդեօք
ես եմ պատճառը . ձեր իմաստութիւնը չնե-
րեր անշուշտ որ իմ յիմարութեանցս համար
ինքզինքնիդ պատժէք : — Մեր իմաստու-
թիւնը , դեռահաս աղջայ , պատասխանեցի . . .
Ո՞հ , սիրելի հայր իմ , գոչեց աղջիկս , այս ա-
ռաջին անդամն է որ զիս այդպէս կը կոչէք :
— Ներում կը խնդրեմ , սիրելիս , պատասխա-
նեցի . ըսել կուզէի թէ իմաստութիւնը տկար
ապաւէն մ'է վշտաց դէմ , թէ եւ ՚ի վերջոյ
ապահով է : »

Այս միջոցին պանդոկապետին կինն եկաւ
հարցուց մեզի թէ աւելի լաւ սենեակ մը կու-
զէի՞նք . ես ալ հաճութիւն տուի , եւ առաւ
մեզ սենեակ մը տարաւ ուր կրնայինք աւելի
աղատութեամբ խօսակցիլ : Գորովանաց խօս-

քերով սրտերնիս համդարտելէ ետեւ, աղջիկ-
նէս համար պահանջեցի այն ամեն պարագա-
ներուն վրայ որ զինքը ներկայ թշուառ վիճա-
կին հասուցեր էին : « Ո՞հ , ըստեւ . նենդաւո-
րը՝ դիս առաջին անգամ տեսած օրէն սկսեալ՝
դաղտնի բայց պարկեշտ առաջարկութիւններ
ինձի ըրաւ : »

« Ստուգիւ նենդաւոր մարդ մէէ եղեր .
գոչեցի : Սակայն կը զարմանամ թէ Պ . Պրչէլի
պէս խոհական եւ այնչափ ալ պատուաւոր ե-
րեւոյթ ունեցող մարդ մը ի՞նչպէս կրցաւ դիտ-
մամբ այդպիսի վատութիւն մը յանձն առնուլ .
իւ մեզ անպատուելու համար տուներնիս մը-
տաւ : »

« Աիրելի հայր իմ , ըստեւ աղջիկս , զար-
մանալի սխալման մը մէջ էք . Պ . Պրչէլ եր-
բէք զիս հրապուրել ուզած չէ . ընդհակառա-
կըն ամեն առթիւ ինձի առանձնակի կ'զգու-
շացընէր Պ . Թօրնհիլի հնարիմացութիւննե-
րէն , եւ հիմա հասկըցայ որ նկարագրածէն
շատ աւելի գէշէ եղեր : — Պ . Թօրնհիլը . ի՞նչ
կըսես , աղջիկս , գոչեցի : — Այո , սիրելի հայր.
իմ , պատասխանեց , Պ . Թօրնհիլ հրապուրեց
զիս , ան զրկեց երկու տիկնայքը , ինչպէս որ
ինք կը կոչէր . բայց իրօք երկու անպարկեշտ
եւ ցոփակեաց կանայք էին , անխիղճ եւ առ

ռանց կրթութեան , որպէս զիս զիս լոնարա
երթալու հրապուրեն : Անոնց բանեցուցած
վարպետութիւնները պիտի յաջողէին : ևթէ
Պ . Որչէլինամակը չըլլար , որ զանոնք խստիւ
կը կշտամբէր , և մենք այն կշտամբանքը մեր
վրայ առինք : Ի՞նչպէս կրցաւ անոնց խոր-
հուրդը ցըել , գեռ յայտնի չէ ինձի . միայն սա
գիտեմ որ մեր ամենէն ջերմու անկեղծ բա-
րեկամն եղած է միշտ : »

Զիս կ'ապշեցընես , սիրելիս , դոչեցի . բայց
կը տեսմնեմ հիմա որ Պ . Թօրնհիլի վատութեա-
նը վրայ ունեցած առջի կասկածներս անհիմն
չեին : Սակայն կրնայ անպատուհաս զլուխ
ենել . վամն զի ան հարուստէ և մենք աղ-
քատ : Բայց , ըսէ ինձի , որդեմակ , քեզի ե-
ղած հրապոյրն անչուշտիստ մեծ և ազդու
ըլլալու էր , որ կրցաւ ստացած լաւ դաստիա-
րակութեանդ տպաւորութիւններն ու առա-
քինական բարի տրամադրութիւններդ այդ-
պէս քեզի մոռցընել : »

« Ճշմարիտը խօսելով , սիրելի հայր իմ ,
պատասխանեց , անոր հրապուրանաց յաջո-
ղելուն պատճառը՝ ինչ աւելի զինքը երջանիկ
ընելու բաղձանքս եղաւ : Գիտէի որ մեր ա-
մուսնութեան արարողութիւնը՝ գաղտնաբար
պապական քահանայի մը ձեռօք կատարուե-

լուն համար՝ վաւերական չէր, եւ ես միայն իր
պատուայն ապաւինած էի . — Ի՞նչ կը ուն .
դոչեցի խօսքը կարելով, դուք հիմա օրինա-
ւոր քահանայի մը ձեռօք պսակուած էք .
— Այս, հայրիկ, պատասխանեց աղջիկս .
թէ պէտ երկուքս ալ երդում ըրած ենք որ ա-
նունը չյայտնենք : — Ուրեմն որդեակ, եկա-
քեզ նորէն թեւերուս մէջ գրկեմ, եւ առաջ-
ուանէն հազար անգամ աւելի բարի եկար .
Ջամն զի հիմա դուն անոր կինն ես, օրինաւոր
կինն ես կրօնից առջեւ, եւ ամեն մարդկային
որէն քները՝ թէ եւ անդ ամանդէ տախտակնե-
րու վրայ գրուած ըլլան՝ չեն կրնար այդ նը-
սիրական կապինուրբութիւնը տկարացընել : »
Աւաղ, հայրիկ, ըստաւ, անոր ըրած ամեն
վատութիւնները չեք գիտեր : Ուրիշ վեց կատ
ութ կանայք ալ հրապուրեր, նոյն քահանա-
յին ձեռօք հետեւնին պսակուեր, ետքնալ
ինձի պէս ձգեր է : »

Այդ պէս է, դոչեցի . ուրեմն այդ քահա-
նան կախել տալու է . պէտք է որ վաղը տմ-
րատանութիւն ընես անոր դէմ: Բայց, հայ-
րիկ, պատասխանեց, ի՞նչ պէս կրնամայդ բա-
նը ընել, երբոր ծածուկ պահելու համար եր-
գում ըրած եմ: — Աիրելիս, ըսի, թէ որ այդ-
պիսի խոստում մը ըբած ես, ես չեմ կրնար եւ

շեմուղեր քեզ խոստմնազանցութեան ստիւ
պել, թէ եւ հասարակաց օգտակար ըլլայ զա-
նի ամբառատանելը, այէտք չէ որ ընեա: Մարդ-
կային ամեն օրինագրութեանց մէջ՝ մեծ բա-
րիք մը ձեռք բերելու համար փոքր չարիք մը
կը ներռւի, ինչպէս որ քաղաքականութեան
մէջ թագաւորութիւն մը ազատելու համար
գաւառ մը կրնայ արուիլ, բժշկութեան մէջ
ալ ամբողջ մարտինն աղատելու համար ան-
դամ մը կրնայ կտրուիլ: Բայց կրօնական օրէն-
քը դրուած է, եւ երբէք չար չգործելու մա-
սին անողոքելի է, եւ այս օրէնքն արդար է:
Վասն զի, եթէ այնպէս չըլլայ, եթէ մեծ բա-
րիք մը ձեռք բերելու համար փոքրիկ գէշու-
մը ընենք, այն ժամանակ անսառյգ օգտի մը
ակնկալութեամբ ստոյդ չարիք մը գործուած
կըլլայ: Թէ եւ օդուան ստուգիւ ետեւէն ալ
գայ, այսու ամենայնիւ չար գործին եւ անկէ
սպասուած բարիքին մէջ անցած մեղապար-
տութեան միջոցին կրնայ ըլլալ որ մերը ըրածին
համարը տալու կոչուինք՝ երբոր մարդկային
գործոց առամարը յաւիտեան գոյցուած ըլլայ
մեղ համար: Բայց, այրելին, խօսքդ ընդմիւ-
ջեցի... Շարունակէ, ծառը այսու մասունք չէ:

« Իր կրնն ըլլալուս հետեւեալ օրը տեսայ
ու իր անկեղծութեանը վրայ խաբուած էի:

Նոյն առաւօստեն դիմ Երկու կանանց ներկայ
յացուց՝ զորոնք ինձի պէս հրապուրեր էր .
բայց անոնք պունկութեան մէջ գոհութեամբ
կապրէին : Ձինքը չափազանց սիրելուս հա-
մար չէի կրնար խաղաղութեամբ այս հակա-
ռակորդներուս հանդուրժել , եւ իմ ամօթոյս
գաղափարը զուարճութեանց մէջ մանալու կը
ջանայի : Այս մտօք կը հադռւի , կը պարէի :
Կերդէի , բայց երջանիկ չէի : Մեղ տեսնելու
եկող մարդիկը հանապաշ գեղեցկութեանս
հրապուրիչ զօրութեանը վրայ կը խօսէին , եւ
այս խօսքերը միայն բաւական էին ախրու-
թիւնս աւելցընելու . մանաւանդ որ այն ըստ
զօրութիւննին կորսնցուցած էի : Այսպէս օք
քան զօր իմ մասմառքս եւ անոր լրբութիւնն
աւելցաւ . մինչեւ որ վերջապէս հրէշն անա-
մօթարար դիմիրն ծանօթ սեսլուհի մը նուի-
քել ուզեց : Հարեւ է հասկըցընել որչափ դիմ
Վրաւորեց իր այս ասլաշնորհութիւնը : Ըրած
վատ առաջարկութեանը մազեզին զայլութով
մը պատասխանեցի , եւառնուլ քալել ուզեցի :
Մեկնած ժամանակս քսակ մը ուկի աալ ու-
զեց ինձի , բայց ևս ցասմամբ երեսին նետեցի .
եւ դռնէն դուրս ելայ այնպէս աչքն դարձած
ու կատղած , որ վիճակիս թշուառութեան ըզ-
քացումը կորմնցուցեր էի : բայց ետքը երբոր

Հորս կողմանայեցայ , դիս ցած , անարգ , եւ
մեղապարտնիւթի մը պէս նետուած տեսայ ,
առանց աշխարհի մէջ բարեկամ մը ունենալու ,
որուն կարենայի դիմել :

« Կոյն միջոցին մօտէս կառք մը անցնե-
լով , մէջը նատայ որպէս զի ժամ առաջ հեռա-
նամորիկայէ մը որ կ'արհամարհէի եւ կ'ատէի .
Հոս իջայ , ուր գալէս 'ի վեր իմ սրտատոշոր
կոկիծն եւ այս կնոջ դաման խատութիւնն իմ
միակ ընկերու եղան : Աիրելի մօրս ու քրոջս
հետ անցուցած բերկրալի օրերուս յիշատակը
կը կրկնապատկէ սրտիս ցաւը . անոնց կոկիծը
մեծ է , բայց իմա շատ աւելի մեծ է , փառն զի
մեղքէ ու ամօթէ յառաջ կուզայ : »

« Համբերէ , զաւակս , ըսի . կը յուսամոր
այս գործերը կը չուկուին : Հանդ չէ այս գիշեր ,
եւ զաղը քեզ տուն տանիսմ , ուր մայրդ . քու-
րըդ եւ եղբարքդ քեզ գորտվալիր պիտի ըն-
դունին : Խեղճ մօրդ սիրաը վիրաւորեցիր , բայց
տակաւին քեզ կը սիրէ , աղջիկս , եւ կը ներէ
քեզ : »

ԳԼՈՒԽ իբ.

Մ-ՌԵԱ ՔԵ-ՇԱ ԽԵ-ԽԵ ԵՐԵՎԱՆ-ՀԵՂԵՂԵՐ

Հետեւեալ առաւօտուն աղջիկս ձիռա
գաւակն առի եւ ճանքայ ելայ տուն դառնալու
համար : Ճանքան ամենն ջանք կը ընէի որ իր
երկիւղն ու տրտմութիւնը փարատեմ , եւ պի-
ռաւորեալ մօրը գէմն եխնելու համար ուժ եւ
սիրտ տամ իրեն : Դէմերնիս դեղատեսիլ դաշտ
մը ելած ատեն՝ դիտել կուտայի թէ երկինք
աւելի քաղցր աջօք կը նայի մեզ . քան թէ
մենք իրարու . եւ թէ բնութեան տուած ձա-
խորդութիւնները խիստ քիչ են : Կը վատահե-
ցընէի զինքը թէ իր վրայ ունեցած հայրական
գորովոյա մէջ բնաւ փոփոխութիւն մը տեսնե-
լիք չունէր , եւ թէ կենացս մնացորդ օրելուն
մէջ ալխրատներուու պատուէրներս չպիտի զը-
լանայի իրմէ : Կը քաջալերէի զինքը հասարա-
կաց քննադատութիւններուն դէմ , եւ կը հաս-
կըցընէի թէ զիրքերը քաղցր եւ անստգիւտ
ընկեր մ'են տարաբաղդներուն . եթէ չկընան
կենաց զուարճութիւնները հայթայթել մեզ ,
գոնէ կեանքերնիս կըել կը սովորեցընեն :

Վարձու բռնած ձիս՝ տանս հինգ մզոնի
չափ մնալով ճանքուն վրայ պանդոկ մը պիտի
ձգէի . եւ որովհետեւ լաւ կը թուէր ինձի
աղջկանս ընդունելութեանը համար կանխաւ
ընտանիքս պատրաստել , որոշեցի զանի պան-
դոկը թողուլ այն գիշերը եւ հետեւեալ առա-
ւոտուն իր Սովիիա քըոջը հետ զալ տանիլ : Ար-
դէն պանդոկը հասած ժամանակնիս գիշեր ե-
ղած էր . ուստի յարմար սենեակ մը իրեն հա-
մար պատրաստել տալէ , եւ զովարար ըմ-
պելիներ մատակարարելէ ետեւ՝ համբուրե-
ցի զինքը եւ տանս ճանքան բռնեցի : Պակչե-
լով բունէն փախչող թռչնոյ մը պէս՝ քանի որ
տանս կը մօտենայի՝ սիրտս նոր բերկրութիւն
մը կ'զգար . բաղձանքս ինէ առաջ կերթար եւ
վոքրիկ ընտանեացս բոլորտիքը կը թոշտէր :
Ըսելիք գորովական խօսքերս կը մտածէի , եւ
ինձի ըլլալիք սիրալիդ ընդունելութիւնը կ'ե-
րեւակայէի : Արդէն կնոջս քաղցր համբոյրնե-
րը կ'զգայի , եւ մանկիկներուս ինձի յայտնած
ուրախութեանը վրայ կը ժառէի : Եւ որովհե-
տեւ կամաց կամաց կը քալէի , գիշերն ալ կը
յառաջանար . հողադորձները տեղերնին քաշ-
էր էին ննջելու . հիւղերուն մէջ լոյս չէր
տեսնուեր . աքաղաղի ձայնէն եւ շանց հա-
շիւնէն զատ ձայն չէր լսուեր : Անպատում

քերկրութեամբ տանս մօտեցայ , եւ զեռ հար-
իւր քայլ մ՞նացած՝ շունս վազեց դէմս ելաւ-
զիս գգուելու :

Կէս գիշերին մօտ էր երբոր տանս գուռը
հասայ : Ամեն բան խաղաղ ու հանդարտ էր :
Սիրտս ուրախութենէս ընդարձակեր էր, երբոր
յանկարծ տեսայ որ տանս մէջ հրդեհ կար , եւ
ամեն ծակերէն ու ճեղքուրածներէն բոցը
դուրս կելնէր : Զարհուրագին աղաղակ մը վե-
րուցի եւ մարեցայ ինկայ քարայատակին վը-
րայ : Հանած աղմուկէս որդիս արթնցաւ եւ
կրակը տեմնելով մայրն ու քոյրերը արթըն-
ցուց : Ամեննալ գուրս վազեցին մերկ ու լե-
զապատառ , եւ իրենց ճիչերէն խելքս գլուխս
եկաւ , բայց առաւել զարհուրելի տեսարան-
ներ աչքիս ներկայացան : Վասն զի նոյն մի-
ջոցին բոցերը տանս յարկը պաշարեր էին , որ
կտոր կտոր կը փլչէր . իսկ ընտանիքս հիացած
եւ վախէն լեզուն բռնուած կայներ կը նայէր ,
եւ կարծես թէ կրակին լուսէն կը գուարճանար :
Աչքս մէկ մը իրենց վրայ , մէկ մը տանս վրայ
պտըտցուցի . չորս դիս նայեցայ մանկիկներս
տեսնելու , եւ չտեսայ : Ո՞հ , աւաղ թշուա-
ռութեանս , ուր են փոքր տղայքս , գոչեցի :
— Բոցերուն մէջն են , պատասխանեց կինս
հանդարտ դէմքով , եւ ես ալ անոնց հետ պի-

տի մեռնիմ։ » Նոյն վայրկենին ներսէն տղոցւ
ձայնը լսեցի որ կրակէն պաշարուելով արթըն-
ցեր էին։ Ալ անհնար էր զիս արգիլել։ « Ո՞ւր
են, ուր են զաւկներս, գոչեցի, ինքզինքս
բոցերուն մէջնետելով եւ դանուած սենեակ-
նուն դուռը կոտրտելով։ — Հոս ենք, հայ-
րիկ, հոս ենք, գոչեցին ամենը մէկէն։ Արդէն
անկողիննին բռնկեր էր։ Երկուքն ալ յափըշ-
տակեցի թեւերուս մէջ առի, եւ վազելով բո-
ցերուն մէջէն դուրս հանեցի։ Հազիւ դուրս
ելեր էի, սենեակին տախտակամածը փլաւ։
« Ալ հիմա, գոչեցի զաւկներս թեւերուս մէջ
սեղմելով, թող տունս այրի, թող բոլոր ու-
նեցածս այրի։ ահա դանձերս ազատեցի։ Ա-
հա, սիրելիս, ահաւասիկ դանձերս, եւ կըր-
նանք տակաւին երջանիկ ըլլալ։ Գրեթէ հա-
զար անգամ համբուրեցինք մանկունքնիս,
որոնք ճիտերնուս փաթթուած մեր ուրախու-
թեանցը բաժանորդ կըլլային։ իսկ կինս մէկ
մը կուլար, մէկ մը կը ինդար։

Այն ժամանակ ես ալ հանդարտ հանդիսա-
տես եղայ բոցերուն, եւ շատ չանցած՝ թեւիս
ցաւն զգալ սկսայ, վասն զիմինչեւ ուսս այրեր
էր կրակէն։ Այս պատճառաւ չէի կրնար որդ-
ւոյս օգնել, որ կը ջանար քանի մը կարասի
ազատելու եւ մանաւանդ թող չտալու որ մեր

ցորեններն ալ բռնկին։ Այս միջոցիս մեր շըր-
ջակայ դրացիներն իրար անցնելով՝ մեզ օգ-
նութեան վազեցին եկան, բայց անոնք ալ մե-
ղի պէս հրդեհին հանդիսատես ըլլալէ աւելի
բան մը չկրցան ընել։ Կարասիներս՝ որոց մէջ
էիննաեւ Պանքայի տոմաակներս՝ զորոնք աղջ-
կանցս օժտին համար պահած էի, հրոյ ճարակ
եղան, բաց'ի տուփէ մը եւ մէկ քանի թուղթե-
րէ՝ որ խոհարանին մէջ էին, եւ մէկ երկու ու-
րիշ բաներէ, զորոնք որդիսիսկզբան ազատեց
էր։ Դրացիներնիս կրցածնուն չափ մեր թըշ-
ւառութիւնն սփոփելու հոգ տարին։ Հագուստ-
ներ բերին մեզ եւ խոհարանիս պասներ մատա-
կարարելով հրկիզեալ տունէս քիչ հեռու փոք-
րիկ խրճիթի մը մէջ դրին մեզ, որով գոնէ խեղճ
բնակարան մը ունեցանք։ Խմ համեստ դրացիս
Պ. Ֆլամպօրու եւ իր որդիքն ալ ուրիշներէն
պակաս փոյթ չունեցան մեր պիտոյքն հոգա-
լու եւ բնական բարեսրտութենէ մը բղխած
ամեն մխիթարութիւնները մեզի մատակարա-
րելու։

Երբոր ընտանեացս երկիւզը քիչ մը փա-
րատեցաւ, երկար տարակայութեանս պատ-
ճառն իմանալու հետաքրքրութիւնը յաջոր-
դեց։ Ես ալ ամեն բան մանրամասնաբար պատ-
մելով սկսայ դանունք պատրաստել խեղճ մո-

Յորեալ՝ աղջիկնիս ընդունելու . եւ թէպէտ
թշուառութենէ զատ ուրիշ բան մը չունէինք
անոր տալու , այսու ամենայնիւ յորդորեցի որ
բաքեարտութեամբ ընդունին զինքը եւ ձեռ-
քերնիս մնացածին մասնակից ընեն : Այս ջան-
քըս աւելի գժուարին պիտի ըլլար՝ առանց
զվարանու եկած վերջին ձախորդութեան՝ որ
կնոջս ամբարտաւանութիւնը կոտրեր եւ աղ-
ջըկանը փախչելուն կսկիծն ուրիշ աւելի ըզ-
դալի վիշտերով վիթացուցեր էր : Թեւիս ցա-
ւէն աղջիկս անձամբ երթալ բերելու վիճակի
մէջ չըլլալով , Մովսէս որդիս եւ Սովիաս զըր-
կեցի , որոնք քանի մը ժամէն դարձան եկան
թշուառ յանցաւորին թեւերը մտած , որ չէր
համարձակեր մօրն երեսը նայելու , եւ իմ այն-
չափ թախանձանքնմըս ալ չէին կրնար կինա ա-
նոր հետ հաշտեցընել . քանզի կանայք այրե-
րէն աւելի աններող են ուրիշ կանանց պակա-
սութիւններուն : « Օրիորդ , կըսէր մայրը , ձեր
այնչափ պերճութենէն ետեւ՝ խիստ աղքատիկ
տեղ մը կուգաք հոս : Սովիաս եւ ես չենք
կրնար մէծամեծ մարդոց հետ միայն տեսնուե-
լու սովորած մէկ մը շատ դրօսցընել : Այու
օրիորդ Օլիպիա , ձեր խեղճ հայրն ու ևս բաւա-
կան տառապեցանք ձեր պատճառաւ : Ասո-
ուած ներէ ձեզ : » Այս ընդունելութեան ժա-

մանակ , թշուառ աղջիկս կանգնած էր դըժ-
 գոյն եւ դողքոջուն . ոչ լալու եւ ոչ ալ ովատաս-
 խան մը տալու կարող էր : Իր այս տագնապը
 տեսնելով չկրցայ լոել : Ուստի խոժոռ դէմքով
 մը՝ որ իսկոյն հնազանդել կուտար , ըսի . «Կի՞ն
 դու , մտադիր եղիր ըսելիքիս : Ես քեզի դար-
 ձուցի այս խեղճ ու թշուառ մոլորեալը . իր
 դարձն ու ապաշաւը կը պահանջէ որ մենք ալ
 զինքը վերստին մեր գորովոյն արժանի ընենք :

Ահա կենաց շմարիտ աղէտներ կը տեղան վրայ-
 նիս . չաւելցընենք զանոնք առտնին հերձուած-
 ներով : Եթէ սիրով միաբանութեամբ 'ի միասին
 ապրինք , կրնանք տակաւին գոհութիւն դըտ-
 նել , վասն զի մենք մեր մէջ բաւական ենք
 մեր դուռը պարսաւադէտներուն գոցելու , եւ
 իրար պաշտպանելու : Երկինքներում կը խոս-
 տանայ զղջացողներուն . մենք ալ անոր օրինա-
 կիննմանինք : Հրեշտակներն աւելի ուրախու-
 թիւն կընեն զղջացող մեղաւորի մը համար , քան
 բազմաթիւ արդարներու որ մեղք չեն գործած .
 եւ ասիկա շատ իրաւացի է . վասն զի կորստեան
 տանող սահուն զառիվայրին վրայ ինքզինքնիս
 բռնելու համար ըրած լոկ ջանքերնիս՝ ըստ ինք-
 եան այնպիսի գործ մէ , որուն համար աւելի ուժ
 գործածել պէտք կըլլայ , քան թէ հարթ եւ
 դիւր հանրու մը մէջ խաղաղ քալելու համար :

ԳԼՈՒԽ ԻԳ

ՄԵՐԱ ՍՐԵՑ ԻՐՆ-Ն ԵՐԻ-Շ ՀԵ-ՀԱ-Ե Ի- Բ-Ա-Ր-Ա-Ը
Բ-Ա-Ր-Ա-Ը

Բաւական ջանք պէտք եղաւ մերնոր բնակարանը հնար եղածին չափ կոկելու, եւ քիչ ժամանակէն ամեն բան առջի պէս զուարթ կերպարանք մը առաւ : Թեւիս ցաւն ինձի արգելք ըլլալով մեր սովորական զրադմանց մէջ որդւոյս օգնելու, կրակէն ազատած քանի մը զիրքերս կը կարդայի ընտանեացս, մանաւանոշ այն գրքերը՝ որոնք մարդուս երեւակայութիւնը զուարճացընելով՝ սիրան հանդարտեցընելու կը նպաստեն : Մեր համեստ դրացիներն ալ ամեն օր մեզ տեսնելու կուգային գորովալիլ կարեկցութեամբ : Մինչեւ անդամ մէջերնին ժամանակ որոշեցին միաբանութեամբ իմ այրած տունս շինելու : Բարեսիրտ Ռւիլիը մվարձակալն ալ մեղի այցելութիւն ընողներուն առաջիններէն էր, եւ իր անկեղծ բարեկամութիւնը նուիրեց մեղ : Աղջիկս առնելու համար ըրած առաջարկութիւններն ալ նորոգելու յօժարամիտ էր, բայց աղջիկս բացարձակապէս

մերժելով անոր ամեն յոյսը ոչնչացուց : Իր
թաղծութիւնը կը թուէր թէ պիտի շարունա-
կէր . և մեր փոքրիկ ընկերութեան մէջ ան էր
միայն որ շաբաթ մը անցնելէ ետեւ իր սովո-
րական զուարթութիւնը չգտաւ : Վասն զի
կորսնցուցեր էր այն պարզերես անսմեղութիւ-
նը՝ որ ժամանակաւ ինքվինք յարդել կը սով-
րեցընէր իրեն , երբոր այլոց հաճոյ ըլլալէն հա-
ճոյք մը կ'զգար : Սրտաստնջութիւնը բռնա-
պէս տիրեր էր վրան . գեղեցկութիւնը խամ-
րիլ սկսաւ , միանդամայն մարմնը տկարանալ ,
որուն մէկ պատճառն ալ իր անձն անխնամ
թողուն էր : Քրոջը տրուած ամեն դորսվա-
կան կոչումները սրտէն հառաչանք և աչ-
քէն արտառուք հանել կաւտային . և որովհե-
տեւ մոլութիւն մը , թէ եւ արմատախիլ եղած
ըլլայ , դրեթէ միշտ ուրիշ մոլութիւններ կը
բռւսցընէ իր տեղը , նոյնպէս ալ աղջկանսյան-
ցանքը , թէ եւ զղջմամբ քաւած էր , նախան-
ձութիւնը ձգեց իր ետեւէն : Հաղար կերպ մի-
ջոցներով իր վիշտը մեղմացըննելու կաշխա-
տէի , եւ մինչեւ անդամ զինքը հոգալով իմ
ցաւս կը մոռնայի : Շատ վիրք կարդացած եւ
լաւ յիշողութեան մը տէր ըլլալուս համար՝ զը-
ւարճալի պատմութեանց հատուածներ կը յի-
շատակէի իրեն : « Մեր երջանկութիւնը , կը-

սէի , սիրելիս , այնպիսի էակէ մը կախում ունի , որ մեր մտքէն չանցած հազար ու մէկ միջոցներով կրնայ մատակարարել զայն , եւ մեր խոհեմութեանը վրայ ալ կը ծիծաղի . թէ որ այս ճշմարտութիւնն հաստատելու համար օրինակ մը կուզես , քեզի պատմութիւն մը ընեմ , որ ծանրգլուխ պատմադիր մը աւանդած է մեզ , թէ եւ նոյն պատմադիրը երբեմն վիսլասանի ոճ ալ բռնած է :

« Մաթիլտ օրիորդը գրեթէ տղայ հասակի մէջ ակամնաւոր ազնուական Նարօլիթանի մը ամսւանութեան տրուեցաւ , եւ տասունեւհինգ տարեկան հասակին մէջ այրի մը նաց մանչ զաւակով մը : Իւր տունը վալթուրնո գետին եղերքն ըլլալով , օր մը գետին վըրայ նայող սենեակին պատուհանը նստած , իւր մանկիկը սիրած ատեն , տղան յանկարծ թեւերուն մէջէն գուրս ցատկելով գետն ինկաւ եւ անմիջապէս անյայտ եղաւ : Մայրը սարսափելով գետը նետուեցաւ որ զանի աղատէ . բայց տղան չդանելէ զատ՝ հազիւ ինքն ալ խղզուելէ կրցաւ աղատիլ , եւ գետին միւս եղերքն իյնալով անմիջապէս գերի բռնուեցաւ գաղղիացի զօրականներէ՝ որ նոյն միջոցին երկիրն ասպատակելու ելած էին :

« Եւ որովհետեւ այն ժամանակ դաղղիա-

ցիք ու Կաալացիք վերջին ծայր կատաղու-
թեամբ կը պատերազմէին իրարու հետ . Մա-
թիլտը բռնող գաղղիացիք՝ անզուսպ կիրքէ եւ
կատաղի անզթութենէ յառաջ եկած երկու ծայ-
րագոյն չարիքն անոր ընելու վրայ էին , բայց
երիտասարդ պաշտօնակալ մը դէմ կեցաւ այս
վատ խորհրդին . եւ թէպէտ գաղղիացիք ար-
տորնօք ետ քաշուելու հարկադրուեր էին ,
պաշտօնակալը զանի իր ձիուն գաւակին վրայ
առաւ եւ ողջ առողջ իր հայրենի քաղաքը
տարաւ : Վնոջ գեղեցկութիւնը մէկէն 'ի մէկ
զմայլեցուցեր էր իր աշքը : Շատ չանցած բա-
րոյական ձիրքերն ալ սիրտը զմայլեցուցին :
Ուստի ամուսնացան իրարու հետ : Պաշտօնա-
կալը բարձր պաշտօններու հասաւ . երկար ժա-
մանակ 'ի միասին ապրեցան եւ երջանիկ եղան .
բայց զօրականի մը երջանկութիւնը երբէք չի-
կրնար մշտատեւ ըլլալ : Քանի մը տարի ետքը՝
պատերազմի մը մէջ յաղթուելով՝ հարկադ-
րեցաւ իր կնոջը բնակած քաղաքը փախչե-
լու : Քաղաքը պաշարուեցաւ եւ վերջապէս
առնուեցաւ : Այն ժամանակի պատերազմնե-
րուն մէջ գաղղիացւոց ու իտալացւոց իրարու
դէմ'ի գործ դրած խուժադուժ անզթութեան
նմանը քիչ կը տեսնուի պատմութեանց մէջ՝
Յաղթողները որոշեցին բոլոր դերի բռնուած

դաղղիացիները սուրէ անցունել , մանաւանդ
դժբաղդ Մաթիլտի ամուսինը , որովհետեւ ան
պատճառ եղեր էր քաղաքին երկար դիմակա-
լութեանը : Այս որոշումն անմիջապէս պիտի
կատարուէր : Գերի բռնուած պաշտօնակալը
բերուեցաւ , եւ գահին ալ սակուրը պատ-
րաստ բռնած էր , մինչդեռ բազմութիւնն ալ
զարհուրագին լուսութեամբ մահաբեր հարուա-
ծին իջնելուն կ'սպասէին , որ հրամանատար
զօրապետին ակնարկութեանը կը նայէր : Այս
սրտատանջ միջոցին էր որ Մաթիլտիր վերջին
ողջոյնը տալու եկաւ իր ամուսնոյն եւ ազատ-
չին , ողբալով իր դժբաղդ վիճակին եւ ան-
գութ ճակատագրին վրայ որ այսպիսի սար-
սափելի աղէտ մը տեսնելու համար՝ զինքը
Վուլթուրնո գետին մէջ խղզուելէ ազատեր
էր : Զօրապետը՝ որ ծաղկահասակ երիտասարդ
մէր , Մաթիլտի գեղեցկութենէն ու տարա-
բաղդութենէն զարնուեցաւ . բայց սիրոն ա-
ւելի շարժեցաւ երբ անոր առաջին աղէտներն
ալ լսեց : Զօրապետը Մաթիլտի որդին էր ,
այն տղան՝ որուն համար այնչափ վտանգներու
մէջ ինկեր էր : Խակոյն հասկըցաւ իր մայրն ըլ-
լալը , եւ վազեց ոտքն ինկաւ . Մնացեալը
ինքնին կը հասկցուի : Գերի բռնուած պաշ-
տօնակալը թող տրուեցաւ , եւ սիրոյ , բարե-

կամութեան ու ակնածութեան հայթայթած
ամեն երջանկութիւններն այս երեք անձանց
վրայ միացան : »

Ահա այսպէս աղջիկս զբօսցընելու եւ ըզ-
բաղեցընելու կը ջանայի . բայց ան խիստ թե-
րի ուշադրութիւն մը կը նուփրէր ինձի . այլոց
աղէտիցը վրայ ժամանակաւ ունեցած գութը
բոլորովին իւր սեփական ազէտներովն զբա-
զած էր , եւ ոչ մէկ բան մը չէր կրնար զանի
սփոփել : Ընկերութեան մէջ գտնուած ատեն՝
արհամարհանքէ կը վախնար . առանձնու-
թեան մէջ ալ թաղծութենէ զառ ուրիշ բան
չէր գտներ : Այս թշուառ վիճակին մէջ էր
երբոր լուր առինք թէ Պ . Թօրնհիլ սլիտի ա-
մուսնանար օրիորդ Վիլմօթի հետ , որուն հա-
մար ստոյդ ախորժ մը ունենալը միշտ կասկա-
ծեր էի , թէ պէտեւ խմառ ջեւս ամեն առթիւ
արհամարհանք ցուցցեր էր անոր անձին եւ
հարստութեանը վրայ : Այս լուրն աւելի կը
դառնացընէր խեղճ Օլիվիայի կսկիծը : Այսչափ
յայտնի անհաւատարմութեան մը դիմանալն
իր կարողութենէն վեր էր : Այսու ամենայնիւ
միտքս դրի աւելի հաստատ տեղեկութիւն մը
ստանալ , եւ եթէ հնար էր՝ դործին առաջքն
առնուլ՝ որդիս օրիորդ Վիլմօթի հօրեղբօրը
Դրկելով , որպէս զի պտըտած զբոյցին ճշմա-

տութիւնը ստուգէր , եւ Վիլմօթ օրիորդին
ալնամակ մը տար , որուն մէջ Պ . Թօրնհիլի
մեզի դէմ քռնած ընթացքը ծանուցուած էր .
Որդիս հրամանիս համեմատ դնաց , եւ երեք
օրէն դարձաւ եկաւ լուր քերելով թէ զբոյցը
ճշմարիտ էր , բայց չէր կրցեր նամակս Վիլ-
մօթ օրիորդին տալ , վամն զի Պ . Թօրնհիլի հետ
շրջակայ երկրին մէջ այցելութիւններ ընկլո-
գացեր էր . այս պատճառաւ նամակս հոն ձիեր
էր որ իբևն տան ։ Թիչ օրէն հարսնիքը պիտի
կատարուի , ըստ . եւ նախընթաց կիրակին ալ
մեծ հանգիայր եկեղեցի գացեր են , հարմոցուն
զեց սպիտակազգեաց մատաղ օրիորդներու եւ
փեսացուն ալ վեց պատանիններու հետ : Հար-
սանիաց օրին մօտենսպը թոլոր երկիրն ուրա-
խութեամք լցուցեր էր , եւ խօսեցեանմերը սո-
վորաբար կը պարտէին այնպիսի գեղեցիկ հան-
գերձանքով մը՝ որուն նմանը շատ տարիններէ
՚ի վեր տեսնուած չէր երկրին մէջ : Արկու ըն-
տանիաց ազգականներն ալ հոն էին , եւ մամնա-
ւորապէս ասպետին բարեհամբաւ հօրեզբայ-
քը՝ Աըր Ռեխիլիմ Թօրնհիլ : Որդիս յաւելցուց
նաև թէ հանգէաններէ եւ ուրախութենէ զատ
ուրիշ բան չէր տեսնուեր , եւ թէ ամեն մարդ
օրիորդին գեղեցկութիւնն ու Պարոնին վայել-
չաղիմութիւնը կը գովեին , եւ թէ երկուքն

սլ չափաղանց սէր ունէին իրարու վրայ : Ակեր-
ջապէս , ըսաւ թէ չէր կրնար մխտել որ Պ-
թօրնէիլ աշխարհիս ամենէն երջանիկ մարդն
էր :

« Թող ըլլայ , ըսի , եթէ կրնայ : Բայց ,
որդեակ , նայէ սա յարդէ անկողինը , սա փե-
ռեկեալ յարկը , սա կիսաւեր պատը , սա խո-
նաւ տախտակամածը . կրակէն խեղացած մար-
մինս , եւ զաւկներս ալ՝ որ ինչ հաց ուղելով
բոլորախքս կուղանս : Աս ամենը հոս կը տեմնես ,
եւ սակայն , որդեակ իմ , հոս , այս , հոս մարդ
մը կը տեսնես որ իր վիճակը ջիտիանակեր այդ
իարծեցեալ երջանկութեան հետ : Որդեակնե-
րըս , եթէ կրնաք բուն ձեր սրտին հետ կենակ-
ցելու ճանրան սովորիլ , եւ անոր ինչ աստիճան
լաւ ընկեր մը ըլլալը հասկընալ , չարերուն պեր-
ճութեանն ու շքեղութեանը մտադրութիւն
չէք ըներ : Գրեթէ ամեն մարդիկ համաձայն
իը վկայեն թէ կեանքը ճանրայ մ'է եւ իրենք
ճանապարհորդ : Բաղդատութիւնն առ ելի օդ-
տակար կրնայ ըլլալ զիտելով որ բարիներն ու-
ժամի եւ զուարթ են իրենց ճանրուն մէջ , իր-
եւ ճանապարհորդներ՝ որ իրենց տունը կը
հասնին . իսկ չարերն՝ ընդ հակառակն՝ աքսոր
դացող մարդոց պէս՝ երջանկութեան իարճ
քիջոցներ միայն ունին : »

Նոյն միջոցին հէգ աղջիկո՝ չզիմանալով
այս նոր հարուածին՝ մարեցաւ, եւ խմալ կա-
րեկցութիւնս շարժելով չկրցայ խօսքս շարու-
նակել : Ըսի մօրը որ օդնէ խեղճին, եւ քիչ մը
ետքը խելքը գլուխն եկաւ, Այն վայրկեանէն
՚ի վեր աւելի հանդարտ երեցաւ . ես ալ կար-
ծեցիթէ վերջապէս իրդ ժբաղդութիւնն համ-
բերութեամբ տանելու որոշում ըրած էր . բայց
երեւոյթը զիս խարեց : Իր հանդարտութիւնը
չափաղանց կոկիծէ յառաջ եկած սրտաբեկու-
թիւն մ'էր . թեւմականներս ինձի պարէն զըր-
կած ըլլալով, այս մարդասիրական նոլաստը
դիտես թէ ուրախութիւն ծաւալեց ընտան-
եացս միւս անդամոցը մէջ, եւ հսալ շեխ դըժ-
ւարիր զանոնք ուրախ եւ գոհ տեմնելով :
Եւ արդարեւ ոնիրաւութիւն էր անսնց գոհու-
թիւնը զսովել եւ յամառ տիրութեան մը բա-
ժանորդ ըլլալու զիրենք հարկադրել, կամ ի-
րենց չզգացած տրամութեան բերին ննրքեւը
զիրենք ճնշել : Աւատի անդամ մ'ալ փոքրիկ
սպասմութիւններ խօսեցանք կարդաւ : Յետոյ
երդ ինոգրուեցաւ, եւ անդամ մ'ալ ուրախու-
թիւնն այց ելնել ու զեց մեր փոքրիկ բնակաւ-
թեան :

ԳԱՐԻՒԹ ԻՒ

ՏԵՐԵՐ ՀՅՈՒՅՆ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ
ՏԵՐԵՐ ՀՅՈՒՅՆ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ

ՏԵՐԵՐ ՀՅՈՒՅՆ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ
ՏԵՐԵՐ ՀՅՈՒՅՆ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ ԱՎԱՐԱՐ

Հետեւհալ առաւօտուն՝ արեգակը չա-
փաղանց ջերմ ծագեցաւ եղանակին նայելով
այս պատճառաւ որոշեցինք որ նախաճաշն
այծխաթերեւի նստարանին վրայ ուտենք : Հան
կրտաեր աղջկանս աղաչեցի որ մեր բոլորտիքը
գեղգեղող թռնոց գայլայլիկներուն ձայնակ-
ցութիւն մ'ընէ : Այն տեղն էր որ խեղճ Օլի-
վիաս տռաջին անգամ տեսեր էր իր հրապու-
րեցը : ուստի ամեն բանիր վիշտը յիշեցընելու
կը ծառայեր . բայց հաճոյական իթերէ զըր-
դըռեալ կամ ներդաշնակութենէ աղգեալ
տիրութիւնն աւելի կ'ափօփէ մարդուս սիրու
քան թէ կը գառնացընէ : Մայրն ալ այս առ-
թիւ ուրախութեան հետ սրտի ճիկում մը ըգ-
գալով լացաւ եւ իր աղջիկն առաջուան պէտ
գորովով սիրեցւ « Օ՛ն , սիրելի Օժիվիաս , հօրդ
սիրած այն սրտուշարժ երդդ երդէ նայիմ . ար-
դէն Սովիիա քոյրդ երգեց . օ՛ն , զաւակս , հայ-
րըդ մեծապէս կը բերկրեցընես : » Հնազան-
ցեցաւ , եւ այնպէս զողսրիկ կերպով մը եր-

գեց, որ սիրտա շարժեցաւ :

Ե Ր Գ

«Երբորդեռահաս օրիորդ մը հրապուրան
քէ կը բռնօւի եւ ետքը կը հասկընայ որ մար-
դիկ խաբեբայ են, որ զմօսանք կրնայ անոր
տիրութիւնն սփոփել . ի՞նչ միջոց կը մնայ ա-
նորդիր սխալմունքը քաւելու :

«Իր սխալը դարմանելու, իր ամօթը ծած-
կելու, իր տարփաւորն ըրած անհաւատար-
մութեանը վրայ զղջացընելու եւ անոր սիրտը
կսկծեցընելու միակ միջոցը մեռնիկն է : »

Այս երկրորդ տունը լմնցընելու վրայ էր,
որուն մասնաւոր քաղցրութիւն մը կուտար
իր վշտահար ձայնին ընդհատումը, յանկարծ
Պ. Թօրնհիլի կառքն ու ծառայները տեսանք
հեռուէն, եւ ամենքս ալ խռովեցանք . բայց
աւելի անդրանիկ աղջկանս արտմութիւնը նո-
րոգեցաւ, որիր հրապուրչին երեսը չտեսնելու
համար քրոջը հետ տուն դնաց, Շատ չանցած՝
ասպետը հասաւ, եւ մեզի մօտենալով, իր սո-
վորական ընտանութեամբը որպիսութիւնիո
հարցուց, «Պարոն, ըսի, այդ ցուցըցած վսահան
դէմքերնիդ՝ ձեր բարուց ցածութիւնն աւելի
ծանրացընելու միայն կը ծառայէ . ժամանա-
կաւ այդպէս լրբարար առջեւս երեւնալույան-

գըգնութիւննիդ չարաչար կը պատժէի . բայց
հիմա տարիքս պաղեցուցած է կիրքս , եւ քա-
հանայական կարգս ալ՝ կիրքս զսպել կը սով-
րեցընէ ինձի : »

« Կը խոստովանիմ , սիրելի Պարոն , ըստ
ասպետը , որ ձեր այդ ընդունելութիւնը գիս
ի՞ապշեցընէ , եւ չեմ հասկընառ ինչ կը նշա-
նակէ : Կը յուսամ որ մեղապարտ գործ մը չէք
տեսներ այն փոքրիկ շրջագայութեան մէջ՝ որ
անցեալները ձեր աղջիկն ըրաւ ինձի հետ : »

Գնա , թշուառական , գոչեցի . գունթը-
ուառ անզգամ մ'ես , անամօթ ստախօս մ'ես .
բայց ցածութիւնդ քեզ ազատ կը պահէ իմ
ցասումէս և Սակայն , Պարոն , ես այնպիսի ըն-
տանիքէ մը ծնած եմ որ այսպիսի նախատինքի
մը չեր հանգութեր երբէք : Անմոդ հրապու-
րիչ . վայրկեան մը կիրքոյագեցընելու համար
խեղճ արաբած մը թշուառ ըրիր իր բոլոր կե-
նացը մէջ , եւ այնպիսի ընտանիք մը անպատ-
ռացիք , որուն բոլոր հարսառութիւնն իր պա-
տիւն էր : »

« Եթէ գուք եւ աղջիկնիզ թշուառ ըւ-
լալը մտքերնիդ դրեր էք , ես ինչ կրնամընել-
բայց կրնաք տակաւին երջանիկ ըստալ . ինչ
կարծիք ալ որ ունենաք մըսա , ես միշտ պատ-
րաստ եմ ձեր երջանկութեանը նպաստելու :

Կրնաք դիւրութեամբ ձեր աղջիկն ուրիշի մը
հետ ամումնացընել . եւ որ լաւագոյնն է , կըր-
նայ նաեւ իր տարիաւորը պահել . վասն զի
կրնամ հաւաստել ձեզ թէ մնծ յարգ պիտի ու-
նինամ միշտ իր փրայ : »

Այս ամօթալի առաջարկութիւնը զիսքո-
ւորովին զայրացուց . վասն զի թէպէտ մար-
դուս միտքը կրնայ երբեմն մնծամեծ թշնա-
մանաց հանդուրմել . բայց երբեմն ալ փոք-
րիկ ցածութիւններ զանի մինչեւ կատաղու-
թեան աստիճան կը գրգոեն : « Կորիր աչքիս
առջեւէն , սողուն , զոչեցի , եւ մի թշնամաններ
զիս քու ներկայութեամբդ . թէ որ արի Գէ-
որդս տունն ըլլար , չեր համբերեր այդ ըրա-
ծիդ . բայց ես ծեր , խեզանդամնեւ ամեն կու-
մանէ ընկճեալ մարդ մ'եմ : »

« Կը տեսնեմ , ըստ , որ զիս հարկադրել
կուզէք իմ կամացս հակառակ հետերնիդ խըս-
տութեամբ խօսելու . բայց որովհետեւ իմքա-
րեկամութենէս քաղելիք օգուտնիդ հասկը-
ցուցի ձեզ , կը վայլէ նաեւ որ թշնամութեա-
նըս հետեւանքն ալ ձեր աչքին առջեւ դնեմ :
Դատաստանական փոխանորդս , որուն յանձ-
նած եմ ձեր վերջին մուրհակը , անոր վճարու-
մը կը պահանջէ , եւ չեմ գիտեր ինչպէս գա-
տաստանին առաջքն առնում , եթէ ոչ այն ըս-

ատեկը քսակէս վճարելով . բայց վերջին օրերս
ամուսնութեանս համար բաւական ծախք ը-
րած ըլլալուս , այս միջոցիս չեմ կրնար վճա-
րել : Միւս կողմանէ , կալուածներուս վերա-
կացուն դիտաւորութիւն ունի կալուածական
վարձք վճարած չըլլալնուդ համար ձեզ դա-
տաստանի քաշելու . այսպիսի մարդ մ'է որ իր
պարտականութիւնը կը ճանչէ ու կը կատա-
րէ . վասն զի ես երբէք չեմ խառնուիր այս
տեսակ գործերու . սակայն կուզեմ ձեզի բա-
րեկամութիւն ընել , եւ մինչեւ անգամէ կը
բաղձամ որ դուք եւ աղջիկնիդ ներկայ գըտ-
նուիք օրիորդ Վիլմօթի հետ ամուսնութեա-
նըս , որ քիչ օրէն պիտի կատարուի : “Սոյնը կը
բաղձայ նահեւիմ ոիրուն Արապէլլա Վիլմօթս .
զորկը հաւատամ թէ չէք ուզեր մերժել : »

« Պ . Թօրնհիլ , պատախամնեցի , լաւ մը-
տիկ ըրէք սա ըսելիքս : Ձեր ամուսնութեանը
մասին՝ ես չեմ հաճիր երբէք որ աղջիկէս զատ
ուրիշի հետ ամուսնանաք , եւ եթէ ձեր բարե-
կամութիւնը զիս մինչեւ թագաւորական դահը
բարձրացընելու , եւ թշնամութիւննիդ ալ
մինչեւ գերեզման իջեցընելու կարող ըլլայ .
երկու քնի ալ կարհամարհեմ : Դուք զիս նողկա-
լի կերպով , անգարմանելի կերպով խարե-
ցիք . իմ սիրուս ձեր պարկեշտութեանը վըս-

տահացեր էր , բայց ցածութենէ զատ ուրիշ
բան չտեսայ : Ուրեմն այսուհետեւ ինէ բա-
րեկամութիւն մին սպասեր : Գնա , բաղդը քե-
զի ինչ որ տուերէ նէ վայելէ . գեղեցկութիւն ,
հարստութիւն , առողջութիւն եւ բերկրանք :
Գնա եւ թող զիս թշուառութեան , ամօթոյ ,
հիւանդութեան եւ վշտաց մէջ : Որչափ եւ
նուաստացեալ ըլլամ , սիրտս իր արժանա-
պատուութիւնը պիտի պահէ միշտ . եւ թէ-
պէտ կը ներեմ ըրածդ , բայց քեզ միշտ պիտի
արհամարհեմ : »

Թէ որ այդպէս է նէ , ձեր լրբութեան ար-
դիւնքը պիտի զգաք , եւ շատ չանցած պիտի-
տեսնէք թէ մեր երկուքէն որն է արհամար-
հելին : » Այս խօսքն ըսելով մնկնեցաւ գնաց :

Կին եւ որդիս՝ որ ներկայ էին խօսակցու-
թեան՝ սարսափի մէջ ինկած կը թուէին : Աղ-
ջիկներս երբոր տեսան որ գացեր էր , եկան
մեր խօսակցութեան արդիւնքն իմանալու ,
եւ անոնք ալոչ նուազ զարհուրեցան :

Շատ չանցած՝ տեսանք որ ըրած սպառ-
նալիքը պարապ չէր . վասն զի հետեւեալ ա-
ռաւօտուն իր գործակալը եկաւ վարձակալու-
թեան պարտուցս վճարումը պահանջեց . որ գը-
լուիս եկած փորձութիւններուն պատճառաւ
չէի կըցեր վճարել : Այս անկարողութեանս հե-

տեւանքը սա եղաւ որ նոյն իրիկունը կենդա-
նիներս գրաւեցին եւ հետեւեալ օրը կէս գնով
վաճառեցին : Ասոր վրայ կինս ու զաւկներս
թախանձեցին զիս որ աներկբայելի թշուա-
ռութենէ մը ազատ մնալու համար՝ ինչ առա-
ջարկութիւն որ ընեն ընդունինք : Մինչեւ ան-
գամ պաղատեցան որ անդամ մ'ալ ընդունիմ
Պ . Թօրնհիլի այցելութիւնները , եւ իրենց բո-
լոր ճարտարխոսութիւնները , անտանելի տառապան-
քըս , ձմեռ ժամանակ բանտարկութեան սոս-
կումը եւ թեւիս այրուցքէն առողջութեանս
ծագելիք վտանգը . բայց ես անյողդողդ կե-
ցայ :

« Ոիրելի՛ գանձերս , գոչեցի , ինչու այդ-
պէս կաշխատիք զիս անիրաւ գործի մը համար
համոզելու : Իմ պարտականութիւնս կը սով-
րեցընէ ինձիներել անոր . բայց խղճմտանքս
ալ չթողուր որ ըրածին հաւանութիւն տամ :
Կուզէք որ աշխարհի առջեւ հաւնիլցուցընեմ
այնպիսի բանի մը զոր սիրտս ներսէն կը դա-
տապարտէ : Կուզէք որ խայտառակաբար շո-
ղոքորթեմ վատ հրապուրիչ մը , եւ բանտար-
կութենէ ազատ մնալու համար՝ խոշտանդեալ
խղճմտանքի մը խայթերուն ներքեւ ձգեմ
զիս : Ո՛չ , ամենեւին ոչ : Եթէ պէտք է որ այս

ապաստանարանէն դուրս ձգուինք , արդար
ըլլանք միշտ . եւ ուր ալ մեզ քաշեն նետեն ,
կրնանք միշտ հանդիստ եւ խաղաղ բնակարան
մը քաշուիլ , այն է մեր խղճմտանքին քով , եւ
աներկիւղութեամբ ու բերկրութեամբ մեր
սրտերուն մէջ իջնել : »

Խրիկունը սոյն խօսակցութիւններով ան-
ցաւ : Գիշերը շատ ձիւն ինկած ըլլալով , հե-
տեւեալ առաւօտուն որդիս գրան առջեւ ճան-
քայ բանալու համար ձիւներն աւլելու զբա-
ղած էր . Շատ չանցած՝ վազելով ներս մտաւ
երեսին գոյնը նետած , եւ ըսաւ մեզի թէ եր-
կու դատաստանական պաշտօնակալներ մեր
տանը կողմը կուգային : Խօսքը գեռ չլմնցո-
ցած , պաշտօնակալները ներս մտան , անկող-
նիս քովը մօտեցան , եւ իրենց ով ըլլալն եւ
ինչու համար եկած ըլլալը ծանուցանելէ ե-
տեւ , հրաման ըրին որ անմիջապէս պատրաս-
տուիմ եւ հետերնին կոմսութեան բանաը եր-
թամ , որ տունէս տապանեւմէկ մղոն հեռու էր :

« Բարեկամք , ըսի , խիստ գէշ օդի մը
ժամանակ եկերէք զիս առնել բանաը տանելու .
եւ աւելի դժնդակն այն է որ թեւիս մէկն անց-
եալ օր չարաչար այրեցաւ եւ ցաւէն տենդ
կուգայ վլաս . ասկէց զատ հազուստ չունիմ
ինքզինքս ծածկելու , եւ ծերութիւնս ու տը-

կարութիւնս ալ չներեր ինձի այս թանձր ձիւ-
նին մէջ քալել : Բայց թէ որ անտառածառ
հարկ է , կը ջանամ ձեզ հնապանողելու :

Ետքը կնոջս ու զաւկներուս դառնալով
ըսի որ ունեցած քիչ մը կարասիքս ժողվըտեն
եւ տունէն գուրս ելնելու պատրաստուին : Ա-
ղաչեցի որ շուտով ընեն , եւ որդւոյս ալ առա-
ջարկեցի իր մեծ քրոջն օդնել , որ ինքզինք
այս ամեն գ ժբաղդութեանց պատճառ համա-
բելով իր խղճմանքին կշտամբանքէն մարեր
ինկեր էր : Քաջալերեցի կինս , որ գոյնը նե-
տած եւ դողդողալով իր թեւերուն մէջ կը
սեղմէր մեր ահաբեկ մանրերը , որոնք անշշունջ
անոր կուրծքին փաթթուեր էին , եւ չէին հա-
մարձակիր պաշտօնականերուն նայելու : Նոյն
միջոցին կրտսեր աղջիկս ալ կարասիները կը
ժողվըտէր , եւ ես ալ քանի մը անգամ զինքը
ստիպելով որ շուտ ընէ , մէկ ժամու մէջ ճան-
քու պատրաստեղանք :

ԳԼՈՒԽ ԻԵ

ՎԵՐԱԿԱՆ ՀԵ ԱՐԱԿԵ ԵՎ ՌԱՄԵՐ ՇԱՀԱՅ ԴԱՎԻԴ ԱՌԵՎՈՒ

Մեր խաղաղ բնակատեղին մեկնեցանք,
և ծանրաքայլ ճանքայ ելանք : Մեծ աղջիկս
տկարացած ըլլալով բարակ տենդէ մը՝ որ քա-
նի մը օրէ 'ի վեր զանի մաշեցընելու սկսերէր,
պաշտօնակալներէն մէկը զանի իր ձիուն դա-
ւակն առաւ, վամն զի այս տեսակ մարդիկ
բոլորովին եւ միշտ զուրկ չեն ըլլար մարդ-
կութեան զգացումներէ : Որդիս փոքրիկնե-
րէս մէկուն ձեռքէն բոնած էր, կինս ալ միւ-
սին . ես ալ կրտսեր աղջկանս կրթներ էի, որ
արտսուք կը թափէր՝ չէ թէ իր վշտաց՝ այլ
խմիններուս վրայ :

Հաղիւ երկու մզոնի չափ տունէս հեռա-
ցեր էինք, տեսանք որ աղքատ թեմականնե-
րէս յիսունի չափ անձինք ետեւնուս կը վաղէ-
ն կուգային մեծաձայն աղաղակաւ : Շատ
չանցաւ հասան եւ սոսկալի անէծքներով եր-
կու դատաստանական պաշտօնակալները բըռ-
նեցին, երդում ընելով որ իրենց երէցը չպիտի

թողուն որ բանտ տարուի , եւ քանի որ երակներնուն մէջ կաթիլ մը արիւն մնայ , մինչեւ ցմահ պիտի պաշտպանեն զանի : Ասանկ դոչելով պաշտօնակալները պիտի ծեծէին , եւ վերջը շատ գէշ պիտի ըլլար , թէ որ խսկոյն մէջ չմտնէի , եւ իմ ազդեցութիւնս բանեցընելով մեծ դժուարութեամբ պաշտօնակալները գրգռեալ ամբոխին ձեռքէն չառնէի : Որդիքս աղատութեանս վրայ աներկմիտ ըլլալով չէին կրնար ուրախութիւննին զսպել . բայց պատրանքնին շուտով փարատեցաւ երբոր լսեցին իմ ըրած խօսքերս այն խեղճ բարեմիտ մարդոց , որ ինձի ծառայութիւն մը ընելու խելքով ետեւէս եկեր էին :

« Ի՞նչ կընէք , սիրելիք , գոչեցի . այդպէս կը սիրէք զիս . այդպէս կը կատարէք եւ կեղեցւոյն ամպիոննէն ձեղի տուած խրատներս : Դատաստանի ընդդիմանալ , եւ ձեղ ալ ինձ ալ միանդամայն վնաս պատճառել : Ո՞վէ ձեր գլուխը . ովէ ձեղ այդպէս ոտք հանեց ու առջեւնիդ ինկաւ : Ո՞վէ նէ ցուցըցէք . անտարակոյս թող ըլլայ որ բարկութիւնսիր վըրայ պիտի թափեմ : Օ՞ն , դարձէք տեղերնիդ , սիրելի կուրացեալ հօտս , եւ ջանացէք որ առ Աստուած առ հայրենիս եւ առ իս ունեցած պարտականութիւննիդ կատարելէ ետ չմնաք :

Թերեւս օր մը ներկայ վիճակէս լաւագոյն վիճակի մը համնելով ձեզ կրկին կը տեսնեմ , եւ ձեր կեանքը երջանկացընելու կարող կը լլամ . բայց ձեզ անմահութեան համար մակաղած ժամանակս՝ գո՞նէ սա մխիթարութիւնը ունենամ , որ խաշինքներուս մէջ բնաւ պակաս մը չըլլայ : »

Այս խօսքերուս վրայ ամենն ալ զդշալով եւ արտսուք թափելով՝ իրարու ետեւէ քովս եկան հրաժարական ողջոյն տուին ինձի : Ես ալ ամեն մէկուն ձեռքը զորովանոք սեղմեցի , եւ զիբենք օրհնելով ճանքաս շարունակեցի : Իրիկուան դէմկոմսութեան գլխաւոր քաղաքը հասանք , որ պարզապէս գեղմ'էր . վասն զիքանի մը գծուծ տուներէ կը բաղկանար . հին շքեղութիւնը բոլորովին կորուսեր էր , եւ իր գլխաւորութեանը նշան ըլլալու համար բանտէն զատ ուրիշ մէկ բանը չէր մնացած :

Հո՞ն համնելնուս պէս պանդոկ մը իջանք , ուր կրցածնուս չափ զովարար ըմպելիներ հայթայթեցինք , եւ սովորական զուարթութեամբս ընթրեցի ընտանեացս հետ : Երբոր տեսայ որ ընտանեացս դիշերօթելուն համար պէտք եղածները պատշաճապէս պատրաստըւեցան , բաժնուեցայ ընտանիքէս , եւ դատաւորին պաշտօնակալներուն հետ բանտը գա-

ցի, որ զինուորական՝ պիտոյից համար շինուած
հին չէնք մ'էր : Ընդարձակ սենեակ մը կար
մէջը՝ ամուր խաղվամներով շրջապատեալ,
եւ քարէ սալայատակոլ : Այս սենեակին մէջ
կը լցուէին ցերեկները թէ եղեռնագործները
եւ թէ պարտուց համար բանտարկեալները :
Ասկէց զատ ամեն մէկ բանտարկեալ յատուկ
սենեակ մը ունէր, եւ հոն կը դրուէր գիշերը :

Հոն մտած ատենս կարծեցի թէ հեծու-
թեան ու կերպ կերպ թշուառութեան ձայներ
միայն պիտի լսէի . բայց բոլորովին հակառա-
կը գտայ : Բանտարկեալները մէկ բանի մը մի-
այն զբաղած կը թուէին , այն էր՝ ամեն մտա-
ծութիւննին ուրախութեան ու ժխորի մէջ
հեղձուցանել : Խմացուցեր էին ինձի թէ բան-
տը մտած ժամանակս՝ բարի եկարի համար բան
մը վճարելու էր բանտարկեալներուն : Այս
դործն խկոյն կատարեցի , թէ եւ ունեցած քիչ
մը ստակս հատնելու մօտ էր : Այն ստակսիս
անմիջապէս ողելից ըմպելիներ բերելտուին ,
եւ խկոյն բանտը գոռալ սկսաւ խառնաշփոթ
աղաղակներով , բարձրաձայն ծիծաղներով ու
հայհոյութիւններով :

Զարմանալի՛ բան , ըսի ես ինձի . այսալի-
սի գէշ մարդիկ ուրախ ըլլան , եւ ես տխուր .
իրենց հետ բանտարկութեամբ միայն կը հա-

ւասարիսմ, նև կարծեմ որ աւելի պատճառնեց ունիմ գոհ ըլլալու. :

Այս մտածութիւններն ըրած ժամանակա կը ջանայի որ ինքոյնքս զուարթ ացընեմ. բայց ջանքավ զուարթ ուժիւն չիրնար ըլլալ. վասն զի ամեն ջանք ինքնին տաժանելի է ։ Երբոր խոկուն դէմքոյ մը բանափն մէկ ան- կիւնընօսեր էի. դ' բաղդութեան ընկերնեւ- րէս մէկը քոյսեկաւ, նստաւ, եւ ինձի հետ խօսակցութիւն բացաւ։ Իմ սովորութիւնն եւ զած է միշտ ինձի հետ խօսակցիլ ուղղներէն երես չդարձընել. վասն զի եմէ պարկեշտ մարդ մ'է՝ կրնամ անոր խօսքերէն օդուտ քա- ղել. իսկ եթէ չար մէկն է. թերեւս ան իմ խօսքերէս օդուտ կրնայ քաղել։ Տեսայոր հետ- արս խօսակցութիւն բացովը բաւական լոյս եւ բնական ուղղագատութիւն ունեցող մարդ մ'էր, թէ եւ զրագէտ չէր. բայց ինչովէս կը- սեն՝ կենցաղագէտ, կամ մանաւանդ մարդ- կային բնութեան դէշ կողմերուն քաջածա- նօթ էր։ Հարցուց ինձի թէ ննջելու համար անկողին պատրաստեր էի, որն որ բնաւ միտ- քըս չէր եկեր։

« Ցաւալի բան է այդ, ըստ ։ վասն զի հոտ յարդէ զատ ուրիշ բան չեն տար, եւ ձեր սեն- եակն ալ մեծ եւ ցուրտ է։ բայց ըստ որում

շնորհքով մարդ մը կերեւիս ինձի , եւ եռա-
ժամանակաւ շնորհքով մարդ մ'էի , ուստի ան-
կողնի ծածկոյթներուս մէկ մասը յօժարու-
թեամբ ձեզ կուտամ : »

Շնորհակալ եղայ զարմանք յայտնելով մի-
անգամայն որ թշուառ բանտի մը մէջ այսչափ
մարդասիրութիւն կը գտնէի , եւ զիտուն մարդ
ժ'ըլլալս իրեն ցուցընելու համար՝ աւելցուցի
թէ հին յունաց իմաստուններէն մէկը լաւ կը
ճանչէր ընկերութեան արժէքը ձախորդու-
թեան կամ վշտաց մէջ , երբոր կըսէր . Թու + ու-
նու ուրե , եւ ուն ելուեօն : « Եւ յիրաւի , ըսի ,
ի՞նչ է ախեղերքս՝ եթէ ընկերութիւն մը չտայ
մեզ : »

« Տիեզերաց վրայ կը խօսիք , ըսաւ բան-
տակիցս . ալեւրհն հարնաւուաւ կըոյէ . եւ ունց-
երիւածունիւնը իւր ալեւրհն ուրեզուն ուն դրւերուն իւ-
նունքուրեւ ուրիշութեաց : Ի՞նչ անհերթն իւրեւնիւնը-
իւնաւուրու և իւրաւուն ալեւրհն ուրեզուն կըոյ : Ան+ունիւ-
րուն , Անկերն , Բերուն եւ Ունւաւ Լուսաւուն , ունուն ալ
ըդուանայն ալեւրեցուն բացուրեւաւ : Անոնց Անզիւնը հերւ-
եւութեւը իւնէ . Ան-րիօն ուր ուրիշ ալելւ-նոյիօն նու բան,
որ կը նշանակէ . . . — Ներեցէք ինձի , Պա-
րսն , գոչեցի , որ խօսքերնիդ ընդմիջեմ այդ
գեղեցիկ դաշտին մէջ . ինձի կը թուիթէ այդ
ամենն ալ արդէն լսած եմ : Արդեօք ձեզ ան-

գամ մը Վելպրիճի տօնավաճառը տեսնելու
բերկութիւնն ունեցած չնմ։ Եւ անուննիդ
ալ Ավրեմ Ճէնքինսըն չը։ » Այս հարցման
պատասխանը խոր հառաջանք մը եղաւ։ «Պէտք
է յիշեք, ըսի, Յրիմրօզ վարդապետը, որմէ ձի
մը գնեցիք։ »

Այն ատեն զիս ճանչեց յանկարծ։ վասն
զի բանատին մթութիւնը եւ գիշերուան մութն
առ ջի բերանը արգելք եղեր էին դէմքս զա-
նազաննելու։ «Այս, Պարոն, ըսաւ Պ. Ճէն-
քինսըն, միաքս եկաք։ Զենէ ձի մը դնեցի
որուն ստակը մոռցայ վճարել։ Զիր Ֆլամպօրու
գրացին դատախավներէս մէկնէ, եւ դատաս-
տանի ներկայանալուս ժամանակ՝ միմիայն ա-
նոր ամբաստանութիւններէն կը վախնամ։ վա-
սն զի զիս իրրեւ զրամանենդ ամբաստանելու
դիտաւորութիւն ունի։ Անկեղծաբար կը ցա-
ւիմ ձեզ եւ ուրիշները խարելուս վրայ, վասն
զի ըրած շահս սա եղաւ ահա։ » Այս խօսքն
ըսելով շղթաները ցուցուց։

«Պարոն, ըսի, ինէ վոխարէն մը չյու-
սալով ինձի մատուցած ծառայութիւննիդ չի
պիտի մտոնամ։ Ես կը համոզեմՊ. Ֆլամպօրու
որ ձեզի դէմըրած ամբաստանութիւնը մեղ-
մացընէ կամ ետ առնու, եւ առաջին պատե-
հութեամբ որդիս կը դրկեմ որ երթայ հետը

խօսի այս դործին վրայ : Աներկրայ եմ որ
ինդիրս կը կատարէ : Իմ կողմէս ալ ամենեւ-
սին ամբաստանութեան կասկած մի ունե-
նաք : »

Ուրեմն , պատասխանեց , շնորհակալու-
թիւնս ձեզ յայտնելու համար ինչ որ ձեռքէս
կուղայ՝ կրնաք ինչ սպասել : Ծածկոյթներուս
կէսէն աւելին ձեզ կուտամ այս գիշեր , եւ պի-
տի ջանամ ինքզինքս ձեզ բարեկամ ցուցընել
այս բանտիս մէջ՝ ուր յարդի եմ : »

Շնորհակալ եղայ իրմէ , եւ զարմանքս
յացտնեցի այս անգամ զինքը երիտասարդա-
կան առոյդ դէմքով տեսնելուս վրայ , մինչ-
դեռ առաջին անգամ տեսած ժամանակս գոնչ
վաթսուն տարեկան ծեր մարդու մը դէմք ու-
նէր : « Պարտն , պատասխանեց , այն ժամանա-
կը կեղծ մաղ մ'ունէի , եւ ինքզինքս տասնեւ
եօթն սարեկանէն մինչեւ վաթսնամետյ ձեռ-
ւացընելու արհեստը լաւ սովորած էի : Ահ ,
Պարտն , եթէ սրիկայութիւն սովորելու համար
կրած աշխատութեանս կէսն առուտուր մը
կամ արհեստ մը սովորելու դործածէի , այսօր-
ումն օրս հարուստ մարդ մը կըլլայի : Բայց թէ
եւ սրիկայ եմ , կրնամ տակաւին օգտակար ըլ-
լակ ձեզ , եւ թերեւս ձեր շյուսացած կեր-
պովլը : »

Մեր խօսակցութիւնն ընդմիջեցաւ բանւ-
տասպետին ծառայներուն վրայ գալովը, որոնք
բանտարկեալները համրելով իւրաքանչիւրն
իր զիշերուան արգելոցը սիմտի տանէին։ Մէ-
ջերնէն մէկը՝ որ խուրձ մը խոտ բերած էր ին-
ձի անկողին ըլլալու համար, զիս երկար ու
նեղ ճանրէ մը անցուց ու սենեակ մը տարաւ որ
հասարակաց սենեկին պէս քարայտակ էր։
Ինձի բերուած խոտով եւ Պ. Ճէնքինսը-
նի տուած ծածկոյթներովը սենեակին մէկ խոր-
շըն անկողինս շինեցի։ Յետոյ առաջնորդս՝ որ
բաւական պարկեշտ էր՝ զիշեր բարի ըսաւ ին-
ձի ու գնաց։ Ես ալ իմ սովորական ազօթքա
ընելէ, եւ զիս պատժող զերագոյն էակին գո-
հութիւնն մատուցանելէ ետեւ՝ պառկեցայ եւ
մինչեւ առաւծոտ ամենահանգիստ քուն մը նըն-
ջեցի։

ԳԼՈՒԽ ԻԶ .

Բ-Ա-Ն-Դ-Ի-Ն-Հ-Յ-Ե-Ր-Ե-Ր-Ե-Ն : ՕՐԵ-Ն-Ժ-Ա-Ն-Շ-Ե-Ն
Ը-Լ-Ե-Մ-Մ- Հ-Ե-Մ- Պ-Ե-Ր- Վ-Ի-Ն- Է-Ն-Մ-Վ-Ե-Ն-
Ն-Ե-Ն-Ե-Ն- Ե-Ն- Վ-Ե-Ր-Ե-Ր-Ե-Ն- -Ն :

Հետեւեալ առաւօտուն կանուխ արթընց
այ ընտանեացս հեծութեան ձայներէն , որ
անկողնիս բոլորտիքը կեցած կուլային : Մեղմաբար յանդիմանեցի իրենց այս վշտակրութիւնը , հաւաստելով որ այն դիշերուան պէս
հանգիստ քնացած չունէի : Ցետոյ լուր հարցուցի մեծ աղջկանս վրայ որ հետերնին չէր ,
եւ իմացայ որ առջի օրուան կրած տագնապէն
ու յոդնութենէն տենդն աւելցած ըլլալուն
համար տունը թողուլ պատշաճ դատեր էին :
Առաջին փոյթս եղաւ որդիս զրկել որ բանտիս
հնար եղածին չափ մօտերը մէկ կամերկու սենու
եակ վարձէ ընտանեացս բնակութեանը հա-
մար : Գնաց եւ միայն մէկ սենեակ մը գտաւ
դիւրին վարձով մօրն ու քոյրերուն բնակու-
թեանը համար , եւ բանտապետն ալ մարդա-
սիրաբար հաճեցաւ թող տալու որ երեք արու-
որդիքս ինձի հետ բանտին մէջ կենան : Ուստի

անկողին մը շինեցի սենեակիս մէկ անկիւնը :
Բայց կուզէի նախ գիտնալթէ փոքր տղայքս
յանձն կառնուն ննջել բանտին սենեկին մէջ՝
որ դիրենք զարհուրեցուցերէր առաջին ան-
գամներս մտած ժամանակնին :

« Որդեակներս , ըսի , ի՞նչպէս կը գտնէք
ձեր անկողինը : Լարձեմ որ այս սենեակիս մէջ
պառկելէ չէք վախնար , որչափ եւ մութ կե-
րեւի ձեզ : — Ոչ , հայրիկ , ըսաւ Ռիքարտիկս ,
գուն ուր որ ըլլաս , հոն պառկելէ չեմ վախ-
նար : — Ես ալ , ըսաւ Ռիկիամիկս որ գեռ
չորս տարու էր , հօրս եղած տեղն ուրիշ ամեն
տեղերէ աւելի կը սիրեմ : »

Յետոյ ընտանեացս գործերը կարգի զրի-
կրտսեր աղջիկս իր քոյրը պիտի խնամէր , ո-
րուն առողջութիւնն օր քան զօր գէշնալու
վրայ էր , կինս քովս պիտի կենար , եւ փոքր
տղայքս ալ քովս ընթերցանութիւն պիտի ը-
նէին : « Խակ դուն , որդեակ , ըսի Մովսէսիս ,
ձեռացդ աշխատութեամբը մեղ պիտի պահես :
Քու աւուրչէքդ կրնայ բաւականասիրու-
թեամբ մեր անհրաժեշտ պարէնը հայթայթել :
Դուն հիմա տամնեւ վեց տարու ես , ուժեղ եւ
կորովի ես , եւնախախնամութիւնն ալ առանց
պատճառի չէ տուած այդ ուժը քեզի : Ան-
շուշտ այն մոոք տուած է , որ հայրդ մայրդ

եւ դժբաղդ ընտանիքդ անօթութենէ ազատես : Ուրեմն այսօրէն պատրաստուէ քեզի դործ դտնելու վաղուան համար , եւ ամեն օր շահած ստակդ իրիկունը մեզի բեր : »

Այսպէս ամենն բան կարգի գնելէ ետեւ հասարակաց բանտը իջայ , ուր իմ սենեակէս աւելի օդ կը բանէր . բայց շատ չանցած ամոն կողմանէ ականջիս հասած յիշոցները հայհոյութիւններն ու ղաղիրխօսքերը զիսնորէն իմ մենարանս փախուցին : Հոն քիչ մը ժամանակ մտածեցիայս թշուառներուն տարօրինակ կուրութեանը վրայ , որոնք բոլոր աշխարհ իրենց գէմ զինեալ տեսնելէ ետեւ , յաւիտենականութեան մէջ ալ իրենց ահաւոր թշնամի մը պատրաստելու կաշխատէին :

Իրենց անզգայութիւնը զիս կարեկցութեան շարժեց , եւ վայրկեան մը իմ բուն թըշւառութիւնո մտքէօ հսնեց : Մինչեւ անդամ ինձ այնպէս թուեցաւ որ եկեղեցական աստիճանիս պարտականութիւնն էր զանոնք իրենց յիմար ճանքէն ետ քաշել : Ուստինորէն որոշեցի հասարակաց բանտը երթալ , եւ անոնց արհամարհանքը մտիկ չընելով խրատ տալ եւ յարատեւութեամբ անոնց յաղթել : Ուստինորէն մէջերնին մտնելով դիտաւորութիւնս Պ . ձէնքինաընին յայտնեցի , որ ծիծաղեցաւ եւ

բանտարկելոց հաղորդեց։ Առաջարկութիւնս
ուրախութեամբ ընդունուեցաւ, վասն զի ըզ-
քօսանաց նոր նիւթ մը կը մատակարարէր այն-
պիսի մարդոց, որոնք իրենց զուարթանալու
միջոցները ծաղրէ եւ աղակատանքէ միայն
կրնային քաղել։

Ուստի կրօնական պաշտաման մէկ մասը
քաբձր ձայնիւ՝ բայց անկեղծ պարզութեամբ
կարդացի, եւ տեսայ որ ունկնդիրներուս զը-
ուարթութիւն կը պատճառէր։ Մէկ մէկու
ականջն 'ի վար անպարկեշտ խօսքեր, սուտ
ապաշտանաց հեծութիւններ, աչքի ծաղրա-
կան շարժումներ եւ կեղծ հազ մը զիրենք կա-
մակար կը ծիծաղեցընէր։ Սակայն ես սովորա-
կան լրջութեամբս ընթերցուածը շարունա-
կեցի, համոզուած ըլլալով որ իմ ըրածս կը-
նար մէկ քանին դարձի բերել, բայց միւսնե-
րուն սրհամարհանօքն ալ չէր կրնար երբէք
պղծիւ։

Ազօթքները լմնցընելէս ետեւ քարոզ մը
խօսեցայ, որուն մէջ միտքս դրեր էի զանոնք
զրօսցընել քան թէ կշտամբել առջիքերանը։
Դիտել տուինախ թէ իմ ըրածս իրենց օգտա-
կար ըլլալու դիտաւորութեամբ էր միայն.
Ես իրենց կապանաց ընկերն էի, եւ քարոզ-
ներս ինձի նիւթական շահ մը չէին կրնար բե-

րել։ Կը ցաւէի զիրենք այն աստիճանն ամբարիշտ տեսնելուս վրայ ։ Վասն զի ամբարշտութեամբ բան մը չէին կրնար շահիլ, այլ մանաւանդ կը կորսնցընէին։ « Աներկբայ եղիք, բարեկամք, վասն զի գուք իմ բարեկամներս էք, թէ եւ աշխարհ կը մերժէ ձեր բարեկամութիւնը, աներկբայ եղիք, կըսեմ, որ օրը տասն հազար հայհոյութիւն ընէք՝ ծոցերնիդ ստակ մը չմտներ։ Ի՞նչ կը նշանակէ ուրեմն ամեն վայրկեանն սատանան կանչել եւ անոր բարեկամութիւնը փնտռելը, որովհետեւ կը տեսնէք թէ ձեզի հետ խիստ գէշ կը վարուի։ Կը տեսնէք որ ձեզի բնաւ բան մը չէ տուած հոս, բայց միայն հայհոյութեամբ լեցուն բերան մը ։ իսկ փորերնիդ դատարկ թողուցերէ։ Եթէ զանի լաւ կը ճանչեմ, անտարակոյս եմ որ այսուհետեւ ալ ձեզի լաւ բան մը տալիք չունի։

« Եթէ մարդ մը մեզի հետ լաւ չվարուի, բնականաբար զանի կը ձգենք եւ ուրիշի հետ կը բարեկամանանք։ Ուրիշն աւելի լաւ չը լւար ուրիշ տիրոջ մը հետ բարեկամանալ որ ձեզ իրենյարելու համար դժուէ գեղեցիկ խոստումներ կընէ։ Սնչուշտ, բարեկամք, խենթերուն ամենէն մեծը կըլլայ այն մարդը՝ որ առն մը կողուղտելէ ետեւ երթայ ինքղինք

ոստիկանութեան զինուորներուն պաշտպա-
նութեանը ներքեւ դնէ . եւ սակայն դուք այն
մարդէն աւելի խելացի՞ էք : Ամենքդ ալ ձեղ
խաբողին սղաշտագանութիւնը կը վնասը էք ,
եւ կերթաք ոստիկանութեան զինուորներէն
աւելի գէշ էակի մը ինքզինքնիդ կը յանձնէք .
վասն զի ոստիկանութեան զինուորները ձեղ
բռնելու եւ ետքն ալ կախելու միայն կաշխա-
տին , բայց միւօը ոչ միայն ձեղ կը բռնէ ու
կափել կուտայ , այլ՝ որ աւելի գէշն է՝ կախ-
ուելնէդ ետքն ալ ձեղ թող չտար :

Երբոր լմնցուցի , ունկնդիրներս չնորհա-
կալ եղան . մէջներնէն ումանք եկան ձեռքսրբու-
նեցին , եւ թոթուելով երդում ըրին թէ ես
սղարկեշտ մարդ մ'էի , եւ թէ կուզէին աւելի
ընդարձակ ծանօթութիւն մը կապել հետո :
Ուստի խոստացայ իրենց որ հետեւեալ օրը նու-
րէն ժամասացութիւն ընկեմ , եւ սկսայ յոյժ
ունենալ բանտին մէջ բարեկարգութիւն մը ը-
նելու . վասն զի ես միշտ համոզուած եմ որ
մարդ մը՝ որչափ եւ երեսէ ինկած ու արհա-
մարհեալ ըլլայ՝ վրան յուսահատիլ պէտք չէ .
որովհետեւ անոր սիրտը միշտ բացէ յանդիմա-
նութեան , թէ որ աղեղնաւորը գիտէ լաւ նը-
շան առնուլ եւ յարմար կողմին զարնել : Եր-
բոք այսպէս սիրտա գոհ ըրի , սենմեակտ դարւ-

ձայ , ուր կինս աղքատիկ ճաշ մը պատրաս-
տեր էր : Հոն գտայ նաեւ Պ . Ճէնքինսըն , որ
ինէ ներում խնդրեց իր ճաշը մերինին հետ միւ-
ացընելու , որպէս զի , կըսէր քաղաքավարու-
թեամբ , ինծի հետ խօսակցելու բերկրութիւ-
նը ունենայ : Դեռ տեսած չէր ընտանիքս .
վասն զի նեղ ճանքուն վրայ բացուող դռնէ մը
սենեակս գալուն համար հասարակաց սենեա-
կէն անցնելու պարտաւորեալ չէր : Պ . Ճէն-
քինսըն՝ առաջին անգամ կրտսեր աղջիկս տես-
նելուն՝ զիտես թէ զարնուեցաւ անոր գեղեց-
կութենէն , որուն աւելի պայծառութիւն մը
տուեր էր իր մտայոյդ դէմքը : Փոքր աղայքս
ալնմանապէս անոր ուշադրութիւնը զրաւե-
ցին :

« Աւաղ , վարդապետ , ըսաւ ինծի , այս-
պիսի գեղեցիկ եւ բարեկիրթ տղայոց ասանկ
գէշ բնակարան չվայլեր : »

« Ո՞հ , Պ . Ճէնքինսըն , պատաօխանեցի ,
օրհնեալէ Աստուած որ զաւկներս բարի վարք
ունին . եթէ առաքինի են՝ մնացեալը հոգ չեմ
ըներ :

« Կարծեմ որ ձեր վարիկ ընտանիքը քո-
վերնիդ ունենալնիդ մեծ մխիթարութիւն մէ
ձեզ : »

« Մխիթարութիւն , պատասխանեցի .

հհ , այու Պ . ՃԵՆՔԻՆԱԾՆ , արդարեւ մեծ մը-
խիթարութիւն մ'է ինձի համար , եւ չեմու-
զեր երբէք բաժնութիւ ասհնցմէ . վասն զի կըր-
նան բանտս պալատ դար ճընել . Աշխարհի մէջ
իմ երջանկութիւնս աւրելու մէկ միջոց մը մի-
այն կայ . այն է ընտանեացս վնաս հասցունել :

« Եթէ այդպէս է , Պարոն , կը վախնամ
որ ձեր առջեւ յանցաւոր եղած ըլլամ . վասն
զի հոս մէկը կը տեսնեմ (Մովսէսիս նայելով) .
որուն վնաս հասուցած եմ , եւ որմէ ներում
կը խնդրեմ :

Որդիս խոկոյն յիշեց անոր ձայնն ու դէմ-
քը , թէ եւ այն ժամանակ զանի ծպտեալ տե-
սեր էր , եւ ձեռքը բռնելով զուարթութեամբ
ներեց : « Սակայն ըսաւ . կը զարմանամ թէ
ինչպէս իմ երեսս նայելով դիւրախար որս մը
ըլլալս կրցաք հասկընալ :

« Միրելի Պարոն , ըսաւ Պ . ՃԵՆՔԻՆԱԾՆ ,
ձեր դէմքը չէր որ զիս քաջալերեց ձեզ խա-
բելու , այլ ձեր ճերմակ զուլպաներն եւ վար-
ոակալսեւ ժապաւէնը : Բայց այս ամօթ բան
մը չէ ձեզի . ես ժամանակաւ ձենէ շատ աւե-
լի խորամանկներն ալ խաբած եմ . եւ սակայն
իմ ամենն ճարտարմտութեամբս վերջապէս ան-
խելքներէն բռնուեցայ :

« Կարծեմ որ , ըսաւ որդիս , ձեզի պէս

մարդու մը կենաց պատմութիւնը զուարծաւ-
լի եւ կրթական է : »

« Երկուքն ալ չէ , ըսաւ Պ . ՃԵՆՔԻՆՍԸՆ :
Այսպիսի պատմութիւնները՝ որ մարդկու-
թեան նենգութիւններն ու մոլութիւնները
կը նկարագրեն , մեր աշխարհի մէջ յառաջա-
դիմութիւնը կուշացընեն՝ մեղ չափազանց
կառկածոտ ընելով մեր կենաց մէջ : Ճանա-
պարհորդ մը՝ որ ամեն դէմնելած մարդոց վը-
րայ կը կասկածի , եւ ամեն տեսած մարդը գող
կարծելով ետ կը դառնայ . խիստ քիչ անգամ
կը կասկածի , եւ ամեն տեսած մարդը ժամանակին հաս-
նիլ :

« Ինձի համար , ես իմ փորձովս կը կար-
ծեմ թէ խորամանկ մարդը՝ մարդոց ամենէն
անմիտն է : Տղայութենէս ՚ի վեր զիս խորա-
մանկի տեղ դրած էին : Եօթն տարու էի , կա-
նայք կըսէին թէ կատարեալ մարդու խելք
ունէի : Տամնեւչորս տարու եղած ժամանակս
աշխարհ կը ճանչէի , չափահաս մարդոց վարք
ունէի եւ կանանց կը քծնէի : Երբոր քսան տա-
րու եղայ , այն աստիճան խորամանկ համբաւ-
ուած էի , որ մէկը չէր ուզեր ինձի հետ գործ
ունենալ : Ուստի հարկադրեցայ վերջապէս
զիս պաշտպանելու համար խարեբայ ըլլալու ,
եւ այսուհետեւ գլուխս խարէութեան խոր-

հուրդներով եւ սիրտս ալ բռնուելու երկիւղով
լցուած ապրեցայ:

« Յովորութիւն ունէի ձեր գրացի բարե-
միտ ֆլամպօրուի անկեղծ պարզութեանը վը-
րայ ծիծաղելու , եւ որ եւ իցէ կերպով զանի
գոնէ տարին անգամ մը կը խարէի . Բայց այն
պարզամիտ եւ անկասկած մարդն իր ճանքան
շարունակելով հարստացաւ . իսկ ես խարէու-
թիւնն ու նենգութիւնը շարունակելով՝ աղ-
քատ մնացի՝ առանց պարկեցտութեան միսի-
թարութիւնն ունենալու :

« Սակայն , ըստ ինձի , կը խնդրեմ որ
դուք պատմէք ինձի ձեր գլխուն եկածները ,
եւ մանաւանդ այս բանտը եկած ինկած ըլ-
լալնուդ պատճառը : Ես թէ պէտիմ բոլոր ճար-
պիկութեամբս չկրցայ բանտարկութենէ ա-
ղատ մնալ , թերեւս կրնամ բարեկամներս
ասկէց աղատելու հնարք մը գտնել . »

Պ . Ճէնքինաընի հետաքրքրութիւնը գոն
ընելու համար՝ պատմեցի զլուխս եկած ա-
մեն արկածները , որով այս թշուառութեան
մէջ ինկած էի , եւ աղատութեան ելք մը զըտ-
նելու կամ թշուառութեանս դարման մը ընե-
լու բացարձակ անկարողութիւնս ալ հասկը-
ցուցի իրեն :

Երբոր պատմութիւնս լսեց , քանի մը

վայրկեան մտածեց , եւ յետոյ ձեռքը ճակտին զարնելով , որպէս թէ կարեւոր խորհուրդ մը մտքին մէջ ծագեր էր , բաժնուեցաւ մենէ ըսելով թէ ինչ որ կարելի էր պիտի փորձէր մեր ազատութեանը համար ,

ԳԼՈՒԽ ԻԵ .

Ն-Յ-Հ-Ռ-Յ Հ-Ր-Ա-Խ-Ո-Ւ-Ռ-Շ :

Հետեւեալ առաւօտուն կնոջս եւ որդւոցս խմացուցի բանտարկեալները բարեկարգելու դիտաւորութիւնս . Զհաւնեցան ամենեւին , առարկելով թէ ոչ հնարաւոր էր եւ ոչ պատշաճ . եւ աւելցուցին թէ ընելիք ջանքս պարապը պիտի երթարեւ վարդապետական պատոնիս յարգն ալ պիտի կոտրէր :

« Ներեցէք ինձի , ըսի իրենց . այս անձինքը՝ թէ եւ բարոյապէս վատթարացած են , բայց եւ այնպէս մարդ են , ուստի պարտաւոր ենք սիրելու : Մերժուած բարի խրատները տուովին կը դառնան եւ զանի կը հարստացընեն . իմտուած խրատներս ալ թերեւս չկընան ուղղել զանոնք , բայց աներկըայ եմ որ վիս կրնան լաւագոյն ընել , թէ որ այս թըշ-

ւառները թագաւորներ կամ իշխաններ ըլլա-
յին , հազարաւոր մարդիկ անոնց պաշտօն մա-
տուցանելու պիտի փութային . բայց ըստ իմ
կարծեաց , հոգի մը թէ եւ բանափ մէջ թաղ-
ուած ըլլայ . գահի վրայ բազմեալին չափ պատ-
ուական է : Այս , որդեակք իմ , եթէ կընամ
զանոնք բարելաւել , կը ջանամ : Յերեւս ա-
մենն ալ չեն արհամարհեր զիս . թերեւս կա-
ռող կըլլամ անոնցմէ մէկը անդունդէն հանե-
լու , եւ այս ալ մեծ շահ մ'է : Վասն զի կայ
աշխարհի մէջ մարդու հոգիէն ծանրագին ա-
գամանդ մը : »

Այս խօսքերն ըսելով , մեկնեցայ ընտան-
եացս քովէն եւ հասարակաց սենեակն իջայ ,
թւր բանտարկեալները մեծ ուրախութեամբ
զիս կ'սպասէին , եւ ամեն մէկը պատրաստուեր
էր բանափ մէջ սովորական եղած խաղ մը վար-
դապետին ընելու : Ուստի երբոր ժամասա-
ցութիւնս սկսելու վրայ էի , մէկը կեղծամս կը
դարձրնէր , եւ դիպուածով ըրածի պէս նե-
րում կը խնդրէր : Ուրիշ մը՝ որ բաւական հե-
ռուն կանգնած իր ակուաներուն մէջէն թու-
քը դուրս ցատկեցընելու յատուկ ճարտարու-
թիւնմը ունէր , զրքիս վրայ թուք կարձակէր :
Երրորդ մը Ան կը գոչէր կեղծ ջերմնուանդու .
թեամբ մը՝ որ միւսներուն ծիծաղը կը շարժէր :

Չորրորդ մ'ալ ակնոցս վարպետութեամբ զըր՝
պանէս առեր էր : Բայց մէկը խաղ մը րրաւ որ
ամենէն աւելի խնդացուց բանաարկեալները :
Առջևւի սեղանիս վրայ գիրքերս ինչ կերպով
դրած ըլլալս դիտելով, ճարաարտթեամբ մէկ
հատը վերցուց, եւ անոր տեղ անալարկեալս
ծաղրաբանութեանց գիրք մը դրաւ : Սակայն
ես չնշմարել ձեւացընելով այս չարաճճի մար-
դոց ըրածները, հանդարառութեամբ պաշտօ-
նըս շարունակեցի, քաջ համոզուած ըլլալով որ
իմը ըրածիս մէջ ինչ որ իրենց ծաղրական կե-
րեւնար, առաջին եւ երկրորդ անդամ միայն
պիտի ծիծաղեցընէր դիրենք . իսկ սրաշտօնիս
լրջութիւնը տեւական աղղեցութիւն մը պի-
տի ընէր : Դիտաւորութիւնսյաջողեցաւ . հինդ
վեց աւուր մէջ մէկ քանին դարձան, եւ ամե-
նըն ալ ուշադրութիւնընել սկսան :

Այն ժամանակը գոհ եղայ իմ յարատեւ
ջանքէս ու յաջողակութենէս, որով կըր-
ցայ այսպէս ամենն բարոյական զդացում կոր-
սընցուցած չուառականներու զդացողութիւն
տալ . եւ խորհեցայ որ իրենց վիճակին թշուա-
ռութիւնը թեթեւցընելով ժամանակաւոր ծա-
ռայութիւն մը պիտի ընէի իրենց : Մինչեւ այն
տաեն իրենց ժամանակը անօթութեան ու
անառակութիւններու, չուայտ ցափութեամբ

ու սրտակէզ ապաշաւներու բաժնուած էր :
Իրենց միակ դրազմոնքն էր իրարու հետ կա-
գել , թուղթ խօսդալ , ծխախոսի կոխիչ շի-
նել : Այս վերջին մնութի զբաղմունքը խոր-
հուրդ տուաւ ինձի , օրաշխատելու յօժարու-
թիւն ունեցողները ծխախոս շինողներու և
կոչկակարներու համար պէտք եղած սեղեր
շինելու դորձածեմ : Պէտք եղած փայտը հա-
սարակաց ծախքովը կառնուէր ևւ երբոր բա-
ւական սեալ շինուէր , վաճառել կուտայի , եւ
այսպէս իւրաքանչիւրն ամոն օր բանմը կը շա-
հէր . արդարեւ վսասակինի խիստ թեթեւ բան
մ'էր , բայց պիրենք ապրեցընելու բաւական
էր :

Բայց ես մինակ ասով գոհ չեղայ : Անկար-
գութիւն ընողներուն համար տուգանք եւ
աշխատասէրներուն համար վարձք սահմանե-
ցի : Այսպէս , տամն եւ հինգ օր չանցած եր-
կու տեսակ ընկերութիւն կաղմեցի , եւ գոհ
եղայ նկատելով զիս իրին օրէնսդիր մը՝ որ
խումբ մը մարդիկ իրենց նախնական վայրագ
վիճակէն հաներ եւ բարեկամութիւն ու հնա-
զանդութիւն ուսուցիր էր իրենց :

Եատ փափաքելի էր որ օրէնսդրական իշ-
խանութիւնն ալ այսպէս օրէնքներն առաւել
Դէպ 'ի բարելաւութիւն ուղղէր՝ քան գէպ 'ի

պատիժ : Համոզուէր որ եղեռնութիւններն
արմատախիլընելու միջոցը՝ պատիժներն ընդ-
հանրացընելը չէ , այլ ահաւոր ընելն է : Փոխա-
նակ մեր այժմնան բանտերուն , որ եղեռնա-
դործ մարդիկը կընդունին կամ կարձակեն , որ
թշուառ մարդիկներ կընդունին յանցանք մը
զործած ըլլալնուն համար , և յետոյ դանո՞ք
մարդկային ընկերութեան կը գարձունեն .
Երբոր ողջ գուրա ենեն , նորէն հազար կերպ
չարութիւն գործելու պատրաստ , փափա-
քելի էր որ մենք ալ Եւրոպայի ուրիշերկիրնե-
րուն պէս յատուկ տեղեր ունենայինք զզջման
և առանձնութեան սահմանեալ , ուրամբաս-
տանեաւլները կարող ըլլային այնպիսի մարդիկ
քովերնին ունենալու՝ որ իրենց տպաշաւ աղ-
ցէին՝ և թէ յանցաւոր էին , կամ տուաքինու-
թեաննորանոր ճիգեր տղղէին՝ և թէ անմեղ
էին : Այս ճանքով և չէ թէ որատիժներն առ ել-
ցընելու և որ տէրութիւն մը կրնայ բարելաւէլ :
Մէնչեւ անգամ շեմ վարանիր ըսելու թէ ին-
ձի ազօրինաւոր կը թուի թեմին ոճիրները
մահուամբ պատժելու իրաւունքը՝ զոր մարդ-
կային ընկերութիւններն ինքզինքնուն կու-
տան : Ազանութեան առիժներու մէջ այս ի-
րաւունքն անժխտելի է . վասն դի ուրիշի
կեանքը շաբարողն իր կեանքէն զրկելը այն-

պիսի իրաւունք մ'է որ անձնական պաշտպանութեան իրաւունքն կը ծագի : Համայնքը նութեան կը զինի մարդուսպանին դէմ . բայց իմինչքո գողցողին համար այնպէս չէ : Բնական օրէնքն ինձի իրաւունք չտար գող մը ըստպաննելու , ըստ որում ինէ գողցած ձին՝ բընական օրինօք անոր ալ է : Ուստի եթէ իրաւունք մը ունիմ , մեր մէջ եղած պայմանադրութենէ մը կը ծագի , որ կը սահմանէ թէ ով որ մէկը իր ձիէն զրկէ՝ պիտի սպաննուի : Բայց նախ՝ այս պայմանադրութիւնն անվաւեր է , վասն զի մարդ մը իրաւունք չունի իրեն չեղած կեանքը տալու , ինչպէս որ ուրիշ մ'ալ իրաւունք չունի զայն ընդունելու , Երկրորդ՝ այս պայմանադրութիւնն անիրաւ ալ է . վասն զի մէջը համեմատութիւն չկայ . մինչեւ անդամ հասարակ դատարան մը կրնայ զայն կոտրել՝ իրբեւ չնչին զիւրութեան մը համար տարապայման պատիժ մը պարունակող . ըստ որում ոչ ոք կրնայ ժխտել թէ երկու մարդոց ապրիլը մէկ ուրիշի մը ձիով երթալէն շատ աւելի օգտակար է , Բայց պայմանադրութիւն մը՝ որ երկու մարդոց մէջ անվաւեր է՝ հարիւր հազարին մէջ ալ անվաւեր է . վասն զի ինչպէս որ տասն միլիոն շրջանակներ մէկ տեղ գալով չեն կրնար երբէք քառակուսի մը կազմել :

այնուէս ալ հազար միլիոն մարդոց ձայնը չի
կրնար էապէս անվաւերը վաւերական ընել։
Այս է բնութեան եւ տրամախոհութեան լի-
դուն։ Վայրենիները՝ որ գրեթէ միմիայն բը-
նութեան օրէնքով կը վարուին, մենէ աւելի
կը յարգեն իրարու կեանքը։ Վասն զի միմիայն
մարդառապանութեան անդթութիւնը մահ-
ուամբ պատժելու համար արիւնհեղութիւն
կընեն։

Մեր նախնիքը՝ Սաքսօնները՝ որչափ եւ
անդութ էին պատերազմի ժամանակ, այնչափ
քիչ մարդ կը մահացընէին խաղաղութեան
ատեն։ Եւ ամեն նորածին կառավարութիւն-
ներու մէջ՝ որք դեռ բնութեան տիսլը կը կը-
րեն։ մահուամբ պատժուող ոճիր գրեթէ չկայ։

Իսկ օրէ օր բարակցող տէրութեան մը
քաղաքացիներուն մէջ, պատժական օրէնք-
ները՝ որ հարուստներուն ծեռքն են, աղքա-
տաց վրայ կը դրուին բռնապէս։ Կառավարու-
թիւնը՝ քանի որ կը ծերանսայ, գիտես թէ ծե-
րութեան դեգ եւ դաժան բնութիւնը կ'ստա-
նայ. եւ որպէս թէ հարստութիւնները քանի որ
շատնան՝ այնչափ աւելի կազմուանան, կամ
թէ մեր գանձերը որչափ աճին՝ այնչափ եր-
կիւղնիս ալ կ'աճի, ուստի մեր ստացուածներն
ամեն օր կը ցցապատեն նորանոր հրովարտակ-

ներով, եւ բոլորտիքն ալ կախաղաններ կը տընկեն, որպէս զիգրաւելուզողները զարհութին:

Արդեօք պատժական օրինաց կարգէ դուրս շատութեանը թէ մեր ժողովրդին բարուց ապականութեան պատճառաւն է որ այս երկիրը՝ մէկ տարուան մէջ՝ համայն Եւրոպայի կէսէն աւելի դատապարտեալ կարտադրէ : Թերեւս այս երկու պատճառն ալ կայ, վասն զի մէկը միւսին ծնունդն է : Երբոր պատժական օրէնքներն առանց զանազանութեան հաւասար պատիժ կը սահմանեն այնպիսի գործոց համար որք պարագաներով իրարմէ կը տարբերին, ժողովուրդը՝ որ պատժոյ մէջ զանազանութիւն չտեսներ, կը վարժուի յանցանաց մէջ ալ զանազանութիւն չտեսնելու . բայց սակայն այս զանազանութիւնը մարդկային գործոց բարոյականութեան պատուալնէ : Ահա այս պատճառաւ է որ օրինաց բազմութիւնը նորանոր յանցանքներ յառաջ կը բերէ, եւ նոր յանցանքներն ալ նոր օրէնքներ կը պահանջեն :

Ուրեմն փափաքելի էր, որ իշխանութիւնը՝ փոխանակ յանցանքները պատժելու համար նոր օրէնքներ հնարելու, փոխանակ ընկերութեան կապերն այնչափ սեղմելու որ դանոնք խզող բուռն ճիգեր յառաջ բերեն, փո-

խանակ յանցաւորներուն ինչ բանի օդտակար ըլլալը փորձելէ առաջ զանոնք իբրեւ անսպիտան մեռցընել տալու . փոխանակ ուղղութիւնը վրէժիմսղրութեան փոխարկելու , փափաքելի էր , կըսեմ , որ իշխանութիւնը յանցանաց առաջքն առնելու միջոցներն 'ի գործ դնէր , եւ այնպիսի օրէնքներ սահմանէր որ աւելի պաշտպանէին ժողովուրդը՝ քան թէ հարստահարէին : Այն ժամանակը կը տեսնէինք , որ այն արարածները՝ որոց հոգին կզկըզանք կը թուի , զտուելու միայն պէտք ունէին . կը տեսնէինք , որ այն թշուառները՝ զորո հիմա երկար եւ անխնայ չարչարանքներու կը դատապարտենք վախնալով որ մի գուցէ զեղիսութիւնը վայրկեան մը վշտանայ , եթէ պատշաճապէս խնամուէին , կրնային վտանգի ժամանակ տէրութիւնը զօրացընել . կը տեսնէինք , որ ինչպէս դէմքերնին՝ նոյնպէս սիրտերնին ալ մերինին կը նմանի . կը տեսնէինք , որ քիչ սիրտ կրնայ զտնուիլ այն աստիճան ապականեալ՝ որ յարատեւ ջանքով չկրնայ ուղղիլ . կը տեսնէինք , որ մարդ մը կրնայ իր յանցանաց վերջը տեսնելառանց 'ի մահ դատապարտուելու , եւ մեր ապահովութիւնն ամրացընելու համար այնչափ արիւն պէտք չըլլար :

ԳԼՈՒԽ ԻԸ

Երջանիս լուսաւ ու լուսաւ լուսաւ այս իւնահի մէջ անելէ
իւնահի մուտքաւ արդասի և ան լիկ պատճենաւ ու լուսաւ լուսաւ ան-
դարձային բարձին ու լուսին ըստ ինչեան այնուած վայրին բա-
ներ իւն համբաւին Երինից առջև, որ անոնց բաշխաւան
անդամ էր հագուստաւին արժանի համարէ :

Արդէն տասնեւհինգ օրէն աւելի էր որ բան-
տըն էի, դեռ սիրելի Օլիվիաս անդամ մը քո-
վոս չէր եկեր, եւ ես ալ մեծ փափաք ունեի
զինքը տեսնելու : Այս փափաքս կնոջս յայտ-
նելով, հետեւեալ առաւօտուն խեղճ աղջիկս
սենեակս մտաւ քրոջը թեւերուն կրթնած :
Կրած փափոխութիւնը զիս ապշեցուց Առջի
գեղեցկութիւնը բոլորովին աւրուեր էր դի-
տես թէ մահուան ձեռքն անոր գէմքը այլա-
փոխեր էր զիս վախցընելու համար, քունքե-
րը խորունկցեր էին, ճակատը ձկտեր էր, եւ
այտերուն վրայ մահագուշակ գեղնութիւն մը
տարածուեր էր :

« Շատ ուրախ եմ քեզ տեսնելուս, սիրե-
մի աղջիկս, գոչեցի, բայց ինչու այդպէս վա-
տեր ես : Կը յուտամ որ զիս կը սիրես, եւ շես
թողուր որ տրամութիւնք մաշեցընէ արդ կետե-

Քը՝ որ իմբնիս չափ կը յարգեմ, քաջ եղիր, աղջիկս, եւ կրնանք տակաւ ն երջանիկ օրեր տեսնել։ »

« Դուք միշտ զութ եւ սերցուցրցած էք յնձի, սիրելի հայրիկ, պատախանեց աղջիկը, եւ իմ ցաւս աւելի կը շատնայ երբոր կը տեսնեմ որ ես չպիտի կրնամ մասնակցիլ այդ երջանկութեան որ յնձի կը խոստանաք, կը վախնամ որ այ այս աշխարհիս մէջ երջանկութիւն չկայ ինձի համար . եւ կը բաղձամժամ մառաջ ազատիլ այս երկրէն՝ուր թշուառութենէ զատ ուրիշ բան չգտայ, կը փափաքէի, սիրելի հայրիկ, որ Պ. Թօրնէիլի հնազանդութիւն ընելով բարկութիւնն իշեցընէիք, որպէս զի մեռած ատենս զոնէ ձեզ ազատ տեսնելու մխիթարութիւնն ունենայի»։ »

« Երբէք, աղջիկս, ըսի, երբէք չեմ յանձն առնուր իմ աղջիկս պոռնիկ ճանչել, վասն զի թէ եւ աշխարհք կարենայ քու սըսալմանդ վրայ արհամարհանօք նայիլ, ես քու դիւրահաւանութեանդ մէկ նշանը կը համարիմ զայն եւ ոչ սրտիդ ապականութեան արդիւնք, Աիրելիս, ես ամենեւին թշուառ չեմ այս տեղ, որչափ եւ դժոխային երեւնայ, եւ աներկրայ եղիր թէ քանի որ քեզ վայելելու երջանկութիւնն ունենամ, երբէք չպիտի կըր»

նայինէ հաճութիւն ստանալ քեզ աւելիթըշ-
ւառ ընելու . չպիտի իժողուժ որ ուրիշ կի՞ն մը
առնու : »

Աղջիկս դուրս ելնելէն ետեւ , բանտար-
կութեան ընկերս (Պ. ձէնքինսըն)՝ որ մեր խօ-
սակցութեանը ներկայ էր , լուրջ դիտողու-
թիւններ ըրաւ իմ յամառութեանս վրայ , ոք
չէի ուզեր Պ. Թօրնհիլի առաջարկութիւնն
ընդունիլ եւ ազատութիւնս ձեռք բնրել :
Դիտողութիւն ըրաւթէ պէտք չէր որ ընտան-
եացս միւս անդամները մէկ զաւկի մը զո՞ն ըլ-
լային , մանաւանդ այն զաւկիո՞որ մշայն դըժ-
գոհութեան առիթներ տուած է ինձ : « Աս-
կէց զատ , ըստ , չեմ զիտեր թէ արդարու-
թիւն է մարդու եւ կնոջ միութեանը զէմկե-
նալ , ինչպէս որ դուք հիմա կընէք , հաճու-
թիւն չտալով այնպիսի միութեան մը՝ որ չէք
կրնար խստիանել , բայց կրնաք թշուառ ը-
նել : »

« Պարո՞ն , սկատասխանեցի , դուք չէք
հանչեր մեղ հարստահարող մարդը : Ես քաջ
համոզուած եմ որ թէ եւ անոր ամենն կամ-
քը կատարելու խոնարհէի , ժամ մը ազատու-
թիւն չէի կրնար ձեռք բերել : Ըսին ինձի , թէ
անցեալ տարի , իր սկատասկաններէն մէկը՝ ոք
սոյն սենեակիս մէջ բանտարկուած էր , անօթի

մեռաւ : Բայց , եթէ անոր կամքը կատարելով եւ ամուսնութեանը հաճութիւն տարով կրնայի ասկէ ելնել եւ անոր ամենէն զեզեցիկ սենեակներէն մէկուն մէջ բնակիլ . երկուքն ալ յանձն չէի առնուր . վասն զի կարծես թէ ներսէս բան մը կիմացոնէ ինձի թէ շնութեան մը հաճութիւն տուած պիտի ըլլայի : Քանի որ աղջիկս կենդանի ըլլայ , Պ. Թօրնհի չկրնար երբէք օրինաւորապէս ամուսնանալ : Խոկ եթէ աղջիկս մեռած ըլլար . արդարեւ ամենացած մարդ մը եղած կըլլայի , եթէ իրարու հետ մրանալու փափաքողները քինախնդրութեամբ իրարմէ բաժնել ուզէի : Որչափ անպարկեշտ մարդ ըլլայ , կուզէի որ ամուսնանար , որպէս զի ապագայ անառակութեանցն առաջքն առնուէր . քայդ հիւա , հայրերուն ամենէն անդութը չէի՞ Ըլլար՝ եթէ ինք զինքս բանտէն աղատելու համոր այնպիսի պայմանագիր մը ստորագրէի որ աղջիկս գերեզման իջուցնէր , եւ իմ առառապահոց վերջ տալու համար՝ հաղարապատիկ աւելի դառն վիշտ պատճառէի դաւկիո : »

Բանտակիցս իրաւունք տուաւ ինձի . բայց չկրցաւ զանց ընել սա զիտողութիւնը , թէ ուզ կանո մահաներձ վիճակին նայելով բանալն մէջ երկար ժամանակ կենալիք շունէի :

« Սակայն . շարունակեց , եթէ չէք ուղեր գը-
լուխ օռել երիտասաա . դ ֆօրմնիլ ու կը յու առև
որ չէք Դ միամալիլ ձեր լիշտն առոր հօրեզ-
քօրըյա անելու , որ այս երլրին անուկն պար-
կեցտ եւ արդարասէր մարդք համարուած է :
Կուզէի որ թղթատարավնամակ մը դրկէիք եւ
իր եզր օրորդւոյն ձեզի հասուցած շարիքն ի-
մացընէիք իրեն : Անանքս զրաւ կը զնեմ , որ
մինչեւ երեք օր պատասխան մը կ'ստանայիք
անկէ : » Ծնորհակալ եզայ այս տուած խոր-
հուրդին համար , եւ անմիջապէս նատաց նա-
մակ գրելու . բայց դժբաղգաբար թուղթ չու-
նէի , վասն զի ուսնեցած բոլոր սաակօնոյն առ-
ուատօտուն ուսելիք հայթայ Եելու գործածեր
էի . բանտակիցս մարդասիրաբար թուղթ տը-
ռաւ ինձի , եւ նամակը գրեցի զրկեցի :

Հետեւեալ երեք օրը սրտաաանջութեան
մէջ էի թէ արգեօք նամակս ինչ ընդունելու-
թիւն պիտի գտնէր . բայց նոյն միջոցին կիսա
անգաղսր զիս կը թախանձէր . որ փոխանակ
այս վիճակին մէջ լենալու , ամեն կերպ պայ-
ման յանձն առնեռմ . եւ ամեն վայրիեան բուր
կուտային ինձի թէ աղջկանո առողջութիւնն
հետ շնորհ կը գեշնար : Երբորդ եւ չորրդ
օրերն անցան՝ նամակիս պատասխան չուու-
ցայ : Ալեւոյթ աւշիար որ սիրելի երբօրդորդ :

ւոյ մը դէմ անծանօթ մարդու մը դանգառ-
ները մտիկ ըլլուէին . ուստի այս յոյսս ալ
միւսներուն պէս շուտով ցնդեցաւ : Աակայն
մտքիս զօրութիւնը դեռ չէր պակսեր , թէ եւ
բանտարկութիւնն ու ապականեալ օդն սկը-
սեր էին արդէն առողջութիւնս խանդարել ,
եւ թեւիս վերքն ալ կը դէշնար . բայց զաւկը-
ներս քովս էին , եւ մինչ ես խոտին վրայ պառ-
կած էի , անոնք կարգաւ գիրք կը կարդային
ինձի , կամ իմխրատներս մտիկ կընէին ու կու-
լային : Աակայն աղջկանս առողջութիւնն իմի-
նէս շուտ կը տկարանար : Իր վրայօք առած
տմեն մէկ լուրս հետզհետէ երկիւզո ու տըխ-
րութիւնս կաւելցընէր . Սրբ Ռւիլիըմ Յօրնհիլի
նամակ գրելուս հինգերորդ օրը գոյք բերին
ինձի թէ աղջիկս խօսելու կարողութիւնը կո-
րուսեր էր . Այն ժամանակ բանտը խիստ դա-
շըն եկաւ ինձի : Հոգիս կը փափաքէր մարմի-
նէս դուրս ելնել եւ աղջկոնս մահճին քով եր-
թալ , որպէս զի զանի միսիթարէր , զօրացընէր ,
վերջին խօսքերնընդունէր եւ երկնից ճանբան
ոովլեցընէր : Շատ չանցաւ եկան ըսին ինձի
թէ հոգեփարք էր , եւ սակայն վրանլալու տը-
կար միսիթարութենէն ալ զուրկ էի : Քիչ մը
ետքը բանտարկիցս վերջին լուրը բերաւ ինձի՝
յորդորելով որ համբնըութիւն ընեմ . աղջիկս

մեռեր էր : Հետեւեալ առաւօտուննորէն եկաւ
ու զիս երկու մանրերուս հետ գտաւ , որոնք
միայն քովա մոռացեր էին եւ իրենց ամեն ան-
մեղ ջանքն՝ի դործ կը գնէին զիս սփոփելու
համար : Կը պաղատէին որ ես ինձի համար
կարդամու չի լամ , վասն զի իմ ծեր հասակիս
լալ չէր վայլեր : «Քոյրս հիմա հրեշտակ չէ մի ,
հայրիկ , դոչեց մեծը . ուրեմն ինչու կը տըրտ-
միս անոր համար : Ես ալ կուզէի հրեշտակ ըլ-
լալ ու այս զաղիր տեղէն դուրս երնել , բայց
կուզեմ որ հարիկս ալ հետս ըլլայ : » Այս ,
յաւելցուց կրտսերը , երկինքը՝ ուր հիմա քոյ-
ըըս կը գտնուի : այս տեղէն աղւոր է : Հոն բա-
րի մարդիկ միայն կան . իսկ հոս տեղի մարդի-
կը չար են : »

Պ . Ճէնքինսըն անոնց անմեղ շաղակրա-
տութիւննընդ միջեց՝ զիտել տալով ինձի թէ
հիմա որ աղջիկս մեռած էր , ընտանեացս միւռ
անդամներուն վրայ ու շաղրութիւնս պէտք էր .
դարձունել , եւ իմ իսկ կեանքս աղատելու ջա-
նալ . որ չքաւորութենէս եւ օգին գէշութե-
նէն օր քան զօր կը վատէր : Յաւելցուց թէ իմ
աղարտքս էր հիմա ամեն ամբարհաւաճութիւն
ու քէն իմ խնամոցս կարօտ եղողներուն օգտին
համար զոհել , եւ թէ իմ քահանայական տա-
տիճանս ալ՝ արդարութիւնն ալ՝ զիս կը պար-

աւաւորէին կալուածատիրոջս հետ հաշտուիլ:

«Օրհնեալ է Աստուած, ըսի, հիմա ոչ ամբարհաւաճութիւն ունիմ, եւ ոչ ոխ: Ես ինքդինքրս կատէի եթէ հաւատայի որ սրտիս մէջ ծածկեալ վրէ ժխնդրութիւն ու ամբարտա անութիւն կա, զնդ հակառակին, որովհետեւի մհարրսացանարիչ ժամանակաւ իմ թեսնական ժողովուրդսէր, կրյուսամոր օր մը զանի անարտա հոգւով յաւիտենական ատենին կրներկայացընեմ: Ոչ, պարմո, հիմա ոխ չունիմ սրտիս մէջ, եւ թէ պէտձեռքէս յափշտակեց զայն՝ որ իր ամսն զանձերէն պատուականագոն էր ինձի, թէ զըտ սիրտս փեռեկեց, վասն զի ես հիմա մեռնելու հիւանդ եմ, բարեկամ, ծանր հիւանդ եմ, այսու ամեն պյնիւ ըրած ամսն շարիքն ինձի վրէ ժխնդրութեան տենչ ազգելիք չունին: Կը հաճիմ հիմա իր ամուսնութեանը հաւանութիւն տալու, եւ եթէ այս կամակատարութիւնս կրնայիրեն հաճելի ըլլալ, իմացուր իրեն, որ եթէ զինքը վշտացուցեր եմ՝ ներում կը խնդրեմիրէ: Պ, ձենքի սրն զրիչ եւ մելան առաւ եւ իմ այս խոնարհական զիջումս զրի առաւ նոյն իսլ իմը ըսած կերպովս, եւ եսալ սաորագրելով որդւոյս հետ Պ, Թօրնհիլի զրելեցի, որ այն ժամանակ իր գեղի ապարանքն էր, Գնաց որդիս եւ վեց ժամ չսնցած՝ զարձաւ

եկաւ բերանացի պատասխան մը բերելով : Առապետին գէմն ելնելու համար բաւական դըժուարութիւն կրեր էր , վասն զի ծառայները միրը եւ կասկածոտ էին . բայց վերջապէս դիպուածով տեսեր էր զանի երրոր դուրս կելնէր իր ամուսնութեանը վերաբերեալ գործերու համար , վասն զի հարմաքը երեք օրէն պիտի կատարուէր : Որդիս խորին ակնածութեամբ ասպետին մօտենալով՝ նամակս մատուցեր է : Պ. Թօրնհիլ՝ զայն կարդալէ ետեւ պատասխան տուեր է թէ հնազանդութեան ժամանակն անցած էր եւ ալ օգուտ չունէր . վասն զի իր հօրեղբօրը նամակ գրելս իմացեր էր , բայց նամակս արժանաւոր արհամարհանօք մէկդի նետուեր է եղեր Վերջապէս ըսեր է թէ այսուհետեւ ինչ առաջարկութիւն որ ունենամ , իր գործակալին պէտք է ուզում եւ ոչ իրեն . բայց աւելցուցեր է , թէ երկու օրիորդներուն խոհեմութեանը վրայ լաւ համարելմ ունենալուն , անոնց միջնորդութիւնն առաւել հաճոյ կրնար ըլլալ իրեն :

« Տեսմք հիմա , պարո՞ն , ըսի ընկերիս , մեզ հարստահարող մարդուն ի՞նչ բնութեան տէր ըլլալը . կրնայ միանդամայն անգութ եւ զուարճախօս ըլլալ . բայց ինչ որ կուղէ թող ընէ . քիչ ժամանակէն ես այս բանտէս ազատ

պիտի ըլլամ , որչափ եւ աղխ ու նիդ զարնէ զիս մէջը փակելու համար : Ահա կընթանամ դէպ 'ի այն օրը՝ որ աւելի պայծ առ կերեւնայ ինձի քանի որ կը մօտենամ : Այս ակնկալութիւնս իմ վիշտերս կ'սփոփէ , եւ թէպէտ որբ եւ անապաւէն ընտանիք մը կը թողումինէ ետեւ , սակայն կը յուսամ որ բոլորովին երեսի վրայ չեն մնար : Ծերեւսըարեկամմը կը գըտնուի որ իրենց խեղճ հօրը սիրոյն համար ձեռնտու կըլլայ իրենց . եւ ուրիշ մէկն ալ կը գտնուի , որ իրենց երկնաւոր հօրը սիրոյն համար կողրոմի իրենց :

Այս խօսքը դեռ բերանս էր . կինս՝ որ այն օրը դեռ չէի տեսեր , շուարած ու ահաբեկ ներս մտաւ , եւ խօսիլ կուզէրու չէր կըրնար : « Ի՞նչ ունիս , սիրելիս , գոչեցի , ինչու համար իմ վիշտս կաւելցընես քու թաղծութեամբդ : Այս , թէ եւ մեր անգութ կալուածատէրը չուզեր մեր հնապանդութեամբը ողոքիլ եւ 'ի գութ շարժիլ , թէ եւ այս թշուառ յարկին մէջ մեռնելու զիս կը դատապարտէ . եւ թէպէտ մեր սիրելի զաւակը կորուսինք , այսու ամենայնիւ ես մեռնելէս ետեւ տակաւին կընաս միսիթարուիլ մեր միւս զաւակնեռով : — Յիրաւի սիրելի զաւակ մը կորուսինք , ըստ կինս . Առիւաս , սիրուն Առիւաս կորաւ ,

ձեռուաշնուս գնաց , սրիկայները յափշտակեցին . — Խնչ կըսէք , տիկին , գոչեց բանտառիցս , օրիորդ Սովիան սրիկաներէ յափշտակուի : Այդ ըլլալիք բան չէ : »

Վինս անթարթ նայուածքով մ'եւ ուղխօրէն բղսած արտասուօք միայն կրցաւ պատասխանել : Բայց բանտարկելոց մէկուն կինը՝ որ ներկայ էր , եւ կնոջո հետ ներս մտեր էր , եղելութիւնը մանրամասնաբար մեզի պատմեց : Ըստ թէ կինս աղջիկս եւ ինք՝ գեղին քովի մեծ ճանրուն վրայ պտըտելու ելած էին , չորս ձիով սուրհանդակի կառք մը ուղղակի աղջկանս քովը երթալով յանկարծ կրցաւ , եւ վայելուչ հագուած մարդ մը՝ որ Պ . Թօրինհիլը չէր , կառքէն իջնելով աղջկանըս մէջքէն բռնեց , բռնի կառքը խոթեց , եւ կառափարին հրաման ըրաւ որ կառքը վարէ , այնպէս որ քանի մը վայրկենի մէջ կառքըն անհետ եղաւ :

« Ալ հիմա թշուառութեանս լրումն է , դոչեցի : Ալ ասկէց անդին դժբաղդութիւն չի կրնար ըլլալ : Ո՞հ եւ ոչ մէկը մնաց : Հրէ շը , աղջիկներուս մէկն ալ չթողուց ինձի , ամենէն սիրելի զաւակս ձեռքէս առաւ : Հրեշտակի գեղեցկութիւն եւ դրեթէ խելք ունէր . . . : Բայց բռնեցէք կինս , եւ մի թողուք որ իյնայ

· · · ան , գոնէ մէկ հատն ինձի չթողուլ : —
Աւաղ , սիրելիս , ըսաւ կինս , դուն ինչ աւելի
մխիթարութեան կարօտ կերեւիս . մեր վիշ-
տերը մեծ են , բայց ես աւելի մեծերուն ալ կը
համբերէի եթէ քեզ լաւ վիճակի մէջ տեսնէի :
Կրնան զաւկներս եւ աշխարհի մէջ ինչ որ ու-
նիմ՝ ձեռքէս առնուլ . միայն թէ քեզ ինձի
թողուն : »

Որդիս ալ մեր կոկիծը չափաւորելու կաշ-
խատէր : Կաղաչէր մեզ որ մխիթարուինք ,
յոյս ցուցընելով որ տակաւին ուրախաւէտ օ-
րեր տեսնելու առիթներ կրնայինք ունենալ :
«Որդեակ իմ , գոչեցի , աչքդ աշխարհի վրայ
պտըտցու , եւ տես թէ կրնամ տակաւին մխի-
թարութիւն յուսալ : Յուսոյ մէկ նշոյլ մը կը
փայլի՞ մի : Մեզի մնացած միակ յոյսը գերեզ-
մանէն անդին չը մի : — Սիրելի հայրիկ , պա-
տասխանեց որդիս , կը յուսամ որ տակաւին
քեզի մխիթարութիւն տալիք բան մը կայ .
Վամն զի Գէ որդ եղբօրմէս նամակ մը ունիմ
· · · — Ի՞նչ կըսես , որդեակ , եղբօրմէդ .
զիսէ արդեօք մեր թշուառութիւնը : Կը յու-
սամ , որդեակ , որ իր ընտանիեց կրած վիշ-
տերէն ինք աղատ է : Այո , հայրիկ , պատաս-
խանեց , զուարթ ուրախ եւ երջանիկ է . իրնա-
մակըն յաջող լուրեր կը ոկարունակէ . իր գըն-

դապետին սիրելի է եղեր , որ իրեն խոստացեք
է առաջին պարագ մնացած տեղակալութիւնը
իրեն առնուլ տալ : »

« Այդ ըսածներուդ ստուգութեանը առ
պահով ես , հարցուց կինս : Ապահով ես որ
չարիք մը պատահած չէ որդւոյս : — Ամենեւ-
ին բան մը պատահած չէ , պատասխանեց որ-
դիս . ահա իր նամակը որ ձեզի մեծ ուրախու-
թիւն պիտի պատճառէ , եւ եթէ ձեզ միսիթա-
րելիք բան մը կայ , անշուշտ այս է : — Բայց
ապահով ես որ այդ նամակը Գէորգինսէ , հար-
ցուց դարձեալ կինս , եւ ինքն ալ ըսածիդ պէս
երջանիկ է : — Այո , մայրիկ , պատասխա-
նեց , անտարակոյս եմ իրն ըլլալուն , եւ քաջ
համոզուած եմ որ մը իր ընտանեաց նեցուկ
եւ պարծանք պիտի ըլլայ : — Ուրեմն , գոչեց
կինս , փառք կուտամ Նախախնամութեան որ
վերջին անգամ դրած նամակս որդւոյս ձեռքը
չէ հասեր : Այո , սիրելիս , ըստ ինձի դառ-
նալով , պէտք է խոստովանիմ հիմա թէ Աստ-
ուած որչափ որ ուրիշ կողմանէ խստութեամբ
կը վարուի մեզ հետ , այս առթիս մէջ ողորմե-
ցաւ մեզ : Վերջին անգամ որդւոյս դրած նա-
մակիս մէջ , սրտիս դառն կսկիծէն պահանջեր
էի իրմէ որ ինձի պարտական եղած ակնածու-
թեանն եւ իրպատուոյն համար՝ իր հօրն ու քը-

բոջը եղած զրկանաց վրէժինսդիր ըլլայ . բայց
դոհութիւն Նախախնամութեան , Նամակս
ձեռքը չէ հասեր , եւ հիմա սիրու հանդարտ
է : — Անիկ , գոչեցի , խիստ գէշ բան է այդ
ըրածդ . եւ եթէ առջի ժամանակս ըլլար՝ ա-
ւելի խստութեամբ կը կշտամբէի քեզ : Ո՞հ ,
ի՞նչ սարսափելի վասնդի մը մէջ ձգեր ես
ինքզինքդ . դուն ալ որդիդ ալ յաւիտենական
կորստեսն մէջ պիտի թաղուէիք : Պէտք է
ճանչենք ուրեմն , որ Նախախնամութիւնը մեր
արժանաւորութենչն աւելի դթացեր է մեր
վրայ : Պահեր է որդիս , որպէս զի իմ մեռնե-
լէս ետեւ զաւակացս հայր եւ պաշտպան ըլ-
լայ . . . Ո՞րչափ անիրաւ էր տրանջելս թէ
ամեն մխիթարութենէ զուրկ էի , երբոր կիմա-
նամ թէ որդիս երջանիկ է եւ մեր կրած վիշ-
տերուն անտեղեակ , եւ թէ տակաւին որդի մը
ունիմ որ իր այրի մօրը նեցուկ եւ իր եղբարցն
ու քերցը պաշտպան պիտի ըլլայ : Բայց կը սը-
խալիմ քոյրերը ըսելով , վասն զի եւ ոչ մէկ
քոյր մը ունի հիմա . երկուքն ալ կորան , եր-
կուքն ալ ձեռքէս յափշտակուեցան եւ տունս
փլաւ : — Հայրիկ , ըսաւ որդիս խօսքս ընդ-
միջելով , ներեցէք որ եղբօրս նամակը կար-
դամ , վասն զի գիտեմ որ բերկրութիւն պի-
տի պատճառէ ձեզ : Աս ալ հրաման տուի ,

Եւ հետեւեալնամակը կարդաց :

« Ամենապատիւ հայր խմ .

« Աչքս քանի մը վայրկեան կը դարձու նեմ զիս շրջապատող քերկրութիւններէն եւ աւելի հաճոյական նիւթոց վրայ կուղղեմ , այն է հայրենի տանս վրայ : Նրեւակայութեանս առջեւ կը քերեմ եզրարցս ու քերցս անմեղ ակումբը՝ ներկայ նամակիս ամեն մէկ տողերուն աւշադրութեամբ ունկն դրած բերկրութեամբ կը տեսնեմ : այն դէմքերը՝ որ զեղխութեան կամ չքաւորութեան պատճառած տգեղութիւններէն աղատմնացած են . բայց որչափ եւ երջանիկ ըլլաք , աներկրայ եմ որ ձեր բարօրութիւնն աւելի սիստի մեծնայ երբոր լսէք թէ ևս ալ վիճակէս վերջին աստիճան գոհ եւ մարդոց ամենէն երջանիկն եմ :

« Մեր գուշնդն հակառակ հրաման ընդունելով Անդ վիայէն դուքս չսիստի ելնէ : Գնդապետու որ ինձի հետ իրրեւ քարեկամ կը վարուի , ամեն գացած տունները զիս հետ կը տանի . եւ գոհութեամբ կը տեսնեմ , որ առաջին տեսակցութենէ մը ետեւ՝ երբոր երկրորդ անգամ տեսակցութեան կերթամ , յարդանօք կընդունուիմ : Անցեալ օր կ . . . տիկնոջ հետ պարեցիւ . եւ եթէ այն ձեր դիտցած օրիորդը կարենայի մասնալ , թիգեւս կը յաջողէի այս

տիկնո՞ց հետ սէր կապելու . բայց իմ բաղդսէ
ուրիշները յիշել, մինչդեռ իմ տարակայ բարե-
կամներէս շատը զիս մոռցած են, եւ կը վախ-
նամ, ամենապատիւ հայր, որ ձեզ ալ այս վեր-
ջիններուն կարգը թուելու կը պարտաւորիմ,
վասն զի երկար ժամանակէ ՚ի վեր տունէն նա-
մակ մը ստացած չեմ: Օլիվիա եւ Սոփիա խօսք
տուեր էին զրելու , բայց կը թուի թէ զիս մոռ-
ցեր են: Ըսէք անոնց իմ կողմանէս թէ երկու-
քըն ալ փոքրիկ ստախօսներ են, եւ սաստիկ
բարկացած եմ իրենց դէմ: Այսու ամենայիւ-
չեմ գիտեր ինչէն է որ սիրտա կը շարժի եւ
չթողուր որ զիրենք յանդիմանեմ: Ուրեմն,
ըսէք իրենց , ամենապատիւ հայր, թէ որ չափ
եւ տրտմեցուցած ըլլան զիս , տակաւին խան-
դակաթ գորովով կը սիրեմ զիրենք , եւ վստահ
եզիք որ եմ եւ մնամ միշտ

ՁԵՐ ԱԿՆԱԾՈՒ ՈՐԴԻՆ :

ՈՌՀԱՓԻ գոհութիւն տալու պարտաւոր
ենք, գոչեցի, մեր այս ամեն տարաբաղդու-
թեանց մէջ, որ գոնէ մեր ընտանեաց անդամ-
ներէն մէկն աղատէ մեր կրած տառապանքէն:
Աստուած պահէ զայն, եւ անոր երջանկու-
թիւնը շարունակէ, որպէս զի իւր մօրը նե-
տաւկ եւ այս երկու փոքր զաւակացս ալ հայր

ըլլայ, որոնք միակ ժառանգութիւնս է որ ի-
րեն կը թողում: Տար Աստուած որ ասոնց ան-
մեղութիւնը թշուառութեան աղդած փոր-
ձութիւններէն պահպանէր եւ պատուոյ ճան-
բուն մէջ առաջնորդ ըլլար իրենց: Հազիւ այս
խօսքերն ըսեր էի, վարի բանտէն աղմկանման
շնկոց մը լսեցի: Քիչ մը ետքը շնկոցը դադ-
բեցաւ, եւ սենեակս գալու նեղ ճանբուն մէջ
շղթայներու շառաչիւն մը լսեցի: Բանտապե-
տք ներս մտաւ՝ վիրաւորեալ ու արիւնլուայ
մարդ մը բռնած, որ ծանր շղթայներով կապ-
ուած էր, կարեկցութեամբ մը այն թշուառ
մարդուն կը նայէի քանի որ կը մօտենար.
բայց յանկարծ սարսափ եկաւ վրաս երբոր ճան-
չեցի որ իմ որդիս էր: « Գէորդ, որդեակ,
դուն ես որ այդ վիճակին մէջ կը տեսնեմ, վի-
րաւորեալ, շղթայակապ: այդ է վայելած եր-
ջանկութիւնդ: այդպէս կուգաս զիս տեսնե-
լու: Ո՞հ այս տեսիլը սիրտս կը կտրտէ եւ զիս
գերեզման պիտի իջուցնէ: »

« Ո՞ւր է ձեր քաջասրտութիւնը, հայր
իմ, պատասխանեց որդիս անյօղդողդ ձայնով
մը: Ես պէտք է որ քաշեմ, ինքզինքս մահու
արժանի ըրի, եւ առանց երկիւղի պիտի տես-
նեմ զայն: Իմ վերջին միսիթարութիւնս այս
է որ սպանութիւն ըրած չեմ, թէ եւ ներօւմ

չեմ կրնար սպասել : »

Քանի մը վայրկեան սրտիս յուղմունքը
զսպելու աշխատեցայ . բայց տեսայ որ այս ճի-
գը զիս պիտի մնոցընէր : « Ո՞հ , որդեակ ,
սիրաս կը տրորի քեզ այդ վիճակին մէջ տես-
նել : Երբոր քեզ երջանիկ կը կարծէի , երբոր
երջանկութեանդ շարունակութեանը համար
աղօթք կընէի , քեզ այդ վիճակին մէջ տես-
նել , շղթայակապ եւ վիրաւոր : Սակայն մահը
բարիք մ'է երիտասարդի մը համար . բայց ես
ծեր եմ , ծեր մարդ մ'եմ , եւ այս սեւ օրը տես-
նելու համար ապրեր եմ , զաւակներուն տա-
րաժամ բոլորտիքս թոթափիլը տեսնելու հա-
մար , մինչգեռ ես կեցեր եմ ու անոնց կոտո-
րածէն ետեւ տակաւին կապրիմ : Անիծեալ
ըլլայ զաւկներուն արիւնը մտնողը . ինձի պէս
ապրի ու իր . . . :

« Դադրեցէք , հայր իմ , գոչեց որդիս , այդ
ըրածնիդ զիս կամշցընէ : Ի՞նչպէս կրնաք ձեր
հասակը մոռնալով , ձեր սուրբ պաշտօնը մոռ-
նալով , Աստուծոյ դատաստանին խառնուիլ ,
եւ անոր անէծքներ ուղղել , որոնք ձեր սպի-
տակ գլխուն վրայ թափելով ձեզ կը ջախջա-
խեն : Ոչ , ոչ , հայր իմ , դուք պէտք է հիմա
խորհիք մօտալուտ անարդական մահուան մը
զիս պատրաստելու , զիս յուսով եւ վատահու-

թեամբ զինելու , ինձի արիութիւն ապդելու ,
որպէս զի ինձի մատուցուելիք դառն բաժակն
անյողդողդ քաջութեամբ ըմպեմ : »

« Որդեակ , դու չովիտի մեռնիս : Աներկ-
բայ եմ որ ամօթալի մահուան մը արժանի ըլ-
լալու յանցանք չես գործած : Իմ որդիս կա-
րող չէ իր ընտանեացը նախատինք բերելիք
ոճիր մը գործելու : »

« Կը վախնամ , պատասխանեց որդիս , որ
յանցանքս ներելի չըլլայ : Մենամարտութեան
հրաւէր զրկեցի , եւ այսպիսի գործի մը համար
մահուան պատիժ վճռուած է խորհրդարանին
վերջին որոշմանցը մէջ : Երբոր մօրս նամակն
ստացայ , իսկոյն հոս եկայ մեզի եղած ան-
պատուութեան հեզինակը պատժելու : Տոմ-
սակ մը զրկեցի իրեն որ նշանակած տեղս գայ
զիս գտնէ : Չեկաւ անձամբ ինձի պատասխան
տալու , այլ իր մարդոցմէն չորս հոգի զրկեց
որ զիս բոնեն : Անոնցմէ մէկը վիրաւորեցի .
եւ մնացեալները զիս բռնեցին : Վատը միտքը
զրեր է զիս գատաստանի մատնելու . ապա-
ցոյցները պատասխան չեն վերցներ . եւ որով-
հետեւ նոր օրէնքը դրուելէն 'ի վեր առաջին
օրինազանցն ես եմ , թողութեան յոյս չեմ տես-
ներ : Բայց դուք շատ անդամ արիութեան
խրատաներ տալով զիս զմայլեցուցեր էք . այն

արիութիւնը պէտք է հիմա ազդէք ինձի ձեր
օրինակաւը . »

Որդեակ իմ, անտարակոյս եղիր որ այդ
դասերը պիտի գտնես իմ տալիք օրինակիս
մէջ : Ես հիմա ինքզինքս այս աշխարհէս եւ
ասոր տալիք ամեն բերկրանքներէն վեր կըզ-
գամ : Այս վայրկենէն սիրոս կը խղէ երկրիս
հետ ունեցած կապերը, եւ երկուքս ալ յա-
ւիտենականութեան պիտի պատրաստէ : Այս,
որդեակ, պիտի ցուցընեմ քեզ յաւիտենակա-
նութեան ճանբան, եւ հոգիս առաջնորդ պի-
տի ըլլայ քեզ այն ճանբուն մէջ . վասն զի եր-
կուքիս հոգին ալ 'ի միասին պիտի թուչին :
Կը տեսնեմ եւ համոզուած եմ որ դու այս աշ-
խարհիս մէջ ներում չունիս սպասելիք, Ուստի
կը յորդորեմ քեզ որ ներումդ այն մեծ ատեա-
նէն փնտռես, ուր երկուքս ալ պիտի դատ-
ուինք . բայց մեր յորդորանքներուն մէջ ճըղ-
ճիմ չըլլանք . մեր բանտակիցներն ալ թող
մասնակից ըլլան : Բարեսիրա բանտապետ,
հաճեցէք մեր բանտակիցներուն թոյլ տալու որ
հոս դան եւ զանոնք բարելաւելու ջանամ : Այս
խօսքն ըսելով յարդէ խշտեակիս վրայ ելնել
կանգնիլ ուզեցի, բայց ինքզինքս ոտքի վրայ
բոնելու կարող չըլլալով, հազիւ կըցայ պա-
տին կըթնիլ : Բանտարկեալները բաղձանացս

համեմատ սենեակո գումարուեցան, վասն զի
խրատներս լսել կը սիրէին . որդիս եւ մայրն
ալ թեւերս մտած զիս ոտքի վրայ բռներ էին .
Անկնդիրներուս նայեցայ, եւ տեսնելով որ
մարդ պակաս չէր, հետեւեալ յորդորանքն
ուղղեցի իրենց :

ԳԼՈՒԽ ԻԹ .

Այ - շերհի ժշմնե' երջանիւ և բն' ուրբազնութեա-
րուն այսուհետեւ կատարելու համար կա լըրու-
թուն ողացածուն : Բների ուրիշն եւ կը բն-
իւնը նայելու, լըրութունը ոյ - շերհի ժշմնե'
ուրբազնութեար հայեցած ուրիշն քը առաջ-
նահանդուն հետեւ հետեւ :

« Բարեկամներս, որդեակներս, տառա-
պանաց ընկերներս, երբոր այս աշխարհիս մէջ
բարւոյն եւ չարին բաշխմանը վրայ կը խոր-
հիմ, կը գտնեմ որ մարդոց ստացած վշտաց
բաժինը վայելից բաժինէն աւելիէ : Բոլոր աշ-
խարհի մէջ փնտըռենք, չենք կրնար գտնել
կատարելապէս երջանիկ մարդ մը՝ որ տակա-
փին բաղձալու բան մը չունենայ . բայց ամեն

որ հաղարաւոր մարդիկ կը տեսնենք որ ինք-
զինքնին սպաննելով կը ցուցընեն թէ ալ յու-
սալու բան մը չէ մնացած իրենց : Ուրեմն կե-
րեւի որ մենք այս աշխարհիս մէջ կատարե-
լապէս երջանիմ չենք կրնար ըլլալ, բայց կա-
տարելապէս թշուառ կրնանք ըլլալ :

Ինչու համար արդեօք մարդս այսպէս
վշտաց ենթակայ է . ինչու համար մեր վշտա-
կը ութիւնը հարկաւոր է ընդ հանուր երջան-
կութեան կազմութեանը մէջ : Ինչու համար
ուրիշ դրութիւններն իրենց ստորակարգեալ
մասերուն կատարելութեամբը միայն կատար-
եալ են . իսկ մեծ դրութիւնն իր կատարելու-
թեանը համար այնպիսի մասերու պէտք ու-
նի , որոնք ոչ միայն ուրիշներու ստորակարգ-
եալ են , այլ եւ ըստ ինքեանց անկատար են :
Ասոնք այնպիսի ինսդիրներ են որ չեն կրնար
լուծուիլ , եւ ասոնց ծանօթութիւնն անօդուտ
է : Նախախնամութիւնն այսնիւթոց վրայ մեր
հետաքրքրութիւնն 'ի դերեւ հանել ուղած է՝
բաւական համարելով միայն մխիթարութեան
պատճառներ մնացի չնորհել :

«Այս վիճակին մէջ մարդիկ փիլիսոփա-
յութիւնն իրենց օգնութեան կոչեցին , բայց ա-
նոր մատակարարած մխիթարութեանց անբա-
ւականութիւնը ճանչելով , կրօնի օգնութեա-

նը դիմեցին : Փիլիսոփայութեան մխիթարութիւնները խիստ բերկրեցուցիչ են , բայց յանախ խարուսիկ : Կըսէ մեզ թէ կեանքը քաղցրութիւններով լի է՝ եթէ գիտնանք զանոնք գործածել : Միւս կողմանէ կըսէ մեզ , որ եթէ անհրաժեշտաղէտից ենթակայ ենք , կեանքերնիւ կարճ է , եւ թշուառութիւննիս ալշուտովկը վերջանայ :

« Այսպէս այս երկու մխիթարութիւններն իրար կոչնչացընեն . վասն զի եթէ կեանքը բերկրանաց տեղի մ'է , անոր՝ կարճութիւնը դժբաղդութիւն մը պէտք է ըլլայ . եւ եթէ երկար է , մեր վիշտերն ալ երկար են : Ուրեմն փիլիսոփայութիւնը տկար է . խկ կրօնի մխիթարութիւններն առաւել բարձր են : Մարդիկ հոս իրենց հոգին պատրաստելու եւ ուրիշ կատանի մը մէջ բնակութեան յարմար ընելու պաշտօնն ունին կըսէ կրօնքը : Երբոր բարի մարդնիր մարմինը կը թողուեւ փառաւոր հոգի մը կըլլայ , կը տեսնէ որ աշխարհի մէջ ապագայ երջանկութեան բնակարան մը պատրաստեր է . բայց չարը՝ որ ամեն մոլութիւններով ապականեալ է , սարսափելովկը թողուեր մարմինը , եւ կը տեսնէ որ Աստուծոյ վրէժիմնդրութիւնը ժամանակէն առաջ իր վրայ բերեր է : Ուրեմն մեր կենաց ամեն հանդամանքներուն մէջ կրօ-

նի պէտք է յարինք , որպէս զի ճշմարիտ բերկ-
րանք հայթայթենք մեղ . վասն զի եթէ ար-
դէն երջանիկ ենք , առաւելագոյն բերկրու-
թիւն մ'է մտածելը թէ կրնանք մեր երջանկու-
թիւնը յաւիտենական ընել . եւ եթէ թշուառ
ենք , մեծ մխիթարութիւն մ'է մտածելը թէ
հանգստութեան վայր մը ունինք ուրիշ տեղ .
Ահա այսպէս կրօնքը բարեբաստ մարդուն եր-
ջանկութեան չարունակութիւն , եւ դժբաղ-
դին ալ ապագայ երջանկութիւն կը ներկայա-
ցընէ :

« Բայց որչափ որ կրօնքը մարդոց համար
բարութեամբ լի է , այսու ամենայնիւ դժբաղդ-
ներուն յատուկ վարձք ալ խոստացած է : Մեր
սուրբ օրէնքը շատ խոստումներ կընէ աղքա-
տաց , հիւանդաց , վշտացելոց , բանտարկելոց .
Մեր կրօնին հեղինակն ինքնին ամեն տեղ ինք-
զինք թշուառաց բարեկամ կը դաւանի , եւ
աշխարհի սուտ բարեկամներէն խիստ տար-
բեր կերպով կը դդուէ ու կը մեծարէ լըք-
եալները : Անխորհուրդ մարդիկ այս վարժուն-
քը քննադատեցին իրրեւ կողմնասիրութիւն
եւ իրրեւ անարժան նախամեծարութիւն մը .
բայց չմտածեցին որ Նախախնամութեան ան-
գամ ձեռքը չէր այնպիսի կերպով մը անօրի-
նել , որ յաւիտենական երջանկութիւնը թըշ-

ուառ մարդ ուն համար աւելի մեծ պարզեւ մը
չըլլար քան թէ երջանիկ մարդուն ։ Վերջինին
համար , յաւիտենականութիւնը պարզ երջան-
կութիւն մ'է , որովհետեւ շատ շատ՝ իր ար-
դէն ունեցածը կաւելցընէ : Իսկ թշուառին
համար կրկնակի բարիք մ'է . վասն զի կրած
տառապանքը կը վերջացընէ , եւ ապագային
մէջ երկնային երջանկութեամբ զինքը կը վար-
ձատրէ :

Բայց Նախախնամութիւնն ուրիշ նկատ-
մամբ ալ աղքատին առաւել նաստաւոր է՝ քան
թէ հարուստին . վասն զի ոչ միայն մեռնելէն
ետեւ ունենալիք կեանքն աւելի փափաքելի
կընէ աղքատին , այլ եւ այս կեանքէն միւս
կեանքն անցնելու միջոցն ալ կը քաղցրացնէ .
վասն զի թշուառ մարդն ամեն արհաւիրնե-
րու ընտելացած է ։ Վշտաց ներքեւ ընկճեալ
մարդը խաղաղ սրտով կը պառկի մահուան
անկողնին մէջ , ըստ որում կսկծալիք բան մը
չունի եւ խիստ քիչ կապեր ունի խղելիք . Մի-
այն բնութեան ցաւը կ'զգայ իր չուած ժամա-
նակը . եւ այս ալ շատ աւելի մեծ չէ առջի կը-
րած ցաւերէն՝ որոնք շատ անդամ զգայազիրկ
ըրած են զինքը . քանզի մարդիկ բաւական
ցաւ քաշելէ ետեւ , անոնց կազմութեանը մէջ
մահուան բացած ամեն մէկ խրամատը՝ կարե-

կից բնութիւնն անզգայութեամբ կը ծածկէ :

« Այսպէս Նախախնամութիւնը թշուառներուն երկու դերազանցութիւն տուած է , զոր աշխարհիս երջանիկները չունին . մահուան մէջ առաւել քաղցրութիւն , եւ երկնից մէջ ալ այն առաւելագոյն բերկրանքը՝ որ վիճակներու տարրերութենէն յառաջ կուգայ : Այս դերազանցութիւնը , բարեկամք , փոքր բան չէ , եւ կը թուի թէ առակին մէջ յիշուած խեղճ Ղազարին բերկրութիւններէն մէկն է . քան զի թէ եւ արդէն երկինքն էր , եւ հոն սպասուած ամեն երջանկութիւններն արդէն կը վայելէր , սակայն առակը՝ իբրեւ յաւելուած անոր երջանկութեանը՝ գիտողութիւն կընէ թէ առաջ թշուառ էր եւ հիմա կը միսիթարուի . որով ըսել կուզէ թէ աշխարհի մէջ թշուառութեան համն առած ըլլալով՝ երջանկութեան համը հիմա լաւ կ'զգայ :

« Կը տեսնէք , բարեկամք , որ կրօնքը փիփսոփիայութեան չկրցածը կընէ . երջանկաց եւ թշուառաց նկատմամբ Նախախնամութեան հաւասար վարմունքը կը ցուցընէ , եւ մարդոց ամեն վայելից առարկաները մի եւ նոյն հաւասարութեան մէջ կը դնէ . Մի եւ նոյն ապագայ երջանկութիւնը կը խոստանայ հարուստին ալ աղքատին ալ , եւ զանի ձեռք բերեւ

լու հաւասարյոյս մը . բայց թէ որ հարուստաներն այս աշխարհիս մէջ բերկրանք վայելելու առաւելութիւնն ունին , աղքատն ալ՝ միւս կենաց մէջ՝ երբոր յաւիտենական երանութեամբ պսակեալ է , յաւիտենապէս առաւել կը բերկրի՝ թշուառութեան համն առած ըլլալուն համար . եւ երբոր այս բերկրանքն ըստ ինքեան փոքրիկ առաւելութիւն մը համարուի , յաւիտեան տեւողութիւնը փոխարինութիւն մը չը հարուստներուն վայելած ժամանակաւոր երջանկութեանը :

« Ահա ասո՞նք են թշուառներուն իրենց համար ունեցած մասնաւոր եւ ուրիշ մարդոցմէ գերազանց միտթարութիւնները , որոցմէ վար կը համարուին ուրիշ նկատմամբ : Աղքատութեան ամեն թշուառութիւնները լաւ ճանչելու համար՝ զանոնք կրել պէտք է . աղքատաց կրած ժամանակաւոր առաւելութիւններուն վրայ ճառատելը՝ մէկու մը չհաւտացած ու չգործադրած բանը յեղյեղել է : Անոնք որ կենաց հարկաւոր պիտոյքն ունին՝ աղքատ չեն . իսկ անոնք որ չունին՝ հարկաւթշուառ են : Այո , բարեկամք , չենք կրնարինքինքնիս խարել , թշուառ ենք : Երեւակայութեան ամեն նրբութիւնները չեն կրնարինութեան պիտոյքը մեղմել , ոչ ալ բերկրա-

կան առաձգականութիւն մը տալ բանստի մը
խոնաւ գոլորշիներուն , կամ տառապանօք
մաշած սրտի մը հեծութիւններն սփոփել : Թու-
ղունք փիլիսոփայութիւնը որ իր փափուկ ան-
կողնին վրայէն ըսէ մեզ թէ կրնանք այս ամե-
նուն դիմանալ : Աւազ , դիմանալու համար ը-
րած ճիգերնիս աւելի կը տառապեցընէ մեզ :
Մահը փոքր բան մէ , եւ ամեն մարդ կրնայ
կրել զայն . բայց չարչարանքը սարսափելի
բան է , եւ չկայ մարդ մը որ քաշելու կարող
ըլլայ :

Ուրեմն , բարեկամք , երկնային երջան-
կութեան խոստումները մասնաւորապէս մեզի
սիրելի պէտք է ըլլան . վասն զի եթէ մեր ստա-
նալիք վարձքը միայն այս աշխարհիս մէջ է ,
ստուգիւ մարդոց ամենէն թշուառն ենք մենք:
Երբոր կը դիտեմ այս խաւարչտին նկուղները
որ մեզ փակելու եւ միանդամայն զարհուրե-
ցընելու համար սահմանուած են , սա տկար
լոյսը որ այս կայանին սոսկումները մեզի ցու-
ցընելու կը ծառայէ , սա շղթայները որ բըռ-
նութիւնն հնարած կամ եղեռնագործութիւ-
նըն հարկաւոր ըրած է , երբոր կը տեսնեմ այս
անօթութենէ վատած դէմքերը , եւ այս հե-
ծութիւնները կը լսեմ , բարեկամք , ի՞նչ փա-
ռաւոր փոփոխութիւն մը պիտի ընէ երկինք

այս առարկաներուն մէջ ։ Օդին անսահման լուսաւորութեանը մէջ սլանալ , յաւիտենական երջանկութեան արեւէն տաքնալ , անգաղար փառաբանութիւններ երգել , մեղը ըստ պառնացող կամ նախատող տէրեր չունենալ , այլ նոյն իսկ բարութեան կենդանի օրինակը միշտ աչքերնուս առջեւ տեսնել . երբ այս ամենուն վրայ կը խորհիմ , մահն ինծի համար գերերջանիկ աւետիաներ բերող հրեշտակ մ'է . երբ այս կը մտածեմ , մահուան ամենասուր նետն ինծի նեցուկ կերեւի . երբ այս կը մըտածեմ , ի՞նչ բան կրնայ գտնուիլ այս կենաց մէջ՝ որ ինծի փափաքելի երեւի . երբ այս կը մտածեմ , ի՞նչ կրնայ այս կեանքս ինծի մատակարարել , որ միւս կենաց մատակարարածներուն հետ բաղդատելով արհամարհելի չըլլայ : Թագաւորներն անգամ իրենց փառաւոր պալատներուն մէջ այս առաւելութիւններուն պէտք է փափաքին . իսկ մենք , այս թշուառ վիճակնուս մէջ , եռանդագին աղաղակներով պէտք է փափաքինք ասոնց :

« Բայց սլիտի կրնանք ձեռք բերել այս ամեն երջանկութիւնները : Այս , անշուշտ պիտի ձեռք բերենք՝ եթէ ջանք ընկնք . եւ սա առաւելութիւնն ալ կայ , որ մեր երջանկութիւնն ուշացընող բաղմաթիւ փորձութիւն-

ներէ ազատ ենք : Միայն փորձ փորձենք ձեռք
բերելու , եւ մերը պիտի ըլլան , եւ այն ալ քիչ
ժամանակէն , որ աւելի մեծ բարեբաղդութիւն
մ'է . վասն զի , եթէ աչքերնիս մեր անցեալ կե-
նաց վրայ դարձունենք , խիստ փոքր բան մը կե-
րեւի մեզ , եւ ինչ գաղափար որ ունենանք
մեր մնացեալ կենաց ժամանակին վրայ , կը
դանենք որ աւելի կարճ պիտի ըլլայ : Քանի որ
կը ծերանանք , օրերն աւելի կարճ կը թուին ,
եւ ժամանակին հետ ունեցած ընտանութիւն-
նիս՝ անոր տպաւորութիւնը կը թեթեւցընէ :
Ուրեմն միսիթարուինք հիմա , վասն զի քիչ
ժամանակէն մեր ճանապարհորդութիւնը պի-
տի վերջանայ : Քիչ ժամանակէն պիտի թե-
թեւնանք այն ծանր բեռէն որ Երկինք մեր վը-
րայ դրած է . եւ թէպէտ մահը՝ որ թշուառ-
ներուն միակ բարեկամնէ , խոնջեալ ճանա-
պարհորդին վրայ ժամանակ մը կը ծիծաղի հո-
րիզոնի պէս անոր աչքէն հեռանալով քանի
որ ան կը մօտենայ , այսու ամենայնիւ՝ շատ
չանցած , եւ ստուգիւ ժամանակը պիտի գայ ,
ուր մեր ամեն աշխատութիւնները պիտի ա-
ւարտին , ուր աշխարհիս մեծամեծներն ու գո-
ռոզները մեզ ոտնակոլս չպիտի ընեն , ուր
բերկրութեամբ պիտի յիշենք աշխարհիս մէջ
կրած առողապանքնիս , ուր մեր ամեն բարե-

կամներէն կամ մեր բարեկամութեանն ար-
ժանի եղող անձերէ պիտի շրջապատինք , ուր
մեր երջանկութիւնն անեղծ՝ եւ որ ամենուն
պսակն է՝ յաւիտենական պիտի ըլլայ :

ԳԼՈՒԽ 1.

Յուսուցու : Զ-ի-ո-ր-ո-ն-ի-ո-ն-է-ն- և-է- և-է- և-է- և-է- և-է-
վ-է- վ-է- մ-է- մ-է- մ-է- մ-է- մ-է- մ-է- մ-է- մ-է-

Երբոր յորդորանքս լմնցուցի եւ ունկըն-
գիրներս դուրս ելան , բանտապետը՝ որ իր ար-
հեստին մէջ խիստ մարդ ասէրներէն մէկն էր ,
աղաչեց ինձի որ իր ընելիքը գէշ մտօք չհաս-
կընամ . իր պարտականութիւնը զինքը կը հար-
կադրէր աւելի ամուր սենեակի մը մէջ դնել
որդիս . բայց թոյլ պիտի տար որ ամեն առա-
ւոտ գար զիս տեսնէր . Շնորհակալ եղայ իր այս
բարեսրտութենէն . որդւոյս ձեռքը սեղմեցի ,
երթաս բարով ըսի , եւ պատուիրեցի որ իր
կատարելիք մնծ գործին վրայ խորհի :

Ես ալ նորէն յարդէ խշտեակիս վրայ տա-
րածուեցայ , եւ փոքրերէս մէկն ալ անկողնիս
քով կարդալ սկսաւ . Նոյն միջոցին Պ Ճէն-
քինսըն ներս մտաւ եւ ըստ ինձի թէ աղջիկ-

նէս լուրեր կային : Երկու ժամու չափ առաջ
մէկը զան տեսեր էր անծանօթ պարոնի մը
հետ , որ մօտակայ գեղը գացեր են զովանա-
լու , եւ անկէց ալ ելեր դէպ 'ի այս կողմը
կուգան եղեր : Հազիւ Պ . Ճէնքինսըն այս խօս-
քը լմնցուցեր էր , բանտապետն ուրախ դէմ-
քով ներս մտաւ , եւ աւետեց ինձի թէ աղջիկս
գտնուեր էր : Քիչ մը ետքը Մովսէսս վազեց
եկաւ գոչելով թէիր քոյրը Սովիա վարն էր .
եւ մեր վաղեմի բարեկամ Պ . Պրչէլի հետ վեր
կելնէր :

Որդիս այս լուրը տուած ժամանակ , սի-
րեւի աղջիկս ներս մտաւ՝ աչքերն ուրախու-
թենէն այլայլած , եւ վազեց խանդակաթ գո-
րովանօք ինձի փաթթուեցաւ : Մայրն ալ լա-
լով եւ լոռութեամբ իր անպատմելի ուրախու-
թիւնը կը յայտնէր . « Ահա , հայրիկ , գոչեց սի-
րուն զաւակս , ահա քաջ մարդը որ զիս ազա-
տեց : Այս Պարոնին անմիեներութեանը պար-
տական եմ իմ պատիւս ու ազատութիւնս :
Նոյն միջոցին Պ . Պրչէլ՝ որուն ուրախութիւնն
աւելի մեծ էր՝ աղջկանս համբոյր մը տալով
խօսքն ընդմիջեց : »

« Ահ , Պ . Պրչէլ գոչեցի , տեսէք ինչ
թշուառ տեղ մ'ենք . մեր ներկայ վեճակը իմիսա
տարբեր է վերջին անդամ մեղ տեսած ժամա-

նակնիդ ունեցած վիճակնէս : Դուք միշտ մեր
բարեկամն եղած էք : Ձեր վրայ ունեցած սը-
խալ կարծիքնիս շատոնց հասկըցանք , եւ մեր
ապաշնորհութեանը վրայ զղջացինք : Ձեզի
գէմ ունեցած անվայել վարմունքս միտքս բե-
րելով կամաչեմ երեսնիդ նայելու . սակայն կը
յուսամ որ ձեր ազնուասրտութիւնը կը ներէ
ինձ , որովհետեւ խաբուեցայ վատ եւ անօրէն
թշուառականէ մը , որ բարեկամութեան գի-
մակաւ տունս փլուց : »

« Անհնարէ , պատասխանեց Պ . Պլչէլ ,
որ ձեզի ներեմ , վասն զի բնաւ ատելութիւն
մը չունիմ ձեզի գէմ : Ես այն ժամանակը մա-
սամբ մը նշմարեցի ձեր սիալումը . բայց ուղ-
ղել չկրնալուս համար՝ գթացի ձեր վրայ : »

« Ես միշտ խորհած էի , գոչեցի , որ դուք
մեհ հոգի մը ունիք . բայց հիմա համոզուած
եմ ըսէ ինձի , սիրելի աղջիկս , ի՞նչպէս
ազատեցար , եւ ով էին քեզ յափշտակող սրի-
կայները : »

« Ճշմարիտը խօսելով , պատասխանեց
աղջիկս , զիսյափշտակող սրիկային ով ըլլալը
գեռ չգիտեմ : վասն զի մայրս ու ես պտըտած
ժամանակնիս , ետեւնիս եկաւ , եւ օգնութեան
կանչելուս չմնաց , զիս քաշեց կառքին մէջ
խոթեց , եւ իսկոյն կառքը սրարշաւ ընթաց-

քով հեռացաւ : Ճանրամն քանի մը մարդ տեսայ ու օգնութեան կանչեցի , բայց ականջ չի կախեցին աղաջանաց : Նոյն միջոցին սրիկան ալ ամեն կերպ միջոց կը գործածէր որպէս զի չպոռամ : Մերթ կը չողոքորթէր , մերթ սպառնալիք կընէր ինձի , եւ կերպնուր որ եթէ լուս կենայի գէ շութիւն մը չպիտի ընէր ինձի : Այս անցքերն անցած ժամանակ , կառքին վարադոյրը պատռեր էի , զոր յափշտակիչս գոցեր էր , եւ առաջին տեսած մարդս եղաւ մեր զաղեմի բարեկամ Պ . Պրչէլ , որ հեռուէն կերթար իր սովորական արագութեամբը , եւ ձեռքն ալ այն մեծ ցուզը՝ որուն համար այնչափ կը ծիծաղէինք : Երբոր իրմէն լսուելու չափ մօտեցանք , անունը տալով զինքը օգնութեան կոչեցի : Քանի մը անդամ պոռալուս վրայ , Պ . Պրչէլ սպառնալից ձայնով դոչեց կառավարին որ կենայ . բայց կառավարն առանց մտիկ ընելու ծիերն աւելի ուժով մը տրակեց : Այն ժամանակ կարծեցի որ Պ . Պրչէլ չպիտի կրնար ետեւնուս հասնիլ . բայց չորս վայրիեան չքչեց , ծիերուն քով հասաւ : Եւ դաւաղանի հարուած մը տալով կառավարը դետինը ձգեց : Այն ժամանակ ծիերն ինքնին կեցան , յափշտակիչս կառքէն վար ցատկեց հահոյելով ու ողառնարով , ահերը քաշեց : Եւ

հրաման ըրաւ Պ. Պրչէլի որ ետ քաշուի :

Բայց Պ. Պրչէլ վրան վաղեց եւ սուրը կը-
տոր կտոր ընելէ ետեւ քառորդ մղոնի չափանիղ
ճաշածեց . բայց սրիկան փախաւ . Ես ալ այն
միջոցին կառքէն վար իջեր էի աղատչիս օգ-
նելու մոռք , բայց շատ չանցաւ Պ. Պրչէլ քո-
վը եկաւ յաղթութեամբ : Կառավարը՝ որ գա-
ւաղանի հարուածէն ընդարմացեր էր , ինք-
զինքին գալով , ան ալ փախչիլ ուզեց . բայց
Պ. Պրչէլ հրամայեց որ կառքը ենէ եւ մեզ
քաղաքը բերէ և կառավարը դէմ դնելու կա-
րողութիւն չունենալով պարտաւորեցաւ հը-
նաղանդելու , թէ եւ առած վէրքն ինձի վր-
տանդաւ որ կերեւէր : Ճանքան կառավարն հե-
ծել սկսաւ իր վէրքին ցաւէն , այնպէս որ վեր-
ջապէս Պ. Պրչէլի գութը շարժելով , ճանքուն
վրայ իջեւան մը հասած ժամանակնիս ուրիշ
կառավար մը առաւ :

Ա Բարով եկաք ուրիմն , գոչեցի , սիրելի
աղջիկա , եւ դուք , զաւկիս քաջ աղատարա-
րը , հազար բարով եկաք : Թէ եւ աղքատիկ
կերակուր մը ունինք ձեզի տալու , բայց սըր-
տերնիս պատրաստ են ձեզ ընդունելու : Ուրե-
մըն հիմա , Պ. Պրչէլ , որ աղջիկս աղատեցիք,
եթէ կրնաք զան ձեր բարերարութեան վար-
ձատրութիւն մը համարիլ , ձեզ կուտամ : Եթէ

կընաք մեզի պէս խեղճ ընտանիքի մը հետ
խառնուելու հաճիլ , առէք աղջիկս , խօսք ա-
ռէք իրմէ . եւ ինչպէս որ արդէն անոր սիրտն
ստացած ըլլալիդ գիտեմ , կաղաչեմ որ իմ
սիրտս ալ ընդունիք . եւներեցէք ինձ ըսել
ձեզ , պարոն , թէ փոքրնուէր մը չէ այս ըրա-
ծըս : Արդարեւ գեղեցիկ աղջիկ մը համար-
ուած է , բայց իմ ըսելիքս այն չէ . սրտի կող-
մանէ գանձ մ'է որ ձեզի կուտամ : »

«Բայց կարծեմ որ , պատասխանեց Պ. Պըր-
չէլ , որ ծերուս վիճակը եւ աղջիկնիդ արժա-
նապէս ապրեցընելու անկարող ըլլալս գիտէք:
— Եթէ այդ առարկութիւննիդ , ըսի , փա-
խուստ մ'է իմ ըրածնուէրս ընդունելէ , ետ կառ-
նում . բայց աղջկանս ամուսին ըլլալու համար
ձենէ արժանագոյն մարդ չեմ ճանչեր . եւ եթէ
կարող ըլլայի աղջկանս միլիոններ տալու , եւ
միլիոններու տէր անձինք զայն առնուլ ուզէ-
ին , ես համեստ եւ քաջ Պ. Պըչէլը կընտրէի : »

Պ. Պըչէլի լոռւթիւնը վշտացուցիչ մեր-
ժում մը թուեցաւ ինձ : Առանց պատասխա-
նելու վերջին առաջարկ ութեանս , հարցուց
թէ մօտակայ պանդոկը զովարար ըմպելիմներ
կը գտնուէի՞ն : Երբոր պատասխանեցին թէ կը
գտնուին , հրաման ըրաւ որ հնար եղածինչափ
շուտով լաւ ճաշ մը պատրաստեն ու բերեն :

Ախանդամայն հրամանը բաւութ սասներկու շիչ
ընտիր գինի եւ ինձի համար ալ կազդուրիչ օ-
շարակներ թերեն , եւ աւելցուց ժպանելով թէ
գոյնէ մէկ անգամ կարգէ գուրու բան մը ընել
կուղէր , եւ թէ պէտքանախ մէջ էր այսուամե-
նայնիւ այս աստիճան ուրախ եղած չէր : Շատ
շանցած պանդոկին սպառաւորը ճաշը բերաւ .
բանտապետը սեղան մը տուաւ , եւ վերջին աս-
տիճան յօժարափոյթ երեւցաւ մեզ ծառայելու .
Դիմին սեղանին վրայ շարուեցաւ , եւ լաւ կե-
րակուրներ բերին :

Ազգիկս գեր խմացած չէր եղբօրը տխուր
վիճակը , եւ մենք ալ չուզեցինք այս դառն
լուրը տալով անոր ուրախութիւնն արգելու .
Բայց պարապ տեղը կաշխատէի ինքզինքսու-
րախ ցուցընելու . տարաբաղդ որդւոյս կա-
ցութիւնը չէր կընար պրտիս անձկութիւնը
ծածկել , այնպէս որ վերջապէս հարկադրեցայ
որդւոյս գլխուն եկած վորձութիւնը պատմե-
լով՝ կոչնականներուս ուրախութիւնը տիրու-
թեան փոխելու . եւ խնդրեցի որ թոյլ տան ա-
նոր սոյն բերկրալից վայրկեամնը մեզի հետ ան-
ցունելու . Կաշնականներուս պարսակիը քիչ մը
անցնելէ ետեւ՝ որոշեցինք նաեւ , որ Պ. Ճէնքին-
սընքանակիցու ալ մեզի սեղանսկից ընդուն-
ուի . Քանտապետը կարգէ դուրս հլութեամբ

մը գնաց զանի բերաւ, Երբոր որդւոյս շըղ-
թայներուն չառաջիւնը լսուիլ սկսաւ նեղ ճան-
քուն մէջ, Քոյրը չկրնալով համբերել, վազեց
գիմաւորեց իր եղբայրը : Նոյն միջոցին Պ.
Պրէէլ հարցուց ինձի թէ որդւոյս անունը Գէ-
որդ էր : Երբոր այս ըսի, լուռ կեցաւ : Որդիս
սենեակը մանելուն պէս՝ նշմարեցի որ զար-
մացմամբ եւ ակնածութեամբ Պ. Պրէէլի կը
նայէր : « Յառաջ եկո, որդեակ, գոչեցի . թէ
եւ խիստ ցած վիճակի մը մէջ ինկանք, այսու
ամենայնիւ Նախախնամութիւնը մեզի սփո-
փարար վայրկեաններ կը պարզեւէւ Քոյրդ նո-
րէն մէզի դարձաւ, եւ ահա իրազատիչը : Այս
քաջ մարդուն պարտական ենք, ես իմ աղջիւ-
կըս, եւ դուն ալ Քոյրդ, Բարեկամութեան
ձեռք երկնցու անոր, որդեակ, վասն զի մեր
ջերմ երախտադիտութեանն արժանի է : »

Ասոնք ըսած ժամանակս, որդիս անուշա-
դիր կերեւէր իմ խօսքերուն, եւ ակնածու-
թեամբ մը հեռուն կը կենար :

« Եղբայր, ըսաւ Քոյրը, ինչու շնորհա-
կալ չես ըլլար իմ քաջ ազատարարիս : Բարի
մարդիկ իրար սիրելու համար եղած են : »

Որդիս դարձեալ շարունակեց իր լուս-
թիւնն ու զարմացական գէմքը : Այս ժամա-
նակ Պ. Պրէէլ հասկընալով որ ճանչուեր էր

որդիէս, իր բնական ծանր դէմքն առաւ եւ հը-
րամայեց որդւոյս որ յառաջ գայ : Երբէք չէի
տեսած այնպիսի ազնիւ ու վեհ դէմք մը : Փիլի-
սոփային մէկը կըսէ թէ աշխարհի մէջ ամենէն
գեղեցիկ բանը ձախորդութեան դէմմաքա-
ռող պարկեշտ մարդն է . Բայց աւելի գեղեցիկը
կայ, այն է դժբաղդութեան սիոփիանք տուող
պարկեշտ մարդը : « Քեզ նորէն կը բռնեմ,
անխորհուրդ պատանի , նոյն յանցանքին մէջ
որ » Այս միջոցին բանտապետին մար-
դոցմէն մէկը եկաւ Պ . Պրչէլի խօսքը կտրեց՝
լուր քերելով որ երեւելի անձ մը կառքով եւ
բազմաթիւ ծառայներով քաղաքը եկեր , իր
ակնածական յարդանքը կը մատուցանէր մեզի
հետ գտնուող Պարոնին , եւ կաղաչէր որ իմա-
ցընէ թէ Երբ կրնայ դինքը տեսնելու պատիւն
ունենալ : « Ըսէ այդ մարդուն որ սպասէ մին-
չեւ որ զինքը ընդունելու ժամանակ ունե-
նամ » պատասխանեց մնր կոչնականը . եւ յե-
տոյ որդւոյս դառնալով ըստու . « Քեզ նորէն
նոյն յանցանքին մէջ կը գտնեմ , որուն համար
արդէն քեզ յանդիմաներ եմ , եւ օրէնքն ալ
հիմա իւր արդար պատիմները կը պատրաստէ
քեզ : Թերեւս կը կարծես որ քու կեանքդ ար-
համարհնելովդ ուրիշի կեանքն ալ բառնալու
իրաւունք կունենասու . Բայց կաղաչեմ , ըսէ ին-

ձի , արարոն , ի՞նչ տարբերութիւն կայ մենա-
մարտութիւն ընողին՝ որ կեանքը չյարգելուն
համար վտանդի մէջ կը դնէ , եւ մարդասպա-
նին մէջ որ աւելի ապահովութեամբ կը դոր-
ծէ : Խաղի մէջ դողութիւն ընող մը կրնայ իր
խարդախութիւնը թեթեւցընել երբոր պատ-
ճառ բերէ թէ խաղին մէջ ինքն ալ դրամանի ;
մը դրած էր . »

« Աւաղ , պարոն , գոշեցի , ով ոք եւ էք ,
գթացէք խեղճ թշուառի մը վրայ որ ուրիշն
խօսքին հետեւեցաւ . վասն զի ինչ որ ըրեր է՝
իւր մօրը հրամանին կուրաբար հնազանդելով
ըրեր է . մայրը՝ սրտին ցաւէն ու բարկութե-
նէն կիրքը եւած՝ գրեր է իրեն որ մեզի եղած
նախատանաց վրէ ժինդիր ըլլայ . Ահաւասիկ ,
պարոն , այն նամակը՝ որ կրնայ քեզ համոզել
մօրն անխռնեմութեանը վրայ , եւ որդւոր
յանցանքը թեթեւցընել . »

Կոչնականնիս առաւ նամակը եւ շուտ մը
կարգաց : Այս նամակն , ըստ , թէ եւ չկրնար
որդիդ բոլորովին արդարացընել , բայց անոր
յանցանքը թեթեւցընելով ներելու , կը ցո-
ֆարեցընէ զիս : Կը տեսնեմ , ըստ քաղցրու-
թեամբ որդւոյս ձեռքը բռնելով . կը տեսնեմ
որ զիս հոս տեսնելուդ վրայ կը զարմանաս .
բայց ես աւելի թեթեւ պատճառներու համար

յաճախ այցելութիւն ըրած եմ բանտերուն։
Այս անգամեկած եմ տեսնելու եւ արդարու-
թիւն ընելու պատուական եւ պարկեշտ մար-
դու մը՝ զոր անկեղծ արար կը յարգեմ։ Երկար
ժամանակ ականատես վկայ եղած եմ հօրդ բա-
րեգործութիւններուն՝ առանց ինքղինք ծա-
նուցանելու։ Իր փոքրիկ բնակարանին մէջ
շողոքորթութենէ անարատյարգանք մը վայե-
լած եմ, եւ իր ընտանեկան զուարձալի պար-
զութեանը մէջ այնպիսի երջանկութիւն մը գը-
տած եմ որ արքունեաց մէջ չտեսնուիր։ Խմաց
տուեր էի եղբօրորդւոյս թէ հոս գալու միտք
ունիմ, եւ հիմա կիմանամ որ ան ալ եկեր է։
Բայց թէ անոր եւ թէ ձեզի անիրաւութիւն
մը ըրած կըլլամ եթէ առանց զինքը մտիկ ը-
նելու գատապարտեմ։ Եթէ ծայրայեղութիւն-
ներ կատարուեր են, դարման պիտի ըլլայ. եւ ես
կընամ առանց անափառութեան պարծիլ թէ
մինչեւ հիմա Ուիլիը մթօրն հիլ ասպետին հա-
մար ըսուած չէ թէ անիրաւութիւն մը ըրեր է։

Այն ժամանակ հասկըցանքոր երկար ժա-
մանակ մեր տունը ընդունուած եւ իբրեւ զը-
ւարձալի ու խենթուկ ընկեր մը կարծուած
անձը՝ անուանի Աըր Ուիլիը մթօրն հիլն է եղեր.
որտւն առաքինութիւններն ու տարօրինակ
գործերն աշխարհածանօթ էին։ Խեղճ Պ. Պը-

չէլն իրօք մեծահարուստ եւ մեծայարդ մարդ
մէքը , որուն խօսքերը ծափահարութեամբ
մտիկ կըլլուէին խորհրդարանին մէջ , վասն զի
հայրենասէք էր եւ միանդամայն հաւատարիմ
իր թագաւորին : Խեղճ կինս միտքը բերելով
այն համարձակ ընտանութիւնը որով վարուեր
էր այս մեծ մարդուն հետ , սաստիկ երկիխողի
մէջ ինկած կերեւէր : Խոկ Սովիխաս , որ քանի
մը վայրկեան առաջ զանի ամօւպին ունենա-
լու յոյսը կը տածէր , իր ու անոր մէջ եղած
հարստութեան խախրը տեսնելով չէր կընար
արտսուքը բոնել :

Ա՞հ , Պարոն , դոչեց կինս վշտադին ձայ-
նիւ , ի՞նչպէս հնարէ ինձ ներում ընդունիլ
ձենէ : Վերջին անգում ձեզ մեր տան մէջ տես-
նելու պատիւ ունեցած ժամանակս յանդնա-
բար ձեղի ուղղած թշնամանքս եւ երգիծա-
կան ծաղրաբանութիւններս կը վախնամ որ
յաւիտեան չէք ներեր ինձ : »

« Եիրելին տիկին , պատասխանեց ասպետը
ժպտելով , եթէ դուք ծազրաբանութիւններ
ըրիք , ես ալ պատասխանեցի , եւ ներկայ դըտ-
նուազներուն կը թողում դպտել թէ իմ պաշտ-
պանողական պատասխաններս ձեր յարձակո-
ղական երգիծանքներէն աւելի զօրաւոր չէ-
ի՞ն : Ճշմարիտը խօսելով , ես մէկը չեմ ճանչեր

որուն դէմ հիմա նեղանալու տրամադրութիւն
ունենամ՝ բաց այն անզգամէն որ այս աղջիկս
այն աստիճան գարհուրեցուց ։ Ժամանակ չու-
նեցայ սրիկային երեսը լաւ մը դիտելու, որ
կարենայի ազգարարութեան մը մէջ նշանա-
կել ։ Կրնաք ճանչել զանի, Սովիա, սիրելիս,
եթէ նորէն տեսնէք ։ — Վստահ չեմ կրնար
ըլլալ ճանչելուս, պատասխանեց Սովիա ։ սա-
կայն կը յիշեմ որ յօնքերուն մէկուն վրայ մեծ
նշան մը կար ։ — Ներում կը խնդրեմ խօսքեր-
նիդ ընդմիջելուս, տիկին, ըսաւ ձէնքինսըն,
որ քովք կեցեր էր ։ այդ մարդը մազ ունէր գը-
լուխը եւ կարմի՞ր էին ։ — Այս, կարծեմ, ը-
սաւ Սովիա, — Եւ արդեօք հրամանքնիդ ալ
նշմարեցի՞ք անոր սրունքներուն երկայնու-
թիւնը, հարցուց ասպետին ։ — Սրունքներուն
երկայնութիւնը չդիտեցի ։ բայց արագութեա-
նը խօսք շունիմ, վասն զի չկրցայ ետեւէն
հասնիլ ես՝ որ կը կարծէի թէ Անգղիոյ մէջ
խիստ քիչ մարդ կրնար ինձի չափ վաղել ։ — Ես
կը ճանչեմ այդ մարդը, գոչեց ձէնքինսըն ։
անշուշտ այն մարդն է՝ որուն չափ երագուն
մարդ չկայ Անգղիոյ մէջ ։ Ամենէն երեւելլի
քաջավաղներն յաղթուած են իրմէ ։ Տիմոթէ-
ոս Պաքսթէր է անունը ։ Քաջ կը ճանչեմ զին-
քը եւ հիմա ուր քաշուած ըլլալն ալ զիտեմ ։

Նթէ ձեր Տէրութիւնը հաճի հրաման ընելու
բանտապետին որ զիս թողու որ երկու մարդով
դուրս ելնեմ , ժամմը չանցած՝ կը գտնեմ կը
բերեմ : » Կանչուեցաւ բանտապետը , եւ Ուի-
լիըմ ասպետն հարցուց անոր թէ զինքը կը
ճանչէր : Այս , տէր , պատասխանեց բանտա-
պետը , Ուիլիըմ Խօրնհիլ ասպետը ճանչելու
պատիւն ունիմ . եւ որոնք որ այս պատիւն ու-
նին , աւելի եւս զանի ճանչելու կը փափա-
քին : — Ուրեմն , ըսաւ ասպետը , կը խընդ-
րեմ որ թող տաք առ մարդուն եւ ձեր ծառայ-
ներէն երկուքին որ դուրս ելնեն , եւ յանձնա-
բարութիւն մը ունիմ կատարեն : Ես այս կոմ-
սութեան դատաւորներէն մէ կն ըլլալով , ինչ
որ ըլլայ նէ պատասխանատութիւնը վրաս
կառնում : — Ձեր խօսքն ինձի բաւական է
ըսաւ բանտապետը . կրնաք՝ երբ ձեզ հաճոյ
թուի՝ ուզած տեղերնիդ դրկել : »

Հետեւաբար ձէնքինսըն ճանբայ հանուե-
ցաւ Տիմոթէոս Պաքսթէրը գտնել բերելու հա-
մար : Խոկ մեք կը գուարճանայինք ինդալով
մեր ամենէն վոքրիկ տղուն վրայ որ Ուիլիըմ
ասպետին աթոռին վրայ ելնելու կաշխատէք
զանի համրութելու համար : Մայրը զանի պէ-
տի պատժէր այս բրած ընտանութեանը հա-
մար . բայց ավնիւ ասպետը չթողուց , եւ մեր

ցնցոտազգեաց մանկիկը գիրկն առնելով , «Ե՛ ,
գիրուկ մանչ , ըսաւ անոր , կը յիշես քու վա-
ղէմի Պրչէլ բարեկամդ : Ո՞ւ քարտիկ եղբայրդ
հնու է : Կը տեսմնէք որ ձեզ չեմ մոռցած : » Ա-
սոնք ըսած ժամանակը միանգամայն զրպա-
նէն մեծ կտոր մը շաքարահաց տուաւոր խեղճ
տղայքը փափաքով կերան , որովհետեւ առա-
ւոտուն խիստ թեթեւ ճաշ մը ըրեր էին :

Մենք ալ նոյն միջոցին ճաշի նստանք , որ
գրեթէ պաղեր էր : Բայց թեւիս ցաւը շարու-
նակելուն համար , դեռ ճաշի չնստած Ուիլիլմ
ասպետը դեղ մը գրեր էր . վասն զի իր հաճո-
յիցը համար ըժշկութիւն սովորած էր . եւ բա-
ւական յաջողակ էր այս արհետին մէջ : Գը-
րած դեղը բերել տուի դեղավաճառէն , եւ թե-
ւիս վրայ դնելուս պէս ցաւը կտրեցաւ : Ճա-
շին ժամանակ բանտապետն ինքնին մեղի ըս-
պասաւորեց , վասն զի ինչ պատիւ ընելը չէր
գիտեր մեր հիւրին : Ճաշերնիս դեռ չաւար-
տած , երկրորդ ժառայ մը եկաւ ասպետին եղ-
քօրորդւոյն կողմէն , որ իր անմեղութիւնն ար-
դարացընելու եւ պատիւը պաշտպանելու հա-
մար հօրեղքօրորդւոյն ներկայանալու հրաման
կը խնդրէր : Ասպետն ընդունեց խնդիրը , եւ
հրամանըրաւ որ ներս գայ :

ԳԼՈՒԽ 1.0.

Բ-Ե-Շ-Ե-Ա-Ր-Ա-Ն Դ-Ի-Ն-Ե-Ը-Ց-Ե-Լ:

Պ. Թօրնհիլ ներս մտաւ իր սովորական
ժպիտովը, եւ իր հօրեղբօրը մօտեցաւ համ-
քուրելու, բայց ասպետն արհամարհութ դէմ-
քով մը ետ հրեց զայն: « Յածութիւն պէտք
չէ հիմա, գոչեց խոժու դէմքով մը, իմ սըր-
տիս պատուոյ ճանրով միայն կարելի է մօտե-
նալ. բայց հոս ստութեան, վատութեան եւ
հարստահարութեան փորձերէ զատուրիշ բան
չեմ տեսներ: Ի՞նչպէս եղեր է, պարոն, որ
այսպէս դժնեայ կերպով վարուեր էք այս
խեղճ մարդուն հետ, որուն ինքզինքնիդ բա-
րեկամ կը կոչէիք: Իր տանը մէջ ձեզ ընդու-
նելուն փոխարէն իր աղջիկը վատաբար հը-
րապուրել, եւ զինքն ալ բանաը նետել այս
նախատինքը լրութեամբ չմարսելուն համար.
նմանապէս որդին, որուն այրաբար դէմելնե-
լու չհամարձակեցաք: »

« Հնար է որ, ըսաւ եղբօրորդին՝ անոք
խօսքը կտրելով, հօրեղբայրս զիս յանցաւոր
դատէ այնպիսի դործի մը համար՝ որ իրեն

պատուէրներուն հնագանդելու համար յանձն
շառի :

« Զեր այդ հրաժեշտը , ըստ հօրեղբայ-
րը , այդ պարագային մէջ արդար է : Շատ ա-
ղէկ ըրիք եւ խոհեմութեամբ վարուեցաք .
թէ եւ ձեր հայրն այդպէս շէր լներս Դմեղ-
բայրս իր պատուոյն նախանձախնդիր մարդ
մ'էր . . . : Աակայն ձեր վարմունքն այդ կէ-
տին մէջ կանոնաւոր եղած է , եւ ես ալ կը հաւ-
նիմ : »

« Եւ կը յուսամ որ , ըստ եղբօրորդին .
միւս ըրածներս ալ նոյնապէս անհաճոյ չպի-
տի ըլլան ձեզ : Պարոնին աղջկանը հետ քանի
մը հրապարական տեղեր գտնուեցայ . այս ան-
ըզգուշութիւնը գայթակղութիւն համարուե-
ցաւ , եւ ըսին թէ աղջիկը գլմէ հաներ եմ .
Ելայ անձամբ հօրը գացի գործը գոհացուցի :
կերպով բացատրելու , եւ թշնամանքէ գատ-
ուրիշ բան չտեսայ իրմէ : Իսկ իր բանտարկու-
թեանը գալով , իմ մատակարարս աւելի լաւ
տեղեկութիւն կրնայ տալ ձեզ այս մասին . վա-
սըն զի այս կերպ գործերուն հոգն անոր յանձ-
նած եմ . թէ որ այս մարդը պարտքեր ըրած
է , որ չուզեր կամչկրնար վճարել , իմ մատա-
կարարներուս գործն է այսպիսի առիթներու-
մէջ պէտք եղած օրինաւոր միջոցներուն գի-

մել, եւ ես չեմ կարծեր որ օրինաց համեմատ վարմունք մը դժուէութիւն ըլլայ : »

« Եթէ գործերը ձեր այդ ներկայացուցածին պէս են, գոչեց ասպետը, աններելիք բան մը չեմ տեսներ ձեր վարմունքին մէջ . եւ թէպէտ աւելի ազնուական վարմունք մը կըրնայիք ունենալ չթողլով ձեր մարդոցը որ պարոնը հարստահարեն, բայց եւ այնպէս անիրաւ գտնուած չէք : »

« Ըսածներուս մէկն ալ չկրնար ժխտել, պատասխանեց ևղբօրորդին . եթէ կրնայ՝ թող ժխտէ, եւ իմ մարդոցմէս շատերն ալ պատրաստ են ըսածս հաստատելու : Ըսել է որ, Պարոն, (շարունակեց տեսնելով որ ես լուռ կը կենայի, եւ իրօք ալ ըսածներուն հակառակը չէի կրնար հաստատել), ըսել է որ իմ անմեղութիւնս արդարացաւ . բայց թէ եւ 'ի պատիւ ձեր յօժարիմ այս պարոնին ուրիշ որ եւ է յանցանքը ներելու, սակայն չեմ կրնար զիս ձեր աչքէն հանել ուզելուն համար իրեն դէմ ունեցած սրտմտութեանսյաղթել, մանաւանդ այնպիսի ժամանակ մը՝ ուր իր որդին ալ զիս սպաննել կուզէր: Այս ալ այնչափ յայտնի բան մ'է, որ հաստատ կերպով միտքս դրած եմ թողուլ որ դատաստանն իր գործը կատարէ: Մենամարտութեան հրաւէրն ահա վրասէ, եւ

Երկուք ալ վկայ ունիմ , եւ եթէ հօրեղբայրս
ուզէ ալ զիս դատէն ետ կեցընել , որ չեմ յու-
սար , ես կուզեմ որ արդարութիւն ըլլայ , եւ
ըստ օրինաց խստիւ պատժուի : »

« Հրէշ մարդ , գոչեց կինս , արդէն առած
վրէժգ բաւական չէ որ խեղճ որդւոյս վրայ ալ
անգթութիւնդ յագեցընել կուզես . կը յուսամ
որ Պ . Ուիլիըմ Թօրնհիլ մեզ կը պաշտպանէ .
վասն զի որդիս նոր ծնած տղու մը չափ ան-
մեզ է . Ես անտարակոյս եմ որ անմեղ է , եւ
երբէք մէկու մը գէշութիւն չէ ըրած : »

« Տիկին , պատասխանեց համեստ Պ .
Թօրնհիլ , ձեր որդւոյն համար ունեցած իդ-
ձերնիդ խինիս չափ անկեղծ չեն կրնար ըլ-
լալ . Բայց կը ցաւիմ որ իր յանցանքն այս աս-
տիճան յայտնի է . եւ եթէ եղբօրորդիս ոտք
կոխէ . . . : » Նոյն միջոցին ձէնքինաըն բան-
տապետին երկու մարդոցը հետ ներս մտաւ ,
վայելուչ հագուած խոշոր մարդ մը քաշելով ,
որուն դէմքը աղջիկս յափշտակոց անզգամին
նկարագրութեանը կը նմանէր . Ամենուս ու-
շագրութիւնն այս մարդուն վրայ գարձաւ ,
« Ահա , բռնեցինք բերինք , գոչեց ձէնքին-
ոըն , եւ եթէ կախուելու արժանի մարդ մը
կայ՝ այս է : »

Պ . Թօրնհիլ այս մարդը տեսնելուն պէս ,

զիտես թէ սարսափ եկաւ վրան . Երեսին գոյնը նետեց , եւ ձգել երթալ ուղեց . Բայց ձէնքինսըն անոր այս շարժումը նշմարելով , բռնեց : « Ի՞նչ կընէք , ասպետ , գոչեց , ձեր երկու հին ծանօթներէն՝ ձէնքինսընէն եւ Պաքը ըթէրէն կամաչէք : Այս այսպէս մեծ մարդիկն իրենց բարեկամները կը մոռնան : Բայց մեք ձեզ չենք մոռնար . Այս մեր բռնած ու բերած մարդը , յարեց Պ. ձէնքինսըն Պ . Ուիլբըմ Թօրնհիլի դառնալով , արդէն ամեն բան խոստովանեցաւ : Կրսէ թէ Պ . Թօրնհիլ զինքը զրկերէ այս օրիորդը յափշտակելու . ան տըւերէ այս վրայի հագուստը եւ սուրհանդակի կառքը : Խորհուրդ ըրեր են , որ Պաքսթէր անմարդի եւ ապահով տեղ մը տանի օրիորդը , եւ սպառնալիքներով զանի վախցընէ : Յետոյ Պ . Թօրնհիլ որպէս թէ դիպուածով հոն հասնի , եւ զանի ազատել կեղծելով Պաքսթէրի հետ ծեծկուի , եւ Պաքսթէր յաղթուելով ձըգէ փախչի : Այս կերպով Պ . Թօրնհիլ օրիորդին սէրը զբաւէ իրրեւ ազատարար : »

Ուիլբըմ Թօրնհիլ ասպետն միշեց որ այն հանդերձը յաճախ իր եղբօրորդւոյն վրայ տեսած էր : Խակ պատմութեան միւս պարագաները Պաքսթէր մանրամասնաբար խոստովանեցաւ , եւ վերջացուց ըսելով թէ ինք շատ

անդամ լսեր էր Պ . Թօրնհիլիք բերնէն թէ եր-
կու քոյրերն ալ միանդամայն կը սիրէր :

« Երկի՞նք . գոչեց Պ . Ուիլիըմ Թօրնհիլ .
այս ի՞նչ իժ մ'է որ ծոցս կը տածեմ եղեր :
Այսպիսի ճիւաղ մ'է որ ինքզինք այսչափնա-
խանձաւոր կը ցուցընէ հրապարակաւ դա-
տաստան եւ արդարութիւն ըլլալու : Բայց
արդարութիւն պիտի ըլլայ իրեն : Բանեցէք
դա , բանտապետ . . . բայց ոչ . . . թերեւս
օրինաւոր ապացոյցներ չկան զինքը բանտար-
կելու . պէտք է նախ գործը քննենք :

Այս խօսքին վրայ , Պ . Թօրնհիլ խոնար-
հարար աղաչեց որ այս երկու մարդոց պէս ոը-
րիկայներու վկայութեանը հաւատաք չընծայ-
ուի , այլ իր ծառայներուն հարցուի : « Զեր
ծառայները կըսէք , ըսաւ Ուիլիըմ ասպետը ,
այսուհետեւ անոնք ձեր ծառայները չեն . . .
Բայց տեսնենք ի՞նչ պիտի ըսեն այն մարդիկը .
կանչեցէք տաճարապետը :

Երբոր տաճարապետը ներս մտաւ , տիրո-
ջը դէմքէն հասկըցաւ որ անոր իշխանութիւ-
նը վերջացեր էր : « Ըսէ ինձի , գոչեց Պ . Ուի-
լիըմ խոժոռ դէմքով մը , քու տէրդ երբէք
տեսմծ ես սա անդամին հետ՝ որ անոր հան-
դերձները հագած է : Այո , տէր , պատասխա-
նեց տաճարապետը , հազար անդամ տեսած

եմ : Այս մարդն էր որ սովորաբար օրիորդներ
կը բերէր տիրոջս . — Ի՞նչ , գոչեց Թօրնհիլ
երիտասարդը տաճարապետին խօսքը կտրե-
լով , կը համարձակի՞ս իմ առջեւս . . . — Այո ,
պատասխանեց տաճարապետը , ձեր առջեւն
ալ , ամենուն առջեւն ալ . . . ։ Աշմարիտը խօ-
սելով ձեզ , Պ . Թօրնհիլ , ես երբէք ձեզ սի-
րած եւ բռնած ընթացքնուդ հաւնած չեմ .
ուստի եւ բնաւ հոգ չեմ ըներ եթէ ըսածս ձեզ
հաճոյ չէ : — Հիմա , գոչեց ձէնքինսըն , եթէ
իմ վրայովս ալ բան մը զիտէք՝ ըսէք Պարո-
նին : — Զեզի համար ալ բարի վրայութիւն մը
չեմ կրնար տալ , ըսաւ տաճարապետը . բայց
սա սոոյգ զիտեմ , որ Պ . Բրիմրօղին աղջիկը
մեր տունը բերուած գիշերը դուք ալ այն
գործին մէջ էիք : — Ստուգիւ , գոչեց Պ . Ուի-
լըմ Թօրնհիլ , ձեր անմեղութիւնն արդարա-
ցընելու համար խիստ նպաստաւոր վկայներ կը
ցուցընէք : Նախատինք մարդկութեան . . .
Բայց , ըսաւ քննութիւնը շարունակելով , Պ .
տաճարապետ , Պարոնին աղջիկը տուն բերո-
ղըն այս մարդն էր կըսէք , այնպէս չը : — Ոչ
Տէր , ներեցէք , պատասխանեց տաճարապե-
տը , այս մարդը չէր բերողը , այլ տէրս ինք-
նին բերաւ դայն . այս մարդը քահանայ մը բե-
րաւ կարծեցիալ պսակը կատարելու : — Ճըշ-

մարիտ է ըսածը , գոչեց ձենքինսուրն . չեմկըր-
նար ուրանալ . այդ եղաւ իմ պաշտօնս , զոր կը
խոստովանիմ յամօթ եւ 'ի նախատինս ինձ . »

Տէր Առտուած , գոչեց ասպետը , սարսափ
կուգայ վրաս քանի որ երեւան կելնեն ատոք
չարութիւնները . Իր յանցաւորութիւնն հիմա
աներկրայելի է : Կը տեսնեմ հիմա որ այս ը-
րած հալածանքը հարստահարութենէ վա-
տութենէ ու քինախնդրութենէ յառաջ եկած
է . Պարոն բանտապետ , սա երիտասարդ պաշ-
տօնակալն արձակէ , ես վրաս կառնում պա-
տասխանատուութիւնը եւ գործին իսկը կը
հասկըցընեմ բանտարկել տուող գատաւորին
. . . : Բայց նոյն իսկ գմբաղդ օրիորդն ուր է .
Հօս բերէք որ դէմ առ դէմ խօսի այս անզգա-
մին հետ : Վասն դի կուզեմ հասկընալ թէ ինչ
միջոցներ գործածեր է զայն հրապուրելու հա-
մար . Հիմա զացէք բերէք : »

Ա՞հ , Պարոն , գոչեցի . այդ խնդիրը սիր-
եց կը խոցէ : Ժամանակաւ աղջիկս ձեռքք
ըլլալով երջանիկ էի . բայց գլխուն եկած ա-
զէանները . . . »

Այս միջոցին ներս մտաւ Արապէլլա Վիլ-
մօթ օրիորդը՝ որ հետեւեալ օրը Պ . Թօրնհիլի
հետ պիտի ամուսնանար : Մեծ եղաւ զարման-
քը երբոր հոն տեսաւ Պ . Ուկլիըմ Թորնհիլն

ու եղբօրորդին, վասն զի ինքը դիպուածով
եկեր էր հոն : Իր մէկ հօրաքոյրն ուզած ըլլա-
լով որ հարսանեաց արարողութիւնն իր տունը
կատարուի, անոր խնդիրը կատարելու համար
ճանքայ ելեր, քաղաքին մէջէն անցած ժա-
մանակնին օթեւան մը իջեր էլն զովարար ըմ-
պելի մը խմելու : Հոն Վիլմօթ օրիորդը պա-
տուհանէն մանկիկներուս մէկը տեսնելով որ
փողոցին մէջ կը խաղար, սպասաւոր մը զրկեր
աղան իր քովը հանել տուեր, եւ մեր դըժ-
բաղդ վիճակը անկէ իմացեր էր . բայց պատ-
ճառը Պ. Թօրնհիլ ըլլալը չէր զիտեր : Խոկոյն
մնզ գալ տեսնել ուզեր էր՝ առանց միտ դնե-
լու իւր հօրը գիտողութիւններուն որ այսպիսի
այցելութիւն մը անվայել կը համարէր իրեն :
Ուստի տղան առջեւը ձղելով՝ այն անակնկալ
միջոցին բանտը եկեր էր :

Զեմ կրնար պատմութիւնս յառաջ տանիլ
առանց խորհրդածութիւնն մը ընելու այս զիպ-
ուածական հանդիպումներուն վրայ, որ թէ-
սլէտ ամեն օր կը պատահին, բայց քիչ ան-
դամմեր զարմանքը կը շարժեն, եւ այն ալ
կարգէ գուրս առիթներու մէջ . Միթէ մեր կե-
նաց հաճոյքներն ու բերկրութիւնները դիպ-
ուածական պարագաներու գործակցութեանց
արգասիք չեն : Ո՞րչափ դիպուածներ պէտք է

մէկտեղ գան մեղի հագուստ կամ սնունդ մասակարարելու համար : Պէտք է որ գեղացին աշխատելու տրամադրութիւն ունենայ . պէտք է որ անձրեւ գայ . պէտք է որ հովընաւերուն առագաստներն ուռուցընէ : Առանց ասոնց մեր կենաց ամենակարեւոր պիտոյքէն զուրկ կը մնանք :

Ամենս ալ քանի մը վայրկեան լուռ կեցանք : Սիրուն սանս (այս անունը կուտայի սովորաբար Վիլմօթ օրիորդին) մեզ կը նայէր կարեկից եւ զարմացական աչքով մը՝ որ իր գէմքին գեղեցկութիւնը կը կրկնապատկէր : « Ստուգիւ , սիրելին Պ . Թօրնհիլ , (ըսաւ երիտասարդ ասպետին որ մեզ օգնելու . եւ ոչ հարստահարելու համար հոն եկած կը կարծէր) կը ցաւիմ որ առանց ինձի հոս եկեր էք : Պէտք է դիտնաք որ իմ սիրելի եւ պատուական գանտիւրակս սփոփելը՝ որչափ ձեզ՝ նոյնչափ ալ ինձ բերկրալի է : Բայց կը տեսնեմ որ դուք ալ ձեր հօրեղբօրը պէս ծածկաբար կուզէք բարեգործել : »

« Այդ պար՞նը բերկրութիւն՝ պիտի զգայ բարեգործութիւն ընելէ , գոչեց Պ . Ռէնիլիք Թօրնհիլ : Ոչ , սիրելիս , իր բերկրութիւններն ալ իրեն պէս ցած են : Նթէ երբէք , օրինրդ , մարդկութեաննախատինք բերող ամենավատ

որիկայ մը կայ , այդ թշուառականն է , որ
այս խեղճ մարդուն մէկ աղջիկն հրապուրելէ .
Երկրորդին ալ անմեղութեանը դարան լարելէ
նուե , հայրը բանտարկել եւ մեծ որդին ալ
շղթայի գարնել տուեր է , վասն զի իրենց ըն-
տանեացը եղածնախատինքը լուռւթեամբ չեն
մարսեր : Ներեցէք ինձի , օրիորդ , որ այդպիսի
հրէշի մը գրկախառնութիւններէն աղատ մը-
նալնուդ համար ուրախակցութիւնս յայտնեմ
ձեզ : »

« Երկիրնք , գոչեց սիրուն աղջիկը , որ-
շափ խարուեր եմ : Պ . Թօրնհիլ հաւաստեցին .
ձի թէ Պ . Բրիմրոզ վարդապետին մեծ որդին
ամուսնացեր , եւ կնոջը հետ Ամերիկա դացեր
էր : »

« Սիրելի օբիորդ , գոչեց կինս , ինչոր ձեզ
ըսեր է՝ ամենն ալ սուստ են : Գէորդ որդիս
Անգլիայէն դուրս ելած չէ Երբէք . ոչ ալ ա-
մամացած է : Թէ եւ դուք զայն մոռցած ըլ-
լաք , իր սիրտը ձեզ հետ կապուած ըլլալուն
ուրիշ ոչ մէկ օրիորդի մը վրայ խորհած չէ . եւ
ես քանի քանի անդամ լսեր եմ բերնէն թէ
ձեզի հետ չկրնալ ամուսնալուն համար ա-
մարդի սիրտի մեռնի : » Կինս ընդարձակօրէն
Առակըցուց որդւոյս սիրոյն անկեղծութիւնը ,
Պ . Թօրնհիլ հետ մենամարտիլ ուղելուն պա-

բազաները պատմեց , հարեւանցի ակնարկութիւն մը ըրաւ ասպետին անառակութեանցն ու սուտ ամուսնութեանցը , եւ վերջապէս կծունկարագրութիւն մը ըրաւ անոր վատութեանն ու նենգաւորութեանը վրայ :

« Տէր Աստուած , դոչեց Վիլմօթ օրիորդը , որչափ մեծ վտանգի մէջ ինկեր եմ եղեր . եւ որչափ կուրախանամ ազատութեանս վրայ : Այս պարոնը հաղար սուտ խօսեցաւ ինձի Վերջն ալ վարպետութեամբ զիս համոզելուզեց թէ իմ յարդած միակ մարդուս ըրած խոստումս ալ զիս չէր պարտաւորեր , ըստ որում ան ինձի անհաւատարիմ գտնուերէր իր սրտախօսութիւնները զիս այն աստիճան խարերէին , որ քաջ եւ ազնուասիրտ մարդ մը չարաշար ատելու հարկադրերէի : » Այս խօսակցութեան միջոցին որդիս արձակուեցաւ շըդթայներէն : Պ . Ճէնքինսըն այս առթիս մէջ սննեկապան սպասաւորի պաշտօն կատարերէր : Որդւոյս մազերը շտկեր եւ վայելուչ կերպարանքով երեւալու վլճակի մէջ դրերէր զայն , Որդիս ներս մտաւ կոկուած եւ իր համազդեստն հաղած : Կրնամթէ եւ որդւոյս համար՝ առանց սնապարծութեան ըսել , թէ այնպիսի գեղեցիկ մարդ մը եղերէր , որուն նմանը զինուորականաց մէջ հաղիւ կրնար դանուիլ :

Ներս մտած ժամանակ խորին յարգանք մը մատոյց վկիլմօթ օրիորդին , բայց հեռու կեցաւ անկէ , վասն զի դեռ չէր գիտեր այն յաջող փոփոխութիւնը որ իր մօրը ճարտարխօսութեամբը կատարուեր էր օրիորդին սրտին մէջ 'ինպաստիւր . սակայն սիրուհոյն իբրմէ ներում ստանալու անհամբերութիւնն ալ ոչ մէկ արարողութիւն մը չէր կրնար արգելուլ : Թափած արտսուքը , ամօթահար նայուած քը եւ ուրիշ ամեն շարժումները սրտին տիսուր զգացումները կը յայտնէին իր առաջին խոստումը մոռնալուն եւ նենգաւորէ մը խաբուելուն վրայ : Որդիս շփոթեցաւ անոր այս սիրալիր ցոյցերէն եւ չէր կրնար ճշմարիտ ըլլալուն հաւատալ : « Ստուգիւ , օրիորդ , գոչեց , այս ամենը ցընորք կը թուին ինձի . վասն զի ես երբէք չի կրցայ արժանանալ այդպիսի չնորհի մը : Իմ երջանկութիւնս չափազանց մեծ է , որովհետեւ տակաւին համակրութիւն կը ցուցընէք ինձ : — Ոչ , պարսն , պատասխաննց օրիորդը . ես խաբուեցայ , նողկալի կերպով խաբուեցայ . ապա թէ ոչ անհնար էր որ խոստմանս դրժէի . գիտէք որչափ սէր ունէի ձեր վրայ , եւ ասոր շատուց համոզուած պէտք է ըլլաք : Բայց ներեցէք ըրածիս , եւ ինչպէս որ ժամանակաւիմ հաստատամտութեանս վրայ զօրաւոր հա-

ւասալներ տուած էի ձեզ , նոյնը հիմա ալ
հոս կը կրկնեմ : Վստահ եղիք որ եթէ ձեր հին
բարեկամուհին ձեզ չըլլայ , ուրիշ ո եւ է մէ-
կու մը ըլլալիք չունի : —Այդ երիտասարդէն
զատ ուրիշի չպիտի ըլլաք , գոչեց Պ. Ուիլի ըմ
թօրնհիլ , թէ որ ևս ձեր հօրը մտքին վրայ աղ-
դեցութիւն մը ունիմ : »

Այս խօսքը Մովսէս որդիս լսելուն պէս՝
իսկոյն Պ . Վիլմօթի գտնուած օթեւանը վա-
զեց՝ այս անցքն անոր պատմելու , Բայց նոյն
միջոցին երիտասարդ Թօրնհիլ ասպետն ալ տես-
նելով որ իր գործը լմնցած էր , եւ շողոքոր-
թութիւնն ու կեղծաւորութիւնն ստակ չպիտի
ընէին , խորհեցաւ որ բերանը դարձունելէ եւ
իր հակառակորդացը հետ մաքառելէ լաւա-
գոյն միջոց չէր մնար իրեն : Ուստի ամեն պատ-
կառանք մէկ կողմ դնելով՝ անզգամութիւնը
ձեռք առաւ : « Կը տեսնեմ , գոչեց , որ հոս
արդարութիւն ձեռք բերելիք չունիմ , բայց
հաստատութեամբ միտքս դրած եմ ձեռք բե-
րել : Գիտէք , Պարոն , (Պ . Ուիլիըմի դառնա-
լով) որ ես այսուհետեւ ձեր առատաձեռնութե-
նէն կախում չունիմ . ուստի կարհամարհեմ
զայն : Օրիորդ Վիլմօթին հարստութիւնը՝ որ
հօրն ագահութեան շնորհիւը բաւական մեծ
է՝ լսմա է , եւ մէկը չկընար ձեռքէս առնուլ :

Պայմաններն ստորագրեալ են , և իր հարըստութիւնը վաւերական մուրհակով իմ վրայ ապահոված է , ետ չկրնար դառնալ : Ես զանի կնութեան առնելով անոր հարստութիւնը կուղէի եւ ոչ անձը . ուստի առաջինը ձեռքս անցունելէս ետեւ , միւսը ով կուղէ թող առնու : »

Այս հարուածն աճաւոր էր : Պ . Ուիլիբամ զգաց այս պահանջման ճշգութիւնը , որովհետեւ ամուսնութեան պայմաններուն ստորագրութեանը ինք ալ մասնակից եղած էր : Վիլմօթ օրիորդը տեսնելով որ իր հարստութիւնն անդառնալի կերպով կորսուած էր , որդւոյս դարձաւ եւ հարցուց թէ այո կորուաթ կրնար իր արժէքը կոտրելիր առջեւ : « Թէ եւ հիմա հարստութիւն չունիմ ձեզ նուիրելու , ըստեւ , բայց դոնէ ձեռքս կրնամ ձեզ տալ : »

« Իմ ալ ամեն ժամանակ փափաքածս այդ էր , օրիորդ , գոչեց իր ճշմարիտարփաւորը , եւ կերդնում ձեզ , սիրելի Արապէլաս , որ ձեր հարստութիւն չունենալն իմ բերկրութիւնս կաւելցընէ , որովհետեւ զիս կարող կը նէ զգացմանց անկեղծութեանը ձեզ համոզելու : »

Նոյն միջոցին Պ . Վիլմօթ ներս մտաւ եւ

շատ գոհ երեւցաւ իր աղջկան իյնալիք վտանքէն աղատած ըլլալուն վրայ։ Հաճեցաւ իր աղջկը որդւոյս տալու . բայց երբ իմացաւ որ մուրհակաւ Պ. Թօրնհիլի վրայ ըրած հարըստութիւնը ետ չպիտի դառնար , վերջին ծայր տրտմեցաւ կը տեսնէր որ իր բոլոր գոյքնանինչ մարդ մը հարստացընելու պիտի ծառայէր : Առաւել հանդուրժելի էր իրեն որ իր ապագայ փեսան սրիկայ մը ըլլար , քան թէ իր աղջկանը հաւասար հարստութիւն չունենար . այս մըտածութիւնն անհնարին տագնաակ մ'էր իրեն։ Քանի մը վայրկեան այս ախուր մտածութեանց մէջ ընկղմեցաւ , մինչեւ որ Պ. Ռւփլիը մ'թօրնհիլ անոր վիշտը թեթեւցընել ուզեց : « Ճըշմարիտը խոստովանելով , պարոն , ըսաւ , ներկայ պարագան զիս քնաւ չտրտմեցըներ : Զերչափէ դուրս ընչասիրութիւնն արդարապէս պատժուեցաւ : Բայց թէ եւ օրիորդն հիմա հարուստ չըլլայ , տակաւին գոհ ապրելու չափ քան ունի : Զեր առջեւ երիտասարդ զինուորականն մը կը տեսնէք . որ ձեր դուստրն առանց հարստութեան առնուլ կուզէ : Երկար ժամանակէ ՚ի վեր իրար կը սիրեն , եւ ես ալ երիտասարդին հօրը վրայ ունեցած բարեկամութեանը պատճառաւ իր յառաջացմանը աշխատելէ ետ չպիտի կենամն թօղէք ուրեմն այդ փա-

ռասիրութիւնը որ ձեզ կը խարէ , եւ առջեւ
նիդ ելած երջանկութիւնը միանդամ ընդու-
նեցէք : »

« Պ. Աւիլիը՝ պատասխանեց ծերունի
ազնուականը , հաւաստի եղիք որ ես երբէք
արգելք եղած չեմաղջկանս հակամիտութեան-
ցը , եւ հիմա ալ չեմուզեր արգելք ըլլալ : Ե-
թէ տակաւին այս պարոնը կը սիրէ՝ թող ամուս-
նանայ հետը , բոլոր սրտովս կը հաճիմ : Ես
տակաւին , դոհութիւն Աստուծոյ , կրնամ քիչ
մը հարստութիւն տալ իրեն , եւ ձեր պաշտ-
պանութիւնը դայն կաւելցընէ : Թող իմ վաղե-
մի բարեկամս (ինձ համար խօսելով) խոպտանայ
միայն վեց հարիւր լիրա աղջկանս տալու՝ եր-
բոր իր հարստութիւնը վերստին ձեռքն ան-
ցունէ , ես պատրաստ եմ զանոնք այս իրիկուն
ամուսնացընելու :

Արդ , որովհետեւ երկու ծաղկահասակ
ամոլներուն երջանկութիւնն ինէ միայն կա-
խում ունէր , չվարանեցայ Պ. Վիլմօթի ու-
ղած խոստումը տալու , որն որ ինձի պէս ան-
ցոյս մարդու մը կողմէ մեծ չնորհ մը չէր : Ա-
սոր վրայ Գէորգս եւ Վիլմօթ օրիորդն ուրա-
խութեամբ իրար փաթթուեցան : « Կրած ա-
մեն վիշտերէս ետեւ , կը գոչէր որդիս , այս-
պէս զիս վարձատրեալ տեսնել անյօւսալի էր

ինձ : Այնչափ նեղութիւններէ ետեւ՝ ամենէն
թանկագին բանը ձեռք բերել՝ մտքէսանդամ
չէր կրնար անցնիլ : — Այս , սիրելի Գէորգս ,
պատասխանեց իր սիրուն խօսեցեալը , թող
այս թշուառականն իմ հարստութիւնս զրա-
ւէ . որովհետեւ դուք առանց անոր գոհ էք .
Ես ալ գոհ եմ , ի՞նչ բարեբաղդ վոխանակու-
թիւն մ'է որ ըրի՝ ամենացած մարդ մը ամե-
նապարկեշտ եւ ամենասիրելի մարդու մը փո-
խելով : Թող ան վայելէ մեր հարստութիւնը :
Ես կ'զգամոք ձեզի հետ մինչեւ իսկ աղքա-
տութեանմէջ կրնամ երջանիկ ըլլալ : — Ես ալ
կը խոստանամ , պատասխանեց երիտասարդ
ասպետը , որ ձեր արհամարհածովը խիստ եր-
ջանիկ պիտի ըլլամ : — Վայրկեան մը կանգ
առէք , վայրկեան մը , գոչեց ձէնքինուըն ,
այդ առուտուրին վրայօք բան կայ ըսելիք .
վասն զի այդ օրիորդին հարստութեան եւ ոչ
մէկ դանկին տէր չէք կրնար ըլլալ երբէք . . .
Ներեցէք ինձ հարցնել ձեզ (Պ. Ուիլիլըմ Թօրն-
հիլի դառնալով) թէ Պ . ասպետը կրնայ այս օ-
րիորդին հարստութեանը տէր ըլլալ . եթէ ու-
րիշի մը հետ ամուսնացեալ է : — Ի՞նչպէս կըր-
նաք այդպիսի անմիտ հարցում մը ընել ինձ ,
պատասխանեց Պ. Ուիլիլըմ Թօրնհիլ : Անշուշտ
չկրնար : — Կը ցաւիմ այդ բանին վրայ , յարեց

ՃԵՆՔԲՆԱԾՆ , վասն զի պարօննն ու . ես վաղեմի
բարեկամներ ենք , եւ կը սիրեմ դինքը : Բայց
միանգամայն կը պարտաւորիմ յայտնելու , թէ
Այլմօթ օրիորդին հետ ըրած պայմանադրու-
թիւնը ծխափող մ'ամսգամ չարժեր , վասն զի
ինք արդէն ամուսնացեալ է : — Սուտ կը խօ-
սիս , սրիկայ , սուտ կը խօսիս , ըսաւ Ո. Թօրնհիլ
բարկացայտ դէմքով մը , ես երբէք օրինաւոր
կերպով ամուսնացած չեմ որ եւ է կնոջ մը
հետ : — Ներեցէք , ըսաւ ՃԵՆՔԲՆԱԾՆ , ամուս-
նացած էք , եւ կըյուսամ որ չէք ուրանար
Ճեր պարկեշտ ՃԵՆՔԲՆԱԾՆԻՆ բարեկամութիւ-
նը , որ ձեզ կին մը կը բերէ . եւ եթէ ընկերու-
թիւնը կը հաճի քանի մը վայրկեան իր հե-
տաքրքրութիւնը դադրեցընել , հիմա կ'ա-
պացուցանեմ ըսածս : » Այս ըսկելով , գուրս
ելաւ իր սովորական երագութեամբը , եւ մեզ
ամենքս անստուգութեան ու տարակուսիմէջ
թողուց իր ընելիքին վրայ : « Թող երթայ , ը-
սաւ երիտասարդ ասպետը : Ուրիշ ինչ որ ըրած
ըլլամ , այս մասին՝ կրնայ նէ . թող բան մը ա-
պացուցանէ : Աս անանկ օդաձիգ փամփուշտ-
ներէ վախցող չեմ : »

« Զեմ հասկընար , ըսաւ Ո. Ռվիլիըմ Թօրն-
հիլ , ինչ ըսել կուզէ այս մարդը . կերեւի թէ
շարամիտ կատակ մը ունի խաղալիք : — Թե-

բեւս , Պարոն , ըսի , ըսածը ճշմարիտէ : Աւա-
սըն զի երրոր մտածենք այս զանազան միջոց-
ները որ այս պարոնը գործածածէ անմեղները
խաթելու , թերեւո միւսներէն ճարպիկ աղջիկ
մ'ալ զինքը խաթեր է : Երբոր մտածենք հը-
րապուրած աղջիկներուն թիւը , այն հայրե-
րուն ու մայրերուն թիւը , որոնք հիմա սպոյ
մէջ նստած են այս պարոնին իրենց ընտանեաց
մէջ ձգած անսպատուութեան վրայ , չեմ զար-
մանար եթէ այն տարաբաղդներէն մէկն ալ
. . . Բայց ով սքամչելեացս . . . կորուսած
աղջիկս է որ կը տեմնեմ : Ա՞ն է որ կը գրկեմ
թեւերուս մէջ : Այո , կեանքս է , երջանկու-
թիւնս է : Քեզ կորուսած կը կարծէի , սիրելի
Օլիմփիաս , եւ սակայն դուն ես որ կը գրկեմ
. . . Եւ տակաւին ողջ ես զիս երջանիկ ընե-
լու համար . . . » Ամենէն անկեղծ տարփաւո-
րին ուրախութիւնը չէր կրնար երբէք հաւա-
սարիլ իմ զդացածիս՝ երբ տեսայ որ ձէն քինսըն
աղջկանս ձեռքէն բռնած ներս մտցուց : Թե-
ւերուս մէջ գրկեր էի զայն , եւ ինքն ալ իր ու-
րախութիւնը լուութեամբ միայն կրնար յայտ-
նել : « Ալ հօրդ քանի գարձար , սիրելի որդեակ ,
իր ծերութիւնն սփոփելու համար : — Այո ,
գոչեց ձէն քինսըն , եւ իր արժանի եղած սէրն
ու համարումը ունեցիք վրան , վասն զի ձեր

պարկեշտ աղջիկն է , եւ առանց մէկու մը
թշնամանք ընելու կրնափըսել թէ հոս գտնը-
ւող կանանց ամենէն պարկեշտն է : Իսկ ձեզ
համար , ասպետ , տարակոյս չկայ որ այս ծաղ-
կահասակ օրիորդը ձեր օրինաւոր կիննէ , եւ
այս ըսածիս ճշմարտութեանը ձեզ համոզելու
համար ահաւասիկ ձեր ամուսնութիւնը հաս-
տատող վաւերական դաշնագիրը : » Այս ըսե-
լով թուղթ մը հանեց , Պ . Ռելիքրմ Թօրն հիլի
ձեռքը տուաւ , որ կարդաց եւ կատարելա-
պէս վաւերական գտաւ : « Հիմա Պարոններ ,
ըսաւ ձէնքինսըն , կը տեսնեմ որ այս ամե-
նունվրայ կը գարմանաք . բայց քիչ խօսքով
պիտի հասկընաք եղելութիւնը : Այս հոչա-
կաւոր ասպետը որ ՚ի բոլոր սրտէ կը սիրեմ
(բայց մեր մէջն է այս) , զիս շատ անգամ վա-
փուկ պաշտօններու դործածած է : Անգամ
մ'ալ առաջարկեցինձ սուա դաշնագիրմ'եւ
սուա քահանայ մը գտնել այս մանկամարդ օ-
րիորդը խարելու համար : Բայց ես ասպետին
բարեկամն ըլլալուս համար ի՞նչ ըրի : Կանո-
նաւոր դաշնագիր մը ձեռք բերի , եւ ճշմարիա
քահանայ մը գտայ որ ամօնք օրինաւոր կեր-
պով պսակեց : Բայց կը խոստովանիմ յամօթ-
ինձ , որ իմ դիտաւորութիւնս էր այս դաշնա-
գիրը քովու պահելով ասպետին խմացընել թէ

կրնայի ուղած ժամանակս իր ամսւանութիւնը
ապացուցանել , որպէս զի ասանկով զինքը
պարտաւօքեմ ինձ ստակ տալու՝ երբօք պէտք
ունենամ : » Այս լուրին վրայ բոլոր ներկայ
գանուղիներն ուրախութեամբ լցուեցան : Մեր
ցնծութեան ձայնը մինչեւ բանտին հասարա-
կաց սենեակը համնելով , բանտարկեալներն
ալ մասնակից եղան , եւ բանաստեղծին ըսածին
պէս՝ իրենց տեղուածութեան՝ շնորհերդն շացեցն
եւ սովուշ ներդուածութեան և յերացուցին : Ամենուն
գէմքին վրայ բերկրութիւն փայլի սկսաւ , եւ
Օլիվիայի այտերն անդամ ուրախութեան կար-
միրներով դռւնաւորուեցան : Իր պատիւն ու
միանդամայն ծնողքը վերստին դանել , եւ
բաղդ մը ձեռք բերելը՝ բաւական միսիթա-
րութիւն մ'էր՝ իր օրքան զօրնուաղման ա-
ռաջքն առնելու եւ իր առաջդութիւնն ունախ-
կին աշխայքը նորոգելու համար ։ Բայց բոլոր
ընկերութեան մէջ թերեւու ինձ չափ անկեղծ
բերկրութիւն զգացաղ մը չկար : Աիրելի աղջի-
կը միշտ թեւերուս մէջ սեղմելով կը հարցը-
նէի սրտիս թէ իր ուրախութիւնը ցնո՞րք մ'էր
արդեօք : « Խնչպէս կրցաք , կըսէի Պ . ձէն-
քինարնի , ինչպէս կրցաք այնչափ անդթանալ ,
որ աղջիկամեռաւ ըսելով աղէտսաւելցուցիք :
Բայց հիմա հոգ չէ . սիրելի աղջիկս գտնելով

զդացած բերկրութիւնս լիովին կը փոխարինէ
ձեր պատճառած կոկիծը : «

« Ձեր այդ հարցման պատասխանը խիստ
պարզ է , ըստ ձենքինսըն : Ես կը կարծէի որ
ձեր աղատութիւնը ձեռք բերելու միակ մի-
ջոց՝ ասպետին կամքը կատարել եւ օրիորդ
Վկիլմօթի հետ ամուսնանալուն հաճութիւն
տալ էր : Բայց որովհետեւ դուք երդում ըրեր
էիք որ աղջիկնիդ քանի որ կենդանի ըլլար՝
երբէք հաճութիւն չպիտի տայիք , ես ալ գոր-
ծը կարգի դնելու համար ուրիշ միջոց չգտայ-
րայց միայն ձեզ հաւտացընել թէ աղջիկդ մե-
ռեր էր : Յորդորեցի կինդ որ ձեզ խարելու
համար օգնէ ինձ , եւ մինչեւ հիմա առիթ չէ-
ինք ունեցեր ձեր պատրանքն ուղղելու : »

Միայն երկու դէմք մնացեր էին ընկե-
րութեան մէջ որ ուրախ չէին երեւիր : Պ. Թօրն-
հիլ իր վստահ համարձակութիւնը կորուսեր
էր . վատանունութեան ու աղքատութեան
վիհը բացուած կը տեսնէր իր առջեւ , եւ մէ-
ջը իյնալէ կը սարասփէր : Ուստի հօրեղբօրը
ծունդն ինկաւ , եւ վշտագին հեծութեամբ
գթութիւն խնդրեց : Պ. Ուիլիըմ Թօրնհիլ ա-
քացի պիտի մերժէր զայն , իրայց իմադաչա-
նօքս ձեռքէն բռնեց կանգնեցուց , եւ վայր-
կեան մը լոռութենէ ետեւ ըստւ . « Քու մո-

լութիւններդ , քու սճիրներդ , քու սեւ ապե-
րախտութիւնդ գթութեան արժանի չէին :
Սակայն բոլորովմն չպիտի երեսէ ձգուիս : Ինչ
որ քու պիտոյիցդ՝ եւ ոչ յիմարութեանցդ պար-
զապէս հարկաւոր է՝ այն միայն պիտի ունե-
նաս : Այս մանկամարդ տիկինը՝ որ քու ամու-
սինդ է՝ ասկէ առաջ քեզ յանձնած հարստու-
թեանս երրորդ մասին տէր պիտի ըլլայ , եւ
գուն այսուհետեւ անոր գորովարտութենէն
միայն կրնաս օգնութիւն սպասել »
Երիտասարդ ասպետը պատրաստուեցաւ շը-
նորհակալութիւն յայտնելու հօրեղբօրը . բայց
Պ . Ուիլիբմ արգիլեց՝ հրամայելով որ իր ցա-
ծութիւնն արդէն բաւական երեւցեր էր , եւս
առաւել չծանրացընէ : Միանդամայն հրաման
ըրաւ որ երթայ իր ծառայներուն մէջէն մէկ
հատը ընտրէ , որովհետեւ միայն մէկ ծառայ
մը պիտի տրուէր իրեն այնուհետեւ :

Երիտասարդ ասպետը գուրս ելնելուն
պէս , Պ . Ուիլիբմ քաղաքավարութեամբ Օլի-
վիայի մօտեցաւ իբրեւ իւր եղբօրորդւոյն կը-
նոջը , եւ սիրավիր քաղցրութեամբ իր ուրա-
խակցութիւնը յայտնեց՝ անոր հետ ազգա-
կան ըլլալու պատուոյն համար : Վլիմօթ օ-
րիորդն ու հայրն ալ Պ . Ուիլիբմի օրինակին
հետեւեցան : Կինս ալ խանդագին գորովով

համբուրեց իր աղջիկը եւ պարկեշտ կին մը
ըլլալուն վրայ զգացած ուրախութիւնը յայտ-
նեց անոր : Սովիմա եւ Մովսէս ալ նոյնը ըրին :
Պ . Ճէնքինսըն՝ մեր բարերարը՝ խնդրեց որ
իրեն ալ թոյլ տրուի նոյն պատիւն ունենալ :
Կը թուէր որ մեր գոհութեանը վրայ աւելցը-
նելիք բան մը չէր մնացած : Պ . Ուիլիըմ , ո-
րուն ամենէն մեծ բերիլութիւնը բարեգոր-
ծելն էր , գոհ դէմքով բոլորտիքը կը նայէր :
Եւ ամենուն աչացը մէջ ուրախութիւն կը տես-
նէր , բաց ՚ի Սովիմայէս , որ մեզ անհասկանալի
պատճառաւ մը խիստ գոհ չէր երեւեր : « Ինձ
կը թուի որ , ըսաւ Պ . Ուիլիըմ , բոլոր ընկե-
րութիւնը՝ բաց ՚ի մէկ երկու հոգիէ՝ կատարե-
լապէս գոհ են : Կը մնայ ինձ հիմա արդարու-
թեան գործ մ'ալ կատարել : Գիտէք , պարսն ,
(խօսքն ինձ ուղղելով) , որ երկուքս ալ չնոր-
հակալութեան պարտականութիւն ունինք Պ .
Ճէնքինսընին , որ չարագործ սրիկայ մը գըտ-
նելու համար այնչափ փոյթ ու եռանդ ցոյց
տուաւ : Աներկայ եմ որ Ճեր կրտսեր դուստ-
րը , օրիորդ Սովիմա , կրնայ զանի երջանիկ ը-
նել , եւ ես պատրաստ եմ հինգ հարիւր լիրա
օժիտ տալու , որով կրնան ՚ի միասին հան-
դիստ ապրիլ : Այս կարգադրութեան ի՞նչ
կըսէք , օրիորդ Սովիմա : » Խեղճ աղջիկս մազ

մնաց պիտի մարէր իյնար մօրը թեւերուն մէջ՝
երբոր այս անհաճոյ առաջարկութիւնը լսեց :
« Այդ պարհնին հետ ամուսնանամ , գոշեց
վշտագին ձայնիւ : Ո՛չ Պարոն , երբէք : — Ի՞նչ-
պէս , ըսաւ Պ . Ուիլիըմ , չէք ուզեր ձեր բա-
րերար Պ . Ճինքինունը , վայելչաղէմ երիտա-
սարդ մը՝ որ հինգ հարիւր լիրա եւ յոյսեր կը
բերէ ձեզ : — Կաղաչեմ ձեզ , Պարոն , պա-
տասխանեց աղջիկս մարած ձայնով , այդ խոր-
հուրդը մէկ դի ձգեցէք , եւ թշուառութեա-
նըս պատճառ մի ըլլաք : — Ի՞նչ յամառու-
թիւնէ այդ , ըսաւ Պ . Ուիլիըմ : Մերժել այն-
պիսի մարդ մը՝ որ այնչափ բարիք ըրաւ մեր
ընտանեաց , եւ ձեր քոյրը աղատեց : Ինչու
համար չէք ուզեր : — Ո՛չ , Պարոն , երբէք . . .
պատասխանեց Սովիիա ցասմամբ : Առաւել կը
սիրեմ մեռնիլ : — Ուրեմն ըսաւ Պ . Ուիլիըմ ,
եթէ այն չէք ուզեր . . . ինձ համար , կարծեմ
որ ես ձեզ կուզեմ : » Այս ըսելով ելաւ գրկեց
զայն իր թեւերուն մէջ : « Այս ըսելով ելաւ գրկեց
մուհիս , ըսաւ , ի՞նչպէս կրցաք վայրկեան մը
կարծել որ ձեր Պրէէլ բարեկամը ձեզ խարել
ուզէ , կամ թէ Սըր Ուիլիըմ Թօրնհիլ կարող
ըլլայ երբէք աչքէ ձգելու այնպիսի օրիորդ
մը՝ զոր իրմէ զատուրիշ բանի մը համար սի-
րած չէ : Քանի մը տարի աշխատեցայ կին մը

գտնելու, որ առանց հարստութեանս նայելու՝ զիս ինձ համար միայն սիրէ : Այնպիսի կին մը մինչեւ իսկ անմիտներուն ու տգեղներուն մէջ գտնելու ընդունայն ջանալէս ետեւ, որ չափ մեծ պէտք է ըլլայ վերջապէս գոհութիւնս՝ այսպիսի անձի մը սէրը գրաւելուս վըրայ, որ գեղեցկութեանը չափիսելացի ալէ : »

Յետոյ ձէնքինսընին դառնալով ըսաւ .
« Որովհետեւ, Պարոն, ես ինքս չեմ կրնար այս օրիորդէն զատուիլ, եւ անտարակոյս ևմ որ իր զգացումներն ալ իմիններուս համաձայն են, ձեզ համար ուրիշ բան չեմ կրնար ընել, բայց միայն անոր տալիք օժիտս ձեզ տալ . ուստի կրնաք վաղը մատակարարիս երթալ եւ հինգ հարիւր լիրա ստանալ : »

Ասոր վրայնորէն սկսանք մեր ուրախակցութիւնները, եւ Սովիթայիս համար նոյն արարողութիւնները եղան՝ որ քիչ մը առաջ քըրոջը համար եղեր էին : Անմիջապէս ետքը Պ. Ռ. Ռ. կառավարութիւնները ախոռապետն եկաւ իմացուց թէ կառքերն ու ձիերը պատրաստ էին մեզ օթեւանը տանելու, ուր ամենն բան պատրաստուեր էր մեզ համար : Կինս եւ ես առջեւ ինկանք, եւ այն վշտառիթ մութքնակարանէն դուրս ելանք : Ազնիւ ասպետը քառսուն լիրա բաշխել տուաւ բանտարկելոց .

Ո . Վիլմօթ ալ անոր նայելով քսան լիրա տըւաւ : Բանտէն դուրս ելած ժամանակնիս , քաղաքին բնակիչները եռանդագին համակրութիւն ցոյց տուին մեզ , եւ անոնց մէջ թեմականներէս երկու կամ երեք հոգի տեսնելով ձեռքերնին սեղմեցի : Ժողովուրդը ետեւնուս եկաւ մինչեւ օթեւանը , ուր փառաւոր ճաշ մը պատրաստ գտանք , եւ ժողովրդեան նպար բաշխել տուինք :

Ընթրիքէն ետեւ , այն օրը կրած տըրտմութեան եւ բերկրութեան փոփոխ ազգեցութիւններէն յոդնած ըլլալուս՝ հանգստանալ ուզեցի , եւ թողութիւն խնդրելով բաժնուեցայ ընկերութենէն որ մեծ ուրախութեան մէջ էր : Երբոր առանձնացայ , գոհութիւն մատուցի Անոր՝ որ ինչպէս վիշտ՝ նոյնպէս ուրախութիւն կուտայ մեզ , եւ խաղաղ քուն մը ննջեցի մինչեւ առաւօտ :

Հայութապոտ ան , առան այս կողմէ թուած թ այս կողմէ այս պատճեանուած : Եղած քորուած զան ոչ ոքքն պատմած և պատմած էն այս անուանուած սահման միանքը , պատմած վայրուած ապրութիւն : Թ : Հիմա քաջ մէջ այս պատճեանուած պի մէջ պատճեանուած էն : Տաճ այս պատճեանուած ոչ ոքքն առաջ պատճեանուած պի մէջ առաջ պատճեանուած էն : Այս պատճեանուած ան , այս պատճեանուած

շատ առջև ծուսք նույնամ պահ լի Պատրիարք է ։ Ի
առջ ։ ուժիւածանան հոյն ողնոր մանաման ։ ուս ։
առջանան միջոց գլուխ գիտամու միջակ այ

ունան չեն ընտան ու ։ քան միջատ որու առջ այ
նայման պահ ։ Եղանակ ։ ուժու ու վաղմաման
առջանան ու բարոյաբան ։ Եղանակ միջակ ու ն

Երբոր արթընցայ ։ անդրանիկ որդիս ան-
կողնիս քով տեսայ ։ որ ուրիշ բաղդաւորու-
թեան աւետիս մը ինձ տալուեկեր էր ։ Նախ
առջի օրը իրեն համար տուած խոստումէս զիս
աղատեց ։ Քետոյ լուր տուաւ որ ստակներս բա-
նեցընող վաճառականը ։ որ մնանկացեր էր ։
Անվերսի մէջ բռնուեր էր ։ ուր իր պարտքէն
շատ աւելի ապրանք ձգած էր ։ Որդւոյս աղ-
նուասրտութիւնն այս անակընկալ բաղդաւո-
րութեան չափ զիս բերկրեցուց ։ բայց առջի
բնրանը վարանեցայ իր առաջարկութիւնն ըն-
դունելու ։ Մինչդեռ կը խորհէի այս բանիս
վրայ ։ Պ. Ուիլիլմներս մտաւ ։ եւ տարակոյսս
անոր հաղորդեցի ։ Պատասխանեց թէ որով-
հետեւ որդիս մեծ հարստութեան տէր եղեր էր
ամունութեամբը ։ կրնայի առանց վարանման
իր առաջարկութիւնն ընդունիլ ։ Պ. Ուիլիլմ
եկեր էր իմացընելու ինձ ։ թէ նախընթաց զի-
շերն ինք մարդ զրկած էր պսակման հրամա-
նիները բերելու ։ եւ վայրկեանէ վայրկեան ա-

նոնց հասնելուն կ'սպասէր . ուստի կը յուսաբ
որ նոյն առաւօտուն պսակի արարողութիւնը
կատարելով ընկերութիւնը կուրախացընեմ :
Երբոր կը խօսէինք , ծառայ մը ներս մտաւ ու
իմացուց թէ սուրհանդակակն եկեր էր . եւ որով
հետեւ հագուած էի , վարիջայ ու ընկերութիւ-
նը խիստ զուարթացած գտայ՝ մանկութեան
ու անմեղութեան ազգած ուրախութեամք :
Բայց որովհետեւ կարեւոր արարողութեան մը
կը պատրաստուէին , իրենց ծիծագներն հաճոյ
չեղան ինձ : Ուստի իմացուցի որ ծանր եւ ակ-
նածական դիմօք պէտք էր ներկայանային կա-
տարուելիք խորհրդաւոր արարողութեան , եւ
երկու ճառ ու յորդորակ մը կարդացի : զոր
ես շարադրած էի խօսեցեալները պսակի խոր-
հըրդին պատրաստելու համար : Սակայն չկըր-
ցայ անոնց ծիծաղն ու զուարթութիւնը վեր-
ջացընել մինչեւ անդամ եկեղեցի գացած ժա-
մանակնին , որոց առջեւէն կերթայի ես : Ան-
հընար եղաւ ինձ լուրջ գէմքով բռնել զա-
նոնք , եւ քանի մը անդամ ետիս դառնալու
եւ զիրինք յանդիմանելու եղայ : Երբոր եկե-
ղեցի հասանք , ուրիշ գժուարութիւն մը ծա-
դեցաւ , որուն լուծումը բաւական դիւրին
երեւցաւ . այն էր հասկընալ թէ ովք պիտի պը-
սակուէր նախ : Որդւոյս նշանածը կը պնդէր

որ նախ Պ. Ուիլբրմթօրնհիլ տիկնոջ (Սովիայի) պսակը կատարուի . բայց Սովիա յանձն չէր առնուր՝ ըսելով թէ այնպիսի անքաղաքավարութիւն մը ընել անհնարին էր իրեն : Վէճը բաւական ժամանակ մի եւնոյն յամառութեամբ ու քաղաքավարութիւններով շարունակեց երկու հարմացուներուն մէջ : Ես ալ, այս վէճին ժամանակ ոտքի վրայ կանգնած եւ զիրքը բացած կ'սպասէի . վերջապէս նայելով որ շպիաի վերջանայ , զիրքը գոցեցի . « Կը տեսնեմոր , գոչեցի , երկուքդ ալ ամուսնանալու միտք չունիք , եւ լաւ կըլլայ ետ դառնալ . վասն զի այսօր բան մը ըլլալիք չունի : » Այս խօսքը ծանր կերպով մը ըսելուս համար , իսկոյն զգաստացան . նախ ասպետն եւ իր նշանածը սպակուեցաւ , ետքն ալ որդիս եւ իր սիրուն նշանածը :

Նոյն առաւօտուն միտք ըրեր կառք մը զրկեր էի . իմ նախսկին դրացի համեստ Պ. Ֆըլամպօրուն եւ ընտանիքը բերելու : Եկեղեցիէն օթեւանը դառնալինուս՝ Պ. Ֆլամպօրուի երկու աղջիկներն հոն հասած դտանք . Պ. Ճէնքինսըն անդրանկին թեւը մտաւ , Մովսէս որդիս ալ կրտսերին . եւ նշմարեցի ետքը որ Մովսէս անկեղծ յարում մը ունենալ սկսեր էր անոր . այնպէս որ իմ հաւանութիւնս եւ տուն

տեղ չպիտի զլանամ երբոր ինէ խնդրէ : 0թե-
ւանը հասնելնուս վրայ շատ չանցած , թեմա-
կաններէս շատերը՝ բարեբաղդութեանս լու-
րըն առած ըլլալով՝ ուրախակցութիւն յայտ-
նելու եկեր էին : Անոնց մէջ էին նաեւ այն ան-
ձինքը՝ որ զիս դատաստանատան գործակալ-
ներուն ձեռքէն բռնի ազատել ուզեր էին ,
եւ ես ալ խստիւ յանդիմաներ էի զիրենք : Ա-
նոնց ըրածը պատմեցի Պ . Ուկիլըմ փեսիս , եւ
ան ալ զուրս ելաւ կծու կերպով զանոնք յան-
դիմանեց , բայց ետքը սրտերնուն կոտրիլը
տեսնելով , կէս կէս լիրա տուաւ որ իր կենացը
զինի խմեն ու մխիթարուին :

Յետոյ մեզ ճաշի կանչեցին որ խիստ շքեղ
եղաւ , եւ Պ . Թօրնհիլի խոհարարը պատրաս-
տեր էր : Հոս անպատեհ չըլլար նշանակել Պ .
Թօրնհիլի համար , թէ հիմա իր ազգականնե-
րուն մէկուն քով կը բնակի իրեւ ընկեր զը-
ւարձութեան , ուր սիրելի եւ հաճոյ եղած է .
եւ սովորաբար սեղանակից կըլլայ իր ազգա-
կանին՝ ի բաց առեալ այն հազուաղէպ առիթ-
ները , ուր սեղանին վրայ տեղ չգտնուելու ըլ-
լայ նէ , ուստ իր ճաշէ : Իր ժամանակը կը գոր-
ծածէ աղպահանին ընկերակցութիւն ընելով ,
որ քիչ մը մի յամաղձոտ է , զայն զուարձացը-
նելով , եւ որուրդի վազ վիչել սովորեցընելով :

Սակայն մեծ աղջիկս դեռ՝ ցաւելով կը յիշէ ա-
նոր ըրածը, եւ մինչեւ անգամ ըստ ինձ դադ-
տուկ որ եթէ բարքը բոլորովին ուղղուի՝ կը ը-
նայ ըրածը ներել : Գանք մեր ճաշին . երբոր
սեղան նստելու եղանք, արարողութիւնները
նորէն սկսան : Հարցուեցաւ թէ մեծ աղջիկս՝
իրեւ տիկին՝ պէտք չը որ միւս երկու նոր
հարսերէն վեր նստէք . բայց Գէորգ որդիս վէ-
ճը կարճ կտրեց առաջարկելով որ ամեն մէկ
այր իր տիկինոջ քով նստի : Այս առաջարկու-
թիւնը մեծ հաճութեամբ ամենէն ընդունուե-
ցաւ, բայց 'ի կնօջմէս, որ սեղանին վերի զը-
լուխը նստելու եւ կերակուրը բաշխելու հա-
ճոյական պաշտօնն ինք կատարել կուզէր :
Այս փոքրիկ տիրութիւնը մէկ դի առնելով,
անհնար է նկարագրել մինչեւ ճաշին վերջը
տիրող զուարթութիւնը : Զեմ գիտեր որ այն
օրը մեր սովորականէն աւելի հանճարաբանն է-
ինք, բայց սա դիտեմ որ աւելի խնդացինք .
աս ալ մի եւ նոյն բանն ըսել է : Եղած զուար-
ճարանութիւններուն մէջ բարեմիտ Պ. Վիլ-
մոթին մէկ կատակը մտքէս չելներ : Պ. Վիլ-
մոթ Մովսէս որդւոյս կինացը գինիխամած ժա-
մանակ, Մովսէս՝ որ նոյն միջոցին անոյին կը
նայէր : « Շնորհակալեմ, Տիկին » ըստւ : Պ.
Վիլմոթ ալ՝ ընկերութեան աչք ընելով ըստ

թէ որդիս իր սիրուհւոյն վրայ կը խորհէր : Այս
խօսքին վրայ , Պ . Ֆլամպօրուի աղջիկները
մազ մնաց պիտի մարէին խնդալէն : Ճաշն ա-
ւարտելէն ետեւ , սովորութեանս համեմատ
խնդրեցի որ սեղանը վերցընեն , որպէս զի ան-
գամ մ'ալ բոլոր ընտանիքս կրակին բոլորտի-
քը ժողվուած տեսնելու բերկրութիւնն ու-
նենամ : Երկու փոքրերս ծունդիս վրայ նստեր
էին , միւսներն ալ իրենց լծակիցներուն հետ
անմեղութեամբ կը զուարճանային : Գերեզ-
մանիս եզերքը հասած , բնաւ բաղձալու բան
մը չունիմ . բոլոր վիշտերս վերջացած են , եւ
գոհութիւնս անբացատրելիէ : Կը մնայ մի-
այն ջանալ , որ ճախորդութեանցս մէջ ունե-
ցած համբերատարութենէս աւելի՝ բարեբաղ-
ութեանս մէջ չնորհակալութիւն ունենամ :

ում : ոչ ուղի ոչ ուղի մը ու առջև ոչ սկզբ է Ա
ովհանի քրա վրայաբնաշի . թ , բայի միջառակ
ու մշահ : Ենթարմի միջառակ գույք բանի բան
առևտուն սմածելադիւն , անոն միջառակ
ան ոք աժքու , մասցոյնի զանքու որ պանդրու
մրադրու միջառակ ու միանու պայու ու ու նաք
ու մայի մասցոյն արմածու ետ աժքու ոչ
զանք բայի աժքու արմածու աժքու ու մասց
ու մասցու արմածու պայու ու մայի մասց
աժքու : միջառանուաց ոք պատկ արմած
այս արմածու առն , եռամ ոչ ուղի սմած
ու , ու օսքան զայի արմածու պայու ու մայի մասց
ու բան ոչ : Հիմա պայուացաւ ամ պատկ այս
աման չ եւ պատկ ամ պայուացաւ ու , յաման մաս
պայուացաւ պատկ ամ պատկ ամ պայուացաւ ու ու
աման ու ամ պատկ ամ պատկ ամ պայուացաւ

ՅԱՆԿ ԳԼԽՈՑ

Երեւ

ԳԼՈՒԽ Ա . Երէցինը ընտանեացնկարագութիւնը , որուն մէջ սերտ նմանութիւն մը կայ թէ անձանց եւ թէ մտաց . 5

ԳԼ. Բ . Ընտանեկան ձախորդութիւններ : Հարստութեան կորուստը պարկեշտ մարդոց վեհանձնութիւնն աւելցընելու կը ծառայէ . 44

ԳԼ. Գ . Տեղափոխութիւն , Մեր կենաց երջանկութիւնն ընդհանրապէս մենէ կախումն ունի . 49

ԳԼ. Դ . Ամենէն խոնարհ բաղդի մէջ կրնայ մարդ մեծ երջանկութիւն ունենալ , եւ այս ալ չէ թէ պարագայներէ՝ այլ բնաւորութենէ կախումն ունի . 55

ԳԼ. Ե . Նոր եւ մեծ ծանօթութիւն մը : Շատ անդամ այն բաղդը որուն վրայ ամեն բանէ աւելի յոյսերնիս կը դնենք , ամենէն աղէաբերը կը լլայ . 40

ԳԼ. Զ . Գեղջկական կենաց առտընին երջանկութիւնը . 47

ԳԼ. Ե . Խնքդինք խելացի կարծող քաղաքացիի մը նկարագիր : — Ամենէն ան-

միաներն ալ կրնան մէկ կամերկու իրիկուն
ինքզինքնին զուարձախօս երեւցընել .

54

ԳԼ. Ը . Տարփանք մը որ մեծ հարստութիւն
չխոստանար , այսու ամենայնիւ
կրնայ անոր խիստ մեծը յառաջ բերել .

65

ԳԼ. Թ . Երկու պերճաշուք տիկնայք երեւան կելնեն : Գերազանց զարդարանքը
գրեթէ միշտ ձեւոց եւ շարժուածոց գերազանցութիւն ալ կուտայ .

76

ԳԼ. Փ . Երէցին ընտանիքը կը ճգնի ամենահարուստ անձանց հաւասարելու :
— Աղքատաց թշուառութիւնը , երբոր
իրենց վիճակէն բարձր երեւնալ կուզեն .

82

ԳԼ. ՓԱ . Երէցին ընտանիքը տակաւին
կը շարունակէ պերճասիրութիւնը .

91

ԳԼ. ՓԲ . Բաղդը միշտ խոնարհեցընել
կուզէ Վէքֆիլտի ընտանիքը : Բարոյական վիպասանութիւնները շատ անգամ
իրական աղէտներէն աւելի ցաւագին են .

100

ԳԼ. ՓԳ . Պ . Պրչէլ անհաճոյ խրատներ
տալու համարձակելուն համար թշնամի
կը համարուի .

109

ԳԼ. ՓԴ . Նոր ճախողու ածներ , կամ
մանաւանդ ապացոյց թէ առերեւոյթ
վիշտերը կրնան ճշմարիտ բարիք ըլլալ .

116

ԳԼ. ՓԵ . Պ . Պրչէլի չարութիւնը կը
յայտնուի : Զափազանց խոհականութիւնը
խենդութիւն է .

128

ԳԼ. ԺԶ. ԵՐԵՇԻՆ ընտանիքը վարպետութիւն կը բանեցընէ . բայց աւելի մեծ վարպետութեան մը կը հանդիպի . 157

ԳԼ. ԺԷ. Խիստ քիչ առաքինութիւն կայ որ երկար եւ հաճոյ հրապուրի մը դիմանայ . 148

ԳԼ. ԺԸ. Հօր մը փոյթն իր զաւակը առաքինութեան ճանբան դարձընելուհամար . 165

ԳԼ. ԺԹ. Կառավարութենէն դժգոհութիւն ունեցող եւ ազգին իրաւանցը կորընչելէն վախցող անձի մը նկարագրութիւնը . 174

ԳԼ. Ի. Ընդվայրայած փիլիսոփայ մը որ նորութեան ետեւէ վազելով իր գոհութիւնը կը կորսընցունէ . 187

ԳԼ. ԻԱ. Մոլի մարդոց մէջ բարեկամութիւնը չկրնար երկար տեւել , այլ որչափ ժամանակ որ մոլութեան մէջ փոխադարձ հաճոյք գտնեն . 216

ԳԼ. ԻԲ. Մարդիկ դիւրաւ կը ներեն իրենց սիրելոյն . 252

ԳԼ. ԻԳ. Միայն չարերը կրնան երկար ժամանակ եւ բոլորովին թշուառ ըլլալ . 259

ԳԼ. ԻԴ. Նոր դժբաղդութիւն մը . 248

ԳԼ. ԻԵ. Վիճակ մը որչափ եւ թշուառ ըլլայ՝ դարձեալ միսիթարութիւն մը կունենալ .

ԳԼ. ԻԶ . Բանտին մէջ բարեկարգութիւն . Օրէնքները կատարեալ ըլլալու համար պարտին՝ ինչպէս որ կը պատժեն՝ նոյնպէս եւ վարձատրեն ալ .

266

ԳԼ. ԻԷ . Նոյն նիւթին շարունակութիւնը .

276

ԳԼ. ԻԸ . Երջանկութիւնն ու թշուառութիւնը՝ այս կեանքիս մէջ՝ աւելի խոհեմութեան արգասիք են քան թէ առաքինութեան . աշխարհային բարիքն ու չարիքն բատ ինքեան այնչափ չնշին բաներ կը համարուին Երկնից առջեւ , որ անոնց բաշխումն անդամ իր հոգածութեանը արժանի չհամարիր .

285

ԳԼ. ԻԹ . Այս աշխարհիս մէջ թէ երջանիկներուն եւ թէ տարաբազզներուն նըկատմամբ Նախախնամութեան հաւասարապէս վարուելուն ապացուցութիւնը : Բերկրութեան եւ վշտացքնութեանը նայելով , թշուառներն այս աշխարհիս մէջ կրած տառապանքնուն համեմատ պիտի վարձատրին յաւիտենականութեան մէջ .

505

ԳԼ. Լ . Յուսոյ նշոյներ : Զախորդութեան մէջ չվհատինք . բաղդը վերջապէս մեր կողմը կը դառնայ

545

ԳԼ. ԼԱ . Բարերարութիւն տոկոսեօք վճարեալ .

550

ԳԼ. ԼԲ . Եղբակացութիւն .

558

706

2013

